



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



49





ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԷ

Փարիզ, — Տպագր. Արմ. և Տպար. Վարտերի և Փող. Պոնաբարբ 44.
Paris. — Typographie Arménienne de Walder, rue Bonaparte, 44.






Gördelström del.

J. L. Widgwood sc.

49-62



49-2013

ԱՌ ՊԵՐՃԱՊԱՏԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՅ Պ. ՏԱՏԵԱՆՅ

ԵՒ ԱՌ ՆՈՐԻՆ ԶՈՒԳԱԿԻՅ

ՍՈՒԼԴԱՆ ՏԻԿԻՆ ԵՐԱՄԵԱՆ

ՈՒՂԵՐԶ



Չոր միանգամ փափկախօսն ի մատենագիրս Գաղղիացւոց գեղեցիկս վիպասանեաց զՊօղայ եւ ըզՎիրգիւնեայ՝ Սմուքդ սիրակցորդք յանտիական հասակաց յանձինս ձեր ճշգրտեցիք : Եւ եթէ ըստ կենցաղոյ տարագուն խտիրք կայցեն ի միջի, որպէս եւ կան իսկ, ընդ ճոխացեալսդ մարմնական գոյիւ եւ ընդ կարօտեալսն ամենայնիւ, սակայն երանիկք դուք եւ յաւետ քան գնոսա երջանիկք, զի որում նոքայն չհասին սրբասեր ամուսնութեանս պայմանի՝ դուք եւ այնու պսակաւորեայ պանծացայք, եւ քաղաքամայրս Գաղղիացւոց կանխեաց քան գձերդ եւ գմեր հայրենիս գձերոյ սիրոյն զգուել զորովանօք գնախընծայ խայրիս՝ զՄարիամիկդ նագելի :

Հնապա եւ որ ընտրեցիքդ ի բիւրազգի բանգարական վաճառուց փարիզացի ճոխութեանց գսա տանել խնամով պարգեւ մանկտույ հայաստան ժողովրդոց ի դարձիդ ձերում այդրեն յափունս Վոսփորի, ընկալարուք ընդ սմի ն գնուէր իմոյս առ ձեզ մեծարանաց եւ մտերմութեան, եւ յառաջ իսկ քան զագգակցացն մերոց զիմ գմաղքանս սրրտառուչս, զի պարգեւք բնութեան, եւ մանաւանդ աստուածայնոցն անկապուտ շնորհաց, յաւելցեն գեղուլ յաւերժաբար ի գլուխս ձեր եւ Ազգատոհմիդ համօրեն :

Թ.Ա.Բ.Մ.Ա.Ն.Ի.Զ.Ն.

Ի Փարիզ, ի 6 Սեպտեմբերի 1856 :



ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ



Համբաւատենքս այս վիպա-
սանութիւն Պեռնարտենտը Սեն-
Փիերի Գաղղիացոյ, մի ի սա-
կաւուց անտի չքնաղ յօրինուա-
ծոց է, որ արժանի վկայեալքն
են փոխաբերելոյ յամենայն ի
լեզուս, եւ հանուրց մարդկան առաջի առնել ի վերժանու-
թիւն. իբր զի ճշգրտատիպս իմն եւ յոյժ հրաշապես զմարդ-
կայնոյ սրտին նկարագրէ զգաղտնիս, եւ զգզացմունսն
կրթէ, զբարսն ամոքէ, զմիտսն վառեալ բորբոքէ ի բա-
լւոյն հետազօտութիւն, զյօժարութիւնսն դրդէ յանմեղու-

թիւն, եւ զքնութեան քաղցրութիւնս սիրով առաքինութեան առնու : Նա եւ այնքան է սրտառուջ պարզութիւն ասացուածոցն հանդերձ խորախորհուրդ իմաստասիրութեամբ, մինչեւ իրաւամբք մտարերեցին ասել ոմանք երեւանգուգական իմն է գրուածս յազգի անդ իւրում :

Ի Գաղղիա գառաշինն ի տիպ արձանացաւ յամի 1788, այն իսկ է միով ամառ յառաջ քան զսկիզբն յեղափոխութեանն մեծի . եւ սակայն ազդեցութիւն մեծ գործեաց ի վերայ խոռվայոյց եւ բազմավրդով սրտից Գաղղիացոց ժամանակին . եւ զայս ինչ յիրաւի է գեղեցկագոյն ի գովասանութիւնս մատենիս համարել : Իսկ իբրեւ յեղափոխութիւնն այն դադարեալ ցածեաւ, յեղաւ եւ մատենիկս ի բարբառս ամենայն . եւ քե զորքան սատար եղեւ յամոքել եւ ի բարեքել զբոյս բարուց քաղաքակիրթ ազգաց՝ ոչ է հնար յայտ առնել սակաւութ :

Այլ եւ քաղաքակրթութիւն զիւրսն ունի թերութիւնս . եւ ազգք արեւելից հանդերձ գովելի եռանդեամբն իւրեանց ի քաղաքակիրթն զարգացումն վերոտնելոյ՝ զթերութիւնսն զայնոսիկ ցաւագինս նշմարեալ տեսանեն, եւ հնարս իմն հնարին հայրայրել՝ զի անձնապահ ի վնասուցն լինիցին : Եւ ով ոք այսմ անգիտանայցէ զի բազմապատիկ հնարք են առ այս ի միջի, եւ մեն մի ի նոցանէ մեծապէս ազդողականք . օրինակ իմն բարձր ի գլաւի ճոխանան ի կարգի այնց հնարից աստուածայինքն եւ անարատ իմաստք քրիստոսական կրօնիցս եւ ուղիղ բարոյականի . եւ յետ այնոցիկ ողջամիտ իմաստասիրութիւն, անստերիւր տրամաբանութիւն, բազմադարեանն փորձ կենցաղա-

կանացս իրաց, զգուշաւորն դաստիարակութիւն այլովքն հանդերձ. սակայն որ կամիցի ոք սիրելի հասարակաց զգեղեցիկ գեղեցիկ հնարսդ ընծայեցուցանել, կամ զի այսպէս ասացից, առնուլ իջուցանել զդոսին ի մտաց մարդոյ ի սիրտ անդր նորա, աստուածայնոցն շնորհաց է զործ ի գերբնականսն, եւ ի բնականս այնոցիկ ի մատենից՝ որ քաջայարմարքն իցեն սիրելի գործելոյ զճշմարտութիւն եւ զառաքինութիւն : Եւ ահա գերկրորդս զայս բարեմասնութիւն լի եւ պատարուն ստացեալ ունի հրաշապատումն վիպասանութիւն Պօղայ եւ Վիրգիլնեայ . վասն որոյ եւ յանձանձիր ընթերցումն ձգէ գամենեսին, եւ զսիրտսն ճմլեալ՝ քաղցրահոսանս քամէ արտասուս յականողեաց նոցին :

Զճաշակ մատենիս առեալ է փոքր ի շատե եւ Ազգն մեր ի բարգմանութենէն բարելիշատակ Մանուկ Պեյի Աստուածատրեան : Արժան իսկ էր զշիրմաւ պատանւոյն դրողմել եւ զայս դրուատիս . ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՔԱՐԳՄԱՆԵՆԶ ՊՕՂԱՅ ԵՒ ՎԻՐԳԻԼԵՆԵՍ . եւ մէք մտադիւր սիրով ծածկեալ քաղեմք ընդ բազմահոյ ծաղկամբքն սփռելովք զնովաւ զսակաւաքիւ թերութիւնսն, որ աղքատութեան աշխարհիկ բարբառոյս են մանաւանդ գրելիք քան թէ բարգմանչին անհմտութեան : Սմին իրի կամ եղեւ մեզ ի գրոցս անուանեալ բարբառ հանել ի լոյս զբարգմանութիւն նորին, բայց այնպիսեաւ յստակ եւ դիւրահաս բանիւ, որ ոչ ինչ զոգցես ընդհատ իցէ ի գաղղիական պարզութենէն Պեռնարտենի : Եւ թեպէտ գիտել գիտեմք զի այսպիսեաց երկասիրութեանց առաւելագոյն գտանին ընթերցողք յորժամ

աշխարհիկն խօսիւք ընծայիցին մերագնեայց, մանաւանդ որոց ի Տաճկաստանի բնակեալ իցեն Հայոց, սակայն մեր իղձք են՝ հասարակաց Ազգիս ընձեռել զմատեանս ի վայելումն . մանաւանդ զի որք գաշխարհիկն նախամեծար առնիցեն՝ առձեռնպատրաստ ունին աւանիկ զոր ի վերայսր յիշատակեցաք զքարգմանութիւն Մանուկ Պէյի :



ՆԱԽ ԵՐԳԱՆ



Յերկասիրու-
բեանս յայսմիկ փո-
րու խորհուրդս մեծա-
մեծս երկնեցի, և, ջան ի

գործ արկի նկարագրել ի սմին երկիր և, բռնասկս այլագանս
յե.րոպականացն: Շատ իսկ հանգուցիկն քերթողքն մեր գտար-
փառքս իւրեանց ի դարափունս առնուակաց, ի մարգս և, ի
մարմանդս և, ընդ հովանեաւ ոփնի ծառոց. իսկ ինձ կամ
եղէ. նստուցանել զնոսին ի ծովափունս և, ի ստորոտս
ապառաժից, ընդ հովանեաւ քոբենեաց, աղամարգենեաց
և, ծաղկավարս կիտրոնեաց: և, երբ էին մեզ Թեոկրիտք
և, Վիրգիլք որ գայնմ աշխարհե տային տեղեկութիւն, ոչ ինչ


ընդհատ ի մերոցս ունեաք արդեօք նկարագիրս գեղանիս և.
գայնմանէ : Գիտեմ զի ուղեւորք քաջահանձարք պատմեալ իսկ
են բանիւք սխարլեօք գվեպս յոգունց ի կղզեաց Հարաւայնոյ
ծովուն . այլ բագում այն է զի բնակացն կենցաղ , և մանաւանդ
Ներսիսացւոցն ի նոսա գաղթելոց սովորութիւնք խանգարեն և .
Եղծանեն գաշխարհին գեղեցկութիւն : Ն և իդձ Եդէ կցորդել
ընդ բնութեանն գեղոյ որ ընդ մեջ արեւադարձիցն Երկոցուն՝
զբարոյականն գեղ ժողովրդեան փոքու : Միանգամայն գուն
գործեցի յերեւան ածել ոչ սակաւ ճշմարտութիւնս մեծամեծս .
ընդ որս և գայս , զի բարեբաստիկ է մարդ յորժամ ըստ բնու-
թեան օրինաց և ըստ առաքինութեան վարիցէ կենցաղ : Սա-
կայն ոչ կարօտացայ գվիպասանութիւն հանձարել և կեղծել
առ ի նկարու հանելոյ գերդաստանս բարեբաստիկս : Ստուգու-
թեամբ ասեմ , զի գորս յօժարեցիս ի գրի հարկանել՝ ոչ անեակք
ինչ են , և վեպք նոցա յերիցագոյն դեպս իրացն ճշմարիտք ,
որպէս հաստարիմ արարին ինձ յոլովք ի բնակչաց Կղզւոյն
Գաղղիոյ : Հանգամանս ինչ ևեք դաւզնաբեայս յաւելի ի նոսա ,
որ զի անձնականք իմն էին ինձ՝ ոչ ինչ ընդհատ են և նորին ի
ճշմարտութենէ : Ոչ բագում ինչ ամբ են զի ստուերագիր ինչ
յօրինեալ այսպիսոյ հովուերգութեան , աղաչեցի գպարկելշտա-
գեղ որ տիկին որ ի ժողովս մեծամեծաց յաճախէր , և արս զգօ-
նամիտս որ ի բացեալ ի նոցունց վարեին կեանս , ունկնդիր
լինել իմում վիպասանութեանս ընթերցուածոյ , զի գիտացից էթե
գնր ազդումն ազդիցէ սա յընթերցանելիսն այլազանս . և խրախ
Եդէ յորժամ առ հասարակ յարտասուս ցնդեալ տեսի զնոսին :
Չայս ևեք դատաստան մարբացայ ի միտ առնուլ գերկասիրու-
թենես , և սմին միայնում ըղձակերտ էի :

Այլ բագում այն է զի փանաքի հանձարոյ գուգընրաց գտանի
թերութիւն ոչ փոքր . սմին իրի և այս յաջողուած արկ ի սիրտ

Իմ գունայնամիտն տենց մակագրելոյ զիմն երկ *Նկարագիր
բնութեան* : Ի դեպ իսկ յուշ եղև
ինն երբ քանի անժանօր է առ
յինեն բնութիւն աշխարհին յորում
ծնեայն էմ, եւ բէյաշխարհսն զորոց
հանգոյն ուղեւորի եւեթ տեսի զար-
դիւնս՝ քանի արգասաբէր է բնու-
թիւն, քանի զանագանեայ է սի-
րուն, հոյակապ է խորհրդաւոր,
եւ ես նրբան բափուր էմ ի հանճարոյ, յախորժից էւ ի ճոխա-
բանութենէ որ կարէւորքն են ի ճանաչել էւ ի նկարագրել զայն
բնութիւն . եւ անդէն յանճն իմ գումարեայ զգաստացայ : Յա-
ղագս այսորիկ էւ զխունս զայս գրուած ի վերջ իմոցն յարեցի
Հետազօտութեանց բնութեան, զոր այնքանեաւ բարեւեր մտօր
ընկալան վերժանողր . որպէս զի այս յորջորջումն յուշ արա-
րեայ նոցա զիմն ապիկարութիւն, յորդորեսցէ գնոսին էւ ի սոյն
սակս ներողամիտ առ իս յինել :



[The page contains extremely faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the document. The text is arranged in several paragraphs and is difficult to decipher due to its low contrast and the age of the paper.]



ՊՕՂ

ԵՒ

ՎԻՐԳԻՆԵՆԷ

ԳՂՈՒԽ ԱՌԱՋԻՆ



Ջարեւելեան կողիւք լերինն որ ամբառ-
նայ ի բիկանց Փոր-լուի քաղաքի ի Կըղ-
գւոջ Գաղղիոյ, և տեսանէլ ի խոսանացեալ
ուրէք տեղւոջ ասերակս խղից երկուցի մէջ
կոյս հովտին՝ որ շուրջանակի ապառաժիւք

մեծամեծօք պարփակեալ, ի հիւսիսոյ կողմանէն Եւեր գմուտսն
ունի: Ընդահեակն կոյս ամբարտակեալ լեառն որ կոչի Սար Գիւ-
տի, ուստի նշմարին նաւք որ ի նաւահանգիստ անդր գայցեն.
Եւ սոս ստորտով լերինն այնորիկ և նիստ Փոր-Լուի քաղաքին.
Իսկ ընդ աջակողմն ձանապարհ և, որ հանէ ի քաղաքէ անտի ի
քաղն Կիտրոնեաց՝ յետ այնորիկ եկեղեցին համանուն կայ ար-
ձանացեալ ի լայնատարր դաշտի հանդերձ ձեմելեօք՝ զորով պա-
տեն դայարագեղ շամբուտք հնդիկ եղեգանց. Եւ հուսկ ի վերջէ
անտառ և ձգեալ տարածեալ ցապառուածս կղզւոյն:

Ի ծովեգերն նշմարի ի հանդիպոյ ծովածոցն Շիրմի, խուն մի
լաջակողմն կոյս՝ հրուանդանն Տարաբախտիկ, անտի Եւ անդր
ծովն լայնասփիւռ, յորում գերեսօք շուրցն կղզեակք կան ցա-

ծուեր անբնակք . Եւ մի ի նոցանէ է ճայնեայն Անկիւն Գիտակի ,
որ գծովածուփ դղեկի բերէ գնմանութիւն :

Ի մուտս հովտին այնորիկ , յորում բանան գառաջեաւ տե-
սարանքն բազմադիմիր , արձագանգք լերինն անդրէն կրկնեայ
հնչեցուցանեն անդադար զհողմոց մունջիւն՝ յորոց սօսափին ան-
տառքն մերձակայք , եւ գալեացն ճողփիւն՝ որ ընդ խորս բախեայ
Եւ անդրէն յինքեանս խորտակին ի բացէ : Բայց առ դուրս խղի-
ցըն այնոցիկ շշունջ իսկ ոչ էսս լինի լսելի . Եւ ջիք այլ ինչ շուր-
ջանակի տեսանել՝ բայց քառածայռս պարսպամեւ սեպացեայ ,
յորոց ի ստորտսն Եւ ի խոխոմս Եւ ի կատարսն իսկ որ յամպս
ծրարին՝ բուփք բուսանին անտառախիտք : Թօնուտք անձրեւաց
ի գագաթանց նոցին յուզեայք՝ բազում այն է զի երգուենն զկողսն



յերանգս ծիածանի կանաչագեղ Եւ թխատիպ , Եւ աղբերակու-
նքս առ ոտամբն բխեցուցանեն՝ յորոց գետաճետի առուակն Լա-
տանէնեաց² : Անդ խոր րուսիւն պատէ գամենայն , Եւ սմե-
նայն ինչ յանդորրու կայ , Եւ օդք Եւ ջուրք Եւ յոյս : Հագիւ կրկնին
անդանօր արձագանգք հնչեցեայք ի շրշիւն արմաւենեաց , որք
ուղղաբերմս աճեն ի բարձրադիտակ սարահարթսն , Եւ հողմա-
վար տատանին յարածուփք : Լոյս տուրնչեան քաղցրածաւայ
պայծառանայ ի խորս անդ հովտին ուր զհասարակ առուրք Եւ եր-
ճառագայրէ արեգակն . այլ զպսակաւ հովտին անդին ընդ արե-

ածայրս հարկանին նշոյր, եւ զագարունք լերանցն ի վեր քան
զնսեմաստուէր կողս նոցին բարձրացեալ՝ ոսկեգոյնք բուին եւ
ծիրանեփայլք ընդ կապուտակն երկնից :

Սիրելի էր ինձ ցանկորդէլ ի տեղիսն, քանզի յայնաժամայ ըն-
ծայէր ինձ անդ տեսարան, միանգամայն եւ միայնութիւն ամայի :
Ի միում առեքց մինչդեռ նստեալ առ ոտիւք խղիցն, եւ զաւե-
րակս նոցին նկատեալ մտախոհ լինեի, եւ անապր ոմն անցանէր
ընդ այն, եւ զգեցեալ էր ըստ վաղնջոց բնակչացն տարագու
բանկունակ փոքր եւ տաբատ պճղնաւոր : Բոկոտն ընթանայր



նա՛ յեց ի ցուպ եբենեալ : Հերբ նորս համակ սպիտակացեայր
էին, եւ տեսիլ զիմացն ազնուական եւ անկեղծիկ : Ողջոյն
եսուո նմա մեծարանօք . ողջունեաց զիս եւ նա , եւ վայրիկ մի
յառեալ յիս , ապա մատուցեալ նստաւ հանգզել զբլրակա՛ ուր
եսն բազմեալ կայի : Քաջայերեալ յընդէյական գնացից առնն,
խօսելկալայ ընդ նմա եւ ասեմ . « Հայրիկ, զիտիցես ասել ցիս
նյր արդեօք էին խուղբդ այդոքիկ երկու . » : Նա ետ պատաս-
խանի եւ ասե . « Որդեակ իմ , ի դերբուկտ յայդոսիկ եւ ի
խոսպան երկրիդ բնակէին յառաջ քան զամս քսան ազգատոմբ
երկու . ի դոսին երանանետեայր : Վեպք իրաց նոցա աղիողորմք
են . այլ ի կղզուջս յայսմիկ զՀնդկաց ճանապարհաւ . » նր այն

Եւրոպացի է որ գորովիցի ընդ բաղդ աննշանից ոմանց : Ու այն որ իցէ որ յանձն առնուցու անդէն վարել կեանս քեպետ է երջանկաւետս, բայց աղքատ յընչից է մոռացեալ ի մարդկանկ : Զարանց առագաց է գրագաւորաց է.էք յօժարին մարդիկ ուսանել գատմութիւն , որ ոչ ումէք է պիտանացու » : Կրկնեալ անդրէն ասեմ . « Հայրիկ , տեսիլ դիմաց բոց է բանք բերանոյդ յայտ իմն այնպէս առնեն էք այր էս դու քաջահմուտ իրաց կենցաղոյս : Ադէ պատմեա ինձ , էք իցէ քո պարսպ , զինչ գնախնի բնակչաց անապատիս գիտիցես . քանզի է որ կարի իսկ գառածեալ որ իցէ ի մտահաճութիւնս աշխարհի , սիրէ ապարէն լսել զբարօրութենէ գոր պատրաստենն բնութիւն է առաքիւնութիւն » : Յայնժամ ծերունին վայրիկ մի գձեռնն ի ճակատ կայեալ , որպէս որ զի խնդրիցէ յուշ ածել ճշգրտիս գամենայն , պատմեաց ինձ է ասէ .

Յամին 1726 ոմն երիտասարդ նորմանտացի՝ Տը-Լա-Թուր անուն , բազում անգամ հայցեալ պաշտօն ինչ արքունի սպասահարկութեան ի Գաղղիա է նպաստս յագգատոմեն՝ իբրէս ջե-



հաս իւրումն ցանկութեան , եղ ի մտի գալ ի կղզի այսր ի խնդիր բաղդի , առեալ ի միասին է գամուսին իւր գմանկամարդ՝ գոր յոյժ սիրէր է սիրիւր ի նմանէ : Եւ էր նա դուստր միայ ի վաղեմի

է. յընջաւետ տոմարից իւրոյ գաւառին . բայց ի գաղտնիս է. անօժիտ լեալ էր Լաբուրի կնութեան. քանզի ծնողք նորին հակառակեալ էին այնմ հարսանեաց, իբր զի ոչ քաջատոմարի որ էր պատանին : Նրոյ Լաբուր զկինն իւր ի Փոք-Լուի քաղաքի կղզոյս, է. ինքն նաւեաց ի Մատակասքար՝ զնէլ անդ գերիս քխամորսս է. դառնալ փութանակի կազմել իւր աստեկ տեղի բնակութեան : Էջ նա ի Մատակասքար ի սկիզբն վնասակար օրոցն շնչելոյ, այս ինքն է ի մեջ կոյս ամսեանն հոկտեմբերի, է. յետ սակաւ միոյ մեռաւ անդէն՝ ըմբռնեալ ի ժանտ ջերմանէ որ գամիսս վեց ճարակի ի կղզւոջն . որոյ վասն է. ցանգ անհնարին լիցի ազգաց ներուպայ հաստատել անդ զբնակութիւն : Ջոր ինչ միանգամ ընդ իւր տարեալ էր սպաս հանդերձից՝ ցիր է. ցան եղեն ի մահու նորա, որպէս յաճախ պատանէ այս որոց յերկիր օտար վճարիցին ի կենաց : Կին նորա մնաց այրիացեալ է. յղի ի կղզւոջ աստ Գաղղիոյ, ուր ոչ որ էր նմա ձեռնկալու է. ապաւեն, է. ջեր ինչ նորա յաշխարհի՝ բայց աղախին մի հնդիկ : Յետ ան իւրոյ վախճանելոյ զոր միայն սիրէր, ոչ կամելով գտանել շնորհս աս ումեք՝ յաւել քշուստութեամբն ի գօրութիւն . եղ ի մտի մշակել ընդ գերւոյ իւրում ածու ինչ փոքրիկ աս ի պաճարանս կենաց :

Ի կղզւոջ աստ որ անմարդի էր գոգցես է. անտերունջ, ոչ ընտրեացնա վայրս արգաւանդս է. դիպողս ի շահավաճստ, այլ ի խնդիր կածանի իրիք յերանց է. գաղտնածածուկ ինչ ապաստանի՝ ուր կարող իցէ միայնիկ բնականալ է. անծանօթ ի մարդկանէ, էլ ի քաղաքէն է. դիմեաց ի քարածայռս յայտասիկ իբրէս ի բոյն ինչ բոջնոյ : Եւ ընդաբոյս իմն է այս բնաւից վշտամբեր էից, դիմել անկանել յամալի է. յանմարդաբնակ վայրս, իբրու այն քէ վեմք է. քարանձաք պատուարք իցեն ընդդէմ աղետից կանգնեալք, կամ քէ համագոյիցն անդորրութիւն զջարադետ յոյզս խոռվութեանց հոգւոյ նոցա գօրիցէ խաղաղել : Բայց վերնախնամն Տեսչութիւն որ ի բիկունս մեզ հասանէ յորժամ կարեւորացն էւեր լինիցիմք ի խնդիր, պատրաստեր տիկնոջն Լաբուրի պարգեւ՝ զոր ոչ մեծութիւն է. ոչ բարձր աւագութեան գիտեն ընձեռնել, ունել նմա զոր քոյրաբի սիրութի :

Ի տեղուոջս յայսմիկ բնակեր յամե հետե կին ոմն ժրագուսիս, բարեբարոյ եւ դիւրագորով՝ Մարգարիտ անուն : Եւ էր նա բնիկ ի Պրըբայն նահանգե Գաղղիոյ ի գեղջուկ տոհմե, սիրելի յոյժ իւրոցն . որք եւ բարեբաստիկ սունեին զնա եթե չէր նորա նախողակի վստահութեամբ հաւատացեալ ի սէր ազատագնեի ուրումն ի դրացեաց իւրոց : Սա խոստացաւ անուոյ զնա իւր ի կնութիւն, եւ յետ կրիցն յագենալոյ ի բաց զնաց ի նմանե, չառեալ յանձն եւ ոչ դարման ինչ կարգել որդեկին՝ զոր կնոջն յղացեալ էր ի նմանե : Յայնժամ Մարգարիտ եղ ի մտի մեկնել ի սպառ . յերկրե ծննդեան իւրոյ , Էրբայ ծածկել զվրիպանս իւր ի գաւառս գաղթականաց , հեռի յաշխարհէն յորում կորուսեալ էր զանունն բարի, զմիակ օժիտ չբաւորի եւ պարկեշտասեր օրիորդի : Եւ հնդիկ ոմն ծերունի, զոր զնեալն էր ընդ սակաւ ինչ արծարոյ ի փոխ առեոյ, մշակեր ընդ նմա ածու մի փոքրիկ ի կողմանս յայտոսիկ :



Տիկինն Լարուր եկեալ այսր հանդերձ հնդիկ նաժշտան եզիտ զՄարգարիտ ընդ դիեցիկ որդեկին . եւ բերկրեցաւ յանձն իւր , զի հանդիպեր կնոջ որ նմանավիշտ իւր բուեցաւ , եւ հա-

կիրճ բանխօք պատմեաց նմա զանցս իւր , եւ զարդի պէտս կարօտութեանն : Ի գուք խանդաղատեցաւ Մարգարիտ ընդ վեպս տիկնոջն Լարուրի . եւ վստահութեան նորա ցանկացեալ առանէլ քան թէ մեծարանացն , խտտովան եղեւ նմա զմեղաւորտն իւր սխալանս , առանց քագուցանելոյ ինչ ի նմանէ , եւ յաւելեալ ի բանս իւր ասէ . « Ապաքեն ես արժանի իսկ եւմ ջարաբաստիկ լինելոյ . բայց դու , տիկին , դու զգաստասեր եւ ներ . . . » եւ հրաւիրեաց զնա արտասուելով ի խղիկն իւր եւ ի սեր բարեկամութեան : Տիկինն Լարուր գորովեցաւ ընդ բարեգուք հիւրասիրութիւն նորա , եւ գիրկս արկեալ զնովաւ ասէ . « Այսպէս ուրեմն վախճան առնէլ կամի Տեր վշտացն իմոց , զի այդպիսի ազդե գուք ի սիրտ քո ի վերայ օտարիս անձանօթի՝ որպիսի չիք իմ երբէք ընկալեալ յազգականացն իմոց : »



Ճանաչեի եւ զՄարգարիտ . եւ քեպետ միով եւ կէս փարսախաւ հետի ի տեղուոչեա ե բնակութիւն իմ յանտառի անդ որ յետկոյս կայ Երկայնանխառ յերինն , սակայն որպէս դրացի համարեի նմա : Ի քաղաքս եւրոպայ փողոց մի եւ որմ լոկ՝ խտրոց ընդ մեջ անկեալ , խափան լինին ընտանեաց միոյ ազգատոհմի առ ի ջտեսանելոյ զմիմեանս պարագայց ամօր . այլ առ նորեկ

գաղթական սովորութիւն է ընդ դրացիս համարել գմիմեանս յորժամ անտառք էս լէրինք էսէք անշրպետեն զնոսս յիբերաց : Մանաւանդ զի գայնու ծամանակաւ նուազ էսս էր վաճառաշահութիւն կողգոյս ընդ Հնդկաց աշխարհին . որով էս դրացին էսէք յինել բաւական էր ի բարեկամութիւն , էս հիւրասիրութիւն ի պարտուց համարի էր էս ցանկալի իսկ : Իբրէս յուայ էս էրէ հիւր ոմն էկեայ հասեայ էր առ դրակիցն իմ , յայց էլի առ նա , զի բերէս պիտանի իմիք յինիցիմ միում էս կամ միասումն : Ես տեսի գտիկինն Լարուր բարետեսիլ , ազնուակերպ էս քախժադեմ . էս մերն էին անուրբ ծնանելոյ նորս : Ասացի էս ցտիկնայն ցերկոսին էրէ առօգտի որդւոցն ձերոց էս մանաւանդ առ ի կարձել գլտանգ բնակակցելոյ ի տեղւոջոյ այլոյ ուրուք էկաւորի՝ ի դէպ է բաժանել ի ձեզ գնովիտոյ գայոյ որ ունի արտավարս իբր քսան : Նորս յիս ինքն յանձն արարին զբաժանումն գայն , էս էս յարաբաժին արարեայ յերկուս հատի մասունս զոգցես հասասարաջափս : Ի միում բովանդակէր վերին մասն շրջապատիս , ի ձիւնապատ ժայռեղ՝ ուստի բղխէ աղբերակն առուակին Լատանենեաց , մինչէս ցտեպացեայ պատառուած յերինոյ զոր նշմարես , որում էս Մահարձան անուն կոչեն , քանզի բերէ իսկ զնմանութիւն մահարձանաց պարսպի : Խորամէջ էրկրին այնորիկ այնպէս ապառաժուտ է էս վախուտ՝ զի հագիւ քէ գնայ որ ի նմա . սակայն ունի էս ծառս մեծամեծս , էս բազմութիւն յոյժ աղբերաց էս առուակաց : Իսկ ի միասում բաժնին ամփոփեցի էս գետորին մասնն որ տարածեայ ձգի ընդ էրկայնութիւն զետակին Լատանենեաց մինչէս ի գայ ի դաշտաբերան այսր յորում կամբս , էս աստի ահա սկսանի զետակն հոսել ընդ մէջ էրկուցս բլրակաց էս գնայ քափի ի ծով : Է անդ էս մարգագետինն էս էրկիր տափարակ որպէս տեսանես , այլ ոչ ինչ լաւագոյն քան գմիւսն է . քանզի յանձրէւարաց անուրս ձախճախուտ գործի , էս յերաշտութեան կարծրացեայ պնդի իբրէս զկապար , որպէս զի ի կամել ուրուք փոս հատանել ի նմա՝ տապարս . հարկ է գերկիրն պատառել : Ես իբրէս այսպէս յերկուս զգետինն բաժանեցի , յորդոր էղէ տիկնայցն էրկոցուն վիճակս ի վերայ արկանել : Բաժինն վերին վիճակեցաւ Լարուր տիկնոջ , էս ստո-

քինն Մարգարտի . Եւ երկարանջիւր Էսս հաճք Եւ հաւանք գտան ընդ անցնիւրն վիճակ . բայց աղէքս արկին ինձ մի գատանէլ ի միմեանց գրնակարանս նոցա, « Որպէս զի մարբացուք , ասէն , ցանգ գմիմեանս տեսանէլ , Եւ գրուցակիցս Եւ օգնականս իրերաց լինէլ : » Սակայն հարկ էր ունէլ նոցա Եւ առանձինն ինչ օրարան : Տնակն Մարգարտի ի միջակի անդ հովտին կայր , յէզր սանձանաց իւրոյ վիճակին : Հուպ նմին յերկիր բաժնին Լարուր տիկնոջ միւս այլ կառուցի տնակ , այնպէս զի ամոլքն սիրունիք Եւ դրացիք իրերաց գտան , Եւ միանգամայն յըստացուածս անցնիւր ընտանույ բնականային : Ես ինքնին ձողիս Եւ խաշար հատի ի լեռնէ , Եւ ի ծովափանցն առեալ բերի սաղարքս յատանէնէաց ի շինուած հիւղիցդ երկոցուն , որ անդուռն կան արդ Եւ անյարկ որպէս անա տեսանէալ : Նդնկ զիս . շատ իսկ են ինձ Եւ նշարբոյ սո . յիշատակէ : Ժամանակն որ արագ արագ կործանէ գղաստակերտս արբունական պետութեանց՝ պատկառե խմն յանապատս յայտոսիկ յարձանաց բարեկամութեան , զի յաւերժացուսցէ զվիշտս սրտիս մինչեւ ցվախճան կենաց իմոց :

Այն ինչ երկրորդի հիւղոյն աւարտեր կառուցումն , Եւ անա տիկինն Լարուր ծնաներ դուստր մի : Իմ իսկ ընկալեալ էր ի սրբոյ աւագանէն գորդին Մարգարտի , Եւ Պօղ զնա անուանեալ : Աղերսեաց Լարուր տիկին զի Եւ իւրում դատերն Ես անուանեցից գանուն ընդ սիրունոյն իւրում Մարգարտի . Եւ նա յորջորջեաց գերախայն Վիրգինէ , ասէ . « Առասրինագարդ էղիցի սա Եւ բարեբաստիկ . զի Ես յայնժամ գաղետից սո . զփորձ յորժամ յառաքինութենէն խտտրեցայ : »

Իբրեւ անցին առուրք ծնանէոյ Լարուր տիկնոջն Եւ կագրութեցա . բնակարանքս դուզնարեայր տակաւ բարգասանեցին իմովքս խնամօք , Եւ մանաւանդ անդույ վաստակօք ստրկացն երկուց : Ստրուկն Մարգարտի Դոմինիկոս անուն՝ Նօյոմ էր յազգէ (բնիկ Ափրիկեցի) , յայիս խոնարհեալ , այլ դեռ Էսս յազգոջ Եւ յուժի , այր հմուտ արուեստին , Եւ ողջամիտ ի բնէ . Եւ վաստակեր անխտիր ի մշակութիւն երկոցունցն Էսս բնակութեանց՝ ուր Եւ գտաներ երկիր արգասանդահող , Եւ արկաներ

սերմանիս ճահողագոյնս երկրին : Ի տեղիսն որ ոչ յոյժ քա-
ջաբերք էին՝ սերմաներ կորեակ էս եգիպտահատ . ի պարարտան
արկաներ ցորեան , ի ճախինս բրինձ , էս առջնքեր ծայռից սե-
խենիս , դդմենիս էս վարնգենիս , որ սիրեն սողոսկել պատել
զնորօք : Յոստին տեղիսն տնկեր գետնախնձոր քաղցրահամ
յոյժ , էս բամբակենիս ի բարձրասնդակս . յերկիր կարծրապինդ



Եղեգնաշարար , զբլրակօք խահուենիս , բեպետ էս մանրա-
հատս՝ այլ ազնիւս յոյժ : Առ ավամբք գետոյն էս շուրջ զտնա-
կօքն աղամարգենիս տնկեր , որ ընդ ամն ողջոյն ողկուգամէս
պտղաբերեալ , էս գործեն ախորժ հովանի . էս էս տունկս սա-
կասս ծխախոտոյ մշակեր ի սփոփումն վշտաց անձին էս ի
դիւր սրտի տիկնայցն իւրոց բարեսիրաց :

Երբայր էս ի լեառն հարկանել վայտ յայրումն , էս ու-
ղիս ի կալուածս անդ հորդեր՝ հատանելով ի տեղիս տեղիս
զքարածայռսն : Ես գալս ամենայն վաստակս վաստակեր նա
հանձարով էս ժուրեամբ , քանզի սիրով առնէր զոր ինչ առ-
նէրն : Հաստարիմ յոյժ էր նա Մարգարտի , ոչ ինչ նուազ էս
Լարուրի , գորոյ էս գնածիշտն խափշիկ առեալ էր ի կնուրեան
յառուր ծննդեանն Վիրգիւնեալ , էս խանդակար էր ի սեր նորս :
Անուն կնոջն Մարիամ էր , բնիկ ի Մատակասարս կղզոյ , ուս-

տի է. ձեռնարուեստս ինչ ուսեսլ գիտեր, առաւել հմուտ գոյով հիւսելոյ սակառփս է. փսիարս յանտառաբոյսն սիգոյ : Աշո-
ղակ էր ի գործ , մաքրասեր , հաստարիմ յոյժ : Ի նա յանձն
էր հոգ պատրաստելոյ զճաշ , բուժանելոյ զհասս , է. էրբէր
էրբէր ի վաճառ տանելոյ ի Փոր-Լուի գխուն ինչ յաւելուածս
ի պիտոյից տանցն էրկոցուն : Ընդ տսին գրեսչիք է. գայծիսն
էրկու որ առընքեր տղայոցն առնուին դարման , է. շուն մի
գամփռ որ պահպանութիւն առնէր վայրացն ի գիշերի , է. ի
միտ առցես գրովանդակութիւն հասից է. ընտանեաց գերդաս-
տանացն էրկոցուն փոքրկանց :

Իսկ տիկնայքն էրկոքին գորն ցերեկ պարապէին ի մանել
բամբակ , է. այն բասկան էր ի հայթայթել զկարեսոր պետս
նոցա է. զընտանեացն . սակայն է. ի կենցաղական դիւրու-
բեանց յոկ է. բափուր էին այնչափ զի բոկոտն շրջէին առ
տնին . է. յառարս կիւրակիից է. էր կոշիկս ազանէին կանխել ի
յուր սրբոյ պատարագին յեկեղեցի անդր Կիտրոնեաց ' գոր
տեսանեղ անա ի բացէ : Քեպետե. մտագոյն էս է բաղարն
բան զեկեղեցին , այլ նորա դուն ուրէք անդր զնային , զի մի
ամօր է. արհամարհանս կրեսցեն . բանզի կապոյտս խոշոր պեն-
կալացիս հանգոյն գերեաց զգենուին : Ես սակայն իցէն ինչ բնա-
կարծիք մեծարանաց մարդկան առ ընտանեկան բարեբաստու-
բեամբ : Սմին իրի է. տիկնայքն էրկոքին երէ սակաւիկ մի
վշտանային էսս արտաբոյ , այլ առաւելագոյն բերկրանօք դարձ
ի տուն առնէին : Մարիամ է. Դոմինիկոս այն ինչ նշմարեալ
զնոսս ի բարձրաւանդակէ աստի զի գային ընդ ուղին Կիտրո-
նեաց , ընթանային միւնչէ. ի ստորոտ յերինդ ' ձեռն կարկառել
նոցա ի վերելս . է. նորա յաջս իսկ գերեացն նկատէին ակներե.
զխնդութիւն նոցին ընդ դարձ իւրեանց : Անդէն առ տնին գտա-
նէին նորա զմաքրութիւն է. զազատութիւն է. արդիւնս պատ-
րաստեալս ի սեպհական վաստակոց իւրեանց , է. ծառայս տի-
րասերս է. հաստարիմս : Իսկ է. ինքեանք համակարիք է.
նմանավիշոր էլով , է. բաղքրամայն անուամբքս ' սիրուհի ,
նծղեհակից է. բոյր հարագատ զմիմեանս յորջորջէին , միակամբ
համախնդիրք է. սեղանակիցք : Ամենայն ինչ հասարակաց էր

առ. նոսա • Ե. երէ երբէր վաղեմի ինչ կայծակն նրոյ բոցակի-
գագոյն քան գբարեկամութեանն ի սիրտս նոցա ի վեր երեւեր ,



սակայն հաւատք ամբիծք ընդ զգաստասեր բարուցն աշակ-
ցեալ՝ ամբառնային զնոսա յայլ իմն կեանս , գորեն բոցոյ՝ որ ի
ջգտանէլն ճարակ յերկրի՝ ի վեր ընդ երկինս սլանայ :

Բնութեանն պարտք երանաւետ Եւս զկենակցութիւն նոցա գոր-
ծեին . Եւ մտերմութեանն ջափ առաւելոյր ի նոսա ի տես որդե-
կացն , որ Եւ երկոքին Եւս արգասիք էին տարաբաղդիկ սիրոյ :
Քաղցր էր նոցա ի նմին յոգարանի գորդեակսն յուանայ , Եւ
ի նմին որբանի ի նինչ հանգուցանէ : Բագում այն էր զի Եւ խառն
զմանկունս իրերաց դիեցուցանէին . Եւ տիկինն Լարուր ասեր
ցՄարգարիտ . « Սիրեցեալդ իմ , բող որդեակք կրկին երկա-
քանջիւրոցս Եղիցին , Եւ որդեկացս երկարանջիւր մարք կրկին : »
Չոր օրինակ ընծիւղք երկու յերկուս ամպանաբեալ ծառս ոս-
տաքանցս համասեռս մնացեալք՝ պտուղս քաղցրագոյնս ընծայ-
են , երէ քեցեալ երկարանջիւր ի մայրենի բնոյն ի միւսն պա-



H. Corbeul del.

G. Corbeul et Wignacourt sc.

տու.սաստեցին, նոյնպէս և տղայրն երկոքին, որբացեայր յագ-
գակցաց, այնպիսեօք գողտրական գորովանօք լնուին, զի քան
գուստեր և զղստեր, քան գեղբօր և քան գրեռ. քաղցրագոյն
ազդեր ի նոսա սեր ի փոխանակել անդ գմիմեանս ի դիեցումն ի
գիրկս մարցն ծնելասիրաց: Մինչդէռ. տակաւին ի խանճարուրս
կային տղայրն, մարք նոցա գնարսանեաց նոցին գրոյց ի մեջ
առ.նուին . և բարեբաստիկ ամուսնութեան անդստին տեսու-
բեամբ գվիշտս իւրեանց սփոփեայ՝ բազում այն էր զի ի վերջե
յարտատուս լուծանեին. քանզի մին չարեացն հասելոց յիւր վերայ
պատճառս գայն համարեր, զի հարսանեկան օրինաց ոչ էկաց
պատկառ., և միւսն՝ զի ընդ յծով նորին էմուտ. մին զի գեր ի
վերոյ քան զիւրն պայման կենաց ամբարձս., և միւսն զի խո-
նարհագոյն քան գայն էջ . սակայն և մխիթարեին յուսով, քե
էկեսցէ օր յորում որդեակքն իւրեանց հետի յերոպականացն
դժնդակ մտահաճութեանց՝ վայելեսցեն ի սեր և ի հաւասարու-
րին բարեբաստիկ:



Ն. արդարեւ անդստին իսկ յայնմ հասակէ անգուգական իմն
էր տղայոցն այնոցիկ ընդ միմեանս աղապատանք: Եթէ էրբէք զլայ
հարկաներ Պօղ, զՎիրգիկե ցուցանեին նմա, և անդէն գուար-
բացեայ հանդարտեր: Ն. Էթէ յանկարծ վշտանայր ինչ Վիրգի-
կե, ի Պօղայ ձգելոյն զգային գայն ծնողքն . սակայն նագելին
այն դստրիկ իսկոյն գվիշտն ծածկեր, զի մի վշտակից անճին

խորոյլիցի Պօղ: Բանիցս անգամ է գայիես այսր, մինչդէռ հագի գօրէին տղայքն ուն յոտանէ փոխել, տեսանէի գնասս մեռն ի մեռն խառնեայ է. բէ. ի բէ տուեայ հոյանիս ըստ սովորութեան երկրին, յար է նման որպէս Երկուորեկացն նկարագրի կենդակ: Այլ է ոչ գիշեր ինքնին գատանէր գնասս ի միմեանց. քանզի յաճախ ի նմին որբանի ընկողմանեայ, այտ գայտի հարեայ, յանջս ի յանջս կցեայ, է գղաստակսն գպարանոցաւ իրերաց արկեայ՝ ի գիրկս միմեանց նիրն առեայ ննջէին:

Իբրէս այն ինչ յեզուք նոցա ի խօսս պարգէին, նախկին ի նոցանէ յսելի լինէր բարբառ՝ Էղբայր է. քոյր գմիմեանս յորջորջելոյ. քանզի մանկութիւն քեպետ է ճարտար է ի հնարս գողտրագոյն գգուանաց, այլ անուանս քան գոսսին քաղցրագոյնըս ջգիտէ հնարել: Իսկ դաստիարակութիւն ի վերայ եկեայ յաւել է. էս ի նոսս գտիրելութիւն, ի մեռնտու. օժանդակութիւն պիտոյից միմեանց վարելով գնոյն: Վիրգիւնեայ ոչ յետ բագում ժամանակի յանձն եղէ. հոգ ունել տանն է. միտ դնել մարտութեան, է գճաշն անպաճոյճ պաշտել. է այնմ ամենայնի յանձանձանաց գնետ գային համբոյրք Էղբօրն է. դրուատիք:



Իսկ ինքն Պօղ ժիր ի վաստակս անդադարս՝ մերք պեղէր ի պարտիգին ընդ Դոմինիկեայ, է մերք փայտատ փոքրիկ ի մեռս

առեայ՝ ի մայրիս ընդ նմա գնայր. Եւ թէ Էրբէր ի դեգերանսն իւրում գտանէր ծաղիկ գեղեցիկ , կամ միրգ անուշակ , կամ բոյն բուջնէկի , բեպետ Եւ ի ծայրս ուրէր բարձունս ծառոց պատանէին՝ վերելակէր Եւ առնոյր , Եւ բարձեայ բերէր մատուցանէլ քեռն իւրում :

Ի հանդիպել ուրէր միումն ի նոցանէ , ոջ գոյր երկբայել զի Եւ միւսն ոջ ի բացէ կայ ի տեղւոջէն: Յաւուր միում միւջդեռ իջանէի ի լեռնէ աստի , տեսի զՎիրգիւնէ զի ի ծագաց պարտիգին ի տուն ընքանայր՝ գպատմութանն յետկուսէ գզլխովն ամեայ իբրէ. ի ծածկոյք յերեսաց անճրեւացն տարափոյ : Միայնիկ զնա համարեցայ ի բացուստ. այլ իբրէ մատեայ օգնել նմին յընթացս , տեսի զի ունէր նա զՊօղայ ձեռանէն՝ ընդ նովին ձորձով ծածկեայ Էրկոցուն , Եւ Էրկոցուն Եւս ժպտելով ընդ պատսպարան հովանէկին՝ գոր իւրեանց իսկ էր ճարտարեայ :



Այն գլուխք հրաշագեղը հողմուռոյց պատմութանան պարածածկեայք՝ զՂեստովայ որդեակսն ինձ յաշ արարին զ՛ի նմին խեցուջ պատսպարեայս ³ :

Ամենայն փոյք նոցա այն էր , համէլ զիրեարս , Եւ օգնական լինել միմեանց: Բայց Էրկոքին իսկ անուսմունք էին , որպէս Եւրոպացիքն առ հասարակ յԱմերիկա ծնեայք , անգետք ամենէին դպրութեան Եւ ընթերցման : Չէր ինչ նոցա փոյք զիտելոյ

գանցս վաղնջուցն ժամանակայ է. գվայրաց հեռաւորաց . հետարննութեան նոցին սահմանք ջանցանէին անդր քան գայս լեռոն . կարծէին թէ անդ իսկ էր ծայր է. աւարտ աշխարհի՛ ուրանօր է. կղզեակն իւրեանց աւարտեր . է. ուր ինքեանք ոչ էին՝ անդ է. ոչ մի ինչ սիրայորդոր համարէին թէ գուցէ : Ի կարողին առ միմեանս է. առ մարս իւրեանց սիրելութիւն պարապէին ցանց միտք նոցա : Սնուտի գիտութիւնք ոչ քամեցին երբէք արտասուս յաջաց նոցա, է. ոչ խրատութիւնականք տաղտկացուցին զնոսա : Չգողանայոյն օրինաց անգէտք էին նոքա , քանզի հասարակաց էր ամենայն առ նոսա . է. ոչ՝ թէ չէ օրեն շուայտել, զի անպաճոյճն կերակուր առ ձեռն պատրաստ կայր նոցա . է. ոչ՝ թէ չէ արժան խօսել տուտ, զի ոչ էր ինչ առ նոսա



ճշմարտութիւն կարօտ քանգուգանաց : Ոչ էր ուրուք անաջուցեայ զնոսա երբէք սպառնալեօք աստուածասատ պատուհասից առ որդիս սպաշնորհս , քանզի նոցա ճնողասերն գորով ծնունդ էր գորովոյ մարցն որդեսիրաց : Չայն ինչ իդս է. էք ուսեայ էր նոցա յաստուածպաշտութեան կարգաց, ըստ սիրելի գիրօսն ընծայեն . է. էրէ ջլերկարէին յեկեղեցուոչ գաղօթս, սակայն ամենայն ուրեք, առ տնին է. յանդի է. ի մայրիս զձեռն ամբիծս է. զսիրտսն լցեայս ճնողագուր սիրով յերկինս ի վեր ամբառնային :

Զայս գոյն օրինակի անցաներ գուարթաձաղիկն նոցա մանկութիւն իբրեւ գայգ գեղածիժաղ՝ նշույագարդ տուրնջեան ասե-տաւոր, և տակաւ սկսանէին վաստակակիցս մարցն լինել ի յանձանձանս առտնին իրաց : Ընդ ազդել հաւախօսին գայգոյն



զգալուստ՝ յառնէր Վիրգիլնէ, գնայր գշրոյ յաղբերակն մօտակայ, և դարձ ի տուն արարեալ՝ գնախաձաշն հանդերձներ: Իսկ իբրեւ արեգակն ոսկեճաճանջ զգագարունս բլրոցս շուրջանակի գեղերփներ, կանխէր Մարգարիտ ընդ խորունն որդէկի առ Լարուր տիկին. յայնժամ ամենեքին միաբան յաղօթս կացեալ նախ, և ապա թէ ի նախաձաշ մատչէին. բագում այն էր զի առ դրանն արկանէին բագմական ի դալարուջ ընդ հովանեաւ աղամարգէնեաց՝ որ և համադամս կագմիկս զնիւթէղ պտուղսն ընճեռէին նոցա, և ծածկոյրս սեղանոյ գաաղարքս իւրեանց երկայնամէս և փայլունս: Այնպիսեաւ ստածիչ և աննիւզ կերակրով արագ արագ աճումն առնուին պարմանիքն երկօրեան, և քաղցրահամբոյր դաստիարակութեամբ փայլէր ի դէմս նոցա ոգոցն ամբծութիւն և հրճուանք: Զերկոտասանամէնիւք ուրեմն էր Վիրգիլնէ, և կերպարան բոլոր անձինն սակաւինջ ընդհատ ի գարգուն տիւղ. գիսակր վարսիցն խարտիշագեղդ զգլխովն հովանացեալք . ծախ ականողիք և շրթուք կարմրա-

49-2013



լառք յառոյց դեման փայլին ակնահանճոյ շողշողեալ, ժպիտս միանգամայն ընդ բարբառել նորա ծաղկեցուցանելով . իսկ ի լուելն, հայեցուածք աջաց նորա՝ յերկինս կոյս ի բնէ իմն պարզեայք՝ յայտ առնէին զդիւրագգած գորովանս եւ զընդաբոյսն քախձութիւն : Իսկ Պօղ ի ծաղկի պատանէկութեան զառն ի չափ հասելոյ բերեր զնկարագիր : Բարձրալիտակ էր նա քան զՎիրգիլն , քիսատիպ եւ արծուունգն . աչքն սեւաբոյրք խորխտապանձր արդեօք երեսէին՝ երբ ոչ արտեսանունքն երկայնատեգք շուրջանակի ճառագայրածեւ փողփողեալ՝ յաւելութիւն ի նոսա ամորախառն ինչ քաղցրութիւն : Թեպէտ եւ յար ի շարժման կայր , սակայն ընդ տեսանել զբոյրն հանդարտեր նստեր առ նմա լուիկ . եւ յաճախ ի ճաշէլն իսկ եւ ոչ մի ինչ զբոյց ընդ միմեանս առնէին . որպէս զի ի լուութեան անդ նոցա , ի տեսիլ վայելչութեան դրից՝ եւ բոկանի ոտիցն զեղոյ բուեր տեսողաց նկատել կիցս իմն վաղեմի անդրեաց քանդակեալս ի կիճ սպիտակ՝ զՆիոբայ որդեկացն բերելով զպատկեր՝ : Իսկ հայեցուածովքն՝ որ հանդիպել իրերաց խնդրէին , եւ փոխադարձ քաղցրածպիտ զբարբութեամբն բուէին որդիք լուսոյ զուարթունք երանաւետք , բնաւորեայք սիրել զմիմեանս , որոց ջեն ինչ պէտք խորհրդոց առ ի յայտնել զսրտիցն զգածմունս , եւ ոչ բանից՝ առ սիրոյն յանդիմանութիւն :

Բայց Լարուրի տիկնոջ ըստ զարգանայ օր ըստ օրէ դստերն իւրոյ ի գեղ եւ ի հասակ՝ յաճախէր ընդ որդեգորով սիրոյն եւ անձկութիւն սրտի . եւ ասէր նա ցիս երբէր երբէր . « երբ զամ մի մեռանել ինձ հասանիցէ , զի՛ գործեսցէ Վիրգիլնէ ի կարօտութեան : »

Էր նորա ի Գաղղիա մօրաբոյր տոհմիկ , ընչաւետ , անցեալ զառուրբք եւ բարեպաշտօն . սա ի հարսնանայ նորա Պ . Լարուրի՝ զյացեալ էր նմա զամենայն օգնականութիւն այնպիսեաւ իմն տմարդութեամբ , զի եւ նորա հաստատութեամբ եղեալ էր ի մտի ի յետնումն եւս կարօտութեան ջխնդրել ինչ ի նմանէ : Բայց իբրեւ մայրացան՝ ոչ եւս զանգիտեր յամօթոյ անլսելի լինելոյ : Զեկոյց մօրաբեռ իւրում զյանկարծադեպ վախճան առնն , զծնունդ դստերն եւ զառաւապանս զոր կրէր հեռի ի հայրենեաց

անոր անօգնական՝ հոգովք որդեկին ծանրաբեռնեալ . այլ ջընկալաւ . ինչ ի նմանէ պատասխանի : Նա զի էւ խորխտն էր բնութեամբ , էւ սակայն յանձն էառ խոնարհել էւ նշաւակ կալ կշտամբանաց մօրաբեռն , որոյ ջեր էրբէր ներեալ նմա զլինելն



առն ապատոհմի , բեպետ էւ առաքինուոյ : Եւ բոքեր առ նա յամենայն ի դեպս առ ի գուր խանդաղատանաց շարժել զնա ի վերայ դատերն . բայց սանեալ անցանէին ամբ յովովք , էւ ջընդուներ ի նմանէ ցոյց ինչ յիշատակի :

Ուր ուրեմն յամին 1758 , յետ էրից ամաց ժամանելոյ Լա-Պուրտոնէ բաղաբապետի ի կղզի անդր , գիտաց զի էր առ նմա բուրք ի մօրաբեռնէն առ ինքն գրեալ : Փութացաւ անդէն ի Փոր-Լուի , ոչ ինչ հոգացեալ յայնժամ զհանդէրձիցն զճնութենէ . զի մայրենին խնդութիւն գեր ի վերոյ ամբառնայր զնա քան զմարդկան ակնածութիւն : Եւ ընկալաւ ի Լա - Պուրտոնեալ զգիրն յորում մօրաբարն իւր քաջ իսկ արժանի դատեր զնա դժնդակ բաղդին՝ վռխանակ զի ամուսնացաւ ընդ բաղդախնդիր էւ խառնագնաց առն . էւ յաւելեալ ի բանսն ասեր . « Ախտամոյն կիրք գնետ իւրեանց առեալ ձգեն զպատուհաս . վաղաճեռիկն լինել առն քո՝ պատիժ արդար է հասեալ քեզ յԱստուծոյ . գործ մի բարի արարեր դու ի կղզիսդ յայդոսիկ պանդխտելով , էւ ոչ ի Գաղղիա դնել նախատինս քումդ ազգատոհմի . այն զի էւ էրկիրդ յոր բնակես քնջաբեդուն է , էւ այդր ամենայն որ յաւելու ի ճոխութիւն , բայց ի դատարկապարտ մարդկանէ : » Եւ յետ այսպէս զնա էպերելոյ , յանձնգովութիւն զգիրն յանգուցաներ

է. ասէր. « Ես զի գերծ կացից յարգասեաց ամուսնութեան՝ որ գրեալքէ ցանգ իսկ աղետալիք էն, չկայայ երբէք յանձին գնայ ումէք ի հարսնութիւն : » Զայս նա այսպէս գրէր. բայց իրացն ստուգութիւն այս ինչ է, զի փառասէր գոյով ի բնէ՝ ազնուականի առն էր ի խնդիր. քեպէտ է. ինքն ընչաւետ էր յոյժ, քեպէտ է. յարքունիս ոչ այլ ինչ խնդրի՝ բայց ընչից փարքամութիւն, սակայն չգտաւ. որ ուրէք այր որ յօժարէր առնուլ ի կնութիւն զայնպիսին՝ օրիորդ անգեղեայ է. խստասիրտ :

Իսկ ի ստորեւս նամակին յաւելոյր, զի յետ քաջ կշռելոյ զամենայն՝ յանձն առնեմ գրեզ բագում աղերսանօք ի խնամս Լա-



Պուրտոնեայ : Եւ արդարեւ յանձնեայ իսկ էր զնա, բայց ըստ արդի յաճախ սովորութեան՝ որ բազմավտանգ էւս քան գոխերիմն թշնամի յանձնելումն գործէ զխնամարկուն. քանզի առանբասիր առնելոյ յաջս քաղաքապետին զիւրն խստութիւն ընդ դասեր քեռն իւրոյ, էւ իբր ողորմելով յաղեստ նորա՝ չարախօսեայ էր զնմանէ : Որով էւ Լա-Պուրտոնէ ձախողակի իմն կարծեօք զգածեայ՝ կարի անսիրելաբար ընկալաւ. զԼարուր տի-

կին, գնա գոր էս անձանօրի ումէր ջեր մարք տեսանէլ անկարեկիր աջօր էս առանց մեծարանաց : Հակիրճ էս սոնր տուեալ պատասխանի առ պատմեալսն ի տիկնոջէ անտի զանճնէն էս գրատերէ, ասէ . « Տեսից... տեսցուք... յորժամ ժամ առից... յորովք են ջուռառք յաշխարհի... ջեր պարտ դժկամակէլ զմօրաբոյր քո պատուական... քո է մեղն... » այլովքն հանդերձ :

Գարձաւ Լարուր տիկին ի տուն իւր սրտաբէկ էս վշտայից, էս իբրէս բագմեցաւ՝ արկ զսեղանով զքուղր մօրաբէռն, էս ասէ ցոխրունիսն իւր . « Անաւաղիկ արգասիք համբերութեան ամաց մետասանից : » Ես քանզի ինքն միայն էր ի տանն զբագէտ, բռնն էհար անդրէն զքարտիսէ անտի, էս ընքերցաւ գայն ի յուր ընտանեացն : Ես իբրէս կատարեաց զընթերցումն, ասէ ցնա Մարգարիտ գայրագին . « Բնաւ էս զի՛ պիտոյ իցէն մեզ ազգականք քո : Մի՛րէ ելիք երձո՞ զմեզ Տեր . ո՞ջ ապաբէն նա միայն է հայր մեր . էս մի՛րէ ո՞ջ բարեբաստիկք եաք նովաւ մինչէս ցայսօր, էս արդ դու հի՛մ տագնապիցիս . քաջալերեաց, մի՛ վնաստիր : » Ես տեսեալ զնա զի լայր, անկաւ գպարանոցաւն էս համբուրեաց զնա էս ասէ . « Սիրունի՞ղ իմ, իմս Լարուր : » Բայց էս իւրն սիրտ հարաւ ի փոճուկ էս էկաց մնաց անբարբառ: Յայն ողորմ տեսիլ յարտատուս յուճաւ էս Վիրգինէ մերք զմօրն էս մերք զՄարգարտին ի բերան տարեալ զճէռսն համբուրէր էս առ սրտինն ողջագուրէր . իսկ Պօղ բարկացայտ աջօր էս զբռնունսն սեղմ ունելով, զոտս ի գետին տրոփէր, էս ոջ զիտեր բէ գնմ կշտամբիցէ : Ի յուր աղմկին անդր ի ներքսն ընթացան Դոմինիկոս էս Մարիամ, էս ոջ էսս այլ ինչ էր լսել ի տնակին բայց զճիջս ցաւագինս . « Ո՞ն տիկին... բարեգութի կին... նն մայրիկ... մի՛ լար : » Ի սիրայիր զգուանաց անտի ուշաբերեալ տիկնոջն, ընդգրկեաց զՊօղ էս զՎիրգինէ, էս ի սփոփանաց սրտին ասէ . « Որդեակք իմ, դուք իմոցս ցաւոց պատճառք, դուք էս սփոփանք իմ էս խնդութիւն : Ա՛ն, որդեակք սիրունք . բացուստ ի բաց հասանէն ինճ աղետքս այսօրիկ, իսկ զինէս ոջ այլ ինչ գտանեմ բայց բարեբաստութիւն : » Զի Պօղ էս Վիրգինէ քեպտ էս հաւաստեաւ ոջ կարէին ի վերայ կալ բանիցն զօրութեան, այլ զի հանդարտեալ զնա տեսանէին՝ զուարթագինս

փար էին գնովա : Եւ այնպէս անդրէն ի խնդամտութիւն դարձան առ հասարակ, որպէս ամպրոպայոյզք ի գեղածիծաղն յեղանակի վաղ ընդ փոյք անցեալ :

Բայց բարեբոյսն բարք մանկանցն երկոցուն աճեր օր ըստ օրէ : Յաւուր միում կիւրակէի ընդ արեւածայրսն մինչդէռ մարք նոցա յեկեղեցւոջ կիտրոնեացն ի յուր կային նախամատոյց պատարագի, եկն ի տուն նոցա կին ոմն խափշիկ յեռնաբնակ ի ներքոյ աղամարգէնեացն որ շուրջ էին զբնակարանաւ նոցա : Եւ եր կինն ցամաքեալ կճղացեալ մեռելատիպ կերպարանօք, եւ սփածեալ զմիջովն գրգռեակ պատանաւտուն : Անկաւ առ ոտս Վիրգիլեայ, մինչ նա դէռ զնախաճաշ իւրոցն հանդերձեր, եւ ասէ . « Մանկիկ օրիորդ, գրա յիս ի գերեակս փախստական .



յամտոյ հետեւ սովայրուկ եւ կիսամահ ի մեջ յերանցս քափ առեալ շրջիմ, յաճախ եւս հարածական վարիմ յորտորդաց եւ ի բարակաց նոցին : Փախստեալ հասեալ գամ յերեսաց տեսաւն իմոյ որ մի է յընջաւետ բնակչաց Սեաւ Գետոյ, նա ինքն եարկ զիս յայս պայման ջարադէտ : » Եւ զայս ասացեալ ցուցանէր նմա գերաշխեպս մարմնոյն խորացեալս ի խոշտանգանաց գանից : Եւ յաւել ասէ . « Կամի իսկ գետամոյն գանձն իմ կորուսանել .



H. Verbeek del.

J. Corneille et Wegmann sc.

վտիտ մարմնով, բխատիպ կերպարանօք էս խորակն, էս յօնքն սեւաւք յիրեարս կցեին : Կայեալ Վիրգիլեայ գմեռանեն Պօղայ մատեսաւ առ այրն ահ ընդ ահ, էս աղաչէր զնա ի սեր Աստուծոյ ներել աղախնոյն իւրում, որ ի բացէ կայր ի քիկանց նոցա : Նա գառաջիւնն ոչ ինչ էրեսս արար մանկանցն Երկոցուն՝ հայեցեալ յաղբատին ձորձս նոցա . այլ իբրէս ետես զջքնաղ կերպարանս Վիրգիլեայ էս զխարտեալ զիսակս նորա ընդ կապուտակ քօղովն, էս յուսաւ զքաղցրաձայն բարբառ նորա, որ ընդ բովանդակ անձինն դողդոջէր ի հայցել անդ ի նմանէ զնորոն, ի բաց էդ զծխափողն ի բերանոյն, էս զցուպ իւր ընդ երկինս ցգեալ՝ ետ երդումն սոսկալի էս ասէ . « Ներեալ դմա՝ ոչ ի սեր Աստուծոյ, այլ առ քոյ սիրոյդ : » Եւ Վիրգիլեայ ակնարկի առ խափշիկն արարեալ զի յառաջ առ տերն իւր մատիցէ, ինքն փութացաւ խոյս ետ ի տեղւոջէն, էս Պօղ զնետ նորա :

Եւ դարձ արարեալ ի միասին ընդ գառ ի վերն ընդ որ իջեալ էին, նստան ի կատար յերինն ընդ ծառով ուրէք վաստակաբէկք էս ծարաւահոյժք . զի յայգուռ անուրն անկեայք յուղի՝ խրասախս ասելի քան զհինգ հատեալ էին անսռաղ : Ասէ Պօղ ցՎիրգիլե . « Քոյր իմ, վաղ իսկ հասարակեալ է օրս . քաղցեալ էս դու էս ծարաւի . էս ճարակ ինչ գտանել աստ չիք . էկ իջցուք վերստին, զնալ խնդրել մեզ կերակուր ի տեսունէ գերոյն : » Պատասխանի ետ Վիրգիլե . « Ո՛հ, մի սիրելիդ իմ . այրն այն անաբէկ արար զիս : Յուշ քեզ գոր ինչ մայրիկն մեր սովոր է ասել . Հաց անօրինին կոպձով լնու զբերան : » Կրկնեալ անդրէն Պօղայ ասէ . « Եւ զի գործիցեմք, զի էս պտուղք ծառոցս անպիտանք են ի կերակուր . չիք էս ոչ մոշենի աստանօր էս ոչ քրուէնի առ ի բուժանել զծարաւ քո : » Վիրգիլե ասէ . « Տեր ողորմեսցի մեզ, այն որ տայ կերակուր ճագուց իսկ բուջնոց որ ձրձուէն առ նա : » Միւնչդեռ բանքն ի բերան նորա էին, հարաւ յունկն նոցա խոխոջ աղբերական որ ոչ ինչ հեռի ի տեղւոջէն զահալիժէր : Ընբացան անդր, հարին գպատուք իւրեանց յականակիտ աղբերէն, էս քաղեալ կերան խոսն ինչ շրկոտեմ զափամբ առուակիին բուսեալ : Եւ միւնչդեռ այսր անդր աչս ամեալ հայեին գտանել քերեսս այլ ինչ կագուրիք քաղցոյ, նշմարեաց


վիրգինէ ի ծառս անտառին մատաղատունկ յագգէ արմաէնեաց : Կաղամբանէ գնդակն սաղարքապատ ի գագաթան տնկոյն, քաղցր էր յոյժ ի կերակուր . եւ քեպետ բուն նորս ոչ ինչ աւելի քան գարունից ուներ քանճրութիւն, ամբառնայր վարչուն ոտնաջափ . փայտ նորին խորճ իմն ի բելից բագմաց բուի յողէալ, այլ կուրծն որ ի միջի՝ կարծրապիւղ է յոյժ, սայրատուր իսկ տապարաց անտեղիտալի . իսկ Պօղայ չէր անդ եւ ոչ նրան մի փոքրիկ : Ուշ ի կուրծս անկէալ հուր հարկանել գարմանեանոյն, վարաներ դարձեալ՝ ջունելով նրահանս, եւ յապառածուտ կղզւոջ անդ չէր արդեօք գտանել կայծաքար : Բայց հարկ ի ձարտարութիւն դրդէ գայր . եւ բագունք ի պիտանեգոյն գիւտից ի բշուստաց են հանձարեալ : Խորնէցաւ ըստ սէռցն օրինակի



վառել հուր : Առեալ ընդ ոտիւք ոստ մի ծառոյ գօսացելոյ, ծակ ի նմա գործեաց ծայրիւ քարի, եւ ապս սայրիւ նորին տաշեալ նրբեալ այլ իմն ոստ չոր, միտեաց գայն ի ծակ միւսոյն որ ընդ ոտիւքն էր, եւ շրջշրջեալ ուժգնակի ընդ ափ որպէս գաղօրեակ չորոյաքի, ետես եւ ահա ծուխ ընդ ծակն ելաներ եւ կայծակուեր անտի հատանեին : Յայնժամ քաղեալ խոտ չոր եւ խոխու եւ կրկուտ, արար հուր առ արմին արմանենոյն, եւ իսկոյն կործան անկաներ ծառն մեծաւ ձարձատմամբ : Նովին հրով կէ-

դէնեաց եւ գալուստն կաղամբանէ, ի փշայից սաղարքապատ
ի կարծր պատէնիցն : Ջկէս նորին կերան անէփ, եւ գմբւս կէսն
էփեալ ընդ մոխրով, եւ երկաթին եւս քաղցրաճաշակ ի քիմս
նոցա բուէին : Եւ ուրախութեամբ գանպաճոյճ կերակրիկն ճա-
շակեցին յիշատակաւ առաւօտին բարեգործութեանն . սակայն
խնդութիւն նոցա աղմկեր յածել զմտաւ զմարցն տագնապ ընդ
անտես լինել իւրեանց յերկար ի տանէ . եւ Վիքզինէ ստեպ
զկասկածն գայն լեղլեղեր : Սակայն Պօղ կագոութեալ կերակրովն
սրտապնդեր զնա եւ ասէր . « Փոյք ընդ փոյք հասեալ արդ սփո-
փեցոսք զծնօղս մեր : »

Եւ յարուցեալ ի ճաշոյն վարանէին, ջուներով զոք ուղեցոյց
առաջնորդել նոցա ի տուն : Պօղ որ անխռովն էր յամենայնի,
ասէ ցՎիքզինէ . « Տուն մեր յարեակողմն կոյս ի միջօրեալ
անկանի . հարկ է մեզ ապա անցանել, որպէս յառաւօտուս,



ընդ լեռուն երէքսարեան որ հանդեպ մեր կայ : Օն արի, գնաս-
ցոսք, բոյր իմ : » Եւ անուսն լերինն էր Եռաստին, զի սարք նորա
երէքին գտեանց բերէին զմէս : Հապա իջին ընդ հիւսիսակող-
մեան ձորամեջ Սեաւ Գետոյն, եւ ճանապարհ արարեալ ժամ
մի հասին յափն յայնաժառայ գետոյ որ խափանէր զանցս նոցա :
Անտառախիտն այն կողմն մեծ կղզոյն անձանօք է ցարդ, մին-
ջէս յոյովից ի գետոց անտի եւ ի լերանց որ ի նմա՝ դէռ եւս
պակասէն անուանք : Գետն յոր հասին՝ յորձնեռանդն իաղայ

ընդ ժայռս խոխոջանօր . յորոց զանգիտեալ Վիրգիլնեայ ոչ իշխներ միջամուխ լինել սնցանել ընդ հունն : Յայնժամ Պօղայ ըստանճնեալ զնա , անց բեռամբն ընդ լպիրժ ապառաժս գետոյն աներկիւղ ի յորճանաց անտի , եւ ասէր ցՎիրգիլնէ . « Մի ինչ էրկնջիցիս . հօգր եմ ես՝ մինչ դու ընդ իս կաս . էրէ տանու-



տեառնն չէր շնորհեալ քեզ զներումն գերւոյն ,² մենամարտի ընդ նմա : » Վիրգիլնէ ասէ . « Եւ իբր հնար էր քեզ ընդ անօրէն հսկային գալ ի վեգ . ապա ուրեմն ի վտանգ մեժ արկի զքեզ : Քանի՛ դժուարին է բարերարել . իսկ չար ինչ գործել զիւրին յոյժ : »

Եւ իբրեւ էլ Պօղ ի ցամաք , դեռ էւսքերբն հանդերձ ըստ անձին յառաջ վարէր գճանապարհն՝ յուսացեալ էլանել նովա . ընդ լեառնն եռաստին , որ կիսով վարսախաս կայր ի բացեալ . այլ

վաղ պարտաւեայ անկեայ յուժոյ, հարկեցաւ դնել զնա ի վայր
Եւ հանգչել առ նովաւ : Ասէ ցնա Վիրգիլն . « Օրս տարածամէ ,
Եղբայր իմ . դու դեռ եւս յուժի կաս , իսկ ես վաստակաբէկ . բող
զիս աստեն , եւ դու միայնակ դարձ ի տուն արարեայ հանգո
զսիրտ ծնողացն մերոց : » Եւ ասէ Պօղ . « Ոն քան լինեն . ոչ բողից
զբեզ : Երէ գիշեր ի վերայ հասցէ մեզ յանտառի աստ , լուցից
հուր , հարից արմաւենի , զկաղամբն շամբեցից քեզ , եւ սաղար-
քիսն յօրինեցից քեզ տաղասար : » Բայց իբրեւ ոգի էառ . սա-
կաւիկ մի Վիրգիլն , խէաց ի հիւնաւորցբնոյ ծառոյն որ խոնար-
հեր անկաներ զգետեգերբն՝ տերեւս երկայնածիզս գաղտակրի ,
Եւ ձարտարեայ նոքօք տրեխաւորեաց գոտս իւր արխնաներ-
կեայս ի քարանց ձանապարհին . քանզի առ հապճեայ փութոյն
ի բարերարել՝ մոռացեայ էր ազանել կօշիկ յոտս իւր : Եւ իբրեւ
սփոփեցան զարշապարքն տերեւոցն հովութեամբ , Եհատ գաւա-
զան ի հնդիկ եղեգանէ Եւ անկաւ յուղի՝ միով մեռամբ յեղբայրն
յեցեայ , Եւ միւսովն ի ցուպն եղեգնեայ :

Այսպէս հանդարտարայլ ձանապարհն ընդ մայրիս սոռնէին .
այլ ծառք բարձրաբերձք Եւ սաղարքախիտք վաղ իսկ կալան
յաջաց նոցա գլետուն Եւաստեանց , յոր դիմ եղեայ զնային . Եւ
արեգակն ի մուտս խոնարհեր : Իբրեւ պան մի էանց ի վերայ ,
խոտորեցան յանգզայս յարահետ ձանապարհն , Եւ յանել ինչ
անկան բաւիղ ծառոց , բաղեղանց Եւ ապառաժից : Պօղ ասաց
ցՎիրգիլն նստել առ տեղեան , Եւ ինքն այլ յայլմէ եղեայ այսր
անդր ընթանայր՝ էլի աղագս գոսանել ի քփուտ մացառաց անտի .
այլ գրաջան եղէս ամենեւին : Ել ի կատար ծառոյ միոյ բարձու
զի գեր զեռաստինն տեսանիցէ գլետուն . սակայն ոչ այլ ինչ
էտես շուրջանակի բայց զգագարունս ծառոց որ ոսկեփայլ ձա-
ձանջէին ի ձառագայքից արփայտն վերջնոց : Տակաւ ստուերք
յերանցն երկայնեայ ծածկէին զանտառս հովտաց . հանդարտեր
հողմն որպէս դեպ լինի յարեւուն մտանել . լուսրիւն խորին
պատեր զվայրսն անմարդիս , Եւ եղջերուաց էւեր լսելի լիներ
անդանօր կռիւնց՝ որ դիմեայ զնային յամայնոջն ի խնդիր կա-
ղաղուց : Յուսացաւ Պօղ թէ գուցէ ումէք յորսորդացն լինիցի
լսելի , Եւ ձայն բարձեայ գոջեր ուժգին աղաղակաւ . « Եկնյք ,

Եկնայք, յօգն հասէք Վիրգիւնեայ : » Եւ արձագանգաց Եւէր անտառին անդրէն կրկնեայ Եւ Էրեթկնեայ՝ Ետուն նմա պատասխանի . « Վիրգիւնէ... Վիրգիւնէ : »

Յայնժամ Էջ Պօղ ի ծառոյ անտի վաստակաբէկ Եւ տրտմագին, Եւ խորներ ի միտս իւր քէ որպիսի ինչ արդէօք հնարս հայրհայրիցէ Էրեթկոբէյոյ ի սեղուջն . այլ ոչ էր անդ աղբիւր, Եւ ոչ արմաւենի, Եւ ոչ խոխիւք Եւ փայտ չոր առ ի գնուր յուցանելոյ : Եւ տեսեայ ակներէս զի ոչ Էսս է իմիք ձեռնհաս, սկսաւ լայ : Ասէ ցնա Վիրգիւնէ . « Մի լար, սիրեցեալդ . ապա քէ ոչ, մեռանիմ Ես ի ցառոցս . Ես իսկ եմ պատճառք վշտացդ քոց Եւ տագնապի մարցն մերոց : Չէ օրէն առնել ինչ, Եւ ոչ բարիս ինչ գործել անհրաման ի ծնողաց : Ո՛հ, զի անմտացայ յոյժ : » Եւ յարտասուս հարաս : Ապա ասէ ցՊօղ . « Եկ յաղօքս կացցուրք առ Աստուած, Էղբայր, Եւ ողորմեսցի մեզ : » Այն ինչ գաղօքսն աւարտէին, Եւ անա ձայն հաջելոյ շանց հարաս ի լսելիս նոցա : Ասէ Պօղ . « Հաջիւն է այդ բարակի . յորսորդացն որ յորս Էղջերուաց հեծանէ յերեկոյիս : » Եւ ի յաճախել հաջմանցն ասէ Վիրգիւնէ . « Ինն րուի քէ Հաւատարիմն է, շուն բնակութեան մերոյ . զի ճանաչեմ Ես զձայն նորա . միքէ մժտ իցեմք հասանել, Եւ կամ առ ստորոտով մերոյ յերկնն գտանիցիմք : » Եւ նոյն հետայն դիմեաց Էկն Հաւատարիմն Եւ փարէր զտիւք նոցին, հաջեր, մոնջեր, կոնջեր Եւ քծինս տայր նոցա : Եւ միւնջէն տակաւին նիացեայ իմն կային, Եւ անա տեսին զԴոմինիկոս զի փութանակի գայր առ նոսա : Եւ ի հասանել սեւոյն որ արտասուէր առ խնդին՝ յուժան Եւ ինքեանք յարտասուս, Եւ կացին մնացին անբարբառք : Միւնջէն ապա անձին զգաստ Էղէն Դոմինիկոս Եւ ասէ . « Ո՛տեարք իմ նորատիք, զիսրդ տագնապեցան մարքն մեր . ճր գարմանք կայան զնոսա յորժամ դարձ ի պատարագէն արարեայ չգտար զձեզ առ տնին . Մարիամ որ յանկեան ուրէք տանն վաստակեր, ոչ գիտէր քէ ուր մեկնեայ զնացեայ իցէք : Բագում անգամ շուրջ Էկեայ ընրացայ զբնակարանաւն մերով, անգիտացեայ բնաւ էրէ ընդ ճր արժան իցէ Էյանել մեզ ի խնդիր . ուր ուրեմն առեայ զննտիսն մեր մատուցի Հաւատարիմն ի հոտոտումն, Եւ անասնիկդ իբրու իմացեայ զմիտս իմ՝ անդէն յուղի անկաւ՝ հե-

տախտոյց ձեզ լինելով, և, զճէտն յար ի տատանման կալեալ՝ առաջնորդեաց ինն մինչ ի Սեանն Գետ : Անդ գլխացի ի տանուտեռնէ բնակարանին զի ածեալ է ձեր առ նա զաղախին նորա զխափշիկ, որում և շնորհ արարեալ նորա երեսացն ձերոց՝ ներեալ է նմին : Այլ որպիսի շնորհ : Եցոյց ինն գեղկելին ոտնակապօք պնդեալ ի կոճեղս, և երեքժանի անուր երկաքի ի պարանոցին ունելով : Իսկ Հառատարմին խիլ արկեալ անդադար ած ծգեաց զիս մինչէս ցարաւանդակ Սեան Գետոյ, և անդ զկայ առեալ հաջեր ուժգին բարբառով . և եր ի տեղուջն աղբերակն մի, և արմաւենի տապալեալ, և առ նմին հուր լուցեալ որ ծխեր տակաւին : Անտի ապա առեալ ած զիս մինչէս ցայսք ի ստորոտս Եռաստին յերինդ . իսկ աստի մինչէս ցտուն ջորից խրատախաց ճանապարհ է : Հապա կերայք և զօրացարուք : » Եւ անդէն մատոյց նոցա քաքար մի, և միրգս և հաղադակ լի ըմպելեան որ կազմեալ էր ի ջրոյ և ի գինւոյ, ի հուզից լեմոնի, ի շաքարէ և ի հնդիկ ընկզոյ զոր մարցն նոցա պատրաստեալ էր ի կազդուրումն և ի զովացումն : Յոգոց Էհան Վիրգիներ յիշատակաւ հէք աղախնոյն և մտայոյց տառապանաց մարցն . և ասէր բազում անգամ . « Բնբէ, որպէս զի դրժուարին է բարեբարել ումք ի մարդկանէ : » Մինչդէռ Պօղ և նա ճաշակեալ կազդուրեին, հուր էրոյց Դոմինիկոս . և գտեալ յապառաժս անդ ազգ փայտի ծամածուռ, որ դալար Էս էրով՝ բոց մեծ արձակէ, ջան պայծառ յարդարեաց, քանզի և գիշեր ուրեմն էր : Այլ իբրեւ ժամ ջուռոյն Էհաս ի վերայ, անկաւ ի վարան տարակուսի, զի Պօղ և Վիրգիներ ոչ Էս զօրէին ընթանալ, քանզի այտուցեալ էին ոտք նոցա և կարմրացեալք : Հարկ էր հեռագոյն ուրեք էրբայ ի խնդիր օգնականութեան, կամ քէ անդէն ի տեղուջն երեկօքս առնել ընդ նոսա . ասէ ցնոսա . « Ո՞ր իցեն առարքն յորս գերկոսին զձեզ միանգամայն ի գիրկս իմ բարձեալ տանէի . բայց արդ դուք մեծացարուք, և ես ձերացայ : » Եւ մինչդէռ յայն վարանս տարակուսի տագնապեր, ահա ամբոխ լեռնաբնակ հնդկաց որ ոչ ի բացեալ էին քան զքայլս քսան, և պարագուխ նոցին մատուցեալ առ Պօղ և առ Վիրգիներ ասէ . « Ազնիւ պատանեակրդ սպիտակք, մի ինչ


զանգիտիցէր . տեսար մէր զձեզ յառաօտուս զի անցեալ զնացէր
ընդ կնոջ ումեմն հնդկի Սեա . Գետացոյ , հայցել զներու մն ի
դժնդակ տեսանէն : Ահա ի տրիտուր փոխարինի շնորհին գոր
արարէր՝ շալակեալ տարցուր զձեզ մինչէ . ի տուն բնակութեան
մերոյ : » Զայս ասացեալ ակնարկեաց առ հնդկիկան , և չորր
ոմանք կորովիք զանաւորակ կագմեալ փութապես յստոց ծա-



ռոց և ի բաղէղանց՝ նստուցին ի նմա զՊօղ և զՎիրգիւնէ , և
բարձին յուսա խրեանց , և Գոմինիկոս ջահ ի մեռին յառաջըն-
բաց լինէր . այնպես անկան յուղի հրճուողական ձայնի . հընդ
կացն պարու . որք օրհնաբանէին զնոսա : Գորովեցաւ Վիրգիւնէ,
և ասէ ցՊօղ . « Տեսանէս , ո՛ սիրելի , զի ոչ բողոս Տեր անվարձ
զգործս բարիս : »

Գիշերն հասարակէր , և հասին նորա ի ստորոտ լերին խ-
րեանց որոյ յուսանշոյլ վառէին կատարք : Այն ինչ էլանէին ընդ
գառ . ի վերն , և անա ձայնք բարբառոյ գոչէին առ նոսա .
« Դո՛ւք իցէր , որդեակք իմ : » և կրկնեցին նորա հնդկօքն հան-
դերձ . « Այն , այն , մէք իսկ էմք : » և անդէն տեսին զմարս խ-
րեանց և զՄարիամ զի ջահս ի մեռին ընդ առաջ գային նոցա :

Ե. ասէ Լարուր տիկին . « Ո՛վ հեք մանկտի , ուստի՞ գայք . յնր աղետս տարակուսի արկէք դուք գմեգ : » Ասէ Վ.իրգինէ . « Ի Սեառ . Գետոյ գամբ՝ խնդրեալ ներումն յանցանաց խափշիկ աղախնոյ ուրումն փախստականի , որում գնախաճաշն մեր տուեալ էի առաւօտուս , զի սովայլուկ էր եղկէլին . Ե. ահա հնդիկքըս անտառաբնակք բարձեալ բերին գմեգ : » Անդէն զիրկս արկեալ փարեցաւ . Լարուր տիկին զդատերբն , Ե. յօղէ իսկ բարբառ . ոչ կարէր . Ե. ի քանալ երեսաց Վ.իրգինեալ յարտասուաց անտի մօրն , ասէ ցնա . « Մոռացումն առնես ինձ , մայրիկ , վշտացն զորս կրեցի : » Ե. Մարգարիտ Էս խնդամտեալ փարէր զպարանոցան Պօղայ Ե. ասէր . « Ե. դու , որպեակ իմ , գործ մի բարի գործեցեր : » Իսկ իբրէս հասին ի տնակս իւրեանց որդուովքն հանդերձ , արկին կերակուր հնդիկ որբերոյն , Ե. նորա դարձան անդրէն յանտառս իւրեանց՝ մաղբէլով նոցա գամենայն բարեբաստութիւն :





Գ. ՈՒՒ Բ.

Օր ըստ օրէ յաւելոյր գեր-
դատանացն այնոցիկ խաղա-
դաւետն էրջանկութիւն . հեռի
էին ի նոցանէ չարատանջ կիրք
նախանձու եւ փառասիրութեան ,
եւ ոչ ըղձակերտք էին համբառոյ ու-
նայնութեան զոր նենգութիւն ընձեռէ ,
եւ ի բաց կորգէ զրպարտութիւն . շատ
գրէին անձամբ անձանց կալ եւ վկայ եւ դա-
տաւոր : Ի կղզւոջ անդ , որպէս եւ յամենայն եւրոպա-
կան գաղութս , հետարննութիւն մեծ է չարամիտ վիպաց
արկածից եւ պատահարաց . իսկ սոցա հանդէսն առաքինու-
թեան եւ անուանքն անգամ յանձանօրս էին : Միայն յորժամ
յանցաւորացն որ ընդ ճանապարհն կիտրոնեաց հարցումն ինչ
առնէր ումէր ի դաշտաբնակաց անտի էրէ « Ո՞րք բնակու-
թիւն իցէ ի վեր անդր ի տնակսդ յայդոսիկ , » պատասխանի
առնէր այրն առանց գնոսա ճանաչելոյ . « Արք բարելաւք են : »
Այսպէս եւ մանիշակ ընդ դժնէկօք պատասպարեայ ' բացուստ
իբաց բուրբ գնոտ անուշից , քեպէտ եւ անտես իցէ ի մարդկանէ :
Տարագիր էր ի զրուցաց նոցա չարախօսութիւն , որ ընդ պատ-
րուակաւ արդարութեան ' յատելութիւն եւ կամ ի կեղծաւորու-
թիւն գառածանէ հարկաւ գսիրտ . քանզի եւ ջէ մարք չատել
ումէր զմարդիկ ' յորժամ առ չարս ունիցի գնոսա , եւ ոչ կեն-
ցաղէ ընդ չարս ' յորժամ չառագաստիցէ որ գատելութիւն ընդ
բօղով բարեսիրութեան : Այսպէս ահա բուռն առնէ մեզ չարա-
խօսութիւն խռով կալ ընդ այս կամ ընդ մերում իսկ անձին :
Եւ քեպէտ չղատէին նորա ուրոյն ուրոյն զմարդիկ , սակայն

յաճախ բանս ի մէջ առնուին զհնարից բարիս ամենեցուն առնելոյ անխտիր . Եւ որ ինքնին ջէին առ այն ձեռնհաս , այլ մշտափափար վառեալ տենչիւ բարեգործելոյ ' զիրապատրաստք էին օժանդակել ամենեցուն : Եւ յամայութեան անդ բնակելով ' ոչ միայն մարդատեացք ջէին , այլ Եւս քան զԵւս յաւելուին ի մարդասիրութիւն : Վեպք անցից պարսաւելիք յաճախեալք ի քաղաքածողով ընկերութեան մարդկան ' հեռի էին ք զբուցատրութեանց նոցա , սակայն բնութեանն հրաշալիք յար ի հրճուանս Եւ ի հիացման ունեին զնոսա . Եւ սխրանային ընդ վերնախնամ Տեսչութեանն զօրութիւն որ ընդ իւրեանց ձեռամբն սփռեալ էր յապալէր ապառաժսն յայնոսիկ գառատութիւն , զգէղ Եւ զամբիժ զսակաւապետ Եւ զմշտափրիքն բերկրանս :

Պօղ յերկոտասանամեայ հասակին հռոժկու Եւ ուշիմ քան զհնգետասանամեայ Եւրոպացիսն գոյով , գեղազարդեալ էր զայն ամենայն զոր ինչ հնդիկն Դոմինիկոս մշակէր Եւէր : Ելանէր ընդ նմա յանտառս մօտակայս ' խլէլ տունկս մատաղս կիտրոնի Եւ նարնջի , Եւ զմոշենին որ բոլորչի ունի կատար կանաչագէղ , Եւ արմաւենիս որոց պտուղքն լի էն շաքարախտուն հուզի . Եւ զծաղկանց նարնջի տան զբուրումն անուշից , Եւ տնկեր զնոսին շուրջանակի զբնակարանան : Սերմանեալ էր Եւ սերմանս ծառոց ' որ յերկրորդումն տարւոջ ծաղկէն կամ պտղաբերէն , զոր օրինակ ակաթիքն անուանեալ ծառք , որ շուրջ վայրաբերեալ տարածանէն հանգոյն սառնատեսակ գնդակացն ջահից երկայնամիգ փունջս ողկուգածեսս ձիւնաթոյր ծաղկանց . ծիրանածաղիկն պարսկական ' որ երկնաբերձ ձգմամբ ի վեր պարգէ գաղօտափայլն իւր ցցունս . սեխածառ ' որ անոստ բնովն սիւնամեն սմբառնայ , Եւ լի Եւ ակաղձուն է կանաչագոյն սեխիւք , Եւ զգազարամբն խոյակ ունի լայնասաղարք ' զօրէն բզենոյ :

Տնկեալ էր անդանօր Եւ զսերմն պատամենեաց , մանկենեաց , ակնակառուոյ , կուռաւենոյ , հացածառի կամ ճագենոյ Եւ վարդաճամբեաց : Յոյովք ի ծառոց անտի անդստին իսկ ընձեռէին ի վայելս դեռահասակ տանն իւրեանց զհովանի Եւ զմիրգ , Եւ ձեռք նորին երկասերք յանարգասառոր իսկ վայրս ցանկապա-

տին սփռեալ էին զբարեբերութիւն : Ազգք ազգք հայուեից էս գանազան տատակաբոյս դեղնափայլ էս կարմրորակ ծաղիօքն ամբառնային ի սարաւանդս սեւաբոյր պարեխից, էս բուռին ձգտել հասանել ի ջափ բարձրութեան Երկայնածիգ պատառկացն որ կապուտակ էս ծիրանի ծաղկամբք այսր էս անդր ձգեալ տարածանէին ընդ գառ ի վերս լերինն :

Այնպէս տողեայ կարգեալ էր նորա զբոյսն գայնոսիկ՝ զի հեշտեաւ էր գուարձանայ միով ակնարկմամբ ի տեսիլ գեղոյ նոցին : Ի հովտամէս պարտիզի անդ տնկեալ էր զկարճաբերձ դայարիս էս ըստ նոցանէ զբուփս, ապա զճառս ցածունս, էս ապա զբարձրաբերձն որ շուրջանակի զցանկապատիւն բոլորեին. այնպէս զի լայնածաւայն այն տեղի զմանուրիւն բերեր շուրջ տեսարանի դայարեաց, մրգաց էս ծաղկանց, բանջարս էս ունելով էս մարմանդս էս արտորայս բրնձոյ էս ցորենոյ :

Սակայն որ տնկագործեայն էր այնպէս զբոյսն գայնոսիկ ըստ իւրուսն արուեստի, ոչ ինչ ստերիւրեալ էր էս ի բնութեանն օրինաց. այլ մանաւանդ նովիմբ առաջնորդեալ՝ գայնոսիկ որոց ցնդականք էին սերմանիք՝ ի բարձրաւանդակ տեղիս գետեղեաց, էս որոց հատրն ջրածուփք էին, ի խաղս էս յեղտիւրս : Այսպէս բոյսք իւրաբանջիւր աճեին ըստ պատշաճի անցնիւր դրից, էս դիրք ամենայն իւրաբանջիւր բուսոց առնուին զբնականն իւրեանց զարդ գեղեցկութեան : Ջուրք ուղիսինահոսք ի գագաբանց պարեխիցն իջեայք՝ էր ուրեք զի աղբերակս ի խորս անդ հովտին յօրինէին, էս էր զի լայնատարր իմն հայելիս, որք էս շուրջ պատեայք ի դայարեաց՝ առաջի առնէին ցուլացիկ գեղով զճառսն ծաղկափրիս, էս զպարեխս ժայռաւորս, էս գերկնիցն կապուտակ :

Թեպէտ էս անհարք էր վայրն էս առապարին, սակայն էս այնպէս մարբեր զյոյովս ի տնկոցն նկատել էս ձեռամբ շօշափել. էս առ ի գարդարն ասելոյ, մէք էսս սատար նմին լինեալ խորհրդով էս ձեռնտուութեամբ: Հորդեալ էր նորա էս շախղ մի որ գնովտիւն պատ առնոյր, էս առաջք նորին բազմապատիկք էրբեալ յանգեին առ հասարակ ի մի կենդրոն բոլորակիւն: Զխորտաբարտսն էս գոժոնարուստս անգամ յօգուտ ի կիր ար-

կեալ, ճեմելիս դիւրագնացս կազմեալ էր ի նոսին, և զժառանգնոսն ընտանիս ընդ վայրենիսն ճահաւորեալ : Ի շեղաշեղջ բազմութենէ այտի քաւայգոր վիմացդ որ խոկեալ խճողեալ կանարդ յանցող յայդոսիկ, որպէս և ի յոյով կողմանս կողոյս, յօրինեալ էր նա ի տեղիս տեղիս բրգունս բրգունս, և ի շարս քարանցն խառնեալ ընդ հողոյ և արմատս վարդենեաց և դրախտածողկանց ⁶ և այլոց քիոց որ զքարածայոսն սիրէն : Բրգունքն այն տխրատեսիլք և խոշորամէք վաղ ընդ փոյր պճնեցան կանաչագեղք և ծողկագոսարճք : Լեբանցամէջք տնկագարդեալք հինաւորց և կորաքամակ ծառովք՝ զետնա-



փորս կազմեալ կամարայարկս անբախանցս ի ջերմութենէ, և անդր ի հով մտանէին զցերեկ : Կածան նրբուդի տարեալ հաներ ի պուրակ ուրեք ծառոց վայրենեաց, յորոց ի միջակին ջովացեալ ուռճանայր յապահովի՝ ծառ ընդատուն պտղալից : Աստ տեսանէ էր անդատան լի տոնմականօք, անդ ածուս բանջարաց և ծառատունկս մրգաբերս : Ընդ այլ ուղի ծառազարդ գտուն էր նշմարէ, և ընդ այն՝ զկատարս լեբանց անմատոյցս : Ընդ սաղարքախիտ անտառակաւոց ընդ այդոսիկ տատամարեաց ⁷ ընդ պատատուկս շաղապատելոց՝ ջեր հնար ականէ

ինչ ի լուսապայծառ իսկ արեւու . եւ ի ծագ սարաւանդին որ ի կողաց լերինդ կարկատի՝ երեւին ամենայն քարածայոք ցանկապատիս՝ հանդերձ բացածիզն ջուրքք ծովու, յորում նշմարէր երբեմն նաւ . եկաւոր յերոպայ , եւ կամ անդրէն դարձաւոր : Եւ ահա ի վերայ վիմիս այսորիկ մեծի ժողովեալ նստին ընդ երեկս գերդաստանքն երկոքին , եւ ըմբոշխնէին անբարբառ զօրոց գովութիւն , զծաղկանց բոյրս անուշից՝ զաղբերաց խոխոջանս , եւ զգեղատեսիլ համբոյրս գնացական լուսոյն եւ ստուերաց :

Քանի՛ քաղցրաւորքք էին անուանքն որովք յորջորջեաց նա զբազմագուարճ օրարանս բաւդականէս պարտիզիդ : Սարաւանդն այն գորմէ ի վեր անդր ձառեցի , ուստի եւ բացուստ ի բաց զգալուստ իմ զականէին , անուանեալ կոչէր ԳԻՒՏ ԲԱՐԵՎԱՄՈՒԹԵԱՆ : Պօղ եւ Վիրգիւնէ ի խաղս խրեանց տնկեալ էին անդանօր զննդիկ եղեզն , եւ ի ծագս եղեզանն սառառնէին վարշամակ ապիտակ յայտարար իմոյ ժամանելոյն՝ յորժամ նշմարէին նորս գիս . որպէս եւ սովորութիւն է դրօշ ի մերձակայ լերինդ ամբառնայ ի տես ծովաջու նառուց : Խորհուրդ ի միտս իմ անկաւ դրոշմէ ի բնի անդ եղեզանն արձանագիր : Քանզի եւ յամենայն ուղեւորութիւնս իմ ըղձայի լեալ է ինձ տեսանել անդրիս եւ արձանս յիշատակաց բնութեան , այլ ըղձայի եւս է վերձանել արձանագիրս որ ճարտարահիւսք իցեն . յայնժամ բռնի ինձ եքէ ձայն որդւոյ մարդոյ էլանիցէ ի վիմէ անտի ընդ մեջ դարուց անցանելով բազմաց , եւ ասիցէ առ անցորդն յանապատին . « Չես դու միայնակ ի տեղւորդ . եւ այլք եւս ի մարդկանէ յայսմ վայրի սրտառուջք եղեն , խորհուրդս խորհեցան եւ վիշտս հանգոյն քեզ կրեցին : » Եւ եքէ այն արձանագիր վաղնջուց ազգի ուրուք անճիտելոյ իցէ նշխար , ձգտեալ տարածանէ զօգիս մեր յանհուն ասպարեզս անսահման ժամանակաց , եւ յուշ առնէ մեզ գմերս անմահութիւն , խելամուտս զմեզ առնելով եքէ զիւրդ իմաստ լոկ յերկարակեաց լինիցի քան զպետութիւն հզօր վաղակործան :

Սմին իրի դրոշմեցի եւ զգճուն կայմիս դրօշուն Պօղայ եւ Վիրգիւնեայ գառաջիկայ տողսդ Որատեայ .

Զձեզ Հեղինեայ հարագառք

Աստեղց ամուրք լուսասփիռ.

Եւ հայրն հողմոց ուղղեսցեն

Լոկ շրնջելով ըզգեփիռ :



Եւ գայս տող Վիրգիլեայ
բանդակեցի ի կեղեւ, տատա-
մաբայն յորոյ ընդ հովանեան բազմեր
Երբէք Պօղ ի զնին կայով ի բացուստ այելոծ
ծովուն .

Երանի եւ որ միայն ծանեաւ, զբերափս արտորեից :

Եւ գայս զբարասորաւ, դրան սենեկի Լարուրի տիկնոջն , որ
ժողովետոյ էր նոցա .

Աստ հանգիստ աներկեան , եւ կեանք անգետ խարկանաց :

Սակայն Վիրգիլնէ ինչ ոչ հաճէր ընդ յատինաբանութիւնս
իմ . եւ ասէր էբէ գոր առ ոտս հողմացոցին իւրոյ եղի բան, էր-
կարածիգ է յոյժ եւ կարի խորիմաց . յաւ ես էր , ասէ , որպէս
ինն բուի , բէ գրէիր ՅԱՆԳ ՅՈՒՋԵԱԼ , ԲԱՅՅ ԱՆՎԿԱՆԳ : Որում
պատասխանի տուեայ ասեմ . « Այդ առած առարիւնութեան յաւետ
ի ճահ գայ » : Եւ նա շառագնեցաւ ընդ բանն իմ :

Երջանիկքն այն բնակիչք վայրացս գղիւրագգաւմն իւրեանց
ոգիս ձգեայ տարածանէին գամենայնիւ, որ շուրջ կայր գնոբօք,
եւ աննշանից իսկ իրաց անուանս եղեայ էին գորովականս յոյժ :
Ի մարմանդի ուրեք՝ շրջաբոյր ինչ տեղի նարնջենեօք, աղա-
մադգենեօք եւ վարդաճամբեօք գարդարեայ, ուր էւ Վիրգիլնէ եւ
Պօղ Երբեայ Երբէք Երբէք պարէին, յորջորջեայ կոչէր ՄԻԱԲԱՆՈՒ-

ԹԻՒՆ : Ծառն հինաւորց ընդ որոյ հովանեաւն Լարուր եւ Մարգարիտ պատմեալ էին իրերաց գաղեսու իւրեանց, ձայներ ջնջեալ ԱՐՏԱՍՈՒՔ : ԲՐԻՏԱՆԻՍ եւ ՆՈՐՄԱՆՏԻՍ անուանէին գաւծուսն յորս սերմանեալ էին ցորեան, Էրակ եւ ոլոռն : Ըղծացեալ Դոմինիկեալ եւ Մարիամու ըստ տիրութեանցն իւրեանց օրինակի անմոռաց ունել գտեղիս ծննդեան իւրեանց յԱփրիկէ, Անկոյս եւ Փուրիտեներ կոչեցին վայրս Երկուս որ բուսուցանէին նոցա զխտան յորմէ կողովս հիւսէին, եւ հնդիկ դղմենիս գոր իւրեանց ձեռօրն տնկեալ էին : Այսպէս տարաշխարհիկքն այնորիկ բերօք բնագաւառացն տածէին ի սիրտս զքաղցր յիշատակս աշխարհին իւրեանց, եւ ամօքէին գաղեսու պանդխտութեանն յօտարոտի Երկրի : Բւնբէ, գիւրդ քաղցր էր ինն տեսանել գեղապատշաճ յորջորջամբք բիւրաւորօք անուանեալ զժայռս համակործան տեղւոյդ այդորիկ, որ հանգոյն դաշտացն Ելլաղայ՝ դերբուկս աւերակաց եւէր ունի արդ, եւ անուանս սրտառուջս : Բայց քան զամենայն ցանկայիս տեղւոյս սխրատեսիլ էր ձայնեայն ՀԱՆԳԻՍ ՎԵՐԳԻՆԵԱՅ : Յոտս սարաւանդակին որ ԳԻՒՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ կոչէր, է վապար՝ ուստի աղբերացեալ վտակ փոքրիկ անդէն առեւտեղ յօրինէ ջրակոյտ ինչ տեղի ի մարգագետնի ուրէք : Ի ծնանել Մարգարտի գՊօղ, Էտու ես նմա լլնծայ բոքոյ մի հնդիկ գոր այլոց տուեալ էր ինն : Տնկեաց Մարգարիտ զմիրգն զայն յեզր ջրակուտին, որպէս զի ծառն որ անտի բուսանիցի՝ յայտարար կացցէ ժամանակին յորում գորդեակն ծնա : Չայն տեսեալ տիկիւնն Լարուր, տնկեաց եւ նա ի տեղւոջն նովին մտօք այլ բոքոյ՝ յործամ ի լոյս ամ գՎիրգիւնէ : Ի կրկին մրգաց անտի բուսան բոքենիք Երկու, որ եւ բովանդակ զդիւանագիրս տոհմիցն Երկոցուն առնէին առաջի . միոյն անուն՝ Պօղայ կոչէր ծառ, եւ միւսումն ծառ Վիրգիւնեալ . եւ Երկրին եւս միանգամայն անեցին ըստ անել դեռածողիկ տերանցն, խուն ինչ անհասասար բարձրութեամբ . այլ յետ ամաց Երկոտասանից անցին զանցին քան զլսղիցն բարձրութիւն . կողերք նոցին խիղբս արկեալ պատէին զիրերօք, եւ վայրակախ սաւառնէին զդեռաբուսիկ ողկոյս պտղոցն գաւազանաւաղբերն : Զծառսն զայնոսիկ եւէր տնկեալ, իսկ զձերպ սա-

րաւանդակին ըստ բնութեանն զարդու բողեայ էին անփոփոխ :
Զքիատեսիլ էւ զխոնառուտ կողիւքն աստեղամէւ նշողէին կա-
նաջագեղ էւ սեւարոյր ճարխոտք յայնատերէք , էւ ի շնչէլ
սողխաց ճօճէին ծածանէին փունջք գաղտակրի՝ կախեսայք գօրէն
ծիրանածաւս կանաջագգեաց ժապաւինաց : Ոչ ինչ հեռի ի
տեղւոջէն աճէին կուսածաղիկք⁸, որ զմանուքիւն բերէն
կարմրերանգ շահոքրամի, էւ դարնպղպեղք որոց պատեանքն
արիւնէրանգք քաջափայլ էւս են քան զբուստ : Ի հոտ անուշից
բուրբեր ի բացուստ սրտատերէն սպրասամ էւ մեխակահոտն
ուահան : Ի բարձուէ անտի քարայրին վայրաբերեալ տատանէին



պատաստուկք նմանեսայք գեղածուփ պաստառաց , էւ զկողիւք
պարէխացն մեծատարած սրահակս դայարագեղս յօրինէին :
Քոչունք ծովայինք՝ խաղաղաւետ վայրացն ըղձակերտք ,
անդր գային առնույ երեկօքս : Ընդ արեւուն ի մուտս խո-
նարնէլ՝ բոխչս առեալ գծովափամբն գայր ձկնաքաղն էւ
ծովարտոյտ, էւ ընդ օդոցն բարձրութիւն ցին արջնաքոյր բար-
ձրաքոխջ, էւ սպիտակարոյրն բոչունք արեւադարձի որք հան-
գոյն աստեղն տուրնջեան ի բաց մեկնէին յամայի մկանանց
հնդկայնոյն Ովկիանոսի : Սիրէր Վիրգիլնէ դադարել առ աղբէ-
րաւս որ պճնեալ էր հոյակապ էւ միանգամայն վայրէնի ան-

պաճոյճն պերճութեամբ . եր երբեմն զի անդր տարեալ լուսնայր գկտախս տանն ընդ հովանեաւ . բոքենեացն երկոցուն , եւ եր երբեմն զի անդր յարօտ ածեր գայծիսն իւր . եւ մինչդեռ ինքն ի կարանէ նոցին պանիր կազմեր պատրաստեր , ախորժ հաճութեամբ նկատեր քէ սրպէս ձարակէին նոքա զճարխտսան որ զսեպացեալ կողիւք ժայռին , վակժոյժ օղանիգ գմիով ուրեր ի սեպիցն իբրեւ ի պատուանդանի գաքեացսն հաստատեալ : Տեսեալ Պօղայ զի սիրելի Վիրգիլեայ էն վայրքն , տարաւ անդր յանտառաց բոյնս ազգի ազգի բռնոց , որոց զնետ զնացեալ



հարցն եւ մարց ' հաստատեցին զբնակութիւն իւրեանց ի նորումն յայնմ գաղթականի : Երբեք երբեք բաշխեր նոցա Վիրգիլեն հաստ բրնձոյ , եգիպտահատի եւ կորեկի : Ընդ երեսէյ նորա սարեակք ի սոխնս եւ ի մրմունջս հատեայք , բենգալք⁹ քաղցրանաւազք , եւ ծիրանաւորքն¹⁰ անուանեալ բռնոնք ' որոց հրանշոյլ փետուրք էն , ի դուրս ի մացառացն էլանէին . պապկայք կանաչագեղք իբրեւ գմբուխտ ' ի մերձակայիցն իջանէին լատանենեաց , դիմեալ դոդէին կարաւք ընդ դալարեօք , եւ ամենէքին առ հասարակ զօրէն իմն հառուց վառեկաց խուռն

խաղային գային մինչեւ առ ոտս նորին . եւ նա ընդ Պօղոսյ հրճուէր ի տեսիլ խաղոց նոցին եւ ախորժակաց եւ սիրակարկաջ տարփանաց :

Ո՛վ սիրուն մանկտի , այսպէս յանմեղութեան անցուցանէիր դուք գառուրս արշալուստյ կենացն մերոց՝ ի բարերարութիւն զանճինս մարգէշով : Բանիցս անգամ ի տեղուոջս յայսմիկ մարբն մէր գրկախառն գորդեկօրդ փարեայ գոհանային գճեառնէ , զի մխիթարութիւն մեծ պատրաստեր նա մեօք ծերութեան իւրեանց , եւ զի երջանկաւետ եւ բարեգուշակ էր մուտն մեր ի կենցաղս : Բանիցս անգամ ընդ հովանեաւ ժայռիցս այսոցիկ ճաշակից եղէ մեզ եւ ես ընդ նոսին՝ շինականին մերում անցեալ բազմական սեղանոյ , յորմէ հեռի էր սպանդ ամենայն կենդանեաց : Բաշխարանք կարճաբուռիս , ճուրղէնք , բրնձախառն կարկանդակք ի տերեւս աղամարգէնուոյ շարեայք , տառադանք ակաղմեայք գետնախնձորով , մանգաւ ¹¹ , նարնջիւ , նռամբ , աղամարգիւ , արմառով , անանասիւ , պարենք մեր էին առողջագոյնք՝ գեղատեսիլք եւ ախորժահամբ քան զամենայն համադամս :

Հանգոյն խրախճանաց նոցա եւ գրոյցքն էսս քաղցուք էին եւ անմեղանջականք : Բագում այն էր զի Պօղ բանս ի մեջ առնոյր զվատտակոց առուրն կամ զվաղորդայնին : Յանգ մտախորն յինէր յընտանեացն դիւրութիւն բարեկենդանութեան . իբր զի յայս նիշ վայրի ոջ հեշտաբայլ էին ուղիք , յայնմ անճահք իբազմեյ . այս ինչ սարփինայ մատաղատունկ ոջ շատ առնէր հովանի , յայն ինչ տեղուոջ լաւ էսս հանգիցէ Վիրգինէ :

Յանճրեաբաց առուրս ամենեքեան միահամուռ տեարք եւ ծառայք ի տնակին ժողովեայ՝ փսիարս ի սիգոյ եւ կողովս ի հնդիկ եղեգանէ հիւսէին : Գեղեցկադիրս եւ բարեկարգս էր տեսանել գորմովն տրմութս , տապարս եւ բանս , եւ առ կանիւքն մշակութեան՝ գառ ի նոցանէ յառաջ բերեայ արդիւնս , պարկս բրնձոյ , որայս ցորենոյ եւ ողկոյցս աղամարգոյ . եւ առատութեան լծորդ էր անդ հանապազ վայելչագեղն ճարտարութիւն : Իսկ Վիրգինէ խրատեայ ի Մարգարտէ եւ ի մօրեն՝ օշարակս կազմեր եւ ըմպելիս զովարարս ի հուգից շաքարաբուռիս եղեգան , ի լեմոնից եւ ի կիտրոնէ :

Ի հասանել երեկոյին՝ ընթրեին ի յոյս կանքեղի . եւ ասպա տիկնայրն Լարուր եւ Մարգարիտ պատմէին զարկածս ուղեւորաց մտորելոց գիշերի յասագակուտ անտառս Եւրոպայ , եւ կամ զխորտակումն նաւուց բախտեոց ի մրրկէ յապառածս որբեր անբնակ կողմաց : Ի յուր վիպացն վառեալ բորբոքէին յիւրագորով սիրտք որդեկացն , եւ ասէին . « Իցիւք բէ յաշողեր մեզ Աստուած երբեք մեռն ասպնջականութեան կարկառելւ այնպիսեացն ջուռառականաց : » Եւ ասպա ուր ուրեմն գերդաս-



տանքն երկորին անշատեայք ի միմեանց՝ ի հանգիստ քնոյ երբային , վաղուեան տեսութեան իրերաց անձկակարօտք :

Եր երբեք զի ի շառաջս անձրեաց մտանէին նոքա ի բուն , որ ուղիսօրէն զյարկս խղիցն ծեծէին . եւ եր զի ի մուկչիւն հողմոց շնջելոյ , որ առեալ ածէին նոցա զբացական կոհակացն գոռումն եւ զճողփիւն , որք գծովափամբն կոծեալ խորտակէին : Փառս առ Աստուած ի վեր առաքէին սակս անրոյքն պահպանութեան անձանց , եւ հետաւոր վտանգացն յիշատակաւ . եւս բան գեւս յարգէին զաներկեանն իւրեանց զապահովութիւն :

Ընդ ժամանակս ժամանակս ընթեռնոյր Լարուր տիկին ի

յուր ամենեցուն զպատմութիւնս ինչ սրտառուջ անցից յաստուածաշունչ տառիցն է. ի նոր կտակարանէ : Դուն ուրէք ճարտարամտիւն նորա զսրբագիր մատենէն . քանզի է աստուածաբանականն նոցա գիտութիւն՝ ի զգածմունս սրտիցն էր, հանգոյն հմտութեանն զոր զբնութեան իրաց ունեին, է վարուցն ուղղութիւն ի գործս է. ի գնացս նոցա փայլէր՝ ըստ Աւետարանին պատուիրանաց : Ոչ էին նոցա աւուրք սահմանեայք ի զօսանս կամ ի տրտմութիւն . քանզի է ամենայն օր տօն էր նոցա, է որ ինչ շուրջ զնոքօք համօրէն՝ տաճար Աստուծոյ, յորում նկատեալ հիանային ընդ իմաստութիւն նորին անսահման, է ընդ ամենակայն զօրութիւն է մարդասիրութիւն անհուն . է սովին աներկմիտ վստահութեամբ ի զերաբուսն իշխանութիւն Աստուծոյ՝ մխիթարէին ընդ անցեայսն, արիանային յառաջիկայս, է լի յուսով բարեաց մնային հանդերձէրցն պատահման : Այսպէս ահա տիկնայքն այնորիկ բռնագբօսեայք յաղէտիցն՝ ի բնութիւն անոր զանձինս պատսպարել, աճեցուցին լինբեանքս է. յորդեակս իւրեանց զագղմունսն զայնուսիկ զորս ընձեռե բնութիւն է պահպանէ յերեսաց աղէտից :

Այլ զոր օրինակ դեպ լինի երբէք է. ի կարի իսկ բարեխրատ ոգիս ժողովէյ դիզանալ ամպոց է վրդովէյ զնոսին, ի տրտմէյ յանկարծ ուրուք ի նոցանէ՝ ամենեքին զնովաւ շուրջ բոյորեայ է փարատէին ի նմանէ զխորհուրդսն դառնութեան, ոչ այնչափ իւշամտութեամբք իմաստուն բանից՝ քան թէ քաղցրութեամբ զգայուն իմաստից սրտի : Ամենայն որ զանձին իւրոյ զբոյս բարուցն հանգանակէր յայնժամ . Մարգարիտ զուարբամտութիւն եռանդուն . տիկինն Լարուր աստուածաբանութիւն սրտառուջ . Վիրգիւնէ զգուսն սիրայիրս, Պօղ անպատրուակ է անկեղծ համարձակութիւն . է Մարիամ է Դոմինիկոս անգամ յօգնութիւն տրտմեցէրոյն փութային . ամենեքեան էս ընդ միշտս նորին վշտանային, է ընդ արտասուսն արտասուէին : Ըստ այսմ օրինակի է բոյսք բեկանուտք մանեալ պատին զիբերօք, է այնպէս զդեմ ունին ամպրոպաց :



Ի գեղեցկախառն ա-
ռուրս տարւոյն զնային նո-
րա ըստ ամենայն կիրակեից
առաջիկայ լինել սրբոյ պա-
տարագին յեկեղեցւոջ Կի-
տրոնեացն, զորոյ զաշտա-
րակն զանգակաց տեսանես
անա ի դաշտի անդ : Անդր
զնային դեպակաւ եւ արք ըն-
ջաւետք որ եւ բազում անգամ
ցանկացան զայ ի ծանօթու-
քիւն բարեկամութեան ազգա-
տոհմիցն այնոցիկ ան-
անջատից, եւ հրաւիրե-

ցին զնոսա ի գբօսանս եւ ի խրախունս. սորա բազում վայել-
չութեամբ եւ մեծարանօք հրաժարեցին ի հրաւիրանաց անտի,
բանգի եւ հաւանեալ իսկ էին ի միտս իւրեանց երբ արք
աւագք յայն սակս եւեր ի խնդիր լինին անաւագաց, զի կամա-

կատարս անճանց յաճախեսցեն. Եւ թէ չէ հնար կամակատար
այնպիսեացն լինել առանց շնրելոյ ավտից նոցին Եւ կամ յօժա-
րութեանցն բարեաց կամ չարաց: Գարձեալ Եւ ի ջքաւոր բնակ-
չացն տեսութենէ բանգուգեալ խուսավիհին. քանզի Եւ նորա նա-
խանձաբէկք, ջարախօսք Եւ անուպայք սովոր են լինել: Սմին
իրի Եւ գառաջինն կիսոցն երկջոտք ոմանք բուեցան, Եւ այլոց
սեգք Եւ ամբարհաւաճք. սակայն զգուշաւորն այն կենցաղ վա-
րուց նոցա ոչ ինչ բավուր էր ի քաղցրահամբոյր Եւ ի մարդա-
սէր զնացից, մանաւանդ առ աղքատսն, որով Եւ յինքեանս
ձգեցին տակաւ գակնածութիւն ճոխից Եւ զմեծարանս կարօ-
տելոց :

Բագում այն էր զի զկնի պատարագին գային առ նոսա յոյովք
ի խնդիր գործոց ինչ բարեաց : Եր զի ի վշտատեսից որ եկեալ
հայցէր ի նոցանէ խրատս բարեաց, Եւ էր զի մանուկ որ աղա-
ջաւոր մատուցեալ վասն մօրն իւրոյ ավտացելոյ՝ խնդրէր գալ
տեսանել զնա յայն ինչ վայրի ոչ ինչ կարի ի բացեալ ի տեղ-
առջէն : Յանգ ընդ իւրեանս բարձեալ տանէին նուսխայս դեղոց
օգտամատոյցս խօրութեանց յաճախելոց ի բնակս աշխարհին.
Եւ քաղցրութիւն Եւս անչափ խառնէին ի դարմանսն, որով
ցանկալի Եւ պատուական յոյժ առնին դուզնաբեայքն անգամ
սպասահարկութիւնք : Յաշոդագոյնս փարատէին նորա գանձ-
կութիւնս սրտի, որք անբերելիք սովոր են լինել ի միայնութեան
Եւ ի վշտակիր մարմնի: Տիկինն Լարուր այնպիսեաւ աներկմիտ
վտանութեամբ բարբառէր զԱստուծոյ, զի հիւանդն որ լսէր
նմա՝ համարէր իմն թէ ակներէս իսկ տեսանիցէ առ իւր զԱս-
տուած : Բագում անգամ արտասուաբոր աջօք դառնայր անտի
Վիրգինէ ի տուն, այլ սիրտ նորա լի էր ցնծութեամբ, զի պա-
տեն ինչ գտեալ լինէր բարերարելոյ. զի Եւ նա ինքն էր որ յա-
ռաշագոյն պատրաստէր զդեղս դարմանոյ հիւանդացն, Եւ մա-
տուցեալ պաշտէր նոցա գայնս անպատումն գեղով վայելչու-
թեան Եւ քաղցրութեան : Եւ յետ մարդասէր խնամոցն այնոցիկ,
էր էրբէք զի երկայնեալ գճանապարհ իւրեանց ընդ հովիտս
երկայնանիստ լէրինն՝ ի տուն իմ գային, ուրանօր ակնկալեալ
մնայի նոցա ի ճաշ առ ափամբ առուսակին որ զբնակարանան

իմով անցանք : Ի դեպս այնպիսիս հայրայրէի անօրս ինչ վաղըն-
ջուց գինույ, զի յաւելցի մեզ գուարքամիտ խնդութիւն ի հընդ-
կայինան մեր խրախունս՝ քաղցրաճաշակ եւ կագդութիչ ար-
դեամբք եւրոպայ : Էր եւս երբէք զի ժամադիրք իրերաց լինեաք
ի ծովեզերին ժողովել ի խառնուրդս անդ այլոց գետակաց, որ
ի կղզւոջ աստ վտակք եւեք են մեծամեծք . եւ բարձեալ տա-
նեաք ընդ մեզ ի տանէ պաշար բանջարոյ, գոր յաւելուաք յա-
ռատաբուղխն բերս պարգեւեալս մեզ ի ծովէ . քանզի որսաւ-
աք առ ծովափամբն բախնրակս ¹², պողիպողս, կարմրախայտս,
ծովախառնիճս ¹³, խէջափարս, խէջգետիս, եքինոսս, ոստրեւս



եւ խէջեմորքս բազմագգիս : Վայրք որ անագնագոյն քան
գայլսն էին, բագում այն էր զի անդորրագոյն եւս պատրաս-
տէին մեզ գբօսանս : Էր զի նստեալք յապառածի ուրէք ընդ
նովանեաւ քաւիչենույ՝ տեսանեաք գլեռնամէս կոհակս ալեաց,
զի ի խորոց անտի ծովուն վագեալ խորտակէին առ ոտս մեր
անեղազոջ շառաջմամբ . եւ Պօղ որ քաջավարժ էր ի յող
իբրեւ գմի ի լուղակաց, յառաջ մատուցեալ գնայր ընդդէմ կո-
հակացն . եւ ի գալ հասանել նոցին խոյս տուեալ ի ծովափն
կոյս փախւցէր լերեսաց փրփրադեզ եւ սաստկագոջ մկանանց
որք հալածական իմն տանէին գնա քան գծովեզրն եւս անդրա-

գոյն . իսկ Վիրգիլնէ յայն տեսիլ ճիշ բարձեայ աղաղակէր Ես
ասեր էրէ խաղբոյ այդոքիկ անաբէկ առնեն զիս :

Իբրէս ճաշոյն վախճան լինէր , Էրգս արկեայ ի պար անցա-
նէին պարմանիքն Էրկոքին : Վիրգիլնէ զգեղջուկ կենցաղոյ գեղ-
գեղէր գերանաւետն անդորրութիւն , Ես զնաւորդաց աղէտս , որ
փոխանակ գերկիր մշակելոյ Ես տոհմական ի նմանէ ընդունելոյ
յանդորրոս , ընչաբաղց տենչիւ նաւարկէն ընդ տարրն մոյեգին :
Էր Ես Էրբէմն զի ըստ հնդկացն տարագոս մնջակատակ լինէր
նա ընդ Պօղայ : Մնջկատակն նախնական իմն բարբառ Ե մար-
դոյ , Ես հանուրցն քաշածանօք ազգաց . Ես այնպէս ընդաբոյս Ե
Ես նշանական ' զի զամ մի տեսեայ Երոպացացոցն մանկանց զխա-
ղայ հնդիկ մանկտայ ' անդէն Ես ուսանին : Յիշէր Վիրգիլնէ
զվէպսն զայնոսիկ որ առաւել քան զայլսն ի գորով ածեայ էին
զնա յընթեռնուայ անդ մօրն յունկն իւր , Ես զգլխաւորս յարկա-
ծիցն ճշգրտատիպ ածէր ի տեսիլ . Ես մերք ի շաջիւն ծնծղային
' Դոմինիկեայ ի մարմանդ անդր գայր ' սափոր ի գլուխ ունելով ,
Ես ան ընդ ան մատչէր յաղբերակն մերձակայ առնուայ շուր :
' Դոմինիկոս Ես Մարիամ զխաշնարածսն Մաղիամուս կերպա-
րանեայ ' ի բաց զնա մերձէին . բայց Պօղ ՚ի քիկունս օգնակա-
նութան հասեայ նմա ' հարկանէր զխաշնարածսն , Ես լնոյր
զսափորն Ես դներ զայն ի գլուխ նորին . միանգամայն Ես բոյո-
րելով նմա սրակ ի կարմրերանգ ծաղկանց անբառամից ' որ
զսպիտակարոյր դիմացն զմոյն գեղապատշաճ Ես փայլեցուցա-
նէին : Յայնժամ Ես Ես ի խաղս նոցին միջամուխ լեայ ' զկերպա-
րանս Հոսագուէլի առնէի առաջի , Ես տայի Պօղայ զդուստրն
իմ զՍեփովբա ի կնութիւն :

Էր դարձեայ Էրբէք զի գտարաբաղդին Հոուրայ բերեր զդէմս ,
որ այրիացեայ Ես ընչաբափ յերկիրն իւր դարձ առնէր , Ես անդ
Ես ընդ օտարս համարէր սակս յերկարածից ժամանակ տար-
աշխարհիկ լինելոյն : Դոմինիկոս Ես Մարիամ զարտահնճիցն
առնուին զդիմակս : Վիրգիլնէ կերպարանէր հասկարաղ աստ
անդ ընդ հետս նոցին լինել , Ես Պօղ զժանրութիւն մեծարոյ նա-
հապետի յանճին բերեայ հարցումն առ Վիրգիլնէ առնէր . որուն
զդողանի հարեայ տայր նա պատասխանի : Ես Պօղ անդէն ար

գահատեալ՝ ասպնջականեր գանմեղն, և, բշուտոին լինէր պատսպարան. գառիգածն Վիրգիլեայ լնոյր պաշարապինդ, և, ածեալ յանդիման առնէր գնա մեզ որպէս ձերակուտի քաղաքին ասելով. Քեպետ և, ջբաւոր է, սակայն առնում գաա ինձ ի կին: Յայն տեսիլ յաշ ածեալ Լաբուրի տիկնոջ երէ նրպես բողեալ



լրեալ նա ի ծնողաց, և, այրիացեալ, և, նիրասեր ասպնջակա-
նութեամբ ի Մարգարտե ժողովեալ, և, յուսայր այնուհետեւ
գերջանկաւետ ամուսնութիւն որդեկացն իւրեանց տեսանել,
զլլալ հարկաներ, և, խառն այն յիշատակք ջարեաց և, բարեաց՝
յարտասուս ցաւոց և, ցնծութեան և, գմեզ յուծանէին :

Այնպէս իմն ճշգրտատիպ ի տեսիլ ածեին նորա գիաղուցն
կերպարանս, զի գրեալ քէ ի բուն իսկ ի դաշտս Աստուծոց և,
ի Պաղեստին համարեաք գանձինս : Այլ և, ոչ զարդուց և, տե-
սարանաց ջբաւորութիւն էր մեզ ի տեղուոջն, ոչ դամբարաջան
յուսաւորութեան և, ոչ նուագածուաց պարտ : Հանդիսարան
տեսարանացն լինէր բազում անգամ տեղին այն յորում կիցք են
յոյով ճանապարհաց անտառին, և, բերանք նոցին շուրջանակի
յօրինէին կամարս կամարս սաղարթախիտս : Մեր գետոյ առեալ
զազարեաք ի միջավայրին՝ գօրն ցերեկ պատսպարեալք ի տօրոյ.

այլ իբրեւ ընդ ծիրս երկնից արեգակն ի վայր խոնարհեր, ճա-
ռագայրք լուսոյն բեկտեալ ի ծառոցն բնից՝ ի ստուերամած
խորս անդր անտառին ճգեալ տարածանէին գլուսափայլն իւ-
րեանց հոսանս երկայնամիզս : Էր երբեմն զի եւ սկասառակն
արեգական ողջոյն երեւեր միահաղոյն ի սպառուածի ուրեք
ծառագարդ ուղւոյ, եւ լուսապայծառ զվայրն յարդարեր : Սա-
ղարքք ծառոցն լուսաւորեալք ի ստորէ ի բրբմագոյն նշուլիցն՝



շողշողէին երփն երփն ճաճանջիւք տպագիտնի եւ զմրխտոյ . եւ
բունքն մամռապատք եւ բխատիպք՝ ի վաղնջուց արձանս
պղնձիս բուռին փոխակերպեալք, եւ բուջուր որ վաղ իսկ
կանխեալ եւ դաղարեալ լինէին ի լուրբեան ընդ նսեմաստուեր
տերեւովքն օրագայեալք, սխրանային իմն ընդ երկրորդն այն
լուսանորոգ արշալոյս, եւ ճայն բարձեալ առ հասարակ ողջու-
նէին բիւր կարկաշանօք գլուսաւորն տուրջէան :

Բագու՛մ անգամ դեպ լինէր յարանայ մեզ ի գեղջկայինսն մեր
խրախճանուրիւնս մինչեւ ցգիշերոյն հասանէյ ի վերայ . սակայն
օդոցն յստակութիւն եւ քաղցրախառն զովութիւն ներեր մեզ
ի բուն լինէյ ի տաղաւարի ուրեք ի խորս անդ մայրեացն՝ աներ-
կիւղ ամենեւին ի գողոց ի մօտաւորացն եւ ի հեռաւորաց միան-

գամայն : Իսկ ի վաղիս անդր ամենայն որ դարձ ի հիւղն արարեալ՝ գտանէր գայն այնպէս որպէս էս բողեայն էր : Այնքան էր բարեմտութիւն էս աննենգ հաւատարմութիւն յանշահավաճառ. յայսմ կղզւոջ, զի յուովից տանց ոչ աղխեին դրունք, էս յոգունց յամբիկածին Եւրոպացւոց նորատեսիլ իմն գործի բռնին փականք :

Բայց գոյին ի տարւոջն էս անորք յորս ոչ էս էր ջափ ցնծութեան էս հրճուանացն Պօղայ էս Վիրգինեայ, գմարցն ասեմ տօնից տարեդարձս : Յերեկոյէ փոյր ի մտի կայեալ բրէր հայս Վիրգինէ, էս կարկանդակս այնու Եփեալ առաքէր առ կարօտեայս յազգատոհմիցն սպիտակաց ի կղզւոջս ծնելոց՝ որոց երբէք ջեր կերեալ հաց Եւրոպական, էս որք անօգնական



ի Հնդկացն մնայով՝ անտառաբնակ կենօք մանիոք կերակրեին, էս առ ի ժոյժ կարեաց աղքատութեան՝ ոչ զգերեացն ունեին գապշութիւն մտաց, էս ոչ զարխութիւն՝ զղատարակութեան արգասիս : Քան զկարկանդակսն գայնօսիկ այլ ինչ ջմարբէր Վիրգինէ հանել յընծայ ըստ մեռին բաւականի տանն. սակայն այնպիսի իմն քաղցրահամբոյր մատուցանէր գայն շնորհիւ, որ պատուական էս ցանկալի յոյժ զնուէրն գործէր : Նա զի Պօղայ գործ էր առնուլ էս տանել զպարգեւսն ի տունս տունս, էս որք ընդունեինն՝ բան տային գալ անցուցանել զօր վաղուին առ Լաբուր տիկնոջ էս առ Մարգարտի : Յայնժամ էր տեսանել մայր գոք ի մարց զի գայր հասանէր Երկուք էս երիւք զճճակերպ դատերօք՝ դայնկագունիւք էս վտտելովք, էս որ առ յոյժ երկ-

ջոտութեան բարուցն ոչ իշխեին զազս ի վեր ամբառնայ : Սակայն Վիրգիլնէ վաղ ընդ փոյր համարձակութիւն տայր նոցա. օշարակս բաշխեր նոցին գովարարս , Էս այնպիսի իմն ազնուութիւն ի բաշխոյսն յաւելոյր՝ որով ըստ նորա մտացն հաճոյագոյն Էս հարկ էր նոցին ընծայել . իբր զի գայս ինչ ըմպելի Մարգարիտն էր պատրաստեալ , գայն ինչ խորն մայր , Էս գայս ինչ միրգս նորին ինքեան Էդբօրն կրեալ էր ի բարձուէ ծառոյն : Բուռն առներ Պօղայ զի պարս տացէ նոցա բոյորել , Էս մինչչէ տեսեալ զնոսա հաճս Էս բերկրալիցս՝ ոչ մէկներ ի նոցանէ . քանզի կամեր զի խնդութեան իւրոյ տանն կցորդս լիցին Էս նորա : Ասեր իսկ երէ Առ ի գանձին Էրջանկութիւն յարդարելոյ հարկ ի վերայ կայ այլոցն Էրջանկութեան խնամ ունել : Ես իբրեւ ժամ լիներ դարձի նոցին առ իւրեանցսն , ստիպեր զնոսա բառնայ Էս տանել զոր ինչ միանգամ ախորժելին էր անձանց , Էս զնորութիւն կամ զանսովորն լինել իրացն պատճառեալ՝ ստիպեր զնոսա ի պարգեւացն ընդունելութիւն : Երէ պատառատունս լոյժ գգրգիս նոցին տեսանէր , հրաման իմօրէն առեալ՝ ընտրեր ինչ ինչ յիւրոց անտի ձորձոց Էս տայր Պօղայ տանել Էս դնել ի ծածուկ առ սեամս տնակաց նոցին : Ահա ըստ այսմ օրինակի հանգոյն աստուածախնամն տեսչութեան առներ նա զբարիս , զբարերար մեռնն թագուցանելով , Էս զբարիսն Էսէր յերեւան բերելով :

Եւրոպացւոցդ ազգաց անդստին ի տղայութենէ լի են խորհորդք մտաց կանխակալ սովորութեամբք այնպիսեօք որ հակառակին Էրջանկաւետն կենաց , Էս ջմարքիք լինել խելամուտ երէ բնառ ունիցի բնութիւն ընձեռել ումէք այսբան հանձար լուսաւոր , այսգոյն Էս բերկրանս : Յանձուկ շրջանի ուրեմն մարդկայնոց իրաց պարագրեալ ոգւոցդ մէրոց , արագ արագ հասանեն ի սահմանաձայրս վայելիցն իւրեանց . բայց բնութիւն Էս սիրտ աղբիւրք անսպառք են : Պօղայ Էս Վիրգիլնէայ ոչ ժամացոյցք էին , ոչ տոմարք , ոչ ժամանակի մատեանք , ոչ պատմութիւնք Էս ոչ գրեան իմաստասիրութեան . այլ կենաց նոցին պարբերութիւնք՝ բնութեանն շրջանօք ջափեին : Տուրնչեանայնոցն ժամուց ի ստուերաց ծառոց ծանօթք լինեին , Էս քառահնդով

յեղանակաց տարւոյ ի ժամանակաց անտի յորս ծաղկեինն էս պողաբերք լինէին, էս զամացն զնացեւոց զհամար ի բունյ հնճոցն էս կրոց իմանային : Այն խորհուրդք նկարակերպք էս քաղցունք վայելչագեղս իմն էս շնորհայիցս յարդարէին զգրոյցս նոցա : « Ճաշոյ ժամ է, ասէր Վիրգիլն առ ընտանիսն, քանզի անա աղամարզոցն ստուերքք առ ոտս նոցին ամփոփեցան. » էս դարձեալ. « Տարածամի օրս, զի մոշենիք կծկեն անա գտերեսն : » Ի հարցանել բարեկամաց էս դրացեաց էրէ « Ե՞րբ էկեսցես տեսանել զմեզ, » ասէր Վիրգիլն. « Յեղեգնաշաքարացն ժամանակի : » էս էրիտասարդութիւնն անդրէն կրկնէին. « Քաղցրագոյն էս էս ցանկագոյն մեզ եղիցի գարուստդ : » Երէ որ հարցաբանէր զնա քե բանի՞ իցեն ամբ հասակի նորին էս Պօղայ, ասէր. « Հասակակից է եղբայրն իմ բորենոյն ¹⁴ մեծի որ առ աղբերն կայ, էս էս փոքրկանն : Յորմէ հետե կեամ էս յաշխարհի, երկոտասանիցս պողաբերեցին մանկենիք ¹⁵, էս քսանեջորիցս ծաղկեցին նարնջենիք : » Թուէր իմն այնպէս էրէ առարք կենդանութեան նոցա հիւսեալք էին ընդ ծառոցն կենդանութեան՝ հանգոյն կենաց Փառնայց ¹⁶ էս մայրեացն շահապետաց : Պատմականաց ինչ դարուց հմտութիւն անձանօք էր ի նոցանէ, բայց ի մարցն էւէր անցիցն կենաց պատմութեն. ժամանակագրութիւն այլ ոչ էր նոցա քան զճառատնկոցն իւրեանց ժամանակս, էս ոչ իմաստասիրութիւն այլ՝ քան զբարերարել ամենեցուն էս միաբանել յամենայնի զկամս անձանց ընդ կամացն Աստուծոյ :

Էս բնաւ զինչ պետք պատանեկացն էին ընչաւետս էս բանիբունս լինելոյ ըստ մերումս սարասի : Պետք նոցին էս անգիտութիւն յանէրուած էս գործէին երանաւետ կենաց նոցա : Չանցանէր բնաւ օր յորում ջմաստասորէին իրերաց խելամտութիւն ինչ էս հմտութիւն. այն, հմտութիւնս ինչ. էս էրէ յանկարծ ի հըմտութիւնսն յայնոսիկ էս մոյրութիւն ինչ խառնիցի, ապաքէն առն արդարոյ էս ողջամտի չիք ինչ ուստէք կասկած երկխոյի : Չայս օրինակ առասիկ աճեալ զարգանային երկորին այն զանակք բնութեան սիրասունք : Ճակատք նոցա ոչ խորշումեցան էրբէք ի հոգոց տրտմութեան, էս արիւն նոցա ոչ ապականեցաւ յան-

ծուծկայ շուայտութենէ, և սիրտք նոցա ոչ ստերիւրեցան երբէք յախտիցն ջարաց. սէր, անմեղութիւն և աստուածպաշտութիւն օր քան զօր յաւելուին զանձառահրաշն շնորհս ոգւոց նոցա ի դէմս նոցին ջքնադագեղս, և ի գնացսն և ի շարժմունս ամենայն : Յաշայտօրչս անդ կենացն՝ զուարթածաղիկք էին իբրէս զառաօտ. այսպէս երբեմն և նախածնողքն մեր երեւեցան յեղեմական դրախտին յորժամ այն ինչ էլէայք ի ձեռանէ Արարչին տեսին զմիմեանս, մատեան առ իրեարս, և խօսակից եղեն միմեանց եղբայրաբար և քեռօրէն սիրով. քանզի էր իսկ Վիլյոզինէ քաղցրահամբոյր և պարկեշտասէր և բարեմիտ հանգոյն եւայի, և Պօղ զԱղամայ բերէր զնմանութիւն՝ ընդ առնաձեռնասակին զմանկականն ունէյով պարգմտութիւն :

Բագունմ անգամ դարձ ի վաստակոցն արարեալ և Պօղայ, և միայն ընդ միայնունմ կացեալ — որպէս և բիւրիցս պատմեալ է ինձ — ասէր ցնա. « Յորժամ խոնջ իցեմ, ի տեսիլ կերպարանացդ հանգչիմ ևս : Յորժամ ի բարձուէ անտի լերիւնդ նշմարեմ զքեզ ի խորս հովտիդ, կոկոն վարդի երեւիս դու ինձ ի մրգաբերն ծառաստանի : Յորժամ ձեմ առեալ զնաս դու ի տուն մարցն մերոց, ոչ այնպէս գեղեցկայանջ և ոչ այնքան թերեւընթաց է կարառ որ առ ձագս իւր ձեպիցի : Թեպտ և ոչ ևս զականիցեմ զքեզ ի ծառոց միջի, սակայն ջէն ինձ պետք նշմարել զքեզ առ ի գտանելոյ զքեզ. իմն ինչ առ ի քէն՝ անձառ առ յինէն՝ կայ և մնայ ինձ յօղս ընդ որ դուն սրանաս, և ի դալարուոջ յոր դուն բագմեալ կաս : Առ քեզ մերձեցեալ, այլ յայլմէ լինիմ : Ոչ այնպէս հրաշագեղ է կապուտակն երկնից որպէս բոյդ ականողիք, և ոչ այնքան քաղցրանուագ պենկալիցն¹⁶ զայլայլիկք որքան քո ձայնիդ անոյշ գեղգեղանք : Եթէ ծագիւ մատինս եւէր ի քեզ հպիցիմ, սարսուռ բերկրապատար ընդ մարմինս իմ ընթանայ : Յնչ քեզ օրն այն յորում անցար մեր ընդ խիճսն բոյորանէս գետոյն եռաստեանց. զիւրդ ժամանեալ առ գետափամբն վաստակաբէկ էի. այլ իբրէս ըստ անձին բարձի ևս զքեզ, քեւս քերէս օղասլաց բուջնոյ բուէր քե ունիցիմ : Աղէ ասա, որո՞վ դու հմայիւք դիւրեցեր արդեօք զիս : Միքէ հանձարո՞վ. սակայն մարցն մերոց առաւելագոյն է հանձար քան զիմ ևս գրո :

Միքէ գգուանօրդ . այլ յաճախագոյն քան զքեզ համբուրեն նորա զիս : Թուի ինն երէ բարութիւն սրտի քո է որ ղիւքեայ է զանձն իմ : Չմոռացայց ես երբէք զօրն յորում բոկոտն ընքացիւք դեմ եղեայ զնացեր դու մինչէս . ցՍեա . Գետ խնդրէլ գրողութիւն գերւոյն փախստականի տառապելոյ : Ա՛ն . ընկալ , սիրեցեալդ իմ , զժողկափքիքս գայս ոստղ կիտրոնի գոր ի մայրիսն հատի , եւ առ մանձաւդ դիցես ի գիշերի : Աղէ կեր զխորիսխս գայս մեղու . վասն քո կրեցի զսա ի բարձուէ վիմին մեծի : Բայց նախ եկ հանգիք ի գիրկս իմ , եւ ոգի առից ես ի վաստակոց :

Եւ Վիրգիլնէ պատասխանի տուեալ ասեր ցնա . « Ո՛վ իմս եղբայր . ոչ այնչափ խրախ առնեն զանձն իմ նշոյք արփենոյն որ այգուն այգուն զբարձամբք պարելսացդ հարկանին՝ որպէս քոյինդ տեսութիւն : Սիրելով սիրեմ ես զիմ մայրիկ , սիրեմ յոյժ եւ գրոյդ . այլ մինչ նորա որդեակ զքեզ ձայնիցեն , առտւոյ եւս սիրեմ զնոսա : Յորժամ զքեզ գգուիցեն , խրախ եւս լինիմ ես քան քէ յորժամ զինեւ խանդադատիցին : Հարցանես ցիս քէ առ .



ինչ սիրիցեմ զքեզ . ապարեն ամենայն համատուրք սիրեն զիրեար : Հայեաց ի բռնունս մեր . ի նմին բունկան սնեայք՝ սիրեն զմիմեանս հանգոյն մեզ , եւ ցանգ ընդ միմեանս կան իբրեւ . զմեզ : Լուր ճրպէս ծառ . ի ծառէ ձայնատու . լինելով՝ դարձուածս առնեն բանից . սոյնպէս եւ ես , մինչ ի բարձուէ անտի լերինն տրձագանգք յունկն իմ հնչէն նուազաց սրնգիդ , անդրեն կրկնեմ զբարբառն ի խորոջ աստ հովտիս : Եւ առելի եւս սիրելի եղեր դու ինն յօրէ յորմէ կամեցարն մարտ եղեայ ոգորել վասն իմ

ընդ տեսան գերույն : Յայնմ հետե բագում անգամ ասացի էս
ցանձն իմ . Բնբէ , զի բարեսիրտ է եղբայրն իմ . եքե նա չէր ,
էս ահաբէկ կորնչէի : Զօր հանապազ աղօթեմ էս առ Աստուած
վասն մօր իմոյ , վասն քոյոյդ , վասն քո , էս վասն հիբացն մերոց
սպասաւորաց . այլ յորժամ գրոյդ անուն առնուցում ի բերան
քուի ինձ զի յաւելու ոգոյս իմոյ եռանդն : Քանի սրտառուջ
պաղատանօք հայցեմ ի Տեառնէ զի մի հասցեն քեզ ջարիք : Առ
իմէ այնպէս ի հեռաստան էս ի բարձրաբերձ վայրս դիմիցես
բերել ինձ միրգ էս ծաղկունս . ո՞չ աւանիկ ի յիւրիւն բաւա-
կանի ունիմք գամեկայն ի դրախտիս : Տես զիւնրդ խոնջ էս էս
պարտատեալ , էս ընդ քիրտն քարաւեալ : » Ես սպիտակաբոյր
վարչամական փոքու սրբէր զճակատ նորին էս գայտսն , էս համ-
բոյր բագում տայր նմա :



Սակայն ոչ սակաւ ժամանակ էր յորմէ հետե յանձանօք ինչ
երաշխեսպ տագնապէր Վիրգիլնէ . աչք իւր կապուտակք շուր-
ջանակի թխանային . գունատէին երեսքն , մեղկեալ բույանայր
մարմինն ողջոյն . ոչ էս էր գուարբէրես զնա տեսանէլ , էս ոչ
քաղցրաժպիտ ի շրբունսն : Էր զի յանկարձ գուարբանայր
առանց ուրախութեան , էս տխրէր առանց տրտմութեան :

Խուսափէր ի խաղուցն իւրոց անմեղաց , լընդէլական վաստակոցն եւ ի կենաց կցորդութենէ ընտանեացն սիրայնոց : Թափ առեալ շրջէր վայրավատին յանմարդի վայրս օրեանին, գհանգիստ խնդրէր, եւ ոչ ուրեք գտանէր : Էր երբէք զի գՊօղ տեսեալ՝ թինդս առեալ դիմէր ի նա . եւ այն ինչ մերձեցեալ՝ զմբաղ յանկարծադեպ անկանէր զնովա . այտքն դայնկագոյնք շառագնէին ի բոսոր, եւ աջքն ջիշխէին յաջս նորին դադարել : Ասէր ցնա Պօղ . « Պարեխքս դայարանան , եւ բռնուք մէր երգս առնուն յորժամ զքեզն տեսանիցեն . ամենայն ինչ բերկրայից ե շուրջ զքեւ , դու միայն կաս տխրագգած : » Եւ զիրկս ածեալ զնովա գուն գործէր փոփոգել զնա . բայց նա ի բաց զգուխն դարձուցանէր, եւ սոսկմամբ իմն առ մայրն խուսափէր : Ի գգուա-



նաց էղբօրն խռովէր յանձն իւր օրիորդն հեգ . եւ Պօղ անգիտանալը ամենեւին թէ զինչ այն նորատեսիլ զնացք եւ հաճոյք էին որ երեւէին ի նմա : Այլ բագում այն է զի ոչ միայնակ հասանէն մարդումս չարիք :

Ամառն տօթագին ընդ ժամանակս ժամանակս սաստկացեալ տոջորէ զգաւառս որ ընդ մեջ կան արեւադարձիցն երկոցուն ,

Եւ յաղարտ վարե գամենայն . խորշակ այնպիսի հարսա յայն-
ժամ Եւ ի կողմս յայս : Ի վերջ կոյս ամսեանն ղեկտեմբերի յոր-
ժամ արեգակն յայժեղջիւրն մտեալ կշիռ . անկանի գԳաղղիոյ
Կղզեասա, Եւ հրակիզեալ տապացուցանէ զսա ընդ Եօբնեակս
Էրիս, հողմ հարսաւոյ որ գամն ողջոյն շնչէ ի կողմոջս՝ դաղա-
րեաց . մրրիկք փոշոյ Էրկայնամիզք ամբառնալին յանցս ճա-
նապարհաց, Եւ յօսս կային վերամբարձ : Յամենայն կողմանց
խորխոյեալ պատառոտեր Էրկիր, բոցակեզ լինեին դալարիր,



սղոխք ջերմաջերմք ի կողից լեբանցն ամպէին, Եւ յորովք յա-
ռուակացն ցամաքեայք լինեին : Ոչ Եւս գայր ամպ ի ծովե-
բայց միայն Էր տեսանէլ զցերեկ շիկակարմիր ինչ շոգի զի վե-
րացեալ դիզացեալ ընդ Էրեսս մարգացն, ի մուտս արեւուն
Էրեւեին հանգոյն բոցոյ հրդեհի մեծի : Այլ Եւ ոչ գիշեր ինքնին
զովութիւն ինչ մատուցանէր տապազին օրոցն . Եւ գունդն
լուսնի համակ շառագոյն ամբառնայր ընդ մառախլապատն
ծիր Էրկնից ահագին իմն ցուցանելով մեծութիւն : Հօտք խաշանց
Եւ անդեոց յեմակս բլրեկացն զգետնեայք Եւ զպարանոցսն ընդ
Էրկինս պարգելով զօղ ծծեին, Եւ տրտմագին բառաջմամբ գո-
վիտս հնչեցուցանեին . անդեորդն ինքնին յորսայս մածնոյր ընդ
Էրկիր զի զովասցի փոքր ինչ : Սակայն ամենայն ուրեր հրա-

տոջոր էր գետին, և յօղս անդ մղճկուտս ոչ այլ ինչ լինէր լսելի բայց միջատացն բզզանք, որք խնդրէին զպատուք ծարաւոյն հարկանել արեամբ մարդկան և կենդանեաց :

Ի միում ուրէք ի տօբակեզ գիշերաց անտի բիւրապատիկ ևս յաւելաւ ի Վիրգիլնէ ախտին տագնապ : Մերք յառներ, մերք բազմեր, և մերք անդրէն ընկողմաներ, և որպէս և զհարդ կայր՝ ջգտաներ նա զքուն և ոչ զհանգիստ : Յարուցեալ զնայ ի լոյս լուսնակի յաղբիւր անդր իւր. տեսանէ զի և յերաշտի առուրսն բղխէր շուր յականէն, և արծաքափայլ առուակօր հատաներ անցանէր ընդ թխատիւ կողս ապառաժին. և յաւազան անդր լինի շրատոյզ : Կագդուրին զառաջինն ի նովուրէնէ



անտի զգայարանքն իւր, և բիւր յիշատակք ցանկալիք անկանին ի սիրտ նորա : Յուշ լինի նմա զի մինչ մանուկն էր, մայրն իւր և Մարգարիտ զբօսնուին իմն յոգացուցանելով զինքն և զՊօղ յաւազանի անդ. և զի ապա նմին միայնում պանեալ Պօղայ զյոգարանն, պեղեալ էր զյատակն և աւազալից արարեալ, և գեգերբքն սերմանեալ դալարիս խնկաւուտս : Ջականէ նա ի շուրս անդ զհոլանի բագիօրն և զյանջիւր զստուերս արմաւենեացն էրկոցուն տնկելոց ի ծննդեան էղբօրն և իւր, որ

զգլխովն իւրով ընդ իրեարս խիղջ արկեալ պատատեին զկանա-
չագեղն իւրեանց կողերս Է. զմիրզսն ղեռաբուսիկս : Զմտաւ
ածէ զՊօղայն բարեկամութիւն քան զբոյրս անուշից քաղցրա-
գոյն, քան զաղբերացն հոսանս ականակիտ, Է. քան զյօշակապ
արմաւենիսն կորովի. Է. յոգեոց հանէ : Զմտաւ ածէ զգիշերն
գայն Է. զամայութիւն, Է. տապ հրաբորբոք փաղաղէ զանճն
նորա : Անդէն ի բաց էյաներ զարհուրագին յանդոհական ստուե-



րաց անտի Է. ի ջուրցն ուր քան զայրեցածին արեգակունս կի-
զիջք գտանէին, Է. դիմեալ առ մայրն իւր ընթանայ ի խնդիր
ապաստանի յերեսաց անճին իւրոյ : Բագում անգամ պատմել
նմին զվիշտս իւր կամեցեալ, զճեռս նորա յիւրսն ամփոփեալ Է.
պնդիր . բագում անգամ կամեցաւ յօղել զանունն Պօղայ, սա-
կայն անդէն սրտաճմլիկ լեալ՝ լեզուն ի քիմսն կցեցաւ. Է. խո-
նարնեալ եղեալ զգլուխ իւր ի մայրենին ծոց՝ քանայր Էւեք զնա
արտասուօք :

Քաջ իսկ խելամուտ էր Լարուր տիկին դստերն աղետի. բայց
ոչ իշխեր ինքնին բանս ի մեջ արկանել. Է. ասէր ցնա. « Որ-
դեակ իմ, յԱստուած լեր ապաստան, որ միայն է պարգեա-
տուն քաջողջութեան Է. կենդանութեան : Խրատէ նա զքեզ

այսօր է. վարձահատոյց եղանի քեզ առ. վաղիւ : Յուշ քեզ զի
եկեայ էմք յայս աշխարհ առ. ի վարժս է.էք առաքինութեան : »

Յայնմ ժամանակի առ. տարապայման շերմութեան օրոցն
էլին բարձրացան յերեսաց համատարածն ծովու. գոյորշիք
բագունք է. ծածկեցին գերեսս կղզւոյն իբրէ. զհամապարփակ
ինչ հովանի : Գագարունք լերանց շուրջ պարուրեցին գոյոր-
շիսն, է. երբէք երբէք ակօսանէ. շանքք երկայնամիգք յամ-
պածրար պարելից անտի հատեայ ոստջէին : Փոյք ընդ փոյք
որոտընդօստ կայծակունք ահագին շառաջմամբ գմայրիս է.
գղաշտս է. զհովիտս առ. հասարակ հնչեցուցին. է. բօնուտք
անձրեաց նմանեայք հեղեղասաստ սահանաց շուրց հոսեցին



լերկնից : Ուղիսք անձրեաց փրփրաղէգք բաւալցոր խաղացին
առ. ի կողաց լերինդ. գոգ առագանիդ համակ ծովացառ. լեռնա-
գաշտակն յորոյ վերայ խուղբդ կառուցեայ կան, կղզեակ իմն
գտառ. ջրապարփակ, է. բերան հովտիդ ամբարտակ ջրարգէյ
ընդ որ խառն ի խառն արտաքս վագէին ընդ ահեղագոջ շուրցն
յորդութեան հող է. առագ է. ծառք է. քարածայոք :

Ամենեքին առ. հասարակ որ ի տանն էին գղողանի հարեայ
յաղօքս առ. Աստուած դիմէին ի տնակի անդ Լաքուրի տիկնոջ,

որոյ ճռնչեալ ճարճատէին տանիք յերեսաց սաստկաշունչ հողմոցն բռնութեան : Այնքան լուսաբորբ էին փայլատակունքն ստեպ ստեպ հատեալք, զի քեպետ է դրունքն է փեղկք պատուհանաց ամրափակք էին, սակայն է այնպէս ընդ ծերպս ագուցից ատաղճիցն ի ներքս հարկանէր լուսոյն պայծառութիւն է տեսանելի աջաց գործեր գամենայն : Անվեհերն Պօղ ընդ իւր առեալ գ'ոմինիկոս, է ոչ ինչ միտ եղեալ մրբկածուփ ամպրոպացն, էրբայր է գայր ի մէն մի հիւղիցն . ուրէք պահանգակապ ինչ յորմն հաստատելով, է ալլուր ցից վարսելով յամրութիւն . է անդէն ի ներքս մտեալ՝ մխիթար ընտանեացն յինէր յուսով գեղածիծաղ օղոց ընդ հուպ երեսելոյ : Եւ արդարէս իսկ ընդ երկես առուրն դաղարեցին անճրեածք . յարաշունչ հողմն արեւելեան հարաւոյ սկսաւ շնչել վերստին, ամպ մրբկածինք վարեցան արկան ընդ արեւմուտս հիւսիսոյ, է ընդ ծիրս երկնից երեսեցաւ արեգակն որ ի մուտս խոնարհէր :

Յառաջ քան գամենայն իղճ եղէս Վիրգիլն տեսանել քե զինչ անցք անցեալ իցեն ընդ վայրն հանգստեան իւրոյ : Մասեաւ երկիւղագին առ նա Պօղ է գաջ իւր կարկառ նմա ի գօրավիզն ընթացից : Կայաւ Վիրգիլն գճեռանէն ժպտելով, է ելին երկութեան ի միասին ի խղէ անտի : Հովաշունչ էին օղբ է շառաջուկ : Շուխ սպիտակարոյր էյանէր վերանայր բարդ ի բարդ զգազարամբք յերինդ՝ ախօսանէ երեսեալ ի վրփրոյ ջուրցն հոսանաց որ զիջեալ նուագէին տակաւ ընդ ամենայն կողմանս : Պարտեզն վեր ի վայր հարեալ է կործանեալ յերեսաց յաղբաջուրն հեղեղաց . յոյովք ի ծառոց պտղաբերաց արմատախիւք դնէին, է աւագակոյտ բագում ծածկեալ ուներ գեգերս մարգացն է խճողեալ գաւազանն Վիրգիլեայ : Սակայն բոքենիքն երկորին կանգուն կային է կանազագարդք, քեպետ է ոչ էս էր տեսանել գնոքօք սեգս դալարագեղոս, ոչ սարփինայս, է ոչ քոջունս, բայց ի սակաւարիւ պենկալից որ ի ծայրս մերձակալ ապառածիցն եղերական նուագօք ողբս առեալ կոծէին ընդ մատաղերամ ճագուցն կորուստ :

Յայն տեսիլ աղետաբեր ասէ Վիրգիլն ցՊօղ . « Թոջունս բերեալ էր բո ի տեղիդ, է անա սպան գնոսս մրբիկ : Պարտեգ



H. Corbould del.

F.S. Engleheart sc.

գորովանօք . « Եղբայր իմ , ցորչափ կեցցեմ էս , ոչ որ բարձցե
գաւ յինէն , էս ոչ մոռացայց էրբէք էրէ գմիակն քո ստացուած
յաշխարհի էտուր դու ցիս : Զայն մտերմական նշանակ , էս
գայն անակնկալ դարձ նախնոյ ընտանութեանն տեսեալ Պօղայ՝
կամէր համբուրել ընդ նմա . բայց նա ի բաց սրացաւ ի նմանէ
իբրէս . գրոչուն ինչ արագասայց , էս Պօղ այլ յայլմէ Էդէալ՝
արձանացաւ ի տեղուօջն , ոչ գօրէյով բնաւ ի վերայ կալ տարօրի-
նակ գնացիցն Վիրգինեալ :



ԳԼՈՒԽ Գ.

Սակայն ասէր Մարգարիտ ան Լարուր տիկին. « Զ՞ի է զի չամուսնացուցանեմք մէք զորդեակս մեր : Ապաքէն կողկար կարողին են նորա զիրերաց. քեպետ է որդին իմ չէ. Եւս խելամուտ այնմ իցէ, այլ ի բարբառեյ ան. նա բնութեան՝ ի զուր արդէօք հսկեսցուք մէք այնուհետէ, քանզի անագին է վտանգն : » Ասէ ցնա Լարուր տիկին. « Մանկահասակք են տակաւին Ե. յոյժ ջքանորք : Քանի՜ տրտմութիւն Եղիցի մէզ Եքէ ծնցի Վիրզինէ որդիս չարաբաստս, զորս գուցէ Ե. խնամեյ չլինիցի մեռննաս : Հնդիկդ քո Դոմինիկոս յայեւոյքս է, Ե. Մարիամ հիւանդագին. Ե. Ես ինքնին, սիրեցեալդ, այս հնգետասան ամբ են զի տակաւ ծնգեալ անաւագիմ : Ի տապագին գաւառս արագ արագ ձերանայ մարդ, Ե. արագագոյն Եւս՝ յորժամ ի հոգս հաշեալ ծիրիցի : Յոյս մեր բովանդակ ի Պօղ է. բող կացցուք մնասցուք կազդուրելոյ հասակին Ե. հաստատելոյ բուսոյ բարուցն, որպէս զի իւրովքն վաստակօք ձերատածէյ զմեզ մարբացի : Զարդիս, որպէս Ե. դու իսկ զխոսես, գաւուրն պարեն հագիւ պաճարեմք : Բայց Եքէ ան սակաւ մի ժամանակ յղեսցուք ի Հնդիկս զՊօղ, շահեսցի արդէօք տուրեւտիկ փոփոխմամբ արծար բաւական ան ի գերիս ինչ զնելոյ. Ե. ի դառնայ նորին այսքէն հարսնացուցուք նմա զՎիրզինէ. քանզի Ե. հաւանեալ իսկ էմ զի չիք այլ ոք որ գոստրիկն իմ սիրասուն այնպէս երանաւետեսցէ որպէս որդեակդ քո Պօղ :

Խօսեսցուք զայսմանէ Ե. ան մերն դրակից : » Ե. հարցին ցիս տիկնայքն խորհուրդ, Ե. հաճեցայ Ե. Ես ընդ կարծիսն Ե. ասեմ.

« Հնդկացն ծովք անդորրաւետք են : Երէ ընտրեալ առնուցու որ զբարեշունչ ինչ յեղանակ օղոց, վէցից էւեք եօթնեկաց պետք են աստի ի Հնդիկս անցանելոյ, էւ համաջափ ժամանակաւ հնար է այսրեն ջու դարձի առնել : Ի մերումս բաղի յօրինեսցուք մեք Պօղայ աղխամաղխս ինչ վաճառաց, քանզի էւ սիրելի իսկ է նա յոյժ դրացեաց իմոց : Բամբակ էւեք անգործ երէ տայցեմք նմա, որ ոչ ինչ իմիք է մեզ պիտանացու առ ի ջգոյէ աղօթեաց ի վեճակել էւ ի սրբել գայն, էւս էւ ոպնիագ՝ որ առ յոյժ առատութեանն յայրումն գնայ առ մեզ, էւ ազգս ազգս խիժի որ յումպետս կորնչին ի մայրիս, այս ամենայն շահաւետ վաճառք իցեն ի Հնդիկս, մինչ առ մեզ անշահք են ամենեւին : »

Ես ինքն յանձն իմ կայայ հայցել ի Պ. Լա-Պուրտոնեայ գուղեորութեանն գիրաման, բայց նախ ցանկացայ զնա ինքն զՊօղ իրագեկ այսմ առնել : Այլ զարմանք անհնարիմք կալան գիս իբրեւ ասաց ցիս պատանեակն այն իմաստութեամբ՝ որ քան զչափ հասակին գեր ի վերոյ յոյժ բուեցաւ ինձ. « Եւ իցէ ինձ հնար բողոս լքանել գազգատոհմն իմ էւ ի խնդիր էլանել մտացածին ճոխութեան : Ո՞ր այն շահավաճառ իցէ յաշխարհի մեծ քան զանդաստանացն մշակութիւն, որ է զի յիսուն էւ է զի հարիւր էւս առ մի պողաբերեն : Երէ մեզ կամք իցեն ի տուրեւառս պարապել, բող գաւելորդս մեր աստի ի քաղաք անդր իջուցեալ վաճառեմք, էւ ընդէր ի Հնդիկս գնացից տարադեմ : Ասեն ցիս մարքն մեր զի այեւորեալ էւ անաւագ է Դոմինիկոս. այլ էս ոչ ապաքեն կազդուրիմ օր քան զօր էւ յաւելում ի գորութիւն : Եւ զինչ երէ ճախողակի ինչ արկած պատահիցէ նոցա ի ժամանակի պանդխտութեան իմոյ, էւ մանաւանդ Վիրգիլեայ որ արդեն իսկ խօք է : Ո՞ն ոչ, ոչ մեկնեցայց էս ի նոցանէ երբեք : »

Ընդ այս նորին պատասխանի տագնապեցայ էս մեծապէս. քանզի էւ ոչ բաքուցեալ էր յինեն Լաբուր տիկին զդատերն իրս, էւ քէ կամի ամս ինչ շահեալ էւ յաւելոյ ի տիս քերանասակ մանկանցն անշատելով զնոսին ի միմեանց : Այլ զայսցանէ անհնար էր ինձ էւ կարծիս անգամ արկանել ի միտս Պօղայ :

Մինչդեռ յայսմ մտաց խորհրդի հաք, նա հասեալ ի Գաղղիոյ՝ նամակաբեր լինէր առ Լաբուր տիկին ի մօրաբեռեան

իւրմէ : Երկինդ մահու՛ որ միայն գիտէ ի գորով ածել զմարդ խստասիրտ, պաշարեալ էր զնա . քանզի այն ինչ ապաքինեալ էր ի մահաբէր ինչ ախտէ որ ի ծիրութիւն հատանէր զնա, և ի ծանրութենէ ամաց հասակին անբուժելի գտանէր : Պատուէր առ քեռորդեակն իւր տայր նա ի թղթին դարձ առնել ի Գաղղիա . և երէ ջներիցե քեզ, ասէր, անձինդ վատառողջութիւն մխել յերկարածիգ ուղեւորութիւն այնպիսի, յղեսօջիւր սա և՛ զՎիրգինէ, զոր քաջակիրք դաստիարակութեամբ սնուցեալ մուծից և յարբունիս, և բովանդակ ընչից իմոց զդա ինքն կացուցից ժառանգորդ : Եւ յաւելոյր ասել զի երէ կատարիցէք զպատուէրս իմ զայստսիկ, տեսանելով տեսօջիւր զդարձ իմոյ սա՛ ձեզ գրասիրութեանս :



Եւ իբրեւ ընթերցաս բուռքն այն յունկն ազգատոմմին, անդէն առ ժամայն ի սուգ անհնարին համակեցան առ հասարակ ամենեքեան . Դոմինիկոս և Մարիամ յարտասուս յուժան . Պօլ յապուշ իմն կրքեալ անշարժ կայր, և մերձ բուէր բրդել ի բարկութիւն, և Վիրգինէ ի մայրն ակնկառոյց՝ ոչ իշխտէր յողել ինչ բան : Ասէ Մարգարիտ առ Լարուր տիկին . « Արդ իցէ՞ հնար քեզ բողոսյ զմեզ և զնա ի բաց : » Իսկ նա ասէ . « Ոչ, սիրեցեալդ իմ . ոչ, որդեակք իմ . ոչ մեկնեցայց ես ի ձեռն : Ընդ ձեզ կեցի ես, ընդ ձեզ կամիմ և մեռանել : Ձերդ սեր և բարեկամութիւն է որ ծանոյց ինձ քէ զինչ երանութիւնն իցէ : Իմուժս հիւանդագին կենաց աղետքն իմ և եր առաջինք են պատճառք : Ազգակցացն իմոց խստասրտութիւն և ման ամուսնոյն իմոյ

սիրեցելոյ հարին զիս կարեվեր. սակայն յետ այնորիկ առատ-
յագունից հանդիպեցայ ես սփոփանաց եւ երանութեան մեօր
հանդերձ ընդ աղքատին յարկօրս. երանութիւն որում էրբէր
ոչ ունեի ակն ի հայրենիսն իմ յազգականացն իմոց մեծափար-
քամ ճոխութենէ : »

Ի լուր բանիցն այնոցիկ աջք ամենեցուն խնդութեան հոսեցին
արտասուս : Գիրկս արկեալ Պօղայ գլարուր տիկնամբ ասե-
ցնա. « Եւ ոչ ես բողից գրեզ, եւ ոչ էրբայց ի Հնդկիս : Ամենե-
րեան մեք վաստակեսցուք վասն բո, սիրուն մայրիկ, եւ ոչ իւր
կարօտացիս առ մեզ : » Սակայն առատէ ջան գամենեսեան
զնոսա խնդամտեցաւ Վիրգիւնէ, եւ զմնացեալ ժամս առուրն



ախորժ հաճութեամբ եւ գուարբերես անցուցաներ. եւ ամենե-
րին լցան խնդութեամբ ի տեսիլ հանդարտելոյն նորս :

Ի վաղիս անդր ընդ արեւագայն մինջէն նախաձաշեալ՝ ըստ
սովորութեանն գառաւօտին գաղօրսն միաբանութեամբ արա-
րեալ, այն ինչ գամենն կցէին, եւ անա ազդ արար Դոմինիկոսզի
հեծեալ ոք այր ստրուկս էրկու ունելով զկնի՝ ընդ բնակարանն
կոյս դիմեալ յառաջէ : Եւ էր այրն Պ. Տը-յա-Պուրտոնէ : Եմուտ

ի նիւղ անդր, և, ետես զի բոլորեքեան բազմեալ կային զսեղանով : Ըստ սովորութեան աշխարհին պաշտեալ էր նոցա Վիրգինե սուրճ և բրինձ խարշեալ, ընդ նոսին և գետնախնձոր ջերմիկ և աղամարուզս դեռակիրս : Սպասք սեղանոյն հաղադակք էւէք էին՝ դրոմք կիսանատր, և պաստառք՝ տերեւ աղամարգենոյ : Զարմացաւ կուսակալն զառաջինն ընդ աղքատութիւն օրէնանին : Եւ ապա մատուցեալ աս Լարուր տիկին ասէ. « Բազում այն է զի գործք իմ հանրականք չնէրեն ինձ մասնականացն դնել միտ. սակայն քո իրաւունք բազում էն ակն ունեւոյ ատ լինեն խնամոց : » Եւ յասէյալ ի բանս իւր ասէ. « Է քո, տիկին, ի Փարիզ մօրաքոյր քաջատոնմիկ և ընչաւետ,



որ ընչիցն իւրոց գրեզ ընտրեալ ժառանգորդ, և մնայ քեզ : » Պատասխանի ետ Լարուր տիկին և ասէ ցկուսակալն. « Խաբարեալն իմ առողջութիւն չտայ ինձ բոյլ միջամուխ ի բազմօրեալ լինել ուղեւորութիւն : » Ասէ Լա-Պուրտոնէ. « Գոնեայ ատ դուստրդ քո դեռաբողբոջ և նազելի չէ արժան քեզ անիրաւեյ և զրկել գնա ի մեծէ ժառանգութենէն : Ծանիր զի մօրաքոյրն քո և զպետութիւնն ասեալ է ի մեռս՝ զի մարբասցի ատ իւր տանել զդա : Եւ գրովս ևս պատուէր տուեալ է ինձ վարել իշխանութեամբ իմով՝ եքէ հարկ իրացն այնպես պահանջեսցէ. այլ զի իմ հոգ ի մտի կալեալ է զիշխանութիւնս իմ ոչ յայլ ինչ պետս առնուլ ի կիր, բայց յերանաւետել զգաղբականս տեղւոյս, կամ իմ զի դու ինքնին յօժարեսցիս ի նուիրումն զոնիդ ատ ամս

սակաս. գի յայնմ իսկ հաստատեալ կայ դատերն քո բարեբա-
տութիւն եւ քոյդ բարեկէնդանութիւն : Առ ինչ ի կղզիս կող-
մանցս այսոցիկ պանդխտիցի որ. ոչ ազաբեն գի ի փարբամու-
քիւն լաւելուցու : Իսկ արդ ոչ լաւ իցէ երբայ գտանել զայն ի
հայրենի աշխարհին : »

Եւ զայս ասացեալ եղ ի վերայ սեղանոյն պարկ մի արծարոյ
գոր ուն ի խափշիկ սպասեկաց իւրոց բարձեալ բերեր. « Զայն
աւասիկ յէ մօրարոյրն մեր, ասէ, ի ծախս հանդերձանաց չուոյ
դատերն մերոյ : » Եւ աւարտեաց զբանսն՝ յանդիմանեալ ողորով
զլարուր տիկին զի ոչ առ նա ինքն լեալ էր ապաստան ի կա-
րօտութեան իւրում, բեպետեւ զովել զովեր եւ զարտին ազնուա-



խոն արիութիւն : Եւ պատասխանի անդէն Պօղ եւ ասէ ցկու-
սակայն . « Մայրն իմ էկն իսկ առ քեզ, տեր, եւ դու ջարտոր
ընկայար զնա : » Եւ ասէ Լա-Պուրտոնէ առ Լաբուր տիկին .
« Իցէ քո եւ այլ որդեակ : — Ոչ, տեր, որդի է դա բարեկամիդ
իմոյ. սակայն դա եւ Վիրգիլնէ հասարակաց երկացունցս են
գաւակք, եւ զուգապէս սիրելիք : » Եւ ասէ կուսակայն առ Պօղ .
« Պատանի դու, յորժամ զիրաց կենցաղոյս առցես զփորձ,
յայնժամ խելամուտ լիցիս պաշտօնեայ մարդկանս աղետից,
եւ ծանիցես երէ քանի՛ դիւրին է ի պատիրս զնոսա արկա-
նել, եւ նմբափ շուտափոյթք են ի շնորհել արանց նենգամե-

տից գայն ինչ գոր անձանց վաստակաւորաց եւեթ ի ձան էր պանել : »

Պ. Լա-Պուրտոնէ հրաւիրանաւ Լարուր տիկնոջ բազմեցաւ առջնքեր նորին , եւ ձաշեաց ըստ գաղթածին եւրոպականացն օրինի , եւ արբ գտորձ հանդերձ բրնձով խարշելով ի ջուր : Հիացաւ այրն ընդ կազմիկն բարեկարգութիւն եւ ընդ մաքրութիւն տնակին , ընդ սիրայօղն միութիւն ազգատոմիցն երկուց , եւ ընդ փոյթեանդն սպասահարկութիւն հինաւորց արբանեկաց նոցին : եւ ասէ . « Փայտակերտք էն կահր տեղուոյս , սակայն գուարբերես կերպարանք փայլեն աստ եւ սիրտք ոսկեճոյք : » Խրախացեալ Պոյայ ընդ կուսակալին անարգամեծար գնացս ,



ասէ ցնա . « Յանկալի է ինձ բարեկամութիւն խառնել ընդ քեզ , քանզի այր բարի էս դու : » եւ հաճութիւն յոյժ էցոյց Լա-Պուրտոնէ ընդ կողայնոյ պատանեոյն մտերմութիւն : Աջ կարկառեալ առ Պոյ համբուրեաց ընդ նմա , եւ հաւատարիմ արար զնա ընդ բարեկամութիւն իւր :

Իբրեւ յարեան ի սեղանոյ անտի , հառ մեկուսի Լա-Պուրտոնէ զԼարուր տիկին եւ ասէ ցնա . « Է աստ նաւ պատրաստական ի ջուելի Գաղղլա . եւ եքէ գղուստրն քո յղեսցես , յանձն

արարից զնա ի խնամս տիկնոջ ուրումն որ ազգակից իմ է եւ ուղեւորի ի Գաղղիա. տես, ասէ, մի՛ գուցէ անփոյր առնիցես զմեծափարքամ ճոխութեամբն սակս ամաց սակաւուց անձինդ դիւր գտանելոյ : » Եւ մինչ մեկներն յաւել եւ ասէ. « Մօրաբոյրն քո ոչ յերկարակեաց լիցի այլ եւս քան զերկամեայ ժամանակ. զայս բարեկամք իսկ նորին ազդ արարեալ ծանուցին ինձ : Քաջ մտախոն լեր ի սոյն, զի ոչ էրէ զօր հանապազ գայ հասանէ բաղդ մարդոյ : Հնարք խորհուրդ յամենեցուն, եւ ամենայն այր ողջամիտ յիմ եղիցի կարծիս : » Եւ նորա պատասխանի տուեալ ասէ. « Եւ քանզի ինձ այսուհետեւ չիք ի կենցաղումս բարեբաստութիւն այլ քան զդատերն իմոյ զերջանկութիւն, ի հաճոյս կամաց քոց առնեմ ապաստան զչու նորին ի Գաղղիա : »

Ոչ դժպատեն ինչ համարեր Լարուր գղեպն գայն առ անջատելոյ ի միմեանց առ սակաւ մի ժամանակ զՊօղ եւ զՎիրգիւնէ, այլում պահելով պատենի գերջանկութեան նոցին հեքեբանս : Եւ առեալ զդուստրն իւր մեկուսի ասէ ցնա. « Որդեակ իմ, ծառայքն մեր ձերացեայք են. Պօղ մանուկ է տակաւին, Մարգարիտ ի ձերանալ է, եւ ես ցանգ հիւանդազին. Երէ յանկարծ մեռանել ինձ հասանիցէ, քեզ զի արդեօք լինիցի միայնումդ եւ ջբաւորի յանմարդի անապատիս : Ապարեն կացցես մնացես անոր եւ անօգնական, եւ առ ի զկեանսդ պաճարելոյ ստիպեսցիս յար ի հողագործութեան տարժանել իբրեւ գվարնկան որ գերի : Այլ խորհուրդ ի ցաս անհնարինս վարակէ զսիրտ իմ : » Ետ պատասխանի Վիրգիւնէ եւ ասէ. « Աստուած զմեզ յաշխատութիւն դատակնքեաց, եւ դու ինքն ուսուցեր ինձ վաստակել զօրհանապազ եւ ցանգ զնա օրհնաբանել : Մինչեւ ցայսօր ոչ էրոզ նա զմեզ. եւ յայսմ հետէ եւս ոչ թողուցու զմեզ ի մեռաց. քանզի եւ հայրախնամ նորին տեսչութիւն առաւելապէս իմն հսկէ ի վերայ միքացելոց : Եւ զայս քո իսկ ասացեալ է ցիս, մայրիկ, բազում անգամ : Ոչ, քաւ յինէն ի բաց զնալ առ ի քեն : » Խանդադատեալ Լարուր տիկնոջ ընդ բանսն ասէ. « Իմ ոչ այլ ինչ է կէտ նպատակի, բայց էրանաւետ առնել զքեզ, եւ ուր ուրեմն ամուսնաւորել ընդ Պօղայ, որ ոչ է քո հարազատ : Յուշ լիցի քեզ արդ զի ի քո ձեռս է բաղդ նորա : »

Օրիորդ որ տարփասոր՝ զանխույ յամենեցուն զիւրն կարիս համարի, և զսրտին իւրոյ զքօղ զաջօրն իւրովք ածէ. այլ յորժամ ձեռն մտերիմ առեալ զպատրուակն զայն ի վեր պարզիցէ, յայնժամ տարփանաց նորին բարուն երաշխեայք իբրև ընդ խրամատս ամբարտակի վազեալ սուրան ի դուրս, և զքօղանից զգուշութիւնս նորին և զգաղտնածածուկն հնարիմացութիւնս փոխանակեն քաղցրախօսիկ գեղմունք սրտի հանդերձ աներկմիտ վատահութեամբ : Գորովեալ Վիրգիլեայ ընդ այն նոր հաստախա խանդաղատանաց մօր իւրոյ, մանրապատում արար նմա զճգունսն որոց Աստուած միայն էր հանդիսատես. և ակն յայտնի տեսանեմ, ասէ, զհայրախնամ տեսչութեանն օժանդակութիւն ի ձեռն մօրդ իմոյ սիրելոյ ինձ պարգեւեալ, որ հաճ և հաւան գտանի ընդ իմս յօժարութիւն սրտի, և առաջնորդէ ինձ քոյովդ խրատութիւն բարին. և արդ ի քեզ այտուհետեւ յեց կամ, ասէ, իբրև յամուր հաստատութեան, և ամենայն ինչ յորդրագոյնս առնէ զիս կալ մնալ առ քեզ անմէկին՝ աներկիւղ յառաջիկայիցս և ի հանդերձեւոցն անվեներ :

Տեսեալ տիկնոջն զի բանքն իւր մտերմաբար սասցեայք զհակառակն ակնկալեաց իւրոց ներգործեցին ի Վիրգիլնէ, ասէ զնա. « Որդեակ իմ, քառ յինէն բուռն քեզ առնել. ըստ անձինդ դիւրի մտախոն լեր, բայց տեսչիր զի մի՞ Պօղ զտարփանսդ զիտասցէ : Քանզի յորժամ ոգիք օրիորդի կապեսցին ընդ ումեր, ոչ եւս ինչ մնալ սիրելոյնս առ ի նմանէ հայցելի : »

Ընդ երեկս առուրն միւնջդեռ մենացեալ կայր նա ընդ Վիրգիլեայ, Էկն եմուտ առ նոսա այր ոմն անձնեայ զգեցեալ պատմութեան կապուտակ : Եւ էր երեցն քարոզիչ կղզոյն և հայր խոստովանութեան Լարուրի տիկնոջ և Վիրգիլեայ, և գայր ի կուսակային հրամանէ. և մտեալ ի ներքս ասէ զնոսա. « Որդեակք իմ, զոհութիւն Տեսուն, զի ահա փարբամացայք դուք : Յայսմ հետէ կամակատարք Էգիշիր ձերոցդ բարեսէր սրտից, և ուրախ սրասչիր զաղբատսն : Ծանեայ զամենայն զոր ինչ ասաց ձեզ Պ. Լա-Պուրտրնէ, և զոր ինչ դուքն էտուր պատասխանի : Գու, մայրիկ, հարկ է զի առ հիւանդագին կենացդ աստէն մնայցես. բայց քեզ չիր պատճառք, ազնիւ օրիորդ :

հնագանդէլ պարտ է վերնախնամն տեսչութեան, և ծնողացն մերոց ծերունեաց, ևս ևս յորժամ անիրաւ ինչ տայցեն հրաման : Նուէր ողջակիզի է գործդ. բայց հրաման Տեառն է : Նա ինքն զանճն իւր բոլորանուէր էդ ի վերայ մեր. պարտ ևս մեզ է ըստ նորա օրինակին դնել զանճինս մեր յօճան բարեաց ազգա-



տոնմին մերոյ : Քո ի Գաղղիա ուղեւորութիւնդ բարեբաստիկ էդիցի : Նա արդէօր ջկամիցիս էրբայ անդր, սիրեցեալդ իմ որդեակ : »

Վիրգինեզակն ի խոնարհ արկեայ՝ էտ նմա դողդոջագին պա-

տախանի. « Եթէ Տեառն հրաման իցէ, ջլինիմ դիմադարձ :
կամք Տեառն եղիցին օրհնեալ. » Եւ զգերարտօսըն հոսեր յա-
ջաց :

Եւ ելեալ զնաց երեցն ազդել կուսակալին գառաքելութեան
խորոյ գլաշողութիւն : Իսկ տիկինն Լաբուր յղեալ առ իս գՐո-



մինիկոս աղաչէր երբայ առ նա, զի ցանկայր խորհուրդ յինեն
հարցանել վասն Վիրգիւնեայ ջուռոյն : Ինճ ոչ բնաւ ի դեպ բուե-
ցաւ ուղեւորութիւն նորին . քանզի իմս անյեղյի կարծիք այն են
էրէ որ կամիցի որ բարեբաստիկ վարել կեանս՝ զշահս օգտից
բնութեան պարտի նախամեծար բաղդին առնել, եւ չէ արժան
արտարոյ անճանց խնդրել զոր ի ներքս ի մեզ մարբիցիմք գտա-
նել . Եւ գայս իմ խորհուրդ առ ամենայն ինչ տեսանեմ քաջա-
ղեալ : Բայց բնաւ զլնճ կարող էին առնել խորհուրդք իմ ցա-
ծուք ընդդեմ հրապուրից մեծափարքամն ճոխութեան, եւ
կամ անկեղծիկն իմ պատճառաբանութիւնք ընդդեմ մտա-
հանութեանց աշխարհի եւ հրամանի իշխանութեանն որ նուի-
րական իմն էր յաջս Լաբուրի տիկնոջ : Սմին իբր Եւ նորայն
ընդ իս խորհրդակցութիւն առ պատշաճից իմն էր եւեր, եւ

յետ գլխստովանահօրն ընդունելոյ զպատուեք՝ ոչ էս տա-
տամսեր. Եւ Մարգարիտ ինքնին՝ որ անտես առնելով զչա-
նս օգտիցն որոց ակնկալելի էր իւրում որդէկին յընչաւեանէ
Վիրգիւնեայ, Եւ ոգւով չափ հակառակ ընդդէմ կրբեայ էր
չուսոյն, ոչ էս ինչ այնուհետեւ խօսեցաւ ի ներհակացն :
Իսկ Պօղ որ անգետն էր էլից խորհրդոցն, զարմանայր
Եւեր ընդ ծածկախօս զրոյցս Լարուրի տիկնոջ ընդ դստերն
իւրում, Եւ ի բախժութիւն անհնարին համակեր Եւ ասեր
ի միտս իւր. « Դաւ իմն նիւթէն ինձ դոքա, քանզի անձնապան
լինին առ յինեն : »

Մինչ այս Եւ մինչ այն՝ հռչակ ի կղզուոջս հարկաներ երէ բա-
րեբաղդուրեան ինչ այցելութիւն յեայ է ի լեռնակողմանս
յայտսիկ, Եւ վաճառականք ազգի ազգի կարասոյ ձեպէին
ամենուստ այսր հասանել : Ընդ աղքատին յարկօք ճիւղիցս
այսոցիկ պարգեայ սփռելին գոսկեճամուկ դիպակս Հնդկաց,
գնրբարէլ բեհեզս Կուտուրի, զվարշամակս Փայլաբարի Եւ
Մասուլիփարեամայ, զշղարշս Տաքայ, գհամակս շերտաւորս,
ասղնեգործս Եւ բափանցիկս իբրեւ գլոյս. սնդոնս ի Սուրարի
սպիտակափառս, կտասիս ամենագանս սակաւագիւտս,
սպիտականիշս Եւ կանաչասաղարքս : Բացին պարգեցին շքեղ
կերպասս ձենաց մետաքսեղենս, զառնառուխտս ծակոտկենս,
պատտառս դամասկացիս ձիւնափայլս, դալարագեղս Եւ
ակնախնդտիղ կարմրերովեանս, սնդոնս վարդագոյնս, կագս
ձեռնալիրս, փեքինս քնրուշս նմանեայ ասուեաց, նանքինս
ձիւնարոյրս Եւ դեղնափայլս, Եւ Եւ սխաճանելիս ի Մատա-
գասկարէ :

Հրաման Ետ Լարուր տիկին դստերն իւրում գնել առնույ զոր
ինչ միանգամ հաճոյ անձինն գտանիցէ. Եւ ինքն գնոցն Եւեր
Եւ վաճառացն յառութեան միտ դներ, զի մի ի բանգարացն պա-
տրեացի : Եւ Վիրգիւն ընտրեայ կալաւ զոր ինչ հաճոյն համա-
րեցաւ մօրն, Եւ Մարգարտի Եւ որդւոյ նորին. « Սա, ասեր,
կանուց գայ ի դեպ, Եւ դա ի պէտս Մարիամու Եւ Գոմինիկեայ : »
Եւ անաւ արժարն որ ի պարկին էր՝ սպառեայ ծախեցաւ մինչչեւ
հայրայրեայ էր գանձինն պէտս կարեւորս. վասն որոյ Եւ հարկ

Եղև. այլոց հանել նմա ի բաժին լընծայիցն գորս առ մեն մի ի նոցանէ տուեալ էր :

Յայն տեսիլ սարգեւաց բաղդին ցաւագին սրտիւ կայր Է. հայեր Պօղ, զի նոքին իսկ գուծէին նմա զմօտայութն չու Վիրգիւնեայ. Է. յետ առուրց ինչ էկն առ իս Է. ասէ անհնարին



տրտմութեամբ. «Քիչոյրն իմ ի ճանապարհէյանէ, Է. կազմ իսկ Էն ուղեւորութեանն հանդերձանք. արի էկ առ մեզ, աղաչեմ, Է. գուն գործեա բոյովդ ճարտարութեամբ շրջել զմիտս մօր նորա Է. զիմոյն զի մի արձակեացեն զնա : » Է. զիջայ ի բախանձանս Պօղայ, քեպետ Է. ճարտար զիտէի զի ինչ ոչ ազդեսցեն բանք իմ :

Վիրգիւնէ որ գեղատեսիլն երեսեր ինն մինչ արկաներն զանձամբ զկապուտակն կտաւ Պենկալայ, Է. վարչամակ կարմրեալանց զգլխովն բոյրեր, ջրնաղագեղ յոյժ բուեցաւ յայնձամ

զարդարեալ եւ պանուճեալ ըստ օրինի տիկնայց աշխարհիս : Քանզի զգեցեալ էր բեհեզ ձիւնաբոյր ' աստառ ի ներքոյ սնդուս ունելով վարդագոյն : Անճն նորին քեթեւընքաց եւ բարձրադիտակ ' քաջ քաջ ընդ բաճկոնական գայր էյաներ ի տեսիլ . եւ խարտիշագեղ վարսիցն զխակը հիւսեալք ի հիւսակս կրկին՝ զկուսական գլուխն սրանչեյապէս պճնեին : Աչք նորա կապուտակագեղը ' լի էին քախճուքեամբ, եւ սիրուն ' ի խոովայոյզ կրիցն տագնապի այեկոծեալ՝ երանգ կենդանատիպ ի դէմն



նարկաներ, եւ գեղճումն ի բարբառ ճայնին յաւելեալ՝ տխրագգած զխօսան յարդարեր : Պանուճանքն իւր անգամ վայելչայարդարք զոր յակամայս իմն արկեալ էր գանձամբ, եւս քան զեւս աղեկեզ զործէին զքրումն վնասութեան նորին . եւ ոչ որ էր որ տեսեալ զնա եւ կամ յուեալ զբարբառ նորին եւ ջմորմորք ի սրտին : Նմին իրի եւ Պօղ յաւելոյր ի սրտմութիւն : Սրտաբեկեալ Մարգարտի ընդ ցաւս որդեկին, ասէ ցնա առանձինն . « Զի է քեզ, որդեակ, գաղվաղվուսն յուսովք գանճն քո պարարել, եւ դառնագոյն եւս այնու զքո ջքաորութիւնդ զործեի : Ժամ է արդ ի վեր քեզ հանելոյ զիմ եւ զքո կենաց զգաղտ-

նիս : Օրիորդն Լարուր արեանատու է ի մօրն կուսէ ընչաւետի ուրումն է. ազնուագարմ ազգակցի. իսկ դու, որդի էս առն շինականի, էս որ չար էս է' աղջկորդի էս դու գաւակ : »

Ի լուր աղջկորդին ճայնի յապուշ կրքեցաւ Պօղ, քանզի էս երբէք ոչ էր նորա լուեալ գայն. էհարց ցմայրն քէ զինչ այն իցէ, էս նա ասէ ցնա. « Ոչ օրինաւորի հօր էս դու որդի. այլ մինչդեռ տակաւին օրիորդն էի, տկարացայ էս յանցեայ տարփանօր, էս մայրացայ քեզ : Յանցուածովս իմով այսու գրկեցար դու յագ-



գատումեղ հայրենի, էս սորջանօքս ի մայրենայոյ : Եղնակ քեզ, չիք քո ի կենցաղումս այլ ազգակից բայց յինեն. » էս յարտատուս հարաւ : Յայնժամ փարեցաւ Պօղ զնովաւ էս ասէ. « Ո՛վ մայրիկ. ասացեր քէ չիք իմ յաշխարհի այլ ազգակից բայց ի քեն. ապա ուրեմն առաւել էս սիրեցից էս գրեզ : Բայց ճվ գաղտնածածուկ խորհրդոյն՝ գոր հաներ դու ինձ ի վեր : Անա արդ խելամուտ լինիմ էքէ զի է գի յերկամսեայ առուրց հետէ ուժանայ իմն առ յինեն օրիորդն Լարուր, էս գարդիս հանդերձի ջուել զնայ աստի : Ո՛հ ճն, արհամարհեայ անգոսնէ նա զիս անշուշտ : »

Յնաս ընքրեացն ժամ էս բազմեցան ի սեղան. այլ բազմակա-

նացն առ հասարակ յուզեալ գոյով ի պեսպես կրից, ամենայն որ սակաւակեր գտաւ եւ սակաւախօս : Վիրգինէ յառաջ իսկ քան գամենեսին էլ ի սեղանոյ անտի, եւ անցեալ նստաւ ի տեղուոջ յորում կամբս : Անդէն զնետ նորս յարեաւ եւ Պօղ, եւ եկեալ նստաւ առ նմա . եւ առ սակաւ մի ժամանակ անխօս եւ անբարբառ կացին մնացին երկորեան : Եւ եր զիշերն մի ի գեղեցիկ գիշերաց անտի արեւադարձիցն, գորոց եւ ճարտարագոյնքն ի նկարջաց ջգօրէն հանել ճշղիւ ի նկար զգեղ սրանջելի : Կարակնանէ նշողէր յուսին ի քօղ ամպոց, զորս նշույլքն նորին տակաւ փարատեալ ցնդէին ի բաց : Ծառայէր սարգէր յուսնակն



յանգգայս ընդ լերին կղզեկին եւ ընդ պարեխս նոցին որ արծարափայլ իմն կանաչութեամբ շողէին : Հողմք առ հասարակ յուեալ կային անշշունջ . եւ ի խորս մայրեացն, ի խոխոմածիգս հովտաց, ի բարձունս ապառածից լսելի լինէին ճջիւնք եւ ձուռողիւնք քաղցրանուագ բուջնեկաց որ գմիմեանս գգուէին յանցնիւր բունկունս գուարբացեալք ի պայծառութիւն գիշերոյն, եւ յօղոցն հանդարտութիւն : Ամենայն ինչ ձայն ածեր, մինչէն ցնայիուն եւ ծղրիտ որ ընդ դայարեօք պատսպարին : Շողային ընդ երեսս երկնից աստեղք, եւ փողփողէնէջք ի ծովու ցոյսնային որ գմկանամբքն գեղածփեր զդողզոջտն նոցին տխարս : Պշուցեալ հայեր Վիրգինէ ի լայնատարրն եւ ի նսեմատուեր ծիրս երկնից, որ ձկնորսացն կարմրափայլ հրատիւք էւեր յափանց անտի կղզեկին քեցեալ անշատէին : Եւ նշմարեաց ի մուտս

հանգրուանին յոյս ճրագի և ստուեր ընդ նմին . այն իսկ էր յապտեր նառն որով հանդերձեր նա ջու առնել յՆերուպա , և կազմ և պատրաստ ի պարգել գառագաստսն ' խարխիս արկեայ կայր մնայր հողմոցն շնչելոյ : Յայն տեսիլ խռովեցաւ անձն նորա , և ի բաց գրուիսն դարձոյց զի մի տեսցի Պօղ գարտասուս իւր :

Տիկինն Լարուր և Մարգարիտ և Ես նստեայ կայար ընդ աղամարգենեօրդ ի բաց . և ի յուրեան անդ զիշերոյն հարան յականջս իմ անաղօտ բարբառով գրոյցք Երկոցունցն որ ջանկան էրբէք յուշոյ մտաց իմոց :



Ասէ ցնա Պօղ . « Ազնիւ օրիորդ , ասի բան քե յետ էրից արուրց ուղւոյ Էդիցիս . և ջերկնչիցիս դիմագրաւ լինել վտանգաց ծովուն... ծովուն յորմէ այնքան գահի հարեայ գահանդիս : » Ետ պատասխանի Վիրգիլնէ . « Հնազանդել պարտ է ինձ արեւակցացն իմոց և այնպէս կատարել զպարտս : » Պօղ ասէ .

« Մեկնիս գնաս դու. ի մենչ վասն ազգականի ուրումն գորքո տեսեալ բնա. չիք : — Եղնէկ զիս, ասե վիրգիքն. գամենայն առաքս կենաց իմոց աստեն ցանկալի կեալ. այլ ոչ կամեցաւ ընդ այն մայր իմ : Խոստովանութեան իմոյ հայր ասաց ցիս եքէ Տեսուն կամք են գնալ ինձ ի բաց, է. քէ փորձութիւն են կեանք մարդոյ ի վերայ երկրի... Ո՛հ, է. քանի՛ դառնակսկիծ փորձութիւն : »

Եւ յաւելեալ Պօղոս ի բանսն ասե. « Եւ զիմարդ. պատճառանք այնքան ի չու. գրեզ յորդորեցին, է. ջգտան. պատճառ է. ոչ մի առ ի խափանել զչուդ : Ո՛հ, են են է. այլ պատճառք գորս դու. չհանես ինձ ի վեր : Յոյժ գորատոր են ճոխութեանն հրապոյրք : Հուպ ընդ հուպ ի նորում յայնմ աշխարհի գտցես գորք որում ընծայեսցես գեղբայրն անուն՝ գոր ոչ է.ս տաս դու ինձ. է. ընտրեալ առցես գեղբայրն զայն ի միջոյ արանց արժանատրաց քոյում անձինդ ազնուութեամբ գարմի է. ընչաւետութեամբ՝ յորոց լոկ էմ էս է. քափուր : Սակայն ո՞ւր արդէօք զբարեբաստութիւն երբեալ գտանիցես : Զինչ երկիր իցէ յոր էլանիցեսն է. յարեսցիս ի նա քան յորում դուդ ծնար : Ո՞ւր գտանիցես ժողով մարդկան սիրելի քան գոր սիրեն գրեզ խանդակար : Զիմարդ կեցցես հետի ի մօրդ գրգանաց յոր այնչափ սովորեալդ էս : Եւ զինչ անցք ընդ նա ինքն իսկ անցանիցեն որ արդեն անցեալ է գառաբքք, յորժամ ոչ է.ս տեսանիցէ գրեզ առընթեր ի սեղանի, ի տան է. ի գբօսանս յորս ի քեզն յենոյր նա : Զինչ է. մայրն իմ արասցէ որ ոչ ինչ ընդհատ ի նմանեն սիրէ գրեզ կարողին : Եւ էս զինչ ասացից աս. նոսա յորժամ յողքս գնոսա տեսից վասն քոյունդ երբի : Ո՛ր անկարեկիր սիրտ. գանձնես ինչ ոչ ասեմ. բայց զի՛ լինիցի է. ինձ յորժամ ոչ է.ս տեսից գրեզ ընդ մեզ այգուն այգուն, է. մինչ գիշեր ի վերայ հասեալ է. գմեզ ժողովիցէ իմի. յորժամ գամոյս արմաւենեացն նկատեցից գտընկեալս ի մերում ծննդեան, որ վիպք իսկ էն մերումս բազմամեայ բարեկամութեան : Ո՛հ, է. քանզի նսեհ նորոյ բաղդի հրապուրեալ յորդորէ գրեզ էլանել, ի խնդիր այլոց աշխարհաց արտաքոյ այսր յորում ծնարդ, է. այլոց ինչ բարեաց է. ընչից քան գոր ձեռք իմ պաշտելն, քոյլ արա ինձ գէթ նաւել ընդ քեզ

ի միասին : Ես քաջալերեցից զքեզ յորժամ մրրիկքն յուզիցին
ի նառու. որ անաբէկ առնեն զքեզ ի ցամաքի : Զգրուխ քո ի գիրկս
իմ հանգուցից, գսիրտ քոյին առ իմովս շեռուցից . եւ ի Գաղ-
ղիա ուր մեկնիս գնաս դու ի գիւտ ձոխութեան եւ անագութեան՝
սպաս քեզ հարից ստրկապես : Քոյովդ եւեր բարեբաստութեամբ
բարեբաստիկ ելով, յապարանսն յայնոսիկ յորս տեսից զքեզ
սպասասորեալ փառօր՝ շատ իսկ տակաւին ընչաւետ գտայց
եւ քաջատոհմիկ առ ի մատուցանելոյ քեզ զմեծն քան զամենայն
նուերս զոհի, զմեռանելն առ ոտս քո : »

Եւ նեկեկանք իւր նեղձամղձուկ գելին զբարբառ նորա, եւ մեր
յուսք անդէն զձայն Վիրգիւնեայ որ ասեր ցնա ընդհատ բանիւք
նեծեծագին . « Վասն քո է գնայս իմ... վասն քո որ զօր հանա-
պագ քամակաբէկ վաստակես ի դարմանել ազգատոհմս երկուս
ապիկարս : Յայն սակս եւեր կայայ ես յանձին գիարբամանա-
յոյն պատեհ, որպէս զի կարող եղեց բիւրապատիկ առաւելու-
թեամբ փոխարիւնել քեզ զբարիսն զորս դու մեզ ընձեռեցեր :
Ո՞ր այն բարեբաստութիւն իցէ որ քումդ բարեկամութեան գտա-
նիցի գուգական : Եւ զինչ զծննդեանդ ասիցես : Ո՞հ, երէ եր իսկ
հնար խառնել ինձ զոք յիմս եղբայրութիւն, միրք ընտրեայ
առնուի արդեօք զայլ որ քան զքեզ : Ո՞ Պօղոս, Պօղոս . զար-
մանայի եղէ ինձ սեր քո քան զսեր եղբօր հարագատի : Քանի
դառն եր ինձ ի բացէ առնել զքեզ յանձնէ իմմէ : Կամելի զի դու
ինքնին օգնէիր ինձ քեցել զիս յանձնես մինչէս ի ժամանակն
յորում օրհնեսցեն երկինք զգօղ միութեան մերոյ : Բայց արդ
անա կամ մնամ, մեկնիմ, կեամ, մեռանիմ . արա ընդ իս որ
ինչ եւ հաճոյ իցէ յաջս քո : Եղնիկ ինձ, զիսնոր քափուր յառա-
քինութենէ գտանիմ ես օրիորդ . քանզի տեսեայ բաւեցի հակա-
ռակել զգուանացդ, եւ անա չգօրեմ տանել ցառցդ քոց : »

Յայն քան փարեցաւ զնովս Պօղ, եւ ընդգրկեայ զնա պնդա-
պէս՝ զոչեաց անեղ բարբառով . « Գնամ ես ընդ նմա . չիք որ
անջատել զիս ի նմանէ կարացէ : » Յայնժամ դիմեցաք մեր առ
հասարակ առ նա, եւ ասէ ցնա Լաբուր տիկին . « Որդեակ իմ,
երէ դու ի մենչ ի բաց գնայցես, եւ զի եղիցի մեզ : »

Եւ Պօղայ զղողանի հարեայ կրկնեաց զբանսն . « Որդեակ իմ...

որդեակ իմ... Դու, մայրիկ, ասէ, դու որ գեղբայր քեցես ի քեռէ : Երկոքեանս մէք զկարն քոյին դիւեցար. երկոքին ի գիրկս քո սնեալ՝ առ ի քէն ուսար զմիմեանս սիրել, է. բիւրիցս իրէրաց զնոյն ասացար . է. արդ դու գաս անջատեալ զատանես յինէն . յերոպա գաս առաքես, յերկիր խժական որ զլացաւ քեզ ամուր ինչ ապաստանի, է. առ անագորոյն ազգակիցս որ ընկեցիկ զքեզ արարին : Ե. մի ասիցես ցիս էքէ չկայ ինչ քո է. դորա, իբր զի է. ոչ քոյր քո է դա : Դա ինքն ամենայն ինչ է վասն իմ, է. ճոխութիւն, է. ազգ, է. քաջատոհմութիւն է. ամենայն բարի . է. բայց ի նմանէ այլ ինչ ոչ ունիմ ի բարեաց : Յարկ զնոյն կալար մէք, է. որբան զնոյն . նոյն յիցի մեզ է. դամբան : Եքէ դա զնասցէ, հարկ է ինձ գնետ դորա գնալ : Այլ չբողոցու. կուսակալն : Զբողոցմ. է. ամալ զանձն իմ ի ծով : Ի լող պնդեցայց զկնի նորա : Ոչ է մարք ծովու առասել քան զցամաք յինել ինձ մահառիք : Ե. զի չկարեմ կեալ աստէն առ դովա, բող մեռայց յանդիման դորա է. ի մենչ ի բացեալ : Անողմբ մայր, անագորոյն կին . համատարածն այն յորում զդա վտանգես, իցէ քէ մի է.ս դարձուցէ զդա առ քեզ . իցիւ քէ կոնակք նորին բարձեալ բերցեն քեզ զդիակն իմ, է. քաւայեալ գաս ընդ դորա մարմնոյն ընդ խիճս ծովափանցս՝ մորմոք յաւերժական մորմոքեցուցէ զքեզ ընդ կորուստ որդեկացդ երկոցուն : »

Ե. մինչդեռ տակաւին խօսերն, գիրկս արկի էս զնովա, քանզի առ ցաւոցն յուսանատութեան ցնորեր ի մտաց : Հրացայտք էին աչքն, է. ընդ դեմն բոցաշունչս ոլոռն ոլոռն հոսէին բրտունք . ծունկքն բաբախէին, է. ի լանջսն տապազինս քինդս արձակէր արագ արագ սիրտ նորա :

Անաբեկեալ է. վիրգինէ ասէ ցնա. « Երդուեալ ի մանկութեանն մերոյ զբօսանս,՝ ճ բարեկամ, երդուեալ յաղեսս քո է. յիմս, է. յամենայն ինչ որ անլոյծ գողիւ գորիցէ պնդել զնէքքս զերկուսին, էքէ աստէն մնացից՝ վասն քո կեցից, է. էքէ գնացից՝ դարձեալ առ քեզ էկից : Ադէ դուք ամենեքին յերուք ինձ վկայք, դուք որ կարնաջամբ զիմս տղայութիւն սնուցէք, յորոց ի մեռս է կենդանութիւն իմ, է. որ տեսանեքդ զարտաստուս : Երդուեալ

լերկինս որ լսե գրաբատ իմ, և ի ծովդ ընդ որ ջուսեցից, և յօդս գոր ձծեմ և գոր չիք իմ երբէք ստախօսութեամբ ադտեղեայ : »

Ձոր օրինակ յարեգականն տապոյ հալեայ քանալի շառաշիղ սառին ի բարձանցն Սպենեանց, այնպէս ի մայն բարբառոյ սիրունուն զիջաւ գայրոյք սրտմտութեան պատանուն : Խրոխտապանձն նորա գրուխ խոնարհեայ կորացաւ, և ուղիք արտասուաց յաջացն վիժեին. և մայրն խառնեայ զգերարտօսրն



յարտասուս որդեկին, գիրկ ընդ խառն կայր ընդ նմա և ոչ գօրէր բարբառել : Իսկ Լարուր տիկին այլ յայլմէ եղեայ ասեցիս. « Ոչ ևս ունիմ ժոյժ, սիրտ իմ գելու յիս : Չարաբխտն այն ուղեորութիւն մի առցե կատարումն : Դրացիդ իմ մտերիմ, հնապա ի բաց տար գորդեակն իմ ընդ քեզ. այս անուրք ուք են յորմէ հետե ոչ որ կափոյց աստ գաջս իւր ի բուն : »

Եւ ասեմ ևս ցՊօղ. « Գոյրն քո աստեն կացցե, ն բարեկամ. վաղիս խօսեսցուք գայնմանէ առ կոնսակայն. բող ընտանիքդ առցեն գհանգիստ, և դու եկ այսօր երեկօրել ի տան իմում : Տարածամ է, և գիշերս հասարակեայ, և խաջն հարաւոյ կշիռ կայ ընդ ծիրս երկնից : »

Եւ եկն նա ընդ իս յուն. և անբարբառ, և զցայգն ողջոյն

ի յոյզս ցնորից անցուցեալ՝ յարեաւ ընդ այգն՝ Էս դարձաւ
ի տուն իւր :

Այլ զի Էսս պետք իցեն ի կարգ արկեալ պատմել քեզ զվեպս
անցիցն այնոցիկ : Մարդկայնոյս կենցաղոյ մի Էսեր կողմն
հաճոյ է ի գիտութիւն : Զօրէն աշխարհագունտ կարկառոյ
գորով պատ առեալ շրջիմք՝ արագարագն մեր քաւայումն ոչ
աւելի ինչ ունի քան զմիոյ առուր տեսականութիւն, Էս չէ մարք
միումն ի մասանց առուրս այսորիկ տեսանել գոյս առանց միւ-
սոյն խաւարամած լինելոյ :

Ես ասեմ ցնա . « Պաղատիմ ի քեն, հայրիկ, բովանդակեա
զքել պատմութեանդ, որում այնքան սրտառուջ բանիւ սկիզբն
արարեր : Բարեբաստութեան նկարագիրք հեշտականք գտանին
մեզ, իսկ չարաբաստն դեպք հրահանգիչք Էն : Զինչ անցք ընդ
հիբացեալն անցին Պօղ, աղէ ասա : »



Դարձ ի տուն արարեալ Պօղայ՝ յառաջ քան զամենայն որ
Էտես գնդիկն Մարիամ որ ի քարածայռ ինչ վերելակեալ՝
ի գնին կայր խորանդունդ ծովուն : Ես ձայն արկեալ բացուստ
ի բաց հարցաներ ցնա . « Ո՞ր իցէ Վիրգիլնէ : » Դարձոյց Մա-
րիամ զգլուխ իւր առ տերն դեռահասակ Էս յողբս լուծաւ :
Խեղացնորեալ իմն Պօղայ դարձաւ յետս ընդ կրունկն, Էս
ի նաւահանգիստն դիմեաց : Անդ գիտաց զի վաղ քաջ ընդ
առաւօտն նաւամուտ լեալ Վիրգիլեայ, Էս փոյք ընդ փոյք
պարզեալ նաւուն զառագաստսն՝ Էս սրացեալ ծածկեալ էր
յաջաց : Դարձաւ անդրէն ի բնակարանն, Էս անց գնաց ընդ
այն առանց ինչ ումէք ասելոյ :

Շարք ապառաժիցդ այդոցիկ բարձրաւանդակաց քեպետ Էս
ուղղաբերձք իմն երեւին ի թիկանց մերոց ամբարձեալք , սա-
կայն լեռնաղաշտակքն կանաչագարդք ատիճանեալ իմն վե-
րեր են սանդղամեք, ընդ որս Է հասանել ընդ շաւիղս դժուա-
րակախս ի ստորու ծամածուռ Էս անմատոյցն ժայռից կոնա-
մեից որ անուանեալ կռչին Բոյք : Առ ոտս պարէխին պնորիկ



տարածեալ ճգի սարաւանդակ ծառախիտ, այլ այնպէս սեպ
Է բարձրաբերձ, զի գողակառոյց իմն անտառի բերե գնմանու-
րին, Է շուրջ պատեալ կայ ի սոսկալի վախից խորածորոց :
Յամպոց անտի գլատարաւ Բուրին ստեպ ստեպ պարուրին
աղբերանան յարածամ առուակք բազմաթիւք, որք Է յայնպիսի
վինս տնդնդախորս նովտին քաւալին ի թիկանց կուսե լերինդ ,

զի անկման նոցին բնդմունք շլինին անգամ ի բարձրաւանդակ տեղուոջ աստ լսելի : Յայնմ վայրէ նշմարեալ տեսանի մեծ կես մասն կղզւոյս հանդերձ դարաւանդիւքն էս կոհակօք, յորոց սակի են Փիրր-Պոր էս Տոաստինք էս անտառախիտ ձորամէջք նոցին . ապա էս ծովն լայնածաւալ, էս կղզին Պուրպուցնի՝ որ քառասուն խրասախօք հեռի է ի տեղուոջն յարեւմտից կուսէ : Ի սարաւանդէ անտի գակն պշուցեալ նկատեաց Պօղ զնան որ առեալ տանէր գՎիրգինէ . էս էր տասներումքք էս աւելի փարսախօք հեռի ի տեղուոջն իբրու . նիշ սեւարոյր ի համատարածին էրեւեալ : Ձմեծ կես արուրն անդէն եկաց ակնկառոյց . վաղ իսկ անհետացեալ էր նաւն յաջաց, էս ինքն համարէր տակաին էս տեսանել . էս իբրեւ հետախաղաղ ծածկեցաւ ի սղոխս գոյոշեաց ոյրտից ծովուն, անց նստաւ յամալի վայրին՝ հողմակոծեալ ի հողմոց անտի որ էրէրածուփ տատանէն ցանգ անդանօք զարմաւենեացն էս գտատամաքեաց զագարունս : Աղօտամայն շրշիւն նոցին էս մօնջիւն գհեռաւոր հնջմանց էրգեհունի բերէն զմմանութիւն, էս ի խոր քախծութիւն համակէն գայր :

Անդ գտի էս գՊօղ զի կայր զգլուխն յեց ի ժայռն ունելով, էս գաջսն յերկիր յառեալ : Յելից անտի արեւուն ի խնդիր հետոց նորա շրջի . էս յոյժ աշխատ եղէ ի հասան զնա ածել զի իջցէ էս տեսցէ զընտանիսն իւր : Նս առեալ տարայ զնա ի բնակարան անդր . ուր իբրեւ էտես զլարուր տիկին, անդէն դառնահառաջ զանգատանօք տրտունջ կայաւ զմմանէ զի խաբեացն զնա : Ասէ ցմեզ Լարուր . « Բանգի շնջէր հողմն աշողակ գերբորդ ժամաւ առաւօտուն . էս զի կազմ էր նաւն ի ջու, էհաս առ մեզ կուսակալն հանդերձ սոյալակոյտ բազմութեամք, էս քահանայն ընդ նսա, առնույ տանել ի նաւ գՎիրգինէ դեսպակաւ . էս ոջ ինջ էրեսս արարեալ նոցա աղերսիցն իմոց էս արտասուաց էս ողբոց Մարգարտի՝ աղաղակէին ամենեքին առ հասարակ քէ « Յօգուտ մեր իսկ ամենեցունդ է գոր առնեմքս . » էս առեալ տարան զդատրիկն իմ որ նուաղեալ իմն էս կիսահագագ էր : Նս ասէ Պօղ . « Երէ գոնեալ իմ տուեալ էր նմա գողոշոյն հրածելտիս, արդ անխռով մնայի : Ասէի արդէօք ցնա . « Ո՛վ Վիր-

զինե, երէ ի ժամանակի անդ յորում կէցաք ի միասին՝ էլ ինչ բան ի բերանոյս որ ծանր քեզ բռնեցաւ, մինչչէ բողեալ զիս ի սպառ,՝ ասա զի ներես դու ինձ : Ասեի արդեօք ցնա. էս զի ոչ էսս է ինձ տեսանել զքեզ, ողջամբ երբիջիր, սիրեցեալդ իմ Վիրգիլնէ, երբիջիր ողջամբ : Կեաց ի բացեալ առ յինէն, այլ ի դիւրի էս ի բարեբաստութեան : » Եւ իբրէս ետես զի մայրն իւր էս տիկինն Լարուր յարտասուս հարեալ լային, ասէ ցնա. « Խնդրեցէք արդ զայլ որ բան զիս որ զարտասուս մեր սրբեցէ : »



Եւ ապա ի բաց զնաց ի նոցանէ հեծեճագին հառաջանօք, էս բախ առեալ շրջեր ի բնակարանի անդ : Յածեալ դեգերեր ընդ ամենայն վայրսն որ սիրելիք քան զայսն էին Վիրգիլնեայ : Ասեր առ այժիսն էս առ ուրիկս Վիրգիլնեայ որ զկնի նորս գնային պապաչելով. « Զի խնդրէք յինէն. ոչ էսս այլ տեսչիք ընդ իս գնա որ յիւրում ամիինն շամբեր մեզ կերակուր : » Զոգաս ի Հանգիստն Վիրգիլնեայ. էս տեսեալ գրեցունսն որ ոլորտս առեալ սաստունէին զնովաւ, գոչեաց էս ասէ. « Ա՛յ հեք հաւիկք, ոչ էսս ընթասչիք դուք ընդ առաջ մերումն զբասեր

առ նա, և մատուցաներ նմին խորտիկս և համադամս ի ցանկաբաց նորս . բայց իբրև անմին գգաստ լեայ ուշաբերեր՝ գլայ հարկաներ : Յառուրսն որ զկնի՝ ժողովեայ հասարեաց գամենայն ինչ որ առանձինն պիտոյից Վիրգիլեայ արբանեկեայ էին, մինչև գլերջին փունջս ծաղկանց գոր լանձին տարեայ էր, և գականակն ի բոբոյէ որով ջուր ըմպեր, և զնշխարսն գայնոսիկ գիւրոյ սիրունայն պատուականագոյն քան գամենայն գանձս աշխարհի համարելով՝ համբուրեր զնոսին և ի ծոցին ամփոփեր : Ոչ այնպէս անուշաբոյր է լամբար որպէս ինչ յոր սիրելոյն հպեայ իցեն ձեռք : Ուր ուրեմն տեսեայ զի իւրն աղէկիզմուսք յաւելոյին զմորմոք սրտի մօրն և Լարուրի տիկնոջ, և զի գտանն պետս կարեւորս հարկ էր հայրայրէլ



մշտաջան վաստակօք, ձեռն ի գործ արկ ի դարման պարտիզին՝ զօրավիզն գիւմինիկոս ունելով :

Յետ ոչ բագում ինչ առուրց պատանին այն որ գօրէն ամբիկածին եւրոպացոց անփոյր էր ամենեւին ի գիտել բէ զինչ ինչ ի կենցաղումս անցանիցեն պատահարք, աղաչեաց զիս ուսուցանել իւր զընթերցումն և զգիր, զի կարող լինիցի բողբէլ առ Վիրգիլն : Ապա իո՞՞մ եղև և աշխարհագրութեան հմտանայ՝ զի զիտասցէ բէ զինչ երկիր է յոր ջուեացն Վիրգիլն, և պատմական իրաց տեղեկանայ՝ զի ծանիցէ զկենցաղ մարդկանն յորս էրբայր նա վարել զկեանս : Այսպէս և մշակութեանն արուեստի լեայ էր քաջանմուտ, և գառապար զվայրսն ուսեայ էր յարդ և ի վարդ ածել՝ սիրոյն և եր խրախուսանօք : և չիք երկբայել

առ նա, և մատուցաներ նմին խորտիկս և համադամս ի ցանկաբաց նորս . բայց իբրև անձին գգաստ լեայ ուշաբերեր՝ գլայ հարկաներ : Յառուրսն որ զկնի՝ ժողովեայ հասարեաց գամենայն ինչ որ առանձինն պիտոյից Վիրգիլեայ արբանեկեայ էին, մինչև գլերջին փունջս ծաղկանց գոր լանձին տարեայ էր, և գականակն ի բոքոյէ որով ջուր ըմպեր, և զնշխարսն գայնոսիկ գիւրոյ սիրունայն պատուականագոյն քան գամենայն գանձս աշխարհի համարելով՝ համբուրեր զնոսին և ի ծոցին ամփոփեր : Ոչ այնպէս անուշաբոյր է լամբար որպէս ինչ յոր սիրելոյն հպեայ իցեն ձեռք : Ուր ուրեմն տեսեայ զի իւրն աղէկիզմուսք յաւելոյին զմորմոք սրտի մօրն և Լարուրի տիկնոջ, և զի գտանն պետս կարեւորս հարկ էր հայրայրէլ



մշտաջան վաստակօք, ձեռն ի գործ արկ ի դարման պարտիզին՝ զօրավիզն գիւմինիկոս ունելով :

Յետ ոչ բագում ինչ առերց պատանին այն որ գօրէն ամբիկածին եւրոպացոց անփոյր էր ամենեւին ի գիտել բէ զինչ ինչ ի կենցաղումս անցանիցեն պատահարք, աղաչեաց զիս ուսուցանել իւր զընթերցումն և զգիր, զի կարող լինիցի բղբել առ Վիրգիլն : Այա իդձ եղև և աշխարհագրութեան հմտանայ՝ զի զիտասցէ բէ զինչ երկիր է յոր ջուեացն Վիրգիլն, և պատմական իրաց տեղեկանայ՝ զի ծանիցէ զկենցաղ մարդկանն յորս էրբայր նա վարել զկեանս : Այսպէս և մշակութեանն արուեստի լեայ էր քաջանմուտ, և գառապար զվայրսն ուսեայ էր յարդ և ի գարդ ածել՝ սիրոյն և եր խրախուսանօք : և չիք երկբայել

զի յուովագոյնքն ի գիտութեանց եւ յարուեստից արգասիք են բերկրանաց՝ որոց ակնկալութիւն խոստանայ հրաբորբորն այն անանդորր տարփանք, եւ առ ի ջգոյէ նոցին ծնանի իմաստասիրութիւն որ խրատէ մխիբարէլ ի վերայ ամենայնի : Այսպէս անա բնութիւն զօդ պնդութեան էիցս համայնից գտեր կացոցեայ, արար զնա մերոցս ընկերահաշտ միաբանութեանց կենդանութիւն, եւ հմտութեանցն եւս մերոց եւ գոարձութեանց հանդերձող :

Ոչ յոյժ Խտրժական բուեցաւ Պօղայ աշխարհագրութեանն ուսումն, որ փոխանակ զանցնիւր աշխարհաց կազմուածոյն տալոյ զնկարագիր, զքաղաքական նոցին տրոհմունս եւեք առնէ առաջի : Ինքն իսկ պատմութիւնն, մանաւանդ արդէացս ժամանակաց դէպք, ոչ ինչ ցանկալի գտան նմա . քանզի ոչ այլ ինչ տեսանէր ի նոսա, բայց ադէտս հասարակաց անհատս՝ գորոց ոչ առնոյր ի միտ զպատճառսն, պատերազմունս խօյականս եւ անպատճառս, դասաճանութիւնս գաղտնորոգայքս, ազինս նկնախոհս եւ ասագորէար անողորմ : Քան զպատմութեան վերժանութիւն նախամեծար առնէր զվիպասանութեանցն, յորս առաւելագոյն իմն գտանէր բանս զգորովական իմաստից եւ զհրահանգաց սրտի, մերք եւ պայմանս կենցաղոյ՝ իւրում նմանավիշտս : Սմին իբի եւ քան զամենայն մատեանս Խտրժական էր նմա Տէյեմաք սակս խիտ առ խիտ նկարագրի դաշտայնոյն կենաց եւ կրից որ ընդաբոյս են մարդկեղէնս բնութեան : Վերժանէր ի յուր մօրն եւ Լարութի տիկնոջ զհատուածս գրոցն որ աւելի իմն գորովէինն զնա . յայնժամ եւ սրտառուջ յիշատակօք խանդաղատեայ՝ գէյոյր բարբառ. նորա ի կոկորդին, եւ արտասուք յաջացն հոսէին : Թուէր ճշգրտիւ գտանել ի Վիքզինէ զԱնտիոպեայ մեծութիւնն եւ զիմաստութիւն՝ հանդերձ Եւբարեայ ադէտիւքն եւ գորովով : Իսկ յորժամ զնորահնարն մերոցս ժամանակաց վիպասանութիւնս ընթերցաւ, վեր ի վայր հարեայ վրդովեցաւ անճն նորա յերեսաց խառնագնաց բարոյիցն եւ վառաշոտ իմաստից որ ի նոսա . եւ յասել այլոցն ցնոսա զի ճշգրտատիպ նկարագիրք էին այնքիկ քաղաքաժողով ընկերութեանց Եւրոպայ, Երկեաւ՝ եւ բերեւս ոչ յանիրարի՝

զի մի գուցէ էս Վիրգիլնէ գգածեալ նորիմբք էս գառածեալ մոռանայցէ գանձն իւր :

Քանզի տարի մի էս կես տարւոյ էս ասելի էսս անց ի վերայ, էս Լարուր տիկին ջէս էսս ընկալաւ ինչ գրոյց ի հօրաբէռէն, էս ոչ ի դատերէ իւրմէ. գայս'միայն լուեալ էր յօտարաց՝ զի անվտանգ ժամանեալ էր նորա ի Քաղդիա : Ուր ուրեմն էհաս էս նա. մի որ ի Հնդիկս գնայր, էս էբեր առ նա ծրար մի էս բուղբ՝ նորին ինքեան Վիրգիլնեալ ձեռագիր : Թեպէտ էս խնամով քոյարկեալ էր ներողամիտ էս սիրուն որդեկին զվիշտս անձին իւրոյ, սակայն էս այնպէս խելամուտ եղէս մայրն տառապանաց նորա. քանզի էս այնպէս իմն ճշգրտահան զկենցաղ նորին էս զբարս նկարագրէր քարտեզն այն, զի բան առ բան կալայ զայն յուշի մտաց :



« Յոյժ սիրեցեալդ իմ էս անձկալի մայրիկ,

« Բագում ինքնագիր նամականի յդեցի էս առ քեզ մինչէս
« ցայսօր. էս զի ջընկալայ դարձուած պատասխանոյ, խիբամ
« քէ գուցէ ջիցեն հասեալ ի ձեռս քո : Ակն ունիմ քէ ոչ նոյն

« անցք էս ընդ սա անցցեն, բանգի պէտ արարեալ շանաննար
« եղի ծանօթս տալ քեզ զանձնես, էս գողջունեղ մերմէ լսել
« ինչ :

« Յօրէ անշատմանս իմոյ առ ի մենջ՝ արտօսք բազում հեղի
« էս, որ յառաջ ժամանակաւ ընդ օտարացն էւեր աղետս ար-
« տասուեալ էի : Ի հասանել իմում այսր՝ իբրեւ հնարց ցիս
« հօրաբոյրն իմ էրէ զինչ ինչ ուսեալ զիտիցեմ, մեծաւ գար-
« մացմամբ յուսաւ յինէն պատասխանի զի անգետ էմ ընքեր-
« ցանութեան էս գրոյ : Ենարց ցիս ապա էրէ զինչ ուսեալ իցեմ
« յորմէ հետէ շնջեմն զօղ կենդանութեան. էս էտու պատաս-
« խանի էրէ ուսայ զառտնին իրս յանձանձել էս կամակատար
« մօրն իմոյ յինել. ասաց ցիս էրէ զաղախնոյ դաստիարակու-
« քին տուեալ են ինձ : Ի վաղիս անդր էղ զիս յուսումն ի մեծի
« ուրէք աբբայարանի մերձ ի Փարիզ, յորում վարժապետք
« պէսպէս իբաց՝ բաց յայլոց մարգից՝ ուսուցանեն ինձ զպատ-
« մութիւն, զաշխարհագրութիւն, զքերականութիւն, զգալիա-
« բանութիւնս էս զհեծելութիւն. սակայն այնպէս դուզնաբեալ
« է ուղիմութիւնս իմ յուսումն մակացութեանցդ, զի ոչ մեծ
« ինչ օգուտ գործեսցեն վարժապետքս այսորիկ : Գիտակ իսկ
« էմ էս, որպէս էս սորս վկայեն, զի հէք էմ էս տկարամիտ
« մանուկ. սակայն էս այնպէս ոչ վերջանայ հօրաբոյրն իմ
« բարերարել առ իս : Ըստ իւրաբանչիւր յեղանակս տարւոյ
« պատմութեանս նորս ինձ հանդերձէ : Նաժիշտս երկու կար-
« գեալ է յիմ սպասահարկութիւն, որ էս նորս ճոխաբար զգե-
« ցեալ են իբրեւ գտիկնայս ոմանս : Եղ ինձ նա մեծարանաց
« անուն զիմմութիւնդ. այլ իբաց էրոզ զանունս ԼՍԹՈՒԲ որ
« որպէս քեզ նոյն էս ինձ էր սիրելի յաղագս տառապանացն
« որոց տարեալ էր հայրն իմ ի հարսնացուցանել իւրում զքեզ՝
« ըստ քոյոցն առ իս գրուցաց : Փոխան քոյին ամուսնական
« անուանող էղ ինձ զագգատոհմիդ քո զանուն, որ էս այն սի-
« րելի է ինձ, զի օրիորդութեան քո անուն է : Յայսպիտում
« տեսեալ զանձն իմ պայմանի, աղերս արկի առ նա նպատս
« ինչ առտրել առ քեզ : Բայց զպատասխանին զիմրոյ հանից
« քեզ ի վեր : Այլ բանգի պատուէր տուեալ է քո ինձ ցանց

« գնշմարիտն ասել քեզ, յուր. պատասխանի ետ եւ. ասէ ցիս
« եքէ սակաւն ինչ ոչ օգտեսցէ քեզ, եւ. յանշուքն կենցաղիդ
« գոր վարես շատն յանախեսցէ քեզ հոգս եւ. տատամսութիւն :
« Զառաջինն փոյք յանձին կալայ գրոյց տայ քեզ գողջունէ
« իմմէ օտարութի մեռամբ' առ. ի չգոյէ իմոյս : Բայց ի ժամանել
« իմում ոչ գոր ունէյով աստէն ինձ մտերիմ, գտիւ եւ. գգիշէր
« ջան եղեալ վատակեցի յուսումն ընթերցանութեան եւ. գրոյ .
« եւ. օժանդակութեամբ շնորհացն Տեառն ի սակաւ. ժամանակի
« վարժ գտայ եւ. յերկոսին : Զառաջնոցն իմոց քրքոց գառա-



« քումն յանձն արարի ի խնամս տիկնայցն սպասեկաց իմոց .
« եւ. նորա, որպէս հաւանեալ էմ, յանձնեալ էն գնոսին հօրա-
« քեռն իմում : Իսկ յայս նուագ աղաչեցի գմի ոմն ի մտերմաց
« իմոց ուսումնակցաց հասուցանել գրուդքս առ. քեզ. եւ. նովին
« երեսագրով գոր գտանես ի ամին' առաքեսցես եւ. դու. յանուն
« նորա գպատասխանիս : Քանզի հօրաքոյրն իմ արգէլ ջրդրել
« բնաւ. ընդ ումէք յարտաբնոցն, զի մի ասէ խափան լինիցին
« իրքն բարեաց մեծամեծաց գորս ի մտին եղեալ է առնել ինձ :
« Նա ինքն միայնակ կարող է գալ եւ. տեսանել զիս ի խաղիսա-

« մեայ պատուհանէն վանդակի վանացս, որպէս եւ ծերունի
« ոմն բարեկամ իւր, որ որպէս ինքն ասէ՝ ախորժ հաճութեամբ
« տեսանէ զիս : Այլ զի զարդարն ասացից, եւ ոչ ինչ ունիմ
« ախորժ գնա տեսանելոյ, բեպետ եւ եւ ոչ զայլ որ երբէք կա-
« միցիմ ախորժել :

« Ի ճոխութեան մեծի եւ ի պերճութեան կեամ, եւ դանգ մի
« ոչ ունիմ գոր ըստ կամս անձին ծախիցեմ. քանզի ասեն զի
« եքէ գոյր առ իս արծաթ, վտանգ լինէր չարաշուք ինչ պա-
« տահմանց դէպ լինելոյ : Պատմութեամբ իմ գլխովին նաժշտաց



« իմոց եւ ինչք քան բէ իմ, զի մինչչէս իմ ի բաց եղեալ զնոսա՝
« վիճեն ընդ միմեանս բէ ո՛ր զնոսին առնուցու : Ի բագմագանձ
« փարբամութեան աստ ջբառորագոյն գտանիմ քան գոր առ
« քեզն էի. քանզի չունիմ ինչ գոր տայցեմ ումէք : Իբրեւ տեսի
« զի մակացուքիւնքս խորիւք գորս ինձ ուսուցուանէն, ոչ զիւ-
« բին ինձ գրուգնաբեայն անգամ բարեբարութիւն, յասեղն
« իմ եղէ ապաստան, գոր դուն իսկ ուսուցեր ինձ առնույ
« ի կիր, եւ ընդ այն ուրախ եմ յոյժ : Եւ ահա յղեմ առ ձեզ
« գոյգս գոյգս գուրպայից ձեռագործաց իմոց վասն քո, եւ

« վասն մօր Մարգարտի, գղակ մի վասն Դոմինիկէայ, Ե. գմի
« ի կարմրերանգ քաշկինակաց իմոց վասն Մարիամու : Յաւե-
« յում ի ծրարիս կորիզս մրգաց ի նախաճաշիցն իմոց, հան-
« դերձ ընդովք Ե. սերմամբք ազգի ազգի ծառոց գորս ինձէն
« ժողովեցի ի պարապոյ ժամս իմ ի դրախտի աստ վանացս :
« Ծրարեցի ի նմին Ե. սերմանս մանուշակի, մարգարտի,
« հրանկի, պուտ ծաղկան Ե. քոսախոտոյ գորս ի դաշտիցն
« հաւաքեցի : Ի մարգս Ե. ի մարմանդս աշխարհիս գտա-
« նին ծաղկուոնք որ զեղանիք Ե.ս Էն քան գորս ի մերումդ.
« այլ չիք որ Էրեսս առնիցէ նոցա : Ոչ ինչ Էրկբայիմ զի դու



« Ե. մայրն Մարգարիտ առաւել խնդասջիք ընդ այս քսակ
« սերմանեաց քան ընդ պարկ մի արծաթոյ՝ որ անշատմանս
« մերում Ե. արտասուացն իմոց Էղէ պատճառք : Խըն-
« դուքին մեծ Էղիցի ինձ Էթէ բերկրեսջիք Էրբեմն ի տեսիլ
« խնճորենեացն բուսելոց առընթեր աղամարզիցն մերոց, Ե.
« յորժամ փիճիք զսաղարքսն փարեալ պատիցեն գրոբենեօրն
« մերովք : Յայնժամ Ե. զանձն քո ի Նորմանտիա համարեսցիս,
« գոր սիրեսն ոգւով չափ :

« Պատուէր ինձ տուեալ էիր իրագեկ առնել գրեզ խնդու-
« քեանցն իմոց Ե. տառապանաց : Խնդուքին ինչ ոչ Է.ս ունիմ

« Ի բացեայ առ ի քէն . իսկ գտառասպանս իմ ամորեմ յուշ
« ածեայ զի դու ինքն յայս պայման կենաց եղիք զիս ըստ կամացն
« Աստուծոյ : Բայց քան զամենայն ինչ ընդ այն վիշտ է ինձ
« մեծապէս զի չիք որ աստանօր որ գրեն խօսիցի , Եւ ոչ ընդ
« որում էս ինքն խօսիցիմ գրեն : Նաժիշտք իմ , մանաւանդ քէ
« հօրաբէռն իմոյ , քանզի առանէլ նորա քան քէ իմ էս սպա-
« սեակք , սսեն ցիս յորժամ բանս ի մէջ առնուցում զսիրելեաց
« անձին իմոյ . Յուշ լիցի քեզ զի Գաղղիացի էս դու , Եւ պար-
« տիս զիժիցն աշխարհ ի մոռացօնս արկանել : Ո՛հ , լաւ է ինձ
« զանձն իմ գլխովին մոռանալ քան քէ զվայրն յորում ծնեայս
« եմ Եւ յորում դուրդ կեցէք : Խժից աշխարհ այս իսկ է վասն
« իմ . քանզի միայնիկ կեամ աստանօր , Եւ չիք որ որում մար-
« քիցիմ յայտ առնել զսերն որով սիրեմ Եւ սիրեցից գրեզ մինչէս
« ցման ,

« Սիրեցեալդ իմ էս անձկայի մայրիկ ,

« Հնազանդ էս կարօզին դուստրս քո

Վ.Ի.Գ.Ի.Ն.Է. ՏԸ ԼԱԹՈՒԻՐ : »

« Ի բարեսէր խնամս քո յանձն առնեմ զՄարիամ Եւ զԴովի-
« նիկոս որ այնչափ գրով զմանկութիւն իմ սնուցին . գգուեա
« յինէն կողմանէ զՀաստարիմն որ ի մայրիսն էգիտ զիս : »



Ջարմացաւ յով Պօղ զի զանձնէն ինչ ոչ ասեր Վիրգիւնէ ,
նա՛ որ էս գշուն իսկ տանն չէր բողեայ անյիշատակ . բայց ան-
գիտանայր նա զի որչափ էս երկարածիգ իցէ րուդք կնոջ մար-

դոյ, ի կանոնաբաժին եւեթ սովոր է նա յեռույ զպատուականագոյնն յիմաստից :

Ի յաւելութի ուրէք նամակին աղաչէր Վիրգինէ զՊօղ առանձինն խնամ ունել երկուց ինչ սերմանց, այն իսկ էին մանուշակի եւ քոսախոտոյ . եւ տեղեակս առնէր զնա յատկութեանց ինչ տնկոցն, եւ քէ ճրք ի վայրաց ի դէպ գայցեն նոցա : « Մանիշակդ, ասէր, փքքէ ծաղիկ նկատեսիլ մանիշակագոյն, եւ սիրէ մացառաղօղ բարձել . այլ ի բուրագուարճ հոտոյն սաստկութենէ անդէն յերեսան գայ : » Եւ պատուիրէր սերմանել գայն զեգերքք աղբերն, առ ոտս իւրոյ քոքենուոյն : Եւ յաւելայ ի բանս իւր ասէր . « Քոսախոտն բանայ ծաղիկ գեղեցիկ ի կապուտակ բացագոյն, սպիտականիշ ունելով բիծս ի քուխ բաժակի, որպէս այն քէ ի սուգ իցէ համակեայ . նմին իրի եւ այլուոյ ծաղիկ յոմանց յորջորջի : Սիրէ գապառածուտան եւ զնոդակոժ տեղիս : » Եւ աղաչէր զնա սերմանել գայն ի քարածայտին յորոյ վերայ ի վերջնումն նուազի խօսեցեայ էր ընդ նմա, եւ առ սեր իւր կոչել զանուն վիմին այնորիկ ՎԵՄ ՀՐԱԺԵՇՏԻ :

Եւ էր զսերմանսն զայնոսիկ ամփոփեայ ի քսակ հիւսկեն, որ քեպէտ անպաճոյճ՝ սակայն անգին բուեցառ Պօղայ յորժամ ետես ի վերայ նորին ձեռակերպեայ գտառքս P եւ V, Պ եւ Վ (Պօղ եւ Վիրգինէ) զիրերօք փարութեայս եւ յօրինեայս գիսակօր վարսիցն Վիրգինեայ, որպէս ծանեաւ ի գեղոյն :

Ի յուր բոլոր ղիւրագորով եւ առաքինի օրիորդին՝ ազգատոնմն ողջոյն հարաւ յարտասուս : Ի ղիմաց ամենեցուն մայրն արար պատասխանի՝ զի անդէն մնասցէ կամ դարձցի յետս որպէս զհարդ եւ հաճոյ իցէ անձին իւրում . հաւատա, ասէր, զի յօրն յորմէ մեկնեցար դու ի մենջ՝ կորուսաք մէք զմեժ մասն բարեբաստութեան մերոյ, եւ էս ինքն առաւել քան զամենեսեան կամ անմխիբար :

Գրեաց եւ Պօղ բուրդ երկայնամիգ յորում խոստանայր արժանաւոր նմին յարդարել զպարտեզն, եւ խառն գործել անդանօր զբուսակս Եւրոպայ եւ գլխիոյ, զոր օրինակ նորա գանուանս իւրեանց խառնամանեայ էր յիւրումն ձեռակերտի, եւ

քէ յդէ առ. նա միրգս քաջահասս ի բորբենեաց աղբերն . Եւ ջլաւե-
լում ինչ՝ ասէր՝ ի սերմանց կղզեկիս , որպէս զի տեսոյ նոցին
տեննչացեալ փութասցիս դառնալ այսրեն : Եւ աղբերսեր ունկն
մատուցանել անկալրեաց ըղձից ազգատոմմին , Եւ մանաւանդ
իւրոցն , Եւ ճեպել զդարձ իւր , քանզի ոչ Եւս հնար է ինձ , ասէր ,
սփոփանս ինչ գտանել՝ մինչ ի բացեալ իցեմ առ ի բեն :



Փութոյ պնդութեամբ սերմանեաց Պօղ գսերմանսն Եւրոպա-
կանս , Եւ մանաւանդ զմանիշակին Եւ գայրոյ ծաղկի , որոց ոչ
սակաւ նմանութիւն էր ծաղկանցն ընդ բուսոյ բարուց Եւ պայ-
մանին Վիրգինեայ , որ Եւ այնչափ խնամով ապսպարէր զնո-
սին . այլ քանզի ի ծովաջուռ ճանապարհին հովանարեալ Եւ
ոսնեալ էին , կամ քէ արդէօք օղոցն Ափրիկեայ ոչ ի դէպ էկեալ ,
սակաւագոյնք Եւեք ի նոցանէ ընձիւղս արձակեցին , Եւ նորին Եւս
ոչ էկին ի հասունութիւն :



ԳԼՈՒԽ ԵՂ.

Սակայն յաջողանք որ յառաջընթաց իսկ լինին բարեբա-
տութեան մարդկան՝ մանաւանդ ի գաղթական Գաղղիացոց,
հոգակ իմն հարին ի կողգոջ անդ՝ որ ոչ սակաւ տազնակեր
զՊօղ : Արք նառն այնորիկ որ զնամակն բերեալ էր՝ ասէին էքե
հանդերձի Վիրգինէ առն լինել, էւ զանուն իսկ դրանկին տային
որ հարսնացոցանէյոց էր զնա. էին էւս որ ասէին քե կատա-
րեցան իսկ հարսանիքն, էւ մէք էւս ի հանդիսի անդ էար : Ար-
համարնեաց Պօղ զստաջինն զգրոյցս բերեալս ի վսճառաշան
նաւէ, որ բազում այն է գի ստայօղս ինչ կարկատեալ ծաւայե
յանցս իւր : Այլ քանզի յոյովք ի կողգեցեացն նենգածեա իմն
գորովով արգահատեալ ի նա՝ էլեւէյս զմիմեամբք առնէին կա-
րեկից նմա լինել սակս իրացն դիպէյոց, տակաւ հաւատարիմ
բուեցան նմա բանքն : Նա զի էւ ի վիպասանութիւնս ինչ գորս
ընթերցեալն էր՝ տեսանէր զի ի խաղս իմն համարեալ էր դաւա-
ճանութիւն. էւ քանզի գիտակ էր զի ճշգրիտ նկարագիրք գոյին
ի մատեանսն բարուց էւ քաղաքավարութեան Եւրոպայ, խի-
բայր քե գուցէ էւ դուստրն Լարութի տիկնոջ զառածեալ նորօք
էւ մոռացօնս իւրոցն արտացէ խոստմանց. էւ ահա անդտին
ջարաբաստիկ առնէր զնա հմտութիւն. Իսկ իբրէս էկին հասին
էւ նաւք բազումք յԵւրոպայ ընդ ամիսս վեց, էւ ոչ մի ի նոցանէ
ոչ էրէր գրոյց զՎիրգինեալ, յաւել նա կասկածանս ի վերայ
կասկածանաց :

Տարաբաղդն այն պատանեակ մատնեայ ի յոյզս տազնայի սրտին, ստեպ կանխեր առ իս, զի իմովս կենցաղականացն իրաց հմտութեամբ հաստատեսցի ի կասկածանսն կամ գերծանցի ի նոցանէ :



Որպէս կանխեցի ասացի քեզ, բնակեմ ես փարսախաս միով եւ կիսով հետի ի տեղառջես յափունս առուակի որ սողակեայ ընթանայ ընդ ստորոտս Երկայնանիստ յերին : Անդ զկէանս իմ անցուցանեմ միայնակ, անկին, անորդի եւ անստրուկ :

Յետ բարեբաստութեան գտանելոյ կողակից գոր որ քաջայարմար մեզ իցէ, բարեբաստութիւն որ սակաւուց եւեք պահեայ է, ջիբ երկբայել զի քան զամենայն պայմանս կենաց նուազ ջարդեալ է միայնակն կեայ : Ամենայն որ որ վշտացեայ իցէ ի մարդկանէ՝ զմիայնութիւն խնդրէ : Եւ այս եւս քաջայայտ ինչ է եւ զարմանալի, զի յազգս ամենայն որ տառապեալք են յերեսաց կարծեաց եւ կենցաղական կարգաց եւ կամ ի տեսչութեան բռնութենէ, յոյովս է տեսանել զասս զասս քաղաքացեաց որ ի միայնութիւն եւ յամուրի կէանս նուիրեցին զանճինս : Այսպիսիք ոմանք եղեն եզիպտացիք ի խրքնանայ պետութեան իւրեանց, եւ Յոյնք առ կայսերութեամբ. ըստ նոցին օրինակի են եւ առ մեօք Հնդկիկք եւ ձենացիք եւ արդի Յոյնք, եւ Իտալացիք եւ բազումք ի բնակչացն արեւելից եւ հարաւոյ Երոզպայ :

Քանզի միայնութիւն ի բաց քեցեալ զմարդ յաղետից ընկերական կենցաղավարութեան՝ ի բնատուրն բարեբաստութիւն ածե զնա . Անճն որ ի մարդածողով ընկերութիւնս պառակտեալս ի մասուն մասունն ըստ բազմադիմի կանխակալ վարձեաց վարիցե



կենցաղ, ի յոյզս վրդովից տարութերեալ ծփի անդույ, և ցանց բառայե ի միտսն բիւրազգի խորհուրդս մրրկեալս և աղմկարարս և ներհականս իրերաց, որով արք փառամոյք և եղկելիք գուն գործեն նկուռն զմիմեանս առնել : Իսկ ի միայնութեան ի բաց դեռ գտարօրինակ պատրանսն ամբոխիչս, և անդրեն զգաստ լինի անճին և եիցս և հաստելի նոցին : Այսպէս և սկալառն ջուր հեղեղատի որ յաղարտ գղաշտավայրս վարեալ և զարտուղի յընթացիցն էրքեալ մտանիցե յառազան ինչ անճուկ, զառաջինն իւր գականակիտ պայծառութիւն առնու վերստին, և թափանցիկ որպէս կանխան և եղեալ՝ իբրեւ ի հայելոջ ուրեք ցոյացուցանէ յինքեան զիւր իսկ արիւնս, զկանաչագեղն դայարութիւն երկրի և գերկնիցն գլոյս : Գիտե միայնութիւն և զմարմնոյ յարմարեալ յարդարել զօրինուածութիւն, որպէս և զնոգւոյն : Քանզի և ի միայնակեցացն դասս է գտանել արս որ երկարակեաց քան զայլսն լինին, գոր օրինակ

են և, արահմայքն Հնդկաց : և, զի յերկարեմ . այնպես կարեւոր համարիմ ևս զմիայնութիւն առ ի բարեբաստիկ վարելոյ աստեն կենցաղ, զի յանհնարիցն բուի ինձ յարատեւակ ինչ ունել վայելչս հեշտայեաց, և, կամ յանյողողող ինչ օրենս զընթացսն հաստատել, եթե ոչ միայնութիւն իմն յարդարեսցի ներքին յորմէ դուն ուրեք արտաքս վագեսցեն մեր կարծիք, և, այլոցն ոչ մտցեն բնաւ ի ներքս : Սակայն և, ոչ գայն կամիմ ասել եթե առանձնակեաց գլխովին հարկ իցե լինել մարդումս . քանզի ընդ համօրեն ազգի մարդկան պնդեալ է նա պիտոյիցն զօղիս . վասն որոյ պարտ իսկ է նմա յօգուտ մարդկան վաստակել, և, ի բարեգարդութիւն բոլորումս բնութեան : Այլ գոր օրինակ մեզ ամենեցուն տուեալ է Աստուած գործարանս ամենեւին իսկ պատշաճեալս տարերց մերաբնակ հողագնտոյս, ոտս ասեմ առ ի քայլելոյ յերկրի, բոքս առ օդոյ ծծումն, և, աջս առ ի լուսոյ տեսութիւն, և, մեզ ջե օրեն զգգայարանացն պետս յեղաշրջել, սոյնպես և, ինքեան միայնում պահեսց կենսատուն զսիրտս մեր, զաւագագոյնն ի գործարանս կենդանութեան մերոյ :

Սմին իրի անա և, ևս զաւուրս իմ անցուցանեմ հետի ի մարդկանէ, որոց սպասաւորելն ցանկացայ, և, նորս զիս հայածեցին : Յաժեալ ընդ մեծ կես մասն Եւրոպայ, և, ընդ մարզս ինչ Ամերիկեայ և, Ափրիկեայ, ի սակաւաբնակ կղզւոջս յայսմիկ զբնակութիւն իմ հաստատեցի՝ ընդ օդոցն քաղցրախառնութիւն և, ընդ ամայի վայրս սորին զմայլեալ : Խուղ գոր կանգնեցի ի մայրւոջն առ ոտն ծառոյ միոյ, ագարակիկ գոր ձեռք իմ ակօսեալ մշակեն, և, առուակն որ առ դրամբ իմով հոսեալ ընթանայ, հերիք են ինձ առ ի պետս և, ի գբօսանս : Ունիմ և, գրեան ինչ պիտանի որ խրատեն զիս ի յաւագոյնն առաքինութիւն, և, յաւելուն յիս գուարձութիւն ոչ սակաւ . քանզի նորին և, գաշխարն զբողեալ պեայն առ յինեն՝ իմումս Երջանկաւետ կենաց առնուն ի գործի, ի դեմս ինձ աժեյով նկարագիրս յիստից որ զբնակիջս աշխարհի հեքս և, ցականեալս գործեն . և, զգարաբաստութիւն նոցին ընդ իմումս ի կշիռ արկեալ բարեբաստութեան՝ բերկրեցուցանեն զանձն իմ : Իբրեւ զայր ոք որ ի նաւաբեկութենէ զերծեալ էլեալ իցե ի կատար վիմի, այնպես

ի գնին կամ եւ ի միայնութենէ աստի իմմէ ամսորոյայոյ՞
մբրկաց որ յուզին յաշխարհի. եւ ի յուր բացամիջ որտընդոստ
փոքորկին եւս քան զեւս յաւելու իմն անդորրութիւն : Յորմէ
նետ զաղարեցին մարդիկ ի ցանկորդելոյ ի ճանապարհս իմ եւ



JATTIOT.

եւ ի նոցայն՝ ոչ եւս այլ ատեամ եւ զնոսա, այլ արգահատեմ
ի նոսին : Եբէ յանկարծ զհիքացեալ որ տեսանիցեմ, գուն գոր-
ծեմ ձեռնկալու յինել նմա իմովս խորհրդովք զօրէն անցաորի
որ առ եզերք հեղեղատի ձեռն կարկառիցէ ջրահեղծիկն եղկե-
լեաց : Սակայն ճայնիս իմոյ ունկնդիր զանմեղութիւն եւեթ
գտի :

Չուր տարապարտուց ճայն արկեալ կոչէ առ իւր բնու-
թիւն զմարդիկ, քանզի այր իւրաքանչիւր պատկեր իւրաստեղծ
ի միտան կերպարանեալ զբնութենէ՝ զախտս անձին առանձինն
արկանէ զնովաւ իբրեւ հանդերձ, եւ զամենայն առուրս կենաց
իւրոց զնետ ընթացեալ առ աջօր տեսեանն զնայ քափառական,
եւ ապա գերկնից տրտնչէ վասն ինքնուրոյն մոլորութեանն զոր
յանձնեն ճարտարեաց : Յոգնաթիւ չուառականս փորձ փորձեցի

Ես ամէլ դարձուցանել ի բնութեանն օրէնս, Եւ չգտի Եւ ոչ գոր
որ չիցէ իւրովն աղետիւք զգլխեայ Եւ զմբբեայ : Զառաջինն
ուշի ուշով ունկնդիր ինձ լինէին, յուսացեալք իմն զի նպատ
եղից Ես նոցա ի գլխտ փառաց կամ մեծութեան. այլ իբրև.



տեսանէին զի զանց զայնպիսեօք առնել ուսուցանէի նոցա,
Եղուկ ինձ կարդային զի ոչ գնետ կրքի բազմադէտն բարբաա-
տութեան իւրեանց, Եւ զմենաւոր կեանս իմ եպերէին. համա-
րէին Երէ ինքեանք միայն իցեն օգտամատոյցք մարդկան, Եւ
շանահնար լինէին ընդ քարշ առեալ ձգել Եւ զիս ի մրրկեայն
իւրեանց զրդանս : Բայց Ես կենաց կցորդ ընդ ամենեսեան
գտեալ, բնաւ չլինիմ ումէք անձնատուր :

Բագում այն է զի շատ իսկ է անձն իմ ի խրատ անձին իմում :
Քանզի յայժմուս անդորրութեան հանդէս առնեմ ի միտս իմ յուզ-
մանց կենացն իմոց անցելոց զորս առ մեծամեծս ինչ գրէի, Եւ
յորոց սակի են խնամակալութիւնք, փարբամութիւն, հոջակ
համբաւոյ, հեշտն ցանկութիւնք Եւ կարծիք մտաց որ ամենայն
ուրէք ի վեր եկեալ ընդ իրեարս ոգորին : Զյոզնախառն բազ-
մութիւն մարդկանն զորս ի պայքար մտեալ տեսի Ես մոլեգին
սակս ցնորից բանդագուշանացն այնոցիկ, Եւ որ արդ ի չիք դար-
ձեալ են, նմանեցուցանեմ մկանանց իմոյն առուակի, որ փր-
փրացեալ Եւ բախեալ ընդ խութս յատակին Եւ անդարձ յորձանօք
աներեւոյթք լինին : Իսկ Ես խաղաղաւետ Եւ անդորր ոգով

տունեայ գանձն իմ ի գետ ժամանակին՝ դիմեայ գնամ յանեզրն ովկիան կենացն հանդերձեյոց . եւ ի տեսիլ այժմոցս գեղայօրեն սքանչելեաց բնութեան՝ առ բունն էյանեմ վերանամ ճարտարապետ այսր ամենայնի , եւ ական ունիմ յանտիսն յաւագունի հանդիպել բաղդի :

Քեպետ եւ ջիբ տեսանել յիմմէ անտառաբնակ մենարանեն գտեսարանս գայտոսիկ յոգնաթիւս գորս նշմարեմք ի բարձրաւանդակ տեղառջէ աստի , սակայն են եւ ի նմա տեսիլք ցանկալիք , մանաւանդ վասն իմ , որ յա համարիմ յանձն իմ ամփոփել քան բէ արտաքս վագեայ ծառայել : Գետակն առ դրամբ իմով գեռացեայ՝ ուղղածիգ ընդ մայրիսն սահեայ անցանէ , յօրինելով յաջս իմ ջրանցիկ ուղի երկայնածիգ՝ հովանաւորեայ ի սաղարբոց բազմահոյ ծառոց . քանզի անդ ուռձացեայ ջովանան տատամարին եւ ոպնիագ , խնձորիքն աստ կոչեցեայք , եւ ձիքենիք եւ դարիձենիք : Ի տեղիս տեղիս բարձրացեայ տեսանին արմաւենիք ի մերկատարրն իւրեանց հարիւրտունեան կորոզս՝ ակաւեղագես իմն ի կատարսն ագուցեայ ունելով գվուռնջս արմաւոյ , եւ գեր ի վերոյ այլոցն բեռապարեն ծառոց՝ զմանուրիւն բերելով անտառաց յայլոյ անտառի գագարունսն տնկելոց :

Անդ է տեսանել եւ պատատուկս սաղարբագուարձս որք խիղքս ծառ ի ծառէ արկեայ՝ ուրեք կամարս յօրինեն ծաղկահիւսակս , եւ այլուր սրահակս դալարագեղս երկայնածիգս : Յոյովագոյնք ի ծառոց անտի բուրմունս անուշունս արձակեն այնպիսիս զի եւ ի հանդերձս մարդոյ ընդմտեայ տոգորին , եւ զկնի բագում ժամուց արտաքս էյանելոյ նորա յանտառեն՝ ի բուրագուարձ հոտոյ անտի ի միտ առնույ է գանցանել նորին ընդ անտառն : Ի ծաղկափրիքն զարդարել նոցա յիւրեանց ժամանակին , ձխնապաճոյճք իմն բուին տեսողաց , եւ յէլս ամարայնոյ բիւրագղի բոջունք տարաշխարհիկք անհասանելի իմն ազդմամբ բուիջս առեայ գան յանձանօք աշխարհաց գլայնատարրն ծով հատեայ անցեայ , ժողովել զհատս բուսակաց այսր կղզոյ , եւ զարեակեզ քիատեսիլ ծառոցս կանաչութիւն իւրեանցն երանգոց՝ լուսագեղ պայծառութեամբ փողփողեն : Ի սոցին սակի է պապկալիցն գարմ բազմագան , եւ հաւիալիցն կապուտակաց՝

որ անտ հնափայր յորջորջին հոլանտացիք : Կնայիկը մայրենացս
բնակիչք սովորեալք՝ ի տխրատեսիլ կողերս ծառոց բինդս
տուեսայ վագվագեն, յորոց գորշախառն կանաչութեամբ ստեղծ
եւ արջնարոյր կերպարանօրն եւեք որոշին . կեսք իւրեանց



ձետիւրն կախեալ գնցանէ ձօձին ընդ օդս, եւ այլք ոստոց
յոստս ոստոստեն գրկընկալ զկորխնան տանելով : Հրացան
մահաբէր չիք բնաւ . երկեղուկս արկեալ էրբէք խաղաղաւետիցն
այնոցիկ որդւոց բնութեան :

Ոչ այլ ինչ է լսել անդանօր բայց կռիչս հրձուանաց, եւ դայ-
լայիկս անծանօրս հարաւաբնակ բռնչնոց, գոլս եւ կրկնեալ
անդրեն հնչեցուցանեն բացուստ ի բաց մայրենացս արձագանգք :
Գետակն որ պղպշակեալ ընքանայ ընդ խճասայն իւր յատակս
ընդ մէջ ծառոցն բարձանց, ուրեք ուրեք յականակիտ ջուրս
իւր ի տեսիլ ածէ զբանձրախոռոն դայարիս նոցին եւ գտու-
ւերս, որպէս եւ զխաղս զբօսանաց բարեբաստիկն բնակչաց
նոցա : Քայս հագար ի բաց գնացեալ ի տեղւոջն քաւայի գա-
հակեժ ընդ պարելսս աստիճանեալս եւ յանկանել անդ իւրում
տեսանի իբրեւ վիժակ ինչ միապաղաղ եւ սառնորակ, որ ան-
դէն խորտակեալ փշրի փրփրաղեզ : Բիւր ձողփխնք եւ շա-

ուաջք խառն շառագէն ի յորձնեռանդն ջուրց անտի , որ ընդ անուառն վայրավատին ցրուեալք ի հողմոց՝ է զի խոյս տուեալ ի հեռաստան խուսափեն, և և զի միահամուռ ի մի վայր հաւաքեալ՝ զանգիւնս իմն արձակեն հանգոյն զանգակաց կարողիկէիմէծիր որ զչսէլիս ամենեցուն առ հասարակ խլացուցանիցեն : Գարձեալ և օդոցն յար ի փոփոխման լինելով ի ջուրցն յուզմանէ, զափունս առուակին հովասուն և և գործեն ի տօրագին առարս ամարայնոյն , գոր դուն ուրէք գտանել է ի կղզուոջ աստ, և և և ի կատալիս լերանց բարձանց :

Ոչ յոյժ հեռի ի տեղուոջէ անտի կայ վեմ մի սարսանդ՝ այնջափ ինչ և և ի բացեալ ի քարավեժ ջուրցն հոսանաց, զի ոչ դունջէն ականջք ի խոխոջիցն դղընջիւն, և այնջափ մերձաւոր



զի մարրի վայելել ի տեսիլ նոցին և ի հովուքիւն և ի կարկաշանս : Անդ ընդ հովանեաւ վիմին նյնորիկ գնայար ի տօրածամս առնույ կերակուր՝ տիկինն Լարուր, Մարգարիտ, Վիրգինէ, Պօղ և և : Վիրգինէ քանզի զամենայն զգործս իւր և և և զղուզնաքեայսն ի բարերարել այլոց ուղղեալ յարդարեր , ոչ ուտեր և ոչ մի ինչ պտուղ ի բացի գորոյ զկորիզն չտնկիցէ ի գետնի :

քանզի ասէր. « Մտօք աստի բուսցին եւ պտուղ արդեօք տացեն անցաւորին, կամ թէ բռնեցի միում : »

Կերեալ նորա ի միում յաւուրց ատ ոտս վիմին այնորիկ սեխարմաւ, տնկեաց անդէն զհունդս սերման նորին : Ետ ընդ ետ բուսան ծառացան անդ սեխարմաւենիք բազում, յորոց միջի էր եւ էգ մի անուանեալ, այս ինքն է որ բերէր զպտուղ, եւ ոչ ինչ ընդհատ էր բարձրութեամբ քան զբարձս Վիրգիլեայ մինչ մեկնեցան աստի. այլ քանզի արագ արագ ուռճանայ ծառն այն, յետ երկուց ամաց բարձրութիւն նորա էհաս ցոտնաջափս քսան, եւ վերնակողմն բնոյն պսակամէ բոյորեցաւ յոգնախուռն բազմութեամբ քաջահաս պտղոյ : Իեպ էդէ Պօղայ զնայ ի տեղի անդր, եւ ինդաց յոյժ ուրախութիւն մեծ տեսեալ զի ծառ բարձրաբուն բուսեալ է ի փոքրիկ հատե անտի տնկելոյ երբեմն առաջի իւր ի սիրունւոյն. սակայն եւ ծանրաբախիժ զգածաւ տրտմութեամբ նորովն այնուիկ վկայութեամբ երկարածիզ պանդխտու-



թեան նորա : Զորս հանապազ շուրջ զմեօքն տեսանէմք իրս, ջնեքեն մեզ հատու լինել արշաւատոյր ընթացից կենացս մերոց զի եւ նորա ընդ մեզ ծերանան անզգայեաւ իմն ծերութեամբ : Բայց երէ գամս ինչ հեռի ի նոցանէ գտեալ եւ անդրէն յեղակար-

ծուց տեսանիցեմք զնոսին, անդէն խելամուտ լինիմք արագութեանն որով զետահետեալ սահին անցանէն կենդանութեանս մերոյ առօրք :

Եւ որպէս ուղեոր յետ բազմամեայ տարաշխարհիկ նժդեհութեան դարձ յերկիր իւր արարեալ զարմանայ զարմանս, զի փոխանակ իւրոցն հասակակցաց գտանէ անղանօր գորդիս նոցին հայրացեալս՝ զորս կարնկերս ղիեցիկս բողեայն էր, այսպէս Եւ Պօղ ի տեսիլ պտղաւետ սելարմաւենոյն հիացեալ Եւ խոռովեցաւ յանձն իւր : Մերք տապարահար զգետնէ զտունկն կամեր զի մի Եւս յուշ առնիցէ ինքեան զերկարժամանակեայ զջուն Վիրգիլնեայ. Եւ մերք արձան յիշատակի համարեալ զնա բարերարութեան Վիրգիլնեայ՝ զբունն համբուրեր, Եւ բանս սիրալիրս Եւ ցաւագինս առ նա բարբառէր : Ո՛վ ծառ, ցանկալի, որոյ ճէտն սերի տակաւին ի մայրիս մեր, Ես իսկ ինքնին նկատեալ հայի ի քեզ առաւելագոյն սիրով Եւ մե-



ծարանօք բան ի Հոռովմայեցւոցն կամարս յաղբութեան : Իցէ քէ բնութիւնն որ օր ըստ օրէ քանդեալ կործանէ զփառամոյ արքայիցն դաստակերտս, բազմացօսցէ յանտառս մեր զճեռատունկս դեռածաղիկ Եւ անմեղ օրիորդին :

Եւ անա անդ ուրեմն առ ոտս սեխարմաւենւոյն այնորիկ գտանէի ես անվրեպ զՊօղ յորժամ ի սահմանս իմ էկաւորեր : Ի միում առուրց գոի զնա անդանօր համակեալ ի տրտմութիւն ծանրաբախիծ, եւ յերկարագոյն նուագօր ընդ միմեանս անկաբ զբանիւք. որ երէ չիցեն քեզ տաղտուկ ի նքնուրոյն արտուդութիւնք՝ ներելիք արդէօք հասակիս եւ վերջնոցս բարեկամութեանց, ի կարգ արկեալ պատմեցից քեզ : Ըստ տիպս ոճոյ զրուցատրութեան յառաջ զբանսն բերից, որպէս զի եւ բնատուր ուղղութեան մտաց պատանւոյն լիցիս խելամուտ, եւ նշտեալ իմն ի վերայ կացցես քե ճյր ուրուք ի մենջ իցեն խօսք իւրաքանչիւր, ի նորա հարցուածոցն եւ յիմոց պատասխանեաց առնյով զայն ի միտ :

Ասէ նա ցիս.

« Տրտում է յոյժ անճն իմ : Այս երկու ամբ եւ ամիսք կրկին են զի մեկնեցաւ օրիորդն Լաբուր, եւ յութից ամսոց եւ ի կիսոյ հետէ ոչ ունիմք զրոյց գողջունէ նորա : Նա ընչաւետ է եւ ես անիւնջ. մոռացաւ զիս : Կամ է ինձ ի Գաղղիա նաւարկել. անդ մտից ի սպաս ծառայութեան արքայի, շահեցայց արծաթ բազում, եւ յորժամ ի բարձ ինջ հասից աւագութեան, հօրաքոյրն Լաբուր օրիորդին տացէ ինձ արդէօք ի կնութիւն զբոռնեակն իւր :

ԾԵՐՈՒՆԵՆ.

« Ո՞ջ ապարեն ասացեր ցիս, ճ բարեկամ, երէ ճես դու տոհմիկ որ :

ՊՕԸ.

« Զայդ մայրն իմ ասաց ցիս. զի ես եւ գայն չգիտեմ քե զինջ իցէ տոհմիկն լինել : Բնաւ ընդ միտս իմ անգամ ճէ անցեալ երբէք երէ ես տոհմիկ քան գայլս իցեմ, կամ քե այլք քան զիս :

ԾԵՐՈՒՆԵՆ.

« Անտոհմութիւնդ քո փակէ առաջի քո ի Գաղղիա զամենայն ճանապարհ հասանելոյ ի բարձ աւագութեան : Եւ ոչ այսչափ

միայն, այլ եւ ոչ մուտ իսկ գտցես յագատախումբ կանառս ուրեք :

ՊՕԴ.

« Քո իսկ ցիւքագում անգամ ասացեալ է երբ մի ի պատճառաց մեծութեանն Քաղղիոյ եւ այս ինչ է, զի եւ տրուպն հպատակաց կարող է քեկն ածել ամենայնի. եւ պատմեցեր էսս ինձ գնամբաւտենէջ արանց բազմաց որ յանշուք եւ յաննշան պայմանէ ի պատիւ. վերաբերեալ՝ փռոս յանախեցին հայրենեաց : Մի գարիութիւնս իմ արդեօք պատրել կամէիր բանիւղ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քաւ յինէն, որդեակ, լքուցանել զքո արիութիւնդ երբեք : Զվաղնշուցն ժամանակաց ճշմարիտ իսկ էին բանք իմ. այլ գարդիս կերպարանափոխ եղեւ ամենայն. ամենայն ինչ կաշտով վճարի արդ ի Քաղղիա. ամենայն ինչ սակաւուց էւեր ազգատոհմից տուեալ է ի բաժին ժառանգութեան, եւ կամ ի մասն դասուց ինչ մարդկան : Արքայն զարեգական բերէ զմմանութիւն, զորով յաժին աւագորեարն եւ դասք դասք պաշտօնեից ըստ ամպոց ինչ օրինակի. յաննարից իմն է գոգցես եւ միոյ միայնոյ ի նշույից անտի նորին կարելի վերայ քո : Էր երբեմն զի տեսչութեանն իրք ոչ իբրեւ գայժմուս բազմամանուած էին. յայնժամ անա երեւեցան երեւոյքք ինչ այնպիսիք : Յայնժամ հանճար եւ վաստակք զարգացեալ բարգաւաճեցան ամենայն ուրեք հանգոյն անարօք երկրի որ այն ինչ ակօսաբէկ յինելով ուղղալիցս եւ քաջաբեղունս պտղաբերիցէ : Բայց զուն ուրեք է գտանել արքայս վեհագինս որ կարող իցեն ճանաչել զմարդիկ եւ ընտիր առնել նոցին. այլ յոյովք ի նոցանէ անճանատարք են ի սպառ. ի խորհուրդս աւագանւոյն եւ ի սաղրանս պեսպես դասուց :

ՊՕԴ.

« Այլ քերեսս գտից զքո ի մեծամեծաց անտի որ պաշտպանել ինձ յօժարեսցի :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Որ կամիցի որ պաշտպանութիւն ի մեծամեծաց գտանել, պարտի պաշտօն հարկանել փառասիրութեան նոցին է. կամ բերկրանացն : Իսկ դու ոչ աշողեսցիս յայդմ երբէք, անտոնմդ գոյով է. արդարակորով այր :

ՊՕԴ.

« Բայց արութիւնս քաջութեանց մեծամեծս արարից, հասատարիմ յոյժ ի բանս իմ եղեց, անվրեպ ի կատարումն պարտուց պաշտամանս գտայց, է. նախանձաւոր է. անյողղողդ ի բարեկամութեանս, այնչափ զի արժանաւոր զանճն իմ կացուցից որդեգրելոյ միում ումէք ի նոցանէ. զոր օրինակ տեսի զայս պատահեալ ի նախնեացն պատմութիւնս զորս դուն էտուր ինձ ի վերժանութիւն :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Ո՛ր բարեկամ, առ Յոյնսն է. առ Հոովմայեցիս, էս է. ի ժամանակս նուագելոյ պետութեանց նոցա, մեծարոյ էր յաջս աւագանւոյն առաքիւնութիւն. իսկ առ մեզ արս յոյովս զիտեմ յամբոխէ անտի գերանոջակեալս յազգս ազգս ճարտարութեանց, է. չիք որ ի նոցանէ զոր յաւագացն որ տոնմից յորդեգիրս իւր առեալ իցէ : Երէ բագաւորքն մեր չէին, առաքիւնութիւն դատապարտ լինէր արդեօք յաւերժ ի Գաղղիա իբրէս գոեհկացն է. էք մասն բաժնի ժառանգութեան : Կանխեցի ասացի իսկ քեզ, էրէ է. էրբէք զի շուք եղեալ պատուէն զառաքիւնութիւն յորժամ ակնէրէս. զնա տեսանիցեն. այլ զարդիս բարձր է. աւագութիւնք՝ նմա միայնոյ էրբէմն պահեալք՝ արժարով է. էք շնորհին :

ՊՕԴ.

« Երէ յաւագացն զոր չգտանիցեմ, շան եղից ընդ միտ մտանել

դասու իրիք ընկերութեան մարդկան : Զնորին զգեցայց զոգի եւ զկարծիս, եւ սիրելի զանձն իմ ընծայեցից նմա :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Ապա ուրեմն եւ դու իբրեւ գայլս ի մարդկանէ գործեսցես . եւ դու եւս առ ոտն հարցես զմտաց քոց զխիղճ առ ի մեծութիւն հասանել :

ՊՕԴ.

« Ո՛ր, քաւ յինեն . ճշմարտութեան եւեթ եղեց ես ցանգ ի խընդիր :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Թե այդպէս իցե, փոխանակ սիրելի զանձնդ առնելոյ, քերեսս առելի իսկ եղիցիս : Նա զի ոչ մեծ ինչ փոյր է դասուց ընկերութեանց գտակ յինել ճշմարտութեան : Յաջս մարդկան փառասիրաց ոչ ինչ խտիր է ընդ այս եւ ընդ այն կարծիս . շատ է զի ինքեանք յիշխանութեանն վայելիցեն :

ՊՕԴ.

« Եղնակ ինձ հիբացելումս . յամենայն կողմանց հերքիմ եւ մերժիմ : Ինձ դատակնիք լեալ է անցուցանել զառուրս կենաց յաննշան վաստակս հեռի ի վիրգիներայ . » եւ յոգոց հանեալ հառաջեաց ի խորոց սրտեն :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Հնապա, Աստուած միայն եղիցի քո ապաւեն, եւ ընկերակցութիւն՝ մարդկայինս ազգ համօրեն . եւ մի էրբէք լիցի քեզ անջատել ի սոցանէ : Ազգատոհմ եւ ընկերութիւն, ժողովուրդք եւ բազաւորք առ հասարակ վարակեալք են յանցնիւր կարծիս կանխակալս եւ յախտիցն կարիս . եւ բազում այն է զի հարկ է

ախտիք արբանեկէ ևոցին . իսկ Աստուած էս մարդկայինս ազգ գառարքինութիւն էւեր խնդրեն առ ի մենջ :

« Եւ զի է քեզ ցանկալ զեր ի վերոյ լինել այլոց ի մարդկանէ : Ոջ ընդաբոյս ինչ է տենչոյ այդ մարդումս էս ոջ իրասցի . զի եթէ ամենքեան դովին կրիւք զգածիւն , այր ընդ դրացոյ իւրում յար ի կռիւ կարաւեր : Շատ լիցի քեզ լնույ զպարտս քո ի պայմանին յորում եղ զքեզ վերնախնամն տեսչութիւն . երանի անձինդ կարդասչիր զի տուաւ քեզ ունել ինքնուրոյն խիղճ գիտակցութեան , որով չկարօտիս հանգոյն աւագ որերոյ գանձինդ բարեբաստութիւն զկրտսերացն էս զնուաստից կախել կարծեաց , էս ըստ կրտսերացն օրինակի գետնաբարշ խոնարնել առաջի մեծամեծաց առ ի զկեանս պահարելոյ : Յայնպիսում գտանիս դու երկրի էս ի պայմանի յորս ոջ խաբկանաց պետք են քեզ առ ի կեալ , ոջ վաղարուշ շողոմանաց , էս ոջ յանարգութիւն զանձնդ իջուցանելոյ , որպէս առնեն յոգունք ի նոցանէ որք հետամուտ մեծութեան են յեւրոպա . չիք աստանօր առարքինութիւն էս ոջ մի գոր պայման կենացդ չենքիցէ կատարել . այլ մանաւանդ աներկեան համարձակութեամբ տուեալ է քեզ բարեգորով լինել էս ճշմարտախօս , անկեղծիկ էս քաջուս , երկայնամիտ էս ծռծկալ , զգաստասեր , ներողամիտ էս բարեպարիշտ՝ առանց ինչ ծանակելոյ իմաստութեանդ որ դեռափրիքն է տակաւին : Ագատութիւն էս քաջողութիւն , ուղղախոն մտաց խիղճ էս բարեկամս տուեալ են քեզ երկինք . բազաւորք անգամ յորոց ընծանասդ շնորհս գտանել , լոկ էս ունայն են յայդբանոյ բարեբաստութենէ :

ՊՅԴ .

« Եղնակ զինեա . Վիրգիւնէ չէ առ իս . էս յորժամ զնա ոջ ունիցիմ , ջունիմ էս ոջ ինչ . նովաւ էս զամենայն ինչ ունիմ : Նա միայն շատ է ինձ ի քաջատոնմութիւն , էս ի փառս էս ի մեծութիւն : Բայց արդ քանզի մօրաբեռն նորա կամք են սալ զնա առն ականաւորի , էս զի ուսմամբ էս վերժանութեամբ իմաստուն լինի մարդ էս համբաւատենչ , յուսումն էս էս քեւակոխեցից :

Ստացայց գիտութիւն բազում, և նորօր սպաս հարից հայրենեացն իմոց՝ առանց ինչ գեան ումեր հասուցանելոյ, և առանց հպատակելոյ ումեր. արարից ինձ անուն մեծ, և փառացանձին իմոյ ևս ինքն եւեր եղեց պատճառք և ժառանգորդ :

ԾԵՐՈՒՆԵՆ.

« Որդեակ, ևս քան զտոմիկն լինել ևս քան զմեծափարքամ ճոխութիւն՝ ջրնաղագիւտ է հանձար : Եւ քան զամենայն մեծութիւնս արդարեւ իսկ գերապանձ է իմաստութիւն . քանզի և անկապտելի է ամենեւին, և ամենայն ուրեք մեծարոյս զմեզ գործէ յաջս հասարակաց : Սակայն ևս յոյժ բանկազնոյ է ստանալ . քանզի բիւր ազգի ազգի՝ տառապանաց պետք են, և դիւրագգած բնութեան՝ որ ջուռաականս զմեզ առնէ ի ներքոյ, և արտաքոյ նջաւակս հալածանաց ժամանակակցացն մերոց, առ ի մեռս բերելոյ զնոյն : Ի Գաղղիա այլ օրինական ջղնէ զակն փառաց զօրականին, և ոչ զօրականն փառաց նաւազին . այլ ամենեքին առ հասարակ ընդ բոյոյ անց ևս դարձ առնեն ճանապարհ, զի ևս ամենեցուն ըղձալի է հանձարեղս երեսել : Սպաս հարից, ասես, մարդկան. սակայն ծանիր զի մեծ ևս օգուտ գործէ մարդկան այլ՝ որ որայ մի առաւել ի բոյս ամիցէ յերկրէ, քան զայլ որ մատեան մի յօրինեալ տայցէ ի մեռս նոցա :

ՊՕԴ.

« Ո՛հ, նա որ զսխարմաւենիս գայս տնկեաց՝ բիրապատիկ օգուտ գործեաց ևս քաղցրագոյն արար պարգէս բնակջաց մայրեացս քան թէ դարանս մատենից շնորհեր նոցին : » Եւ զոյց ընդ բանին զիրկս արկեալ զճառովն ողջունէր գայն կարողին :

ԾԵՐՈՒՆԵՆ.

« Հրաշային ի մատեանս՝ Աւետարանն սուրբ, որ զհաւասարութիւն, զսէր, զմարդասիրութիւն ևս զմիաբանութիւն եւեր քա-

րոգէ, ընդ բազմադարեան ժամանակս պատրուակ մոլեգնութեան գտաւ. Եւրոպացոց : Քանի՛ հարստահարութիւնք գործին դեռ. Էսս յերկրի յանուն նորին հրապարակաւ. Էս. առտնին : Ես. զայս տեսեալ ո՞վ որ ձեռս յանձին հարեալ պարծիցի օգտամա-



տոյց մարդկան լինել գրեւով : Յուշ քեզ անցքն որ անցին ընդ յոգունս յիմաստասիրաց անտի որ զիմաստութիւն քարոզեցին նոցա : Հոմերոս որ գեղայօրէն տաղաչափութեամբ պճնեալ զարդարեաց զայն, ի մոյր շրջեր մինչ կենդանին էր : Սոկրատ որ իւրովքն ատենաբանութեամբք Էս. վարուք դասախօսութիւնս սիրելիս առնէր նոցա զիմաստութենէ, իբրէս իրաւամբ դատաստանի դեղակուր մահուամբ վճարեցաւ. ի նոցանէ : Նորին աշակերտ վեսմախոհն Պղատոն ի գերութիւն մատնեցաւ հրամանաւ այնր իսկ իշխանի որ պաշտպանէրն նմա. Էս. վաղ Էսս քան զնոսին Պիւրագորաս, որ Էս. յանբան անասունս անգամ գրասիրէր, կենդանւոյն ի Կրոտոնացոցն այրեցաւ : Զի Էսս յերկարեմ. նա Էս. յորովագոյնք ի հոյակապ որերոյն անուանց որ մինչէս առ. մեզ հասեալ ժամանեցին, այլակերպեալք Էն հենգնականօք ինչ առասութեամբք գրուսոյ բարուց նոցին. Էս. մարդկայինս ապաշնորհութիւն ախորժէ իմն յայնպիսեաց անտի յօրջորջանաց ձանաչել զնոսա. Էս. էրէ ի խոանէ բազմութեան նոցա սակաւուց ոմանց անադօտս Էս. անարատս մինչէս առ. մեզ ժա-

մանեալ իցեն փառք, պատճառք այն իսկ են զի ի ժամանակակցացն կենաց կցորդութենէ ի բացեալ վարեալ են նորա կենցաղ, հանգոյն իմն անդրեացն այնոցիկ որ անվարս պեղին ի դաշտաց Նյաղայ Էս Իտալիոյ . Էս զի գետնասոյզ բաղեալ կային ընդ Երկրաս' յայն սակս Էսէր ի խժովիցն գերժան մոլեգնութենէ :

« Տեսանես ապարեն, զի առ ի մեռս բերելոյ գմրկալոյզն փառս դպրութեան' բազում առաքինութեան պետք են, Էս կազմ Էս պատրաստ կալոյ ի բոլորապտուղ նուիրումն անձին : Բայց Էս համարիցլն Երէ արք մեծատունք որ ի Գաղղիա' ըղձակերտք իցեն այնմ փառաց : Ունչս առնեն նորա զմատենագիր մարդկան, որոց գիտութիւնք ոչ բարձս առագութեան պատրաստեն ի հայրենիսն, ոչ յանձանձանս իրաց աշխարհին, Էս ոչ մուտս յարքունիս : Ի մերումս յայսմ դարու, յորում անխտիր է ամենայն որ առ ամենայն ինչ, բայց միայն յընչիցն ձխութենէ Էս ի հեշտութեանց, դուն ուրէք յուզին հայածանք . Էս սակայն գիտութիւնք Էս առաքինութիւն ոչ ումէք առաջնորդեն ի համբաւ Էս ի մեծարանս, քանզի ամենայն ինչ ի ժամանակիս գինք են արժարոյ : Էր Երբեմն զի վարձուց հատուցմունք ի պատրաստի կային գիտութեանց Էս առաքինի վարուց յայլ Էս այլ պաշտամունս Էկեղեցւոյ, Էս ատենից դատաստանի Էս տեսչութեան աշխարհի . իսկ զարդիս ի մատենից Էսէր յօրինումն են դոքին պիտանացու :

« Սակայն պտուղն այն անձանօք ի քմաց աշխարհի որերոյն' ցանգ իսկ արժանի իւրումն Երկնային ծագման գտանի : Գանզի մատենիցն այնոցիկ Էսէր է գործ սեպհական' յուսապայծառ յարդարել զանշուրն առաքինութիւն, միսիբար լինել վշտացելոց, յուսատու կալ ազգաց, Էս արքայից անգամ զճշմարտութիւն բարբառել : Էս այս պաշտօն Էս իշխանութիւն առանց ընդ բանս ինչ ածելոյ վեհագոյն քան զամենայն պաշտամունս է որովք մեծարիցեն Երկինք զայր մահկանացու ի վերայ Երկրի : Էս մի որ ոչ սփոփիցի ընդ անխրատութիւն Էս կամ ընդ արհամարհանս ընչաւետ մարդկան' յորժամ գմտաւ ածիցէ զի իւրն Երկասիրութիւն դարուց ի դարս Էս ազգէ յազգ

անցեալ զնացեալ՝ ամբարտակ արձանացի ընդդէմ մոլորութեան և, բռնաւորաց. և, յանշուք և, յաննշան պայմանէն յորում էկեացն՝ ծագեսցեն փառք այնպիսի որ ստուերածս անցեն զփառօք արքայից բագմաց, որոց արձանքն յիշատակի ի խորս մոռացութեան բաղեսցին, քեպէտ և, բիւրապատիկ ջան ի գործ առնիցեն կանգնողք նոցին տառակասպասք և, մարդէլոյզ գովաբանք :

ՊՕԴ.

« Ո՛հ, ինձ յայն սակս և, եք ցանկալի են այն փառք զի զՎիրգիլնեա. զեղուցում զայն, և, տիեզերաց համօրէն զնա առնիցեմ սիրելի : Բայց աղէ դու որ այդքանեաց զիտակ և, իրաց, և, կասա ցիս երէ լիցի մեզ ամուսնաւորել ընդ միմեանս քե ոչ : Ո՛ տայր ինձ գէք յայն սակս իմաստուն լինել՝ զի գուշակ հանդերձելոցն լինիցիմ :

ԾԵՐՈՒՆԵՆ.

« Ե. ո՛ այն որ իցէ որ կեալ յօժարեսցի յետ միանգամ հանդերձելոցն իրագէկ լինելոյ : Ապաբէն մի միայն կանխածանօք պատահար ի հոգս բագումս արկանէ զմեզ. իսկ տեսիլ անվրեպ ինչ աղետից որ գալոցն իցեն ի վերայ, դեղեալ դառնացուցանէ անշուշտ զամենայն առուրս կենաց մինչէ. և, կեալ հասանիցեն աղետքն : Այլ և, ոչ յոր կանս արժան է մեզ կարի իմն լինել խորասոյզ և, հմուտ. և, երկինք որ զխոհականութիւն մեզ ետուն՝ զի պիտոյիցս մերոց յառաջատես լինիցիմք, ետուն մեզ և, զպէտս մեր՝ որպէս զի ջափ և, սահման մերումս ղնիցեմք խոհականութեան :

ՊՕԴ.

« Ասացեր երէ մարքի արծարով զնոց առնույ յԵւրոպա բարձս առագութեան և, պատիւս մեծարանաց : Գնացից և, ի Պենկալա և, ձոխացայց, և, անտի ի Փարիզ երբեալ հարսնացուցից ինձ զՎիրգիլնէ : Հնապա փութացայց ի նա. մտանել :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Զինչ խօսիս . քեալ բողոքոցնս գմայր նորս է . գրոյ :

ՊՕԳ.

« Դու ինքնին ետուր ինձ խորհուրդ ի Հնդիկս գնայոյ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Աստ էր յայնժամ Վիրգիլն : Բայց այժմ դու միայն ես ամուր պաաստանի մօրն քուս էս . մօր նորս :

ՊՕԳ.

« Այլ Վիրգիլն բարիս նոցա արասցէ ընդ ձեռն ընչաւետ ազգակցին :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Սովոր են մեծատունք այնոցիկ եւեք առնել բարիս՝ որք մեծարանս ղնիցեն նոցա յաշխարհի : Եւ նոցա արեանառուք բան զլարուր տիկիւնն եւս ողբոց արժանիք , որք էս քափուր մնացեայք ի նպաստից մեծատանցն՝ զագատութիւն իւրեանց փոխանակեն ընդ հացի , եւ էրբեայք ի մեճաստանս ուրեք արգելական վարեն կենցաղ :

ՊՕԳ.

« Ո՛վ անհեթեթ պայմանաց երոտական աշխարհին : Ա՛ն , չիք հնար , հարկ անհրաժեշտ է զի յետս այսրեն դարձցի Վիրգիլն : Բնաւ զինչ պետք իցեն նմա ազգակից ունել մեծափարքամ : Ո՞չ ապաքեն էրջանկագոյն էր նա ընդ յարկաւ . հիւղիցս մերոց , եւ ջրնաղագեղ ընդ կարմրերանց վարչամական , կամ պտակահիւս ծաղկամբքն որովք զգլուխն զարդարէր : Դարձի՛ր Վիրգիլն , դարձի՛ր . թո՛ղ զպատրանս քո էս գմեծութիւնս : Օ՛ն էկ վերստին

ի քարաժայռս յայտոսիկ, ընդ հովանեաւ մայրեացս եւ բոքե-
նեացն մերոց : Եղևիկ զինեւ, գուցէ դու արդ ի տառապանս
իցես... » Եւ գոյգ ընդ բանիցն յարտասուս յուծանէր : « Մի
ինչ բագուցանէր լինեն, հայրիկ. երէ ոչ ունիցիս ասել քե
հարսնասցի ինձ Վիրգիւնե, գէթ զայն ասա ցիս երէ սիրիցէ նա
զիս տակաւին ի միջի անդ աւագախումբ որբերոյն որ ընդ ար-
քայի լինին յօսակից, եւ գնան տեսանել զՎիրգիւնե :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քաջ գիտեմ ես, ո՞ր բարեկամ, զի սիրէ նա զքեզ. եւ այսմ
բազմապատիկ են պատճառք, եւ մեծ քան զամենայն պատճառս՝
նորին է առարիւնուրիւն : » Յայս բան ի վեր վագեալ փարե-
ցաւ բերկրայից զպարանոցաւ իմով :

ՊՅԴ.

« Համարիցիս եւ դու նենգամիտս զկանանին Եւրոպայ՝ որ-
պէս ի դեմս ածեն կատակերգութիւնք եւ գրեանն զորս յընթեր-
ցումն ինձ Ետուր :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Նենգամիտ է կանանին յաշխարհս յորս բռուներ են արք
նոցաւ. քանզի եւ ամենայն ուրեք բռնութիւն զնենգութիւն
ծնանի :

ՊՅԵ.

« Եւ իբր իցէ հնար բռուն լինել առ կանայս :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Այնու զի ամուսնաւորեն զնոսա առանց ինչ հարցանելոյ
զկամս նոցին. զօրիորդ դեռահասակ ընդ ծերունոյ պսակեն,
եւ զկին ղիւրագորով ընդ առն ցրտաբարոյի :

ՊՕԴ.

« Եւ ճիմ չամուսնացուցանիցեն զորս քաջայարմարքն իցեն իրերաց. զերիտասարդ ընդ երիտասարդի, Եւ զսիրելին ընդ սիրուհւոյ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քանզի ի Քաղղիա՛յոյովք յերիտասարդաց քափուր են յընչից, Եւ յանագոյրս Եւեր փարբամանան : Մինչ ի տիս պատանեկութեան իցեն՝ զառածանեն զկանայս զրացեացն իւրեանց. Եւ յայեւոյք հասեայք՝ չյանկուցանեն ինքեանս զամուսնացն սեր : Եւ որպէս ինքեանք զայս յերիտասարդութեան պատրեցին, Եւ այլք զնոսին պատրեն ի ծերութեան : Եւ այս մի է ի փոխադարձ հատուցմանց տիեզերական արդարութեանն որ վարէ գաշխարհս, Եւ ցանգ ի կշիռ զմիմեանս բերեն ծայրայեղ մոլորութիւնք : Այսպէս ահա ոչ սակաւք յերոպացոց ի կրկնակի անկարգութեանս ծնգին. Եւ այնչափ առաւել աճեալ բազմանայ ապականութիւնս այս ի քաղաքաժողով ընկերութիւնս, որչափ յարս սակաւարիւս ամփոփեալ կուտին ճոխութիւնք : Պարտեզ իմն է պետութիւնն, յորում տունկր մատաղք չգօրեն ուռճանայ երէ գուցեն ծառք բարձրաբերձք հովանացեալ զնոքօք. սակայն Եւ այս ինչ խտիր կայ ի միջի, զի ծառք բարձրուղէշք սակաւաորք մարքին վայելչագեղ զպարտեզն յարդարել. իսկ պետութեանն բարգաւաճութիւն՝ ի հպատակացն բազմութեան է Եւ ի հաւասարութեան նոցին, Եւ ոչ երէ ի սակաւարիւ ընչաւետսն :

ՊՕԴ.

« Եւ բնաւ զինչ պետք իցեն փարբամութեան՝ զի յամուսնութիւն որ գայցէ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Որպէս զի ի յիւրեան Եւ յանգործութեան զառուրս իւր անուցանիցէ :

ՊՕԳ.

« Եւ առ իմէ ջվաստակէյ . ահա ես վաստակէյով վաստակեմ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Քանզի յԵրոպա ձեռականն վաստակ յանպատուութիւն գրի մարդկան . վասն որոյ եւ մեքենական կոջի այն աշխատութիւն : Այլ եւ Երկրագործականն իսկ արուեստ արհամարհ քան զայլսն է, եւ քան զարդիւնարարն գեղջուկ արգոյ եւս է առ նոսա այր արուեստագէտ :

ՊՕԳ.

« Զինչ ասես . արուեստն այն տածիչ մարդկան խոտան գրի յԵրոպա : Ոչ կարեմ ի վերայ կայ բանիցդ :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Ո՛հ, չիք հնար մարդոյ որ ի բնութեան սնեայ իցէ եւ անեցեայ՝ հասու լինէյ ապականութեանց քաղաքաժողով ընկերութեան : Զբարեկարգութիւն առնույ ի միտ՝ ոչ ինչ յանճարիցն է, այլ անկարգութեան լինէյ խելամուտ ոչ բնաւ մարբի : Համեմատութիւն իմն եւ չափ եւ պայման կայ գեղոյ, առաքի՛նութեան եւ բարեբաստութեան . իսկ տգեղութեան եւ ակստից եւ քշուաութեանց ոչ բնաւ :

ՊՕԳ.

« Ապա ուրեմն Երանէյիք են մեծատունք, զի չիք ինչ որ խոջընդուն լինիցի նոցա, եւ մարբէն լիապարգեսս առնէյ հանոյականօր զսիրելիսն խրեանց :

ԾԵՐՈՒՆԻՆ.

« Այնու իսկ զի անշան բերեն նորա ի ձեռս զբերկրականսն՝

բագում այն է զի յափրացեալ գտանին : Ո՞չ ապարեն քեզն առեալ էր զփորձ՝ զի հանգստեանն բերկրութիւն՝ աշխատութեան է պտուղ, որպէս է. ճաշակելոյն հեշտութիւն՝ քաղցին արգասիք, է. ըմպելոյն ախորժ՝ ծարաւոյ ծնունդ : Նոյնպէս անա է. զսիրելոյն է. զսիրելի լինելոյ հրճուանս՝ բագում նեղութեամբ է. տառապանօր է ի մեռս բերել : Ընչից յաճախութիւն զառաջս առեալ այսր ամենայնի պիտոյից, բառնայ ի մեծատանց զամենայն զբերկրանս զայտոսիկ : Յոյժութեան նոցին զնեա գայ տաղտկութիւն, է. ընդ նմին ամբարնաւանութիւն՝ արգասիք փարբամութեան, որ է. ի դուզնաքից ինչ բերութեանց ի խոր խոցի, քեպետ է. չհրապուրիցի այլ էսս ի կարի իսկ մեծամեծացն հեշտութեանց : Բուրումն անուշութեան բխրաւոր վարդից առ վայրկեան մի է. եւ ժամանակի հեշտացուցանէ զայր . այլ ցաւ միոյ միայնոյ ի խայրոցաց նոցին հարուստ ինչ ժամանակս ազդի ի մարմնի անանց : Ի բերկրանաց միջի ցաւ մի ի ցաւոց՝ մեծատանց փուշ է ի հոյս ծաղկանց. զնորին հակառակն, ջբաւոր մարդկան դոյզն ինչ բերկրանք ի բագմութեան աղետից՝ ծաղիկ է ի մեջ փշոց, ընդ որ զմայրեալ բերկրին : Ամենայն ազդումն ներհականաւն սովոր է առաւելոյ ի սաստկութիւն . քանզի գուգալչիւ գործեալ է բնութեան զամենայն : Եւ արդ ադէ սաս . զ՞ր պայման նախամեծար առնիցես . զչունեյն ինչ իմիք զոգցես ակն է. յամենայն կանգիտել, երբ զզգանգիտելն ուստեք բնաւ, է. ակն ունել ամենայնի : Առաջինն մեծատանց է պայման, է. երկրորդն ջբաւորաց : Սակայն է. երկրորդն ծայրայեղ խտտորմունք դժուարըմբերք են մարդումս, քանզի բարեբաստութիւն նորա ի չափոյն է. եւ յառարկնութեան հաստատեալ կայ :

ՊՕԴ.

« Եւ զինչ առաքիւնութիւնն իցէ :

ԾԵՐՈՒՆԵՆ.


« Որդեակ իմ, դու որ բոյով վաստակօրդ զճնողս բո ծերաւ-

տածես, չկարօտիս ուսանել քե զինչ իցէ առաքինութիւն :
Առաքինութիւն է բուռն առնել անձին ի շահ օգտի այլոց առ
ի հաճոյ լինել, Աստուծոյ միայնոյ :

ՊՕՂ.

« Բնքէ, նրբան առաքինի է Վիրգինէ : Առաքինութեամբ տեն-
չացաւ նա ընչաւետ լինել, զի յաճախեսցէ ի բարեգործութիւն :
Առաքինութեամբ հեռացեալ մեկնեցաւ նա ի կղզւոյ աստի .
առաքինութիւն դարձեալ ածցէ զնա այսքն : »

Խորհուրդ մօտայութ դարձին Վիրգինեայ այնպէս վառեայ
բոբբոքեր զուշ մտաց պատանուոյն, զի եւ համօրէն խեբբ իւր
եւ անձկութիւնք ի բաց փարատէին : Վիրգինէ գրեաց ինչ ոչ,
ասէր, քանզի հուպ ընդ հուպ այսր եկեսցէ ինքնին . ոչ բազում
ինչ ժամանակաց պէտք էն գալոյ յԵւրոպայ՝ յորժամ հողմն
աջողակ շնչիցէ : Եւ համարէր զնաւսն որ գայս միջոց տարա-



ծութեան ջորէքնագար եւ հինգ հարիւր խրատախաց հատեալ
անցեալ էին յամիսս Երիս : Իսկ նաւն որ բարձեալ բերիցէ զՎիր-
գինէ՝ ոչ ինչ սուելի յամեսցէ անշուշտ քան զամիսս Երկուս .
քանզի քաջարութեամբ էն արդ նաւակերտք, եւ նաւաստիք ժա-
մանակիս ճարտարք յոյժ : Ասէր եւ զհանդերձանսն եւ գլօթի-

նուածութիւնս որովք պատրաստէր ժողովէյ զնա, զնորակերս օրարանն զոր կառուցանէյ կամէր, զբերկրանսն էւ զյանկարծաղեայ զարմանս զորս խորհէր ընձեռել նմա զօր ամենայն՝ ի հարսնութիւն իւր զնա ածեայ : Ի հարսնութիւն... Յայս խորհուրդ՝ սխրացեայ յափշտակէին միտք նորա : Եւ դարձեայ առ իս ասեր. « Յայնժամ էւ դու, հայրիկ, առ ի զքօսանս քո էւէք մեռն ի գործ արասցես. քանզի ընչաւետ էյով Վիրգիւնեայ, եղիցին մեզ հնդիկք բագում որք վաստակեսցեն փոխանակ քո : Ընդ մեզ կացցես մնասցես դու անմեկին, էւ յար զքօսանաց էւ բերկրութեան դիցես միտ : » Եւ այլ յայլմէ լեայ առ խնդին, ընթանայր առ ընտանիսն՝ կցորդս առնել էւ զնոսա իւրոցն հրճուանաց :

Ի սուղ ինչ ժամանակի կասկածանք մեծամեծք զյուսից մեծամեծաց փոխանակէն գտեղի, էւ բուռն կիրք ի ներհականսն լեղմունս մղեայ արկանէն զոգի : Բագում այն էր զի ի վաղիւ անդր էյաներ էւ զայր առ իս քաղձեայ տրտմութեամբ, էւ ասեր. « Վիրգիւն ջրդրէ առ իս : Եթէ մեկնեայ էր յԵրուզայ, ազդեր ինձ զչու դարձին : Ո՛հ նհ, ստոյգ իսկ է համբան ընթացեայ զմմանէ, էւ մօրաքոյրն էտ զնա ի կնութիւնս առն ումեմն աւագի : Ընչիցն սեր խարդաւանեաց էւ զնա ի կորուստ, որպէս էւ զյոյովս ի մարդկանէ : Ի մատեանսն յայնոսիկ որ ձլգրիտս տան զնկարագիր կանանց, առաքինութիւնս պատճառս էւէք մատակարարէ հիւսուածոյ վիպասանութեան : Եթէ արդարէս առաքինի էր Վիրգիւն, ոչ բողոյր լքաներ զմայրն իւր էւ զիս : Ահա զաւուրս իմ անցուցանեմ էս ի նա խորհելով, էւ նա զիս մոռանայ. էս տառապիմ, էւ նա յօրանայ : Ո՛հ, այս խորհուրդ զիս յանյուսութիւն կործանէ : Տաղտուկ է ինձ աշխատութիւն, էւ ժողով մարդկան ի ձանձրութիւն : Իցիւ քէ մարտ պատերազմի բանայր ի Հնդիկս. չուեայ էրբայի անդէն մեռանել : »

ԾԵՐՈՒՆԻՆ.

Եւ ասեմ զնա. « Որդեակ իմ, արիութիւն որ մահու առնէ զմեզ դիմագրաս, վաղանցուկ արիութիւն է, էւ ի սնոսի

դրուատեաց մարդկան էւեր արժարծեալ : Է՛ր է արիութիւն
չքնաղ էւ կարեւոր, այն իսկ որ օր ըստ օրէ առնէ մեզ հան-
դուրժել առանց վկայից էւ դրուատեաց՝ ճախողակի արկածից
կենցաղոյս. գհամբերութիւն ասեմ : Սա ոչ ի կարծիս այրոց
լեւոս, էւ ոչ ի կրիցն մերոց հրապոյրս, այլ ի հաճոյս կամացն
Աստուծոյ : Համբերութիւն՝ արիութիւն է առարիւնութեան :

ՊՕԴ.

« Ո՛հ, եղուկ զինէս ; գոչեաց Պօղ. քափուր եմ էս ուրեմն
յառարիւնութենէ : Ամենայն ուստեք տագնապ է ինն էս յուսա-
հատութիւն : »

ԾԵՐՈՒՆԵՆ.

« Եւ կրկնեալ անդրէն ասեմ. Առարիւնութիւն որ ցանգ անմեռ
իցէ էւ անասան էւ անփոփոխ, ոչ է տուեալ մարդումս ի
բաժին : Ի խոսան անդ կրից որ վեր ի վայր յուգէն զմեզ՝ միտք
մեր ամբոխեալ մբազնին. բայց են են էւ դամբարք յորոց մար-
քիմք վերստին յուցանել զշահ նորին. էւ դամբարք՝ դպրու-
թիւնքն են :

« Դպրութիւնք, որդեակ իմ, օճանք են երկնատուրք : Ճաճանջք
են իմաստութեանն որ գտիեգերս վարէ, էւ գոր աստուածայնով
իմն ազդմամբ ուստս. մարդ հաստատել ի վերայ երկրի : Հանգոյն
իմն ճառագայրից արվեննոյն՝ յուսաւոր են նորին, գուարքա-
ցուցանեն էւ ջեռուցանեն. քանզի էւ հրատք են աստուա-
ծահրաշք, էւ գօրէն կրակի գբնութիւնս համօրէն ի սպաս մե-
րոց պիտոյիցս նուաճեն : Ի մեռն դպրութեանց շուրջ գմեօք բո-
յրեմք գերս առ հասարակ, գվայրս էւ գմարդիկ էւ գժամա-
նակս, էւ նորօք ուսանիմք զկանոնս ուղղութեան մարդկայնոյ
կենցաղոյս : Նորին էւ զկիրս ցածուցանեն էւ զախտս սանձա-
կոծեն, զառարիւնութիւնս արժարժանեն վանական օրինակօք
ընտիր ընտիր որերոյն՝ գորս ի գովութիւն առեալ հոգակէն,
էւ զնոցս տիպս կերպարանացն ցանգ պատուականս մեզ ըն-
ծայեալ ցուցանեն : Դստերք երկնից են դպրութիւնք՝ յերկիր

վայրիջեալք ի սփոփումն աղետից ազգի մարդկան : Մատենագիրք նոյակապք որ նոցա ազդեցութեամբն խօսեցան, ի կարի իսկ դժնդակ է. ի դժոխքմբեր ժամանակս քաղաքաժողովն ընկերութեան ծաղկեցին, ի խժոժութեան դարսն ասեմ է. յապականութեան : Դպրութիւնք են որ սփոփեալ մխիբարեցին զանքիւ մարդիկն՝ որ է. քան զքեզ չարաբաստիկք էին, որդեակ . զԲսենովոն գտարագրեալն ի հայրենի աշխարհն՝ յետ անդրեն դարձուցանելոյն Հէյլենս տասն հազար . զԱփրիկեցին Սկիպիոն, զտաղտկացեալն ի Հռովմայեցոցն զրպարտութեանց . զԿուկուդոս ի դաւաճանութեանց նոցին . զԿատինա յապաշնորհութենէ արքունեաց : Հանճարեղքն յազգաց Հէյլենք՝ միում միում ի Մուսայիցն խնամակալաց դպրութեան՝ զմի մասն իմացութեանս մերոյ սահմանեալ էին ի վարչութիւն. հարկ ուրեմն է է. մեզ ի նոսա առնել զկիրս մեր ապաստան, որպէս զի լծադիր է. սանձարկու. նոցա յինիցին : Հարկ է է. նոցա այնպէս ուղղել է. վարել զնոգեկանսն մեր կարողութիւնս, զոր օրինակ է. ժամք լծեալ վարէին զԱրեգականն երիվարս :

« Հնապա ընթերցիր, որդեակ : Որ յառաջ քան զմեզ մատենագրեցին իմաստունք՝ ուղեւորք ոմանք են որ կարապետեցին մեզ ի շաւիղս ճախողակ բաղդին, է. ձեռն կարկառեալ հրատէր մեզ կարդան ի ժողովս իւրեանց երբեալ խառնել մեզ, յորժամ ապախտ առնիցիմք յամենեցուն : Մատեան ընտիր՝ ընտիր է բարեկամ :

ՊՅԴ.

« Բա՛բէ, գոչեաց Պօղ, ոչ ինչ պետք էին ինձ ընթերցանութեան մինչ աստն էր Վիքրգիւնէ : Ոչ քաջուս ինչ որ էր նա քան զիս . բայց յորժամ բարեկամ իւր զիս ճայնելով առ իս ակնարկեր, չմարբէր ինձ համակել ի տրամութիւն :

ԾԵՐՈՒՆԻՆ.

Ե. ասեի ցնա՛ . « Արդարեւ չիր ինչ քաղցրախորժ քան զտարփածու. որ սիրիցեն զմեզ. այլ է. գուարբութիւն իմն բերէ.

գտանի յանձին կնոջ մարդոյ որ մերժեալ փարատե գրախիծ
առն : Շնորհք էրեսաց նորա հարածական տանին զսեւաբորմի
զմբադս տագնապիչ խորհրդոց , Է. ի դեմս կերպարանաց
նորա նկարեալ տեսանի զեղ սրտառուչ Է. աներկմիտ վստա-
հութիւն . իցէ ինչ խնդութիւն որ նորա խնդութեամբն ճառաւե-
րուցու , Է. կայցէ բնաւ ուրէք ճակատ խորշումեալ որ ոչ ի ժպիտ
նորին ձգտեալ պարզիցի : Ո՞ր այն սրտմտութիւն իցէ որ ար-
տասուաց նորին հանդարտիցէ : Վիրգիկնէ ի դարձին իւրում
առաւել Է.ս քան զբեզդ գոցի գարդարեալ իմաստասիրու-
քեամբ : Զարմացի նա յոյժ ընդ պարտիզին թերահոգ անշքու-
թիւն , նա որ ի զեղսպաճոյճն նորին շքեղութիւն Է.եք խոկայ,
բեպետ Է. ի մօրաբեռէն իւրմէ խուիցի , թեպետ Է. առ ի մօրէն
Է. ի բէն ի բացեալ կայցէ : »

Խորհուրդ մօտալուտ դարձին Վիրգիկեալ կազդութեալ զա-
րիութիւն Պօղայ՝ ածեր ձգեր զնա ի վաստակսն իւր դաշտա-
կանս , Է. ի վիշտս անդ տառապանաց իւրոց բարբբաստիկ իմն
էր , այնպիսի Էղեալ կէտ նպատակի վաստակոցն՝ որ ըղձալին
էր իւրումն ցանկութեան :



Գ Լ Ո Ւ Խ Ե .

Յառաւօտու միում ընդ այգս այգոյն (այն օր քսան Է. ջոր-
րորդ էր դեկտեմբերի 1744 ամին) վաղայարոյց լեալ Պօղայ՝
Էտես դրօշ սպիտակափառ. ծածանեալ ի Գիւտի լերինն : Եւ էր
դրօշն այն նշանակ նաւու. յերեսան Էկելոյ ի ծովուն : Ընթացաւ.



Պօղ ի քաղաք անդր՝ գիտել էրէ բերիցք. նաւն այն զրոյց ինչ
զՎիրգինեայ. Էւ Էկաց մնաց անդ մինչէս. ցդարձ տեսչի նաւ-
գրուանին որ ի նաւ անդր էրբեալ էր մակուկաւ ըստ սովորու-
բեանն ի քննութիւն : Ուր ուրեմն ընդ էրէկս աւուրն դարձ

անդրէն արարեալ առնն՝ ազդ արար քաղաքապետին զի երեւեայն այն նաւ Սեն-Փերան էր, եօրն հարիւր տակառաջապիուց ունելով մեծութիւն, և անուն նաւապետին Պ. Օպէն. չորիւք խրատախօք հետի է՝ ասէ՝ ի ծովափնես, և երէ աջողակ շնչիցէ հողմն, քերեսս վաղիւ գկնի միջօրէին մտցէ ի Փոլը-Լուի. իսկ ի ժամուն անհողմութիւն մեծ էր : Միանգամայն և զամենայն բղբեանն գորս բերեր նաւն ի Գաղղիոյ՝ էտ տեսուչն քաղաքապետին : Եւ առ Լարուր տիկին ևս գոյր բուղք մի՝ մեռագիր Վիրգինեայ : Ապշոպեաց գայն անդէն Պօղ, համբուրեաց ցնծալից հրճուանօք, և եղեալ ի ծոցին դիմեաց ի բնակարան անդր : Ի նշմարել իւրում ի բացուստ զընտանիսն՝ որ համախումբ



իւրումն դարձի ակն կալեալ մնային ի Հրածէշտի վիմին, յօղս վերամբարձեալ զքարտեզն տատաներ՝ ոչ ինչ գօրելով յօղել բարբառ. և նոյն հետայն ժողովեցան ամենեքին առ Լարուր տիկին գիշորիցէն զբանս նամակին :

Ծանօթս տայր Վիրգինէ մօրն զի բագում ինչ անցք ջարեաց անցեալ էին ընդ նա յերեսաց մօրաբեռն, որ ամուսնացուցանել զնա կամեր բռնութեամբ, սպա և անժառանգել, և սպա յետս դարձուցանել յայնպիսում ժամանակի՝ յորում չէր հնար նմա

ժաման լինել ի կողմն Գաղղիոյ, բայց ի մրրկայոյց լեղանակսն .
զամենայն ջան ի գործ արարի; ասեր, շրջել զնա ի մտացն՝ յուշ
ածելով նմին գայարտս իմ առ մայրդ և առ սովորոյքս ան-
տիական հասակիս . այլ ի գուր . բանգի նա իբրև ընդ պանդոյր
որ օրիորդ, որոյ բիւրեալ իցեն միտք լընքերցմանէ միպաց
այնպէս հայեր լիս . և արդ համօրէն ամենայն բարեբաստութիւն
իմ այս և, ասեր, զի տեսից մերստին և ողջագութեցից զագ-
գատոմն իմ սիրելի . և երէ բոլլ տայր ինձ նաւապետն , այժ-
մէն իսկ յառաջմէ օրես մտեալ ի կուր տեսչին՝ զիդձս անձ-
կայրեաց սրտիս կատարելի . բայց նա հակառակ էկաց ջուռոյս ի
պատճառս հեռաւորութեան ցամաքին և այետանջ ծովուն որ ի
խորս, քեպտ և անհողմութիւն և ի ժամուս :

Այն ինչ վերձանութիւն քարտեզին աւարտեր, ազգատոմն
ողջոյն ուրախութեամբ մեծաւ խնդացեալ զոչեցին հրճուանօր .
« Վիրգիւնէ հասեալ կայ . » տեսրք և ծառայք գիրկս արկեալ
համբուրեցին ընդ միմեանս , և ասէ Լարուր տիկին ցՊօղ .
« Որդեակ իմ, էրք և ծանո դրացւոյն մերում զգալուստն Վիր-
գիւնեալ : » Եւ անդէն ջան յուցեալ Դոմինիկեալ ի մարխէ՝
յուդի անկան ընդ Պօղայ գալ առ իս :

Էր ժամ իբր տասներորդ երեկոյին , և ևս այն ինչ դեռ ևս
ի մայր գճրագն իմ դարձուցեալ յանկողին մտանելի , և անա
լոյս յանտառին հարաւ յաջս իմ ընդ խաղխամս հիւղին իմոյ :
Փոյք ընդ փոյք լուայ և զմայն Պօղայ զի կոչէր զիս : Ընդոստ
առ ժամայն յարեալ վաղվաղակի , և չէ գնանդերձս իմ ար-
կեալ էր զանձամբ՝ մինչ նա այլ յայլմէ եղեալ և ամենեւին
շնչասպառ՝ վազեաց փարեցաւ գալարանցաւս և ասէ . « Արի
զնասցուք , էհնս Վիրգիւնէ . ճն արի զնասցուք ի նաւահան-
գիստն . ի լուսանալ այգուն արասցէ նաւն զմուտ խր անդր : »

Անդէն առ ժամայն անկաք մեր յուդի : Եւ մինչդեռ անցա-
նէար ընդ մայրիս Երկայնանիստն լերին , և հասեալ իսկ ետք
ի ճանապարհն որ տանի ի Կիտրոնեացն ի նաւահանգիստ
անդր , և անա ոտնաձայն մարդոյ որ զնետ իմ գայցէ՝ հարաւ
յուրկն իմ . և էր հնդիկ որ որ մեծաբայլ յառաջեր : Եւ իբրև
էհաս առ մեզ , հարցի ցնա էրէ ուստի՞ գաս կամ յո՞վ ընթանաս

այդպիսի ձեպով : Ասէ . « Ի քաղէ անտի կղզւոյս որ Ոսկեփոշին յորջորջի գամ էս , առաքեալ ի նաւանանգիստ անդր ազդ առնէ քաղաքապետին զի նաւ եկաւոր ի Գաղղիոյ ' խարխիս արկեալ է առ Ամպարի կղզեան , եւ հրետս արձակեալ զօգնութիւն խնդրէ , զի խռովեալ լոյժ է ծովն : » Եւ զայս ասացեալ առնն ' ձեպ զձեպի յառաջ զճանապարհն վարեաց :

Յայնժամ ասեմ էս ցՊօղ . « Հնապա , յՈսկեփոշւոյ՞ քաղն էրբիցուք ընդ առաջ Վիրգինեայ , զի էրիւք խրատախօք եւեք հեռի է այն ի տեղւոջես : Եւ դեմ եղեալ զնայաք ընդ հիւսիսակողմն կղզւոյս : Եւ գիշերն տօրագին էր էս մղձկուտ : Լուսին ելեալ բարձրացեալ կայր , եւ բակք էրէք մեծամեծք էս սեւորակք շուրջ կային զնովաւ . իսկ գերեսօրն էրկնից խաւար աղջամըջին էս քստմնէի պատեալ կայր : Ընդ աղօտ նշոյս ստեպ ստեպ ընթանալոյ փայլատականց նշմարէին շարք շարք երկայնամիգք ստուարակարկատ , նսեմաստուեր էս վայրահակ ամպոց , որք արշաւասոյր ընթացիւք դիմեալ ի ծովակողմն կուսէ , քեպետ էս բնաւ իսկ ջընջեր հողմն ի ցամաքի , կուտեալ դիզանէին բարդ ի բարդ զմիջավայրիւք ուրեմն կղզւոյդ : Զճանապարհայն էս բոմբիւնս որոտմանց բուեցաւ մեզ լսել . այլ յակճիւս ականջեալ հասաւ . Էղաք զի բնդիւն հրետից էր որ անդրէն ի շուրջանակի արձագանգաց յանձն իւր բեկաներ : Եւ ի յուր սաստկաշառաջ բնդման հեռամիգ հրետիցն , էս ի տեսիլ ամպրոպայոյզն էրկնից սարսուռ ընդ ոսկերս իմ ընթացաւ , էս ոջ էսս էրկմտէի զի նշանակք էին իրքն նաւու սաստկապէս վտանգելոյ : Բայց կիսոյ ժամու այն ինչ ի վերայ անցեալ , ոջ էսս այլ յուրաք ինչ բնշիւն . էս այն յուրիւն անաւորագոյն էսս բուեցաւ ինձ քան զողբամայնն բոմբիւնս առաջինս :

Փութայաք ձեպեաք յառաջ ընթանալ անխօս էս անշշուռջ , էս զմտաց մերոց տագնապ ոջ ի շխեաք ի վեր հանել իրերաց : Զհասարակ զիշերաւ ընդ քիրտն էս ընդ ապաժոյժ մտեալ ' ժամանեցաք ի ծովէզրն յՈսկեփոշւոյ քաղին : Անդ անագին շառաջմամբ կոծեալ խորտակէին այիքն մեծամեծք , էս ձիւնաբոյր փրփրով էս կայծակամբք հրոյ ծածկէին զխութսն էս զխա-

րակս : Եւ քեպետ խաւար աղջամղջին կայեալ էր գամենայն, սակայն աղօտ աղօտ փռափորական լուսովն նշմարեաք գմակոյկս ձկնորսաց ձգեալս հանեալս լաւագին վերայ մինչեւ ի հեռաստան :

Ոչ յոյժ ի բացեալ ի տեղուջէ անտի տեսաք ի մուտս անտառին հրատ արկեալ, եւ շուրջ գնովաւ ակումբ առեալ զկղզեցիս : Անդր եւ մեք մատուցեալ ոգի առնույ սասցաք փոքր մի՛ ակն կայեալ առաօտուն լինելոյ : Եւ մինչդեռ առ հրատին նստեաք, մի ոմն ի կղզեցեաց անտի պատմեաց մեզ եւ ասէ, էրէ յետ միջօրեին տեսի ի խորս ծովուն նաւ մի որ ի կղզի այսր մղեալ գայր ի յորճանաց. զիշերն ի վերայ հասեալ կայաւ :



զայն յաջացս, եւ յերկրորդ ժամու զկնի մտիցն արեւու լուայ զբնդիւն հրետից՝ նշանակ հայցուածոյ օգնականութեան. բայց այնպէս այլեկոճեր, ասէ, ծովն անհնարին ծփանօք, զի ոչ մարբացաւ որ բնաւ նաւակ ի դուրս հանել եւ ի բիկունս հասանել նաւուն : Իսկ եւ իսկ բռնեցաւ ինձ տեսանել զլամբարս նաւուն լուցեալս. եւ խիբայի քէ գուցէ կարի իմն մօտ մատուցեալ նաւուն ի ծովափն՝ անցանիցէ ընդ մէջ ցամաքին եւ Ամպար կղզեկի, համարելով զայն քէ իցէ Անկիւն դիտակին՝ զորով քերեալ անցանեն նաւքն մտեալք ի Փոր-Լուի. էրէ արդարեւ այս այսպէս իցէ, ասէր, քանզի հաւաստեաւ ասել ոչ ունիմ, ի մեծի վտանգի կայ նաւն այն :

Անդուստ է. այլ որ ի կողգեցեաց բան ի մեջ առեալ ասէ ցմեզ. « Իմ բազում անգամ անցեալ է ընդ ջրանցիկն որ զկղզեակն Ամպար ի ծովեզերէն անջրպետէ, և ջափեալ իսկ զխորութիւն նորա. քաջայարմար յոյժ է վայրն ի կայս և ի խարխիս, և նաւն յակաստանի կայ անդէն իբրէ. յանքոյք նաւահանգստի : Եթէ գոյի. ջափ զկեանս իմ դնէի ևս անդանօր, սակայն իբրէ ի ցամաքի այնպէս յանդորր ի բուն ննջէի : » Դարձեալ և երրորդ ոմն բարբառեցաւ և ասէ. « Եւ բնաւ իցէ հնար նաւուն ի ջրանցիկ անդր մտանէլ, ուր մակոյկք անգամ հազիւ հազիւ երբեւեկէն : Այլ ևս տեսանելով տեսի զնաւն խարխիս արկեալ անդր քան զկղզեակն Ամպարի. և եթէ հողմն յառասօտու շնչիցէ, մարբասցի անշուշտ մեկնէլ զնալ ի համատարածն կոյս և կամ ի նաւահանգիստն մտանէլ : » Եւ այլք ի կողգեցեացն յայլ ինչ կարծիս մտաբերէին : Եւ մինչդէռ նոքա այնպէս ի վեր եկեալ պայքարէին ընդ միմեանս ըստ սովորութեան պարպորդ բնակչաց կողմանցս, Պօղ և ևս յուր եւեր կայար : Անդէն յամեալ մնացար ցայգանալ առասօտուն. սակայն այնպէս աղջամղջին էր տակաւին երկին՝ զի անմարք էր նկատեալ նշմարել ինչ ի ծովու, որ և նաւախալապատ էր ի ժամուն : Բայց միայն ի խորս անդ ծովուն տեսանեաք ամպ սեւաթոյր, գորմէ ասացին քէ Ամպարի կղզեակն իցէ, քառորդաւ միով խրատախի ի բացէ ի ծովափանցն : Ի խաւարաբորք յայնմ աւուր ոչ այլ ինչ էր նըշմարել, բայց գսպառուած ծովեզերն յորում կայար մէք, և զոմանս ի բարձրաբերձ պարեխից յերանց որ ի ներքնակողմանս են կղզոյս, որք և երբէք երբէք ի վեր երեւէին ի միջոյ անտի ամպոցն շուրջ յածելոց գնորօք :

Ջեօքներորդ ժամու առասօտուն զովիւնք քմբկաց հնչեցին յականջս մեր յանտառաց անտի. և անա քաղաքապետն ԼաՊուրտոնն գայր հասաներ երիվարուն, և ընդ նմա գունդ մի հրացանակիր զօրաց հանդերձ բազմութեամբ բնակչաց և հնդկաց : Կարգեաց կացոյց զգօրականն անդէն առ ավամբ ծովուն, և հրամայեաց նոցա միահամուռ. ի միասին զհրացանսն արձակել : Եւ ընդ արձակել հրացանիցն նշմարեալ տեսար յոյս աղօտ յերեսս ծովուն, և նոյնհետայն զհրետի լուսար

գրնդիւն : Անդէն առար ի միտ զի ոչ յոյժ բացական է նաւն առ ի մենջ', եւ առ հասարակ ամենեքին ընթացար ի վայրն' ուստի բոմբիւնն եղէ, լսելի . եւ նկատեալ տեսար ընդ մեջ միգին եւ մառախոյոյ գտաշտ եւ զկայմն նաւու մեծի : Եւ այնչափ մօտ հասեալ ի նաւն կայար, զի քեպետ եւ անհոյագոջ մունջէին այլք, սակայն եւ այնպէս լսեար գտինջս նաւապետին որ զնաւաստին ի գործ վարեր, եւ նորա զաղաղակ բարձեալ գոջէցին երիցս, ԿԵՅՅԷ ԱՐՔԱՅ. քանզի այս իսկ է բարբառն գոր արձակէն Գաղղիացիք ի յետին վիշտս վտանգի, որպէս եւ ի բերկրապատար ինջ հրճուանս . իբր զի յաղէտս անդ վտանգաց զարքայն իւրեանց յօգնութիւն կարդայցեն, եւ կամ զի հաւատարիմ առնել կամին նմա զի կազմ եւ պատրաստ կան մեռանել վասն նորա :

Յորմէ հետէ ետես Սեն-ժերան զի շատ իսկ մօտ եար առ ի մեռն օգնականութեան կարկառելոյ նմա, յերիս յերիս վայրկեանս հրետանիգ լինէր անդույ : Պ. Լա-Պուրտոնէ հրամայեաց հրատս լուցանել ի տեղիս տեղիս ի ծովեգերին, եւ արձակեալ առ բնակիչս մերձակայ վայրացն ետ բերել պարենս եւ տախտակս եւ պարանս, եւ կարասս դատարկեալս : Եւ անդէն ետ ընդ ետ խուռն բազմութեամբ էկեալ հասին բնակիչք Ոսկեփոշոյ, Ֆլյար քաղի եւ Ռամբար գետոյ, հանդերձ գերեօքն որ բարձեալ բերէին պաշար եւ սարիս նաւու : Եւ մատուցեալ մի ոմն ի բնակչաց անտի առ քաղաքապետն, ասէ . « Լուր ինն իշխանդ . զցայգն ողջոյն լսելի եղէն ի յերին անդ զօջմունք աղօտամայնք : Տերեք ծառոց անտառին շրշեալ տատանին, քեպետ եւ հողմն ուստեք ջընջիցէ . բոջունք ծովու ի ցամաք այսր դիմեալ անկանին . այս ամենայն հաւաստի գուշակք են ամպրոպայոյց մրրկի մեծի : » Ետ պատասխանի քաղաքապետն եւ ասէ . « Քաջ է բարեկամքդ . անս եւ մեր կազմ եւ պատրաստ կամք ի նոյն . անշուշտ եւ նաւն ինքնին : »

Եւ արդարեւ իսկ ամենայն ինջ գուշակ մրրկին լինէր : Ամպր որ ի վերնակէտս անդ երկնից նշմարէին' սեւաբորմիս եւ անառորս ունէին զմիջական, եւ պղնձագոյն զսպառուածս իւրեանց . եւ քեպետ խաւարակուռ օղքն էին, սակայն ազգի

ազգի բռնուներ ծովայինը Երամովին ի կողքի անդր բեռածեալ
գային խնդրել ապաստան :

Ձինն ժամաւ առաւօտուն լսելի Էղեն ի ծովակողմն կուսե
ձայնը ստակալիք՝ իբրոս այն բե սահանք հեղեղաց բազմաց հան-
դերձ որոտընդոստ շանքիւք բաւալցյոր ի վախից լերանցն



ի վայր խաղային : Ամենեքին սո. հասարակ ձայն բարձեալ
գոչեցին. « Ահա ամբնութ ամբնութ . » Եւ անդէն սո. ժամայն
մրրիկ սաստկաշունց հալածական առեալ տարաւ. գմառախուղն
մածեալ զԱմպարի կղզեկաւն Եւ զշրանցիւ. նորա : Յայնժամ
ի վեր Էրեւեցաւ Եւ նստն Ան-Փերան, հանդերձ մարդախիտն
յարկաւ. առագաստակալքն Եւ կայմք խոնարհեալք անկեալք
գտախտակամածիւն, դրօշն վայրանակ. քառեակ մայուխք

ի խելացն, եւ միւս այլ ճուպան ի յետուստ ձգեայք՝ ի վեր զնա կառուցանել ձգնէին : Եւ կայր Մեն-ժեբան խարխալս արկեայ ընդ մեջ Ամպարի կղզւոյն եւ ցամաքի՝ յայսկոյս շարից խրիցն որ զկղզեասս Գաղղիոյ, եւ ընդ վայր այնպիսի անցեայ ընդ որ ոչ էրբէք անցեայ էր նա. յառաջ քան զնա : Զառաջսն տուեայ կայր լեռնակուտակ կոհակաց որ ի խորոց անտի ծովուն ի ներքս խուժէին . եւ իբրէս ի ջրանցիկ անդր բուռն զօրութեամբ մտանէին այլքն, նաւառաջքն մոջն առեայ ի վեր ամբառնային, եւ զոգն ողջոյն ընդ օդս լինէր տեսանելի . սակայն նոյն ժամայն եւ խելացն ջրասուգեայ մինչէս ի ծնօտսն՝ ծածկէր յաջաց տեսողաց իբրէս ի սպառ. ծովամոյն :

Այսպէս հողմն եւ ծով միանգամայն զնաւն ի ցամաք մղեայ վանէին, եւ ոչ էր նմա յետս ընդ կրուկն դառնայ ուստի եկեայն էր, եւ ոչ զմայուխսն հատանելով խրել ի ծովեզերին, յորմէ անջատ ունէին զնա ծանծաղութքն խթիւք խճողեայք : Մեն մի ի կոհակաց յափուսն քախեայ եւ խորտակեայ՝ գրոհ տայր մոնչելով մինչէս. ցլորս խորշիցն, եւ խիճ եւ կօպիճ արձակէր ի հեռաստան լիմնչէս ցտննաջափս յիսուն . եւ ապա վերջստնեայ եւ զմեծ մասն յատակի ծովեզերն հոյանեայ՝ քաւայցոր առեայ տանէր զմանրախիճսն խոպոտ եւ անեղ շառաջմամբ : Ծովն հողմուռոյց բարձրացեայ գամ քան զգամ լեռնանայր, եւ ջրանցիկն ողջոյն որ ընդ մեջ կայ կղզւոյս եւ կղզեկին Ամպարի, զմմանութիւն իմն բերէր փրփրադեզ մեծատարած պաստառի՝ փեռեկեայ եւ պարպատեայ սեւատեսիլ եւ խորանդունդ կոհակօք : Այն փրփուրք շեղաշեղջ կուտակեայ դիզանէին ցվեցոտնեան բարձրութիւն ի խորս խորշիցն, եւ հողմն սաստկակոծ քերեայ զնորօք՝ առեայ տանէր զնոսին զափափայլիւք ծովափանցն մինչէս կիսով խրասախաս անդր քան զցամաք . եւ ի տեսիլ ձիւնաբոյր զնդակացն որ անբիւք էին ի բազմութենէ, եւ շեշտակի վարեայ ընթանային մինչէս ի ստորոտս լեռանց, էր արդեօք համարել էրէ ձիւնաբէրք ի ծովէ ի վեր էլան էին : Ծիրք երկնից առաջի առնէին համօրէն զամենայն նշանակս էրկարատէ մրրկի, եւ ծով եւ երկին խառնամառն էրեւէին միամոյլ : Ամպոց գոպարք նորանորք հատեայք անդուս լեբեսաց երկնից՝ հանգոյն էրա-

գասյացն բռնցնոց սրանային անցանէին դէպ վերոյ գագաբանց մերոց, և այլք դարձեալ կառուցեալ և կանդաղեալ կային մնային գորէն ստուարակարկատ ապառաժ լերանց : Ոչ ևս էր տեսանել մասն ինչ կապուտակ ի հաստատութեան երկնից. և լոյս և էր լրբագոյն և դայնկագոյն տեսանելի գործեր գերկիր և գծով և գերեսս երկնից :

Ի յարածուի ճօճանս անդ նառնն երեքականի, երկիւնն յորմէ գանի հարեալ խիբային՝ էկն հնաս ի վերայ : Պարանր առաջիցն խզեցան. և քանզի մի և էր կառան մնայր ի հաստատութիւն, գրկաջափս վարսուն անդր քան գծովափն մղեալ



ընկեցաւ. նառն յապառաժս անդ : Յայնժամ ամենեքին առ հասարակ գաղաղակ բարձար. և Պօղ այն ինչ ընթանայր ծովամուխ լինել, փութացեալ բռնն հարի գնմանէ և ասեմ. « Զի գործես, որդեակ, մեռանել կամիցիս : » և նա գոչեաց և ասեմ. « Թող գնամ օգնել նմա, ապա քե ոչ՝ մեռանիմ : » և քանզի առ անհնարին յուսահատութեանն ուշագնաց լինէր, զի մի անճնամատն լիցի ի կորուստ՝ Դոմինիկոս և ևս պնդեցար ի գօտի նորին ջուան երկայնամիգ՝ գորոյ զձայրէն վակժոյժ լեալ պինդ ունեար : Յայնժամ յառաջ ընթացաւ Պօղ հանդէպ Սենժերանին՝ էր զի ի լող գնայով, և էր զի ի խութս քայլելով :

Գեայ լինէր երբէք երբէք ակն ունէյ նմա ի նա. անոր վերտոնե-
լոյ. քանզի ծովն յաղամողեայ ծփանս անդ իւրում այնպէս
ի ծանծաղ զնաւն բողոյր, զի մարք էր հետի իսկ շուրջ գալ
զնովաւ. այլ անդէն առ ժամայն յետս նահանջեայ մեծաւ մո-
լեզնութեամբ՝ ծածկեր զնաւն յեռնահանգեալ կոհակօք, որով է.
յօղս վերամբառնային առաջք ողնափայտին, է. զհիքացեայն
Պօղ պուղեայ սաստկութեամբ՝ անոր քան զծովափն զընկենոյր՝
արիւնաբարսիս գարունն գործելով, զյանջսն կոշկոճելով, է.



զանձն ողջոյն շրանեղձիկ գոգցես առնելով : Իբրեւ սակաւիկ
մի ուշաբերէր պատանին, անդրէն յտն կայր, է. փութով
պնդութեան դիմէր վերստին դեպ ուղիղ ի նաւն՝ զոր տակաւ
փեռեկէր ծովն անհնարին լկանօք : Յայնժամ է. նաւաստեացն
յուսահատեայ ի փրկութենէ՝ ծովընկեց զանձինս առնելն խռոն
բազմութեամբ վակժոյժ լինելով առ հասարակ գառագաստա-
կայացն, գտախտակաց, զհաւուցն վանդակաց, գետնոց է.
գտակառաց :

Յայնմ պահու էրէւցաւ է. տեսիլ աղիոդորմ՝ յաւերժա-
կան մորմորանաց արժանի. օրիորդ մանկահասակ ի պաղ-
պաջունս խեղաց Սեն-ժերանի էլեայ, է. զբազուկս իւր տա-
րածանէր առ այն որ գոգի ի բռին կայեայ գուն գործէր հա-
սանել ի նա : Եւ նա ինքն էր Վիրգինէ : Յանվէնէր զնացիցն

Պողայ ծանուցեալ էր նորա գսիրելին : Եւ մէք ի տեսիլ նա-
գելույ օրիորդին մատնելոյ ի բսամնելին այն վիշտս վտանգի՝
աղէխորով աղեկտուր լինեաք : Իսկ ինքն Վիրգիլնէ ազնուական
իմն էւ աներկիւղ կերպարանօք նշանացի խօսէր ընդ մեզ
ձեռօքն իբրէս ողջոյն տալով մեզ անդարձ նրաժեշտի : Նաւագրն
համօրէն ի՛նծով բօրափեցին զանձինս, էւ մի ոմն միայն կայր
մնայր արձանացեալ ի վերայ նաւուն՝ մերկ ի հանդերձից էւ
կարշնեղ էւ աճառապինդ իբրէս նոր զոմն Հերակլէս : Սա
մերձ մատուցեալ պատկառանօք առ Վիրգիլնէ, որպէս տե-
սաքն, խոնարհեր անկաներ յոտս նորա, էւ հնարէր էսս ի բաց
զհանդերձս նորա առնույ. այլ Վիրգիլնէ մերժեաց զնա մեծաւ
վսեմութեամբ, էւ զաջս իւր ի բաց դարձոյց ի նմանէ :



Անդին լուսաք մէք զի ճիշ բարձեալ տեսողացն գոչէին անդույ էւ
ասէին. « Փրկեն՞ զդա, փրկեա՞ զդա. մի բողոսր զդա : » Եւ անա
կոհակ լեռնահանգէս սոսկավիթխար վագեալ եմուտ ընդ կըղ

զեական Ամպարի է. ընդ ծովեզրն, և մոնջելով ընքացեալ ի նա. անդր յառաջեր, և արջնարոյր կողիւքն և փրփրադեզ կատարօք սպառնայր նմա կորուստ անձողոպրելի : Յայն տեսիլ տոսկալի՝ սրացաւ ոստեաւ ի ծով անդր նաւագնն միայնակ. և Վիրգի-նեայ տեսեալ ակնեբէ. զանհրաժեշտն մահ, զմի ձեռն զհան-դերնիւքն կայաւ, և զմիւսն զարտիւն. և ի վեր ամբարձեալ գոարբագին զազկունս իւր՝ հրեշտակ որ բուեցաւ որ ընդ եր-կինս քեւապարեալ գնայցէ :

Ո՛վ օր չարադէտ. աւնդ, ամենայն ինչ կորեաւ. անդնդա-տոյգ : Քաջ ի բաց անդր քան զցամաք տարեալ ընկեցին կոհակք զոյովս ի հանդիսատեսիցն որ հուպ առ Վիրգինէ ձեպէին մեր-ձենայ, որպէս և նաւագնն որ ի յոյ ընքացեալ՝ ապրեցու-ցանէլ զնա նկրտեր : և սա ինքն մագապուր գերծեալ ի ստոյգ մանուանէ՝ ծունր էդ յաւագին և ասէ . « Ո՛վ Տէր, դու զիմ զկեանս փրկեցեր, այլ ևս մտաղիւր դնէի զսա ի վերայ օրիորդին պատուականի որ չկալաւ. յանձին մերկանայ իբրէս զիս : »



Իմնիկիոս և ևս ի բաց քարշեալ կորգեցաք յայեաց անտի զչուսուականն Պօղ՝ կիսահագագ բայացեալ, և արիւն գուն-դագունդ ընդ բերանն և ընդ ականջսն հոսեր : Ձնա քաղա-քապետն ի խնամս վիրաբուժից արար ապաստան, և մեր ի խոյգ և ի խնդիր էլաք ընդ ծովեզրն տեսանէլ քե բերիցէ՛ արկցէ՛ արդեօք ծովն ի դուրս զմարմին Վիրգինեայ. այլ զի

յեղակարծում պահու, որպէս յամպրոպայոյզսն սովոր է պատանել, հողմոյն բռնութիւն յայլ կողմն շրջեցաւ, ասեաք ցմիմեանս անհնարին տրտմութեամբ զի էս ոչ զբաղմանն պարտիս մարբասցուք ուրեմն հատուցանել չարաբաստիկ օրիորդին : Եւ հեռացեալ ի բաց գնացաք ի տեղուոջէ անտի յուսահատք. էս յայնմ նաւաբեկութեան յորում արք բազումք լեալ էին ծովակուր, ամենեցուն միտք ընդ Վիրգիւնեայ կորուստն շուարեին. էս ոմանք էսս ի տեսիլ բազմադէտն վախճանի առաքինւոյ օրիորդին՝ ընդ վերնախնամ Տեւջութեանն անգամ գոյութիւն գոգցես Երկմտեին. քանզի էն էն արդարեւ ադետք յաշխարհի այնպէս ահագինք էս յանպարտս կրեալք, զի էս գառն իմաստնոյ զիտէն սասանեցուցանել զյոյս անվկանդ :

Իսկ գՊօդ որ տակաւ ուշաբերեալ կազդուրեր՝ տարեալ էս եղեալ էին ի միում ուրեք ի մերձակայ տանց, մինչէս մարբասցին յիւրն հասուցանել բնակարան : Եւ էս յետս անդրէն դարձեալ գնացի ընդ Դոմինիկեայ, զի պատրաստ արարից գմայրն Վիրգիւնեայ էս զբարեկամ նորին ի լսել զգոյժ չարադէտ արկածին : Այն ինչ մխեալ էր մեր ի բերան անդր ծործորոյ Լատանենեացն գետոյ, ասացին մեզ հնդիկք ոմանք զի նշխարս բազումս զնառուն խորտակելոյ ընկեցոյր ծովն ի ծոց անդր ի հանդիպոյն : Փութացաք իջաք անդր, էս յառաջ քան գամեայն ինչ հարաւ յաջս իմ դիակն Վիրգիւնեայ. էս կիսով չափ մարմնոյն ընդաւազեալ կայր ի նոյն դիրս՝ յորում էս տեսաքն զնա ի պահու անդ սուգանելոյն : Տիպք կերպարանացն ոչ յոյժ խաբարեալք էին : Կափուցեալ էին ականդիքն, այլ գուարբութիւն դեռ. էսս ի ձակատին փողփողէր. միայն մահուանն լրթագոյն մանուշակք խառն երեսէին զայտիցն նորս ամօթագեղն վարդիւք :

Մի ի դաստակացն զհանդերձիւքն արկեալ կայր, էս միւսն որ գարտիւն՝ ուժգին մածեալ էր էս բրտացեալ : Բազում ճգամք բացի զայն հագիւ էս ի բաց հանի գտփիկն գոր ունէր, էս ապշութիւն անհնարին կալաւ. զիս յորժամ նկատեալ տեսի զի կենդանագիր Պօղայ էր այն, որում էս բան տուեալ էր ջրբանել զայն Երբէք մինչէս ցվախճան : Ընդ այն յետին նշանակ հաստատու-

քեան է. սիրոյ օրիորդին եղկելոյ լացի դառնապէս : Իսկ Գոմինիկոս գլանջան բախեալ ծեծեր, է. ցառագին գոջմամբ ճայնին



գայերս հնչեցուցաներ : Բարձեալ տարաք գլխակն Վիրգինեալ ի խրճիթ ուրեմն ձկնորսի, է. ապսպարեցաք զնա ի պահ զգուշութեան կանանց մայապարից, որ է. խնամ կալան լուանալ զնա :

Մինչդեռ նորա գոխրականն գայն սպան հարկանեին, մեր դողոջ ընրացիւք լուղի անկեալ ի բնակարան անդր էյար, է. տեսաք զի Լարուր տիկին է. Մարգարիտ յաղօքս կային՝ ակն ունեյով զրուցաց նառն : Լարուր տիկին անդէն ընդ տեսանէյն զիս՝ ճայն բարձեալ ասէ. « Ո՞ւր իցէ դուստրն իմ, ո՞ւր սիրելին իմ դատրիկ, ճվ որդեակ : » Ե. իբրէս էտես զանբարբառ լուրիւնն իմ է. զարտասուս, ոչ էսս ինչ երկմտեաց զընարկածսն, է. անդէն հեղձամղձուկ լեալ փղձկեր, է. ի ցառանհնարինս համակեր. է. ոչ այլ ինչ կարացեալ յօդի բարբառ՝ հառաջանս է. հեկեկանս արձակեր : Իսկ Մարգարիտ կական բարձեալ գոջեր. « Ո՞ւր իցէ որդեակն իմ, զի է. զի ոչ տեսանեմ զորդեակն իմ. » է. անկառ քալացեալ : Գիմեցաք աս.

նա. Եւ իբրեւ անձին զգաց փոքր մի, յառատարիւմ արարի նմա զի կենդանի է Պօղ, Եւ զի քաղաքապետն տայ խնամ տանել նմա : Եւ այն ինչ նորա միտքն յինքն եկեալ էին, փութացաւ զսիրունին իւր յանձանձել, որ ստեպ ստեպ նուաղեալ անկաներ Եւ կայր մնայր անբարբառ :

Զգիշերն ի բուն ի դժոխքմբեր վիշտս այսպիսիս անցոյց Լաբուր տիկին. Եւ Ես գերկարութիւն երաշխեպիցն նկատեալ խելամուտ լինելի զի ջիբ Եւ ջիբ ինչ ցաւ յաշխարհի որ ընդ մայրէ, նւոյն մորմորանաց գայցէ ի կշիռ : Յորժամ ուշաբերեր նա : զաչսն ընդ երկինս ձգեալ պշնայր անքրիբս Եւ կսկծագինս Սիրունին իւր Եւ մեր գնեռս նորա ի մերումս կայեալ ձմկեաք, խանդակաք յորչորջանօք ձայնեաք առ նա, այլ ի գուր ամենեւին. քանզի իմանայր իսկ ոչ նա գիտաստիսն զայնոսիկ նախնւոյն մերոյ մտերմութեան, Եւ ի նեղամղձուկ յանջացն ոչ այլ ինչ լինէր լսելի՝ բայց դառնահառաջ նեծութիւնք :



Ի վաղիս անդր ընդ առաւօտն բարձեալ բերին դեսպակաւ զՊօղ : Ուշաբերեալ իսկ էր պատանւոյն, այլ բան ինչ յօղէ ոչ զօրէր : Սակայն տեսաւորութիւն նորին ընդ մօրն Եւ ընդ Լա-

բուր տիկնոջ՝ յորմէ խիբայի եւ գառաջինն՝ սփոփական եւս գոռաւ նոցա քան զամենայն հոգս խնամոց իմոց. քանզի ճաճանջ իմն մխիբարութեան ծագեաց ի դեմս կերպարանաց մարցն հիբացելոց : Երկորեան եւս մատուցեալ նստան նմին առ ընթեր, եւ գիրկս արկեալ համբուրեցին զնա . եւ արտասուք նոցին որ մինջէն ցայնժամ առ ցաւոցն սաստկութեան արգելեալ իմն էին՝ անդէն աղբերացան : Իսկ եւ իսկ եւ գիրքսն արտասուս ի նոցայն խառնեաց Պօղ . եւ այնպէս սփոփեցաւ բնութիւն յանձինս ջուռառականացն երեցուն . ապա քմբբութիւն յարատեւակ յաջորդեաց դառնակսկիծն մորմոքանաց նոցա , եւ արկ զնոքօք նինջ ծանրաբբուն՝ որ արդարեւ իսկ մահահանգոյն իմն էր :

Պ. Լա-Պուրտոնէ ազդ ինն արար ի ծածուկ զի ըստ խրում հրամանին ի քաղաք անդր բերեալ էր դիակն Վիրգիւնեայ , եւ անտի հանդերձեալ եւ տանել յեկեղեցի Կիտրոնեաց : Աճա-



պարեալ իջի եւ ի Փոր-Լուի , եւ տեսի անդէն զբնակիչս համօրէն ամենայն քաղից խռուսն եկեալս անդր ի յուղարկաւորութիւն , իբրու այն քէ զցանկալին քան զամենայն ինջ կորուսեալ էր կողմս այս : Որ ի նաւահանգստի անդ էին նաւք՝ վայրահակ

գառազաստակալսն ունէին, և գրոշսն խոնարհեալս առ ի սուգ, և պահն ընդ պահն հրետարձակ լինէին : Դմբանից գորականք յառաջընթաց յուղարկաւորութեանն լինէին՝ վայրահակ գիրացանան ունելով, բմբուկք նոցին արջնարոյրն ծածկեայք նուարտանօր՝ դոփխն տխուր և եք հանէին. և էր տեսանել վնասութիւն և մորմոք յոյժ ի դէմս անդ արիագունդ մարդկանն, որոց յոյժ անգամ յաջս եղեալ էր գման անխռով կերպարանօք ի մարդախոշոշ պատերազմունս : Ուրեակ օրիորդք յազնուատոհմից անտի կղզոյն սպիտակս զգեցեալ և ոստս արմաւենեաց ի ձեռան ունելով՝ բարձեալ տանէին գծաղկասփիւռն մարմին առաքինւոյն իւրեանց հասակակցի : Զնետ նոցա ընթանալը մատաղերամ մանկտոյ դաս՝ երգս առեալ ի բերան. և զկնի նոցա գնալին առագանի կղզոյն համօրէն և սպայակոյտն ողջոյն, և ապա քաղաքապետն ինքնին, և զնետ նորա ամբոխ բազմութեան ժողովրդեանն :



Զայս ամենայն այս օրինակ կարգեալ և կազմեալ էր առաքիկ տեսչութիւն կղզոյն ի պատիւ առաքինւոյն Վիրգիլեայ : Բայց իբրէն ժամանեալ էհաս մարմին նորա յոսո լերինդ ուստի լերեւան գալին հիւղքն երանաւետեայք կենդանութեամբն նորա,

Եւ յայնժամ անյուսութեամբ լցեայք մահուամբն նորա, բնա-
խակ ամենայն հանդէան եղերական վեր ի վայր եղեալ վրդովե-
ցաւ. յուէցին երգցն Եւ օրհնութիւնք, Եւ ոչ այլ ինչ լինէր լսելի
անդանօր՝ բայց ձայնք հառաչանաց Եւ հեկեկանաց :

Յայնժամ ընթացեալ հասանէին Երամք Երամք օրիորդաց ի բնա-
կարանաց անտի մօտաւորաց, Եւ հպեցուցանէին ի դագաղս Վիր-
գիւնեայ վարչամակս, օրհնարանս Եւ պսակս ծաղկանիւսս՝ զբա-
րէխօտութիւն նորին իբրէս զսրբոյ մաղբէլով անձանց : Մարբն
հայցէին ի Տեսուհե՝ հանգոյն Վիրգիւնեայ պարգեւէլ իւրեանց
դստրիկ, Եւ պատանիք մտերիմս հանգոյն նմին անյեղլիս .
աղբատր բարեկամս գորովագութս իբրէս զնա, Եւ ստրուկք՝
տիրունիս քաղցրաբարոյս որպէս էր նա :

Իբրէս Եկն Եհնաս մարմին Վիրգիւնեայ ի դիրս հանգստեան
ի բաղմանն տեղի, խափշիկ կանանին Մատակասքարայ Եւ
Քափրաց Մոզամպիք աշխարհին եղին զնովա տառաղանս
տառաղանս պատարունս պտղովք, Եւ զմերձակայ ծածոցն
պատտառս կախեցին ըստ սովորութեան երկրին : Հնդիկք
Պենկալայ Եւ ծովեզերացն Մայապարայ վանդակս բերին լցեալս
բազմովք, զորս Եւ յազատութիւն արձակեցին առ դիակամբն
նորա : Այսպէս անս սիրեցելոյ անձին կորուստ ի գորով խան-
դաղատե գազինս ամենայն. Եւ այսքան է գորութիւն չարա-
բաստիկն առաքինութեան, զի շուրջ զշիրմաս իւրով ի մի վայր
ածեալ բոլորե գլրօնս համօրեն :

Հարկ եղես պան զգուշութեան կարգել զգերեզմանան, Եւ
ի բաց առնել անտի զոմանս ի դստերաց աղքատաց տեղոյոյ՝
որք բունն գորութեամբ գուն գործէին զանձինս ի ներքս հոսել,
Եւ ասէին. « Չիք մեզ այսուհետեւ մխիթարութեան ինչ ի կեն-
ցաղումս ակն ունել, Եւ լաւ է մեզ մեռանել ընդ միայնումն
մերոյ բարերարի : »

Եւ քաղեցին զՎիրգիւնէ առ Եկեղեցեան Կիտրոնեաց յա-
րեւմտից կուսե, առ ոտս շամբից հնդիկ եղեգանց, ուր Եւ սո-
վորն էր ի գնալ իւրում յունկնդրութիւն սրբոյ պատարագի
ընդ մօրն Եւ Մարգարտի՝ առնույ հանգիստ, առընթեր նստելով
Պօղայ՝ գոր եղբայր իւր յայնժամ առձայներ :

Պարձ արարեալ ի տխրագգեաց հանդիսե անտի, եկն եմուտ այսր Պ. Լա-Պուրտոնե՝ ընդ իւր ունելով զբազմութիւն իւրոցն պաշտօնեից. գամենայն շան ի գործ եարկ օգնական լինել Լարուրի տիկնոջ եւ բարեկամի նորա : Հակիրճ՝ այլ զայրագին բանիւր խօսեցաւ. զապառուս մօրաբեռնէն. եւ առ Պօղ մատուցեալ բանս մխիթարութեան բազումս խօսեցաւ, որովք համարեր սփոփել զնա. սսե. « Վկայէ ինձ Աստուած զի ցանկայի էր ինձ զքո եւ զքոյոյ ազգատոհմիւ տեսանել զբարեբաստութիւն : Ո՛ր բարեկամ, հարկ է քեզ ի Պաղդիա զնալ. եւ ես հոգ յանձին կայայց ի պաշտօն ինչ պետութեան մուծանել զքեզ : Ի մեկնելն քո աստի՛ յիմ վերայ եղիցին խնամք յանձանձանաց մօր քո, գոր իբրեւ զիմ մայր այնպէս հոգացայց : » եւ գոյզ ընդ բանիցն աջ կարկառեաց առ նա. բայց Պօղ ի բաց զիւրն ամփոփեաց, եւ յետս զգուխն դարձոյց ջտեսանել զնա :

Իսկ ես ի բնակարանի անդ ջարաբաստիկ սիրունեացն ցանկորդէի սատարել նոցա եւ Պօղայ յոր ինչ ձեռնհասն էի : Իբրեւ եօրնեակք էրէք անցին ի վերայ, կազդուրեցաւ Պօղ ի շրջել.



բայց եւ ըստ կազդուրել մարմնոյն քախիծքն իւր անեալ յանելու ին : Անկարեկիր էր ամենայնի. աչք իւր կկոցեայք, եւ առ ամենայն հարցմունս որ առ նա լինէին՝ անխօս կայր եւ ան-

բարբառ : Տիկինն Լաբուր որ ի դրունս մահու դեգերեր՝ ասեր
ցնա բազում անգամ . « Որդեակ իմ , քանիցս անգամ եւ տեսից
գրեզ՝ զՎիրգիւնիայն իմ բուեցայց տեսանել : » Ի յուր անուանն
Վիրգիւնեայ գողդանի հարեայ ի բաց խուսեր ի նմանե , ոչ ինչ
միտ դնելով աղէքսանաց մօրն գի առ սիրուհին իւր գնայցե :
Ի պարտեզ անդր երբայր նստեր մենացեայ առ բնով բորենույն
Վիրգիւնեայ՝ յաղբերակն նորին զաջս իւր յառեայ անբարբառի :
Վիրաբով քաղաքապետին որ դարմանեայ էր խնամով մեծաւ
զնա եւ գտիկնայսն գերկոսին , սասց մեզ եքե առ ի փարատելոյ
ի նմանե գետան գայն բախիծ տրտմութան՝ պարտ է բոյլ
տայ նմին գործել որ ինչ հաճոյ իցե նմա , եւ այսու եւեթ մար-
բասջիք գանբարբառ լուսթիւն նորին լուծանել :

Նդի եւ ի մտի առնել ըստ բանից նորա : Իբրեւ այն ինչ
փոքր մի ոգի առեայ կազդուրեցաւ Պօղ , անդին հեռացեայ
մեկնեցաւ ի բնակարանէն : Եւ քանզի եւ ոչ գատջ էի բնաւ
ի հետոց նորա , պատուիրեցի եւ Դոմինիկեայ հետեւել մեզ հան-
դերձ պաշարով պարենից : Իջանելով իջաներ պատանին ընդ



լեառնս ընդ այս , եւ բերկրութիւն եւ կորով վերածնանել ի նմա
բուսին : Կայաւ գառաջինն գճանապարհն Կիտրոնեաց . եւ
իբրեւ մօտ եղև յեկեղեցի անդր ի ծառագարդն ճճմէյիս հնդիկ
եղեգանց , դեմ եղ ի վայրն որ այն ինչ էրեւեր քրքրեայ . անդ


ծուներ եղեալ է. գաջսն ընդ երկինս ամբարձեալ՝ ժամս ձիգս
էկաց յաղօթս : Այս գործ նորա զգաստանայոյ ուշոյ մտացն
ինձ բուեցաւ ասեռաւոր . քանզի էս նշանակն այն քաջայոյս
վստահութեան յէակն գերաբուն յայտ առնէր զի տակաւ անձին
զգաստ լինէր պատանեակն : Գովինիկոս էս էս հանգոյն նմին
ի գունձս եկեալ աղօթակից եղար նմա . մինչէս ասպա ոչ ինչ
գոզցես ուշ արարեալ մեզ, յարեաւ յաղօթիցն, էս ելեալ գնաց
ընդ հիւսիսակողմն կղզոյս : Եւ քանզի գիտակ իսկ էի զի ոչ
միայն անգիտանայր նա զվայր բաղմանն Վիրգինեայ, այլ էս
քէ բնաւ հանեալ իսկ իցէ մարմին նորին ի ծովէ ցէր հմուտ,
հարցի ցնա էրէ զի է զի առ ոտս հնդիկ եղեգանցն աղօթեցէր առ
Աստուած . էս ասէ ցիս . « Բանիցս անգամ անդր ի միասին
զնայար : »

Յառաջ զընթացսն վարեալ՝ ժամանեաց ի մուտս անտառին,
էս էհաս ի վերայ մեր զիշեր : Անդ յորդորեցի զնա առնուլ ինչ
կերակուր որպէս էս էս առնուի . էս ասպա ննջեցար ի դայարւոջն
ընդ միով ուրէր ի ծառոց անտի : Ի վաղիս անդր ինձ այնպէս
բուեր էրէ յետս ընդ կրունկն ախորժեսցէ դարձ առնել . էս նկա-



տեայ հայեցաւ իսկ գամ մի ընդ էրեսս դաշտին լէկեղեցի
Կիտրոնեաց էս յերկայնամիգ ձեմելիս հնդիկ շամբիցն, էս
խլարտեր իմն անդր երբայոյ աղագաւ . սակայն անդէն յանկար-
ձակի յանտառն յեայ միջամուխ դիմեաց դարձեալ ընդ հիւ-

սիսի : Խեղամուտ եղէ եւ խորհրդոց կամաց նորա, եւ ջանահնար լինելի շրջել զնա ի մտացն, այլ ընդ վայր : Հասեալ ժամանեցաք զմիջառութի յՈսկեփողին քաղ : Անդուստ շտապ տագնապաւ. եջ առ. ափն ծովուն հանդէպ տեղւոյն յարում խորտակեալ սուգան Սեն-ժերան : Եւ իբրեւ. ետես զԱմպարի կղզին եւ գանցս նորա որ զօրէն հայերոյ միապաղաղ կայր, գոջեաց եւ ասէ. « Վիրգինէ, ճմ սիրեցեալդ իմ Վիրգինէ. » եւ անդէն անկաւ քայացեալ :



Իոմինիկոս եւ եւ բարձեալ տարաք զնա ի ներքս յանտառն, եւ հագիւ մարբացաք անձին զգաստ զնա առնել : Եւ իբրեւ ուշաբերեաց՝ կամեր անդրէն ի ծովափն կոյս դառնալ. բայց մեր աղերս արկաք առ նա մի եւս նորոգել զիւր եւ զմեր ցասս

անագորոյն յիշատակօք, եւ ընդ այլ կողմն զերեսս հաստատեաց
Էրբայ : Եւ զն յերկարեմ. այսպէս անա գառուքս ուր քափ
առեայ շրջեցաւ. ընդ ամենայն վայրս յորս դեգերեայ էր ընդ
իւրում սննդակցին : Անց գնաց ընդ ուղին ընդ որ Էրբեայ
էր Վիրգինէ հայցել ներումն աղախնոյն Սեաւ-Գետոյ. Ետես
Եւ գեգերս գետակին Յռաստեանց ուր զկայ առեայ էր Վիր-
գինէ՝ ոչ Էւս զօրելով ընթանայ, որպէս Եւ զվայր անտառին
յորում աղամողեայն էր նորա : Համօրէն ամենայն տեղիք որ
յուշ ածէին նմա գանձկութիւնս, զխաղս, զճաշիկսն, զբարեգոր-
ծութիւնս Էրիցս սիրելոյն իւրոյ, ատուակն Երկայնանիստ
Լէրին, տնակն իմ, քարավազն մօտակաց, սեխարմաւենին
տնկեայ ի նմանէ, մարմանդն յորում սիրէր նա վագվագել,
կիցք անտառին յորս ախորժէր Էրգս գեղգեղել, առ հասարակ
զգերարտօսքն յաջաց նորին կարեցուցանէին. Եւ գանգիւնք
վայրացն որ յայնչափ նուագս զհրճուողական ճայնս ցնծութեան
Էրկոցունցն միանգամայն հնչեցուցեայ էին, ոչ Էւս այլ ինչ
կրկնէին անողրէն բարբառ, բայց զայս միայն. « Վիրգինէ, ճվ
սիրեցեայդ իմ Վիրգինէ : »

Այնու վայրագասուն Եւ քափառական կենօրն սորեցին աջք
նորա, զոյն Էրեսացն հատաւ, Եւ մարմին նորա ծիւրեայ
ծնգեցաւ : Զգածունն մերոցս աղետից սովոր է կրկնապատիկ
առաւելույ բերկրականացն մերոց կրից յիշատակօք, Եւ աճեայ
բազմանան ցար յանմարդի ամայութեան. զայս զիտելով իմ՝
խորհուրդ յանձին կայայ ի բաց հեռացուցանել զհեզն իմ բա-
րեկամիկ ի վայրաց անտի որ յուշ առնէին նմա զկորուստն զոր
արար, Եւ ածել տանել զնա ի տեղի ուրէք կղզւոյն յորում միտք
նորա ի բազում ինչ իրս զբաղնուցուն : Սմին իրի առեայ տա-
րայ զնա ի բնակաշէն բարձունս Ռիլիէմս բաղին ուր ոչ էր
նորա Էրբէք գնացեայ : Յայնմ վայրի շարժմունք մեծամեծք Եւ
բազմագանք յոյժ յինէին ի պատճառս մշակութեան Եւ տուր-
Էւտիկ փոփոխմանց : Անդ ատաղճագործաց բազմութիւնք
գերանս հարբէին ի փայտից, Եւ այք սղոցեայ տախտակս յօրի-
նէին. կտոր ոչ սակաւք Էրբէեկս զճանապարհաւն առնէին,
Էզինք Եւ ճիւղն յընդարձակածաւալ արօտսն պառակ պառակ

արածէին, Եւ արտորայն ողջոյն զարդարեալ էր բնակութեամբ : Առ գետնոյն բարձրութեան մարբեր մշակել ի տեղոջ անդ զբազմադիմի ազգս բուսոցն Եւրոպայ :

Աստ Եւ անդ տեսանել էր ի դաշտին հունճս ցորենոյ, մարմանդս էյակի ի ծառամէջս մայրեացն, Եւ ցանկս վարդենեաց երկուստեք ճանապարհին : Օղոցն գովութիւն ճգտումն ջղաց տայով՝ սպիտակացն կենդանութեան մեծապէս ձեռնտու լինէր : Եւ ի բարձանց անտի որ ի միջակի կղզոյն ամբառնային՝ ի մեծամեծաց շուրջ բոյրեալ սյուրակաց, ոչ էր զականել զծովն, Եւ ոչ զՓոք-Լուի, Եւ ոչ զԵկեղեցին Կիտրոնեաց, Եւ ոչ մի ինչ որ յուշ Պօղայ ածիցէ զՎիրգիլնէ : Այլ Եւ յերինքն իսկ որ ընդ Փոք-Լուի կոյս երկայնեալ տարածանէն բազուկս յոգնադիմիս, ի կուսէ դաշտացն Ուիլիէմսի հրուանդան Եւէր երկայնատարած ուղղագիծ Եւ ուղղամիզ առնեն առաջի, յորմէ սարացեալ ի վեր ամբառնան բրգունք բազումք՝ վարեխաց յամպս ծրարեալք :



Եւ անա ի դաշտավայրսն յայնուսիկ առեալ ածի Եւ զՊօղ : Յար ի շարժման ունէի Եւ գնա. զցայգ Եւ զցերեկ յարեռ. Եւ յանձրեի, կամառորապէս խորհրդով մոյրեցուցեալ գնա ի մայրիս Եւ յանդս Եւ ի ծմակս, որպէս զի հնարեցայց զմիտսն

գբօսեցուցանել մարմնոյն խոնջութեամբ, և յայլ ինչ յեղաշրջել զխորհուրդս մտացն՝ վայրացն անգիտութեամբ յորս քափ առեալ շրջեար : Սակայն զիտե սիրելոյն ոգի՝ ամենայն ուրեք գտանել զմետս իւրոյ սիրեցելոյն : Ոչ տիւ և ոչ զիշեր, ոչ վայրք անմարդաճայնք, և ոչ շոխնդն շինից և բնակութեանց, նա և ոչ ինքն ժամանակն որ այնչափ յիշատակս յափշտակեալ տանի ի կորուստ, ոչ զօրեն ի բաց պարութել զնա անտի : Այսպէս և ասեղն հպեալ ի խանգումանդ՝ որչափ և վրդովեալ տատանիցի, սակայն իսկ և իսկ ընդ հանդարտելն՝ ի բեռեռն կոյս յորմե ձգեայն է՝ առնե գդարձ : Իբրեւ հարցանելի ցՊօղ յաղամող զնացս մեր ի դաշտս Ռիլիեմսի, « Յն՝ զնայցեմք մեր այժմիկ, » զերեսան ընդ հիւսիսի դարձուցեալ ասեր. « Ահաւանիկ են լերիւնք մեր. անդր արասցուք դարձ : »

Յայնժամ ի միտ առի զի գուր և ընդունայն էին ամենայն հնարք իմ ի սփռփել զնա, և քե ընդ կիրս ցառցն իսկ մնայր ինձ մարտեյ՝ բովանդակ զկորով մտացս և բանից ի գործ արկանելով : Ետոս նմին պատասխանի և ասեմ. « Եւ կարի իսկ քաջ աւանիկ լերիւնքն յորս քոյդ բնակեր սիրուն Վիրգինեահաւադիկ է և ղիմացդ կենդանագիր գոր նմայն տուեալ էիր, և գոր յոգուցն պարգել ի սրտին վերայ ուներ, այնր սրտի որոյ և յետին բաբախմունք վասն քո եղեն : » Եւ հանեալ ցուցի նմա զկենդանագիրն փոքրիկ գոր նա ինքն տուեալ էր Վիրգինեայ առ աղբերասն քոքենեաց : Ի տեսիլ նորին՝ խնդութիւն մահագեկոյց փայտասակեաց յաջս նորա : Կրուցեալ ձեռօրն բուռն ենար զայնմանե կարողին, և ի շրքունսն տարա : Յայնժամ զելաւ սիրտ նորա, և յարիւնտուշտ ականողխան ոտնակատեալ կացին արտասուք և ոչ զօրէին հոսել :

Ասեմ ցնա. « Լուր ինձ, որդեակ, յուր ինձ որ բարեկամս եմ քո, և Վիրգինեայ ևս էի բարեկամ, և յակնկալիս անդ յուսիցն ձերոց բագում անգամ փոյր յանձին կալայ սրտապնդել զձեզ ընդդեմ անակնկալ արկածից կենցաղոյս : Զի՛ն այսպէս դառնահառաջ աշխարես. միքե գրոյլն աղեստս, կամ քե զՎիրգինեայ արդէօք :

« Զքոյին աղեստս : Այո, արդարեւ, մեծամեծք են : Կորուսեր

դու գտիրելին յօրիորդս, որ կարողն էր գերապանձ լինել ամուսին :
Նա գանձին իւրոյ զշահս օգտի հանեալ էր քեզ ի նուէր, եւ
մեծափարթամ ճոխութեան զքեզ արարեալ նախամեծար, զքեզ
միայն իւրումն սուաքինութեան համարելով տրիտուր : Բայց
զի՞ գիտիցես էրէ յորմէ ունեիր դու սկն անխառն բարեբա-
ստութեան, նոյն չղառնայր յոյովագունից լինել քեզ աղետից
աղբիւր : Անինչ էր նա եւ անժառանգ. եւ յայսմ հետէ մեռացդ
վաստակօք հասաներ քեզ զկեանս ձեր պաճարել : Գառնայր



գայր նա փափկասուն հրահանգօքն զրգեալ էւ զգութեալ, եւ
իւրովրն աղետիւք էւս քան զեւս արիացեալ. սուաջի կայր քեզ
զհաշել մաշել նորա տեսանել հանապագ, փոխանակ զի գոգի
ի բռին կայեալ ճգնելոց էր լինել քեզ վաստակակից : Ի ձնանել
նորա քեզ որդիս՝ յանելեալ բազմանային միշտք մեր երկոցունդ,
զի դժուարին լինէր ձերատաձել զձնողս մեր եւ միանգամայն
գազգատոռնմդ նորածին :

« Ասիցես արդեօք ցիս. « Քաղաքապետն մեռնկալու լինէր
մեզ : եւ զի՞ գիտիցես էրէ ի գաղթականի յորում յար ի փոփոխ-

ման կան տեսուչք՝ ցանց Լա-Պուրտոնէք մեզ պատահեցեն :
Եւ քե չգայցեն այսր իշխանք վատշուերք եւ վատախորհուրդք,
եւ քե առ ի դոյզն ինչ օճան նպաստից ի նոցանէ շորթելոյ չհար-
կեր ամուսին քո քծնել զնոքօք : Ապաքեն էքէ յանկարծ տկա-
րացեալ գրէր նա, դու եղկելի լինէիր . եւ էքէ անդրդուելի կայր
մնայր ի գգնաստութեանն, դու եւս ի կարօտութեան մնայիր : Եւ
երանի էր քեզ էքէ ի պատճառս գեղոյ նորին եւ առաքինու-
թեան ոչ եւ նորին իսկ հայածէին գրեզ յորոց ակն ունէիր օգնա-
կանութեան :

« Ասիցես դարձեալ . սակայն եւ յանընչութեան անդ անկապ-
տելի մնայր լինեն բարեբաստութիւնն որով պաշտպան կայի
հատորոյ սրտիս, որ սովորն է եւ ըստ ջափու մեծութեան տկա-
րութեանն պնդագոյնս յարել ի մեզ . մխիթարելի զնա իմովս
անձկութեամբ, խրախ առնելի զնա իմովս տրտմութեամբ, եւ
վշտօք իրերաց յաւելոյր ի մեզ փոխադարձն սեր առ միմեանս :
Արդարեւ իսկ առաքինութեան եւ սիրոյ բաժինք են վայելքդ
այդորիկ դառն բերկրանաց : Բայց նա ոչ եւս է . եւ մնան քեզ
որ յետ քո սիրելիք էին նմա քան զամենայն՝ նորա մայրն եւ
բոյզ, գորս ցարք քո անմխիթարք իջուսցեն ի գերեզման : Բա-
րեբաստութիւն քեզ գրեա գօրավիզն նոցա լինել . գտոյն եւ Վիր-
գիկեալ եղեալ էր ի մտի :

Որդեակ իմ, բարեբաստութիւն առաքինութեան բարերարու-
թիւնն է . եւ չիք այլ յերկրի բարեբաստութիւն ստոյգ եւ մե-
ծագոյն քան զնա : Խորհուրդք եւ ակնկալութիւնք բերկրանաց,
հանգստեան, լիութեան, փափկութեան եւ փառաց ոչ են տը-
ւեալ մարդոյ տկարի, պանդխտի եւ անցաւորի : Տես, նրպէս
ոտնփոխ մի եւէք ի մեծութիւն անդր յանդնդոց յանդունդս խար-
դաւանեաց գմեզ : Դու հակառակեցար այնմ, քաջ է . այլ ո՞վ որ
ոչ կարծեր զի Վիրգիկեալ ուղեւորութեանն էր յերջանկութիւն
էին քեզ եւ նմա : Հրաւերք բազմագանն եւ հինասորց ազգակցի,
խորհուրդք քաղաքապետի իմաստնոյ, խնդամտութիւնք գող-
թականաց համօրեն, յորդորք եւ պատուեր առն քահանայի
պատճառք եղեն աղետիցն Վիրգիկեալ : Այսպէս ահա ի կորուստ
անձանց անապարեմք մեք՝ պատրեալք ի խոհականութենէ ան-

գամ մերոցն վարջաց : Լաւ եր ապաքեն ոչ ինչ բնծայել նոցին հաւատս, եւ ոչ բնաւ ունկն մատուցանել ձայնի եւ յուսից խաբուսիկ աշխարհիս . եւ սակայն չիք որ ի բազմութենէ որերոյն որք ընդ քիրտն գան ի դաշտավայրս յայտասիկ, եւ որ ի խնդիր ճոխութեան ի Հնդկիս գնան տարադէմ, եւ կամ որք անդէն յարեանց իսկ աշխարհին յերոպա վայելեն յանդորրու ի վաստակս ձգանց սոցին, չիք որ չիք ուրէք ասեմ որում չիցէ պահեալ կորուսանել վաղ կամ անագան գկարի իսկ սիրելին անձին իւրոյ, գմեծութիւն, գճոխութիւն, գկին եւ գորդիս եւ գբարեկանս :

Յոյովից ի նոցանէ դեպ լիցի ընդ կորստեանն աղետից լծորդել եւ գանձանց անխորհուրդ գնացիցն գլիշատակ : Իսկ դու մտախոն յանձնից լեալ՝ ոչ գուցես ինչ որ ստգիւտ խղճին քում բերիցէ : Հաւատարիմ կացեր դու ի խոստմանդ : Ի ծաղկի հասակիդ՝ գառն իմաստնոյ բերեր յանձին գլտհականութիւն, ոչ ինչ խոտորեալ ի բնութեանն ազդմանց : Քոյինքդ եւէք օրինաւոր էին խորհուրդք կամաց, քանզի անարատք էին եւ անխարդախք, եւ անշահասեքք . եւ իրաւունք քո նուիրականք իմն ի վերայ Վիրգինեայ, իրաւունք՝ ընդ որս ոչ երբէք ի կշիռ համեմատութեան գային ամենայն ճոխութիւնք աշխարհի : Կորուսեր դու գնա, այլ ոչ առ քոյոյ ինչ անխոհեմութեանդ, ոչ առ գոշարադութեան եւ ոչ պատիր իմաստութեան . այլ Աստուած ինքնին այլոցն ախտիւք վարեալ՝ բարձ ի քէն գսիրելին անձին քոյ . Աստուած որ նա միայն տուեալ է քեզ գամենայն, որ տեսողն է ամենայն պիտոյիցդ քոց, եւ որ իւրովն իմաստութեամբ ջտալ քեզ տեղի ապաշահանաց եւ անյուսութեան՝ որ արգասիք են ջարեացն նիւրելոց առ ի մենջ :

« Զայս ուրեմն յաղետս անդ վշտացդ քոց մարքիս դու ասել . Յանպարտս կրեմ գայտասիկ : եւ զինչ ապա, գՎիրգինեայ գաղետս, գվախճանն նորին եւ կամ գարդի պայմանն նորին աշխարիցես : եւ նա եւս գնոյն հատայց գպարտիս գոր հարկ է քէ հատուցէ եւ տոհմիկն եւ գեղանին եւ ինքնակայք համօրէն : Կեանք մարդոյ հանդերձ ամենայն առաջադրութեամբք խորհրդոցն էլանէ վերանայ իբրեւ գաշտարակ փոքրիկ որոյ

մահն է գազարն եւ ծայր : Ի ծննդեանն իսկ պահու. ի մահ դատապարտեալ էր նա : Երանի՛ նմա զի յառաջ քան զմայր իւր էլոյժ զկենացն կապանս, եւս եւ յառաջ քան զքոյղ, յառաջ քան զքեզ, զի ջմեռաս ասեմ յոյժ մահունս յառաջ քան զհոսկ յետինն :

« Մահն, որդեակ, բարի ինչ է շնորհեալ ամենայն մարդկան. զիչէր է այն բազմահոգ առարս որ կոչի կենդանութիւն : ‘Քնով մահուն եւեթ հանգուցեալ դաղարեն’ ի սպառ. հիւանդութիւնք, եւ ցարք, եւ տրտմութիւնք, եւ արհաւիրք որ յար ի յուզման ունին զչուսառական կենդանիքս : Աղէ ի բնին առ գայնոսիկ ի մարդկանէ որ բարերջանիկքն քան զայլս բուհցին. եւ տեսցես զի ծանրագնի յոյժ գնեալ է նոցա զկարծեցեալն զայն բարեբաստութիւն. զհասարակացն մեծարանս առ տնին աղետիւք. զընչից յաճախութիւն՝ կորստեամբ քաջողջութեան. զսակաւագիւտն բերկրանս սիրելի լինելոյ՝ անընդհատ նուիրանօք. եւ բազում այն է զի ի կատարածի անդ կենաց ի շահ օգտի այլոց բոլորանուէր զոնելոյ՝ ոչ այլ ինչ տեսանէ, բայց բարեկամս նենգածետս եւ արեանառուս արեւիշուշտս :

Բայց Վիրգիլն բարեբաստիկ գտաւ մինչեւ ցշունչ վախճանին : Մինչ առ մեզս էր՝ բարեբաստիկ էր նա բնութեանն ճրիւք. եւ ի բացեալ առ ի մենջ՝ առաքինութեանն տրովք. նա եւ յայնմ հաւաոր պահու. յորում կորստեան նորին եղեար մեք ականատես, բարեբաստիկ էր տակաւին. քանզի զաջսն թէ արձակեր ի գաղթականս կղզոյս համօրէն զորս յանհնարին համակեր տագնապ եւ իրախժութիւն, եւ թէ ի բեզ ակնարկեր որ անվէհեր արխութեամբ ի թիկունս օգնականութեան նորա զիմագրաս լինելիք, քաջ իսկ ետես նա երէ քանի՛ սիրելի էր մեզ ամենեցուն եւ ցանկալի անձն իւր : Զօրացաւ նա առ հանդերձեայսն՝ կենացն իւրոց անմեղութեան յիշատակաս, եւ յայնժամ ընկալաս զմրցանակն զոր առաքինեաց պահէ Աստուած, զարիութիւն՝ քան զվտանգն զերագոյն : Զուարթ զիմօք անձնամատոյց էղէ մահունն :

« Աստուած յայն սակս արկանէ, որդեակ, զայլ առաքինի յամենայն ի վիշտս կենցաղոյս, զի ցուցցէ էրէ նմա միայնում

անկ է ի դէպն վարել նորօր, և բարեբաւորութիւն և փառս գտանել ի նոսին : Յորժամ համբաւատենց կամիցի նա առնել գոր, ի բատր մեծ ամբառնայ, և ընդդէմ մահուն ի մրցանս խրախոսէ : յայնժամ արիութիւն քաջութեան նորա յօրինակ այլոցն ընծայի, և աղետից նորին յիշատակ յագագ որ գալոցն են հարկս ընդունի արտասուաց յաւեժարար : Այս է աւասիկ անմահական արձան յիշատակի պահեայ նմին յերկրի յորում արագավախճան է ամենայն, յորում և արքայից անգամ բագմաց յիշատակք արագ արագ քաղեայ խորասուզին ի մոռացօնս յաւիտենից :

« Սակայն Վիրգիլնէ կելով կեայ տակաւին : Տես, որդեակ, ամենայն ինչ կերպարանափոխ լինի յերկրի, այլ կորնչի և ոչ ինչ : Զիք ճարտարութիւն մարդկեղեն որ զկարի իսկ զփոքրիկ մասն հիւլից յօջիւնց դարձուցանել մարբասցի : Եւ Քբբ իցէ հնար կորնչել այնմ որ հանձարեղն գտաւ, և կարելիք սիրելի, և առաքինի, և աստուածասեր, երբ տարերքն իսկ որովք զգածեայ էր՝ անկարուստք իցեն : Ո՞հ, երբ երանելի էր Վիրգիլնէ ընդ մեզ, երանելի էս է զարդիս : Է է, որդեակ, Աստուած : Եւ այնպէս յայտնաբարբառ քարոզեն զնա համագոյք, զի և հաւաստիս գոյութեանն տալ քեզ ոչ է հարկ : Արանց անզգամաց և եր գործ է յորաստ կալ յարդարութենէ անտի որ անագիւնն է նոցա : Զնա նկատես ի սրտի բում, և զգործս մեռաց նորա յանդիման աջաց քոց : Եւ կարծիցես երբ անվարձ բողոքոցս նա զՎիրգիլնէ : Համարիցիս զի նոյն զօրութիւն որ զգեցուցեայ էր զագնուականն զայն ոզի այնպիսեաւ զեղատեսիլ կերպարանաւ՝ որ հրաշակերտ ինչ արարչին քեզ բուեր, ոչ զօրեր ի բաց կորգել զնա ի միջոյ կոհակաց : Եւ քե նա որ զայժմու երանութիւն մարդկան պատրաստեայ կազմեաց օրինօր որ զանխուլ են առ ի քեն, չիցէ մեռնիսս պատրաստել և Վիրգիլեայ երանութիւն այնպիսի 'օրինօր' որ նոյնպէս անձանօրք առ ի քեն իցեն :

« Երբ յօջեսն գոյով՝ կարող ինչ էաք մտախոհ լինել, միքե մարք ինչ էր մեզ զմերն ի միտ առնուլ զեութիւն : Իսկ այժմ մինչդեռ յայսմ խաւարամած և խուսավուկ էութեանս

կայցեմք, առանկ ինչ իցեմք նախատես լինել որոց յետ մահուն պատահելոց իցեն. և ընդ զոր արդէօք արտաքս ելանիցեմք անտի : Միքե կարծա իցե Աստուած իբրեւ զմարդ հողագնտիս փոքու առ ի տեսարան զսա գործելոյ խրում իմաստութեանն և բարութեան . և միքե յասպարեզս մահուն և երկարողացաւ նա զմարդկայինս ծառայելի կենդանութիւն : Ի համապարփակ ծովուն ջիբ կարիլ ջրայ որ ոչ լի իցե կենդանեօք առ ի մեր պետս . և իբր հնար է քե ջլինիցցի ինչ վասն մեր ի խռոնէրամն կանառս աստեղաց որ գլխովքս մերովք քաւային :

« Եւ զիմարդ . աստ ուր մէքս եմք՝ միայն գուցե անհուն իմաստութիւն և աստուածելէն բարութիւն . և ի նշույլագարդ գունդսն անքիւս ի բազմութենէ, յանձայր ասպարեզս յուսոյ շուրջ բոլորեալս գնորօք ուր ոչ ամպրոպք յուզին, և ոչ գիշերք մրագնեն, բոն և բոն միայն իցե և ոչնչութիւն յախտենական : Երբ մեր, որ յանձանց ինչ ոչ ունիմք սմենելին, յաւակնիցիմք սահման ղնել զօրութեանն՝ յարմէ առեալ եմք զամենայն, յիրաւի է արդէօք ի կարծիս լինել էքե յեզերս սահմանաց ինքնակալութեան նորա դեզերիմք մէք աստեն, ուրանօք կեանք ընդ մահու, և անմեղութիւն ընդ բռնութեան մարտ եղեալ կռուին :

« Զիբ Երկբայութիւն զի է ուրեք տեղի յորում զվարճս փոխարինին ընդունի առաքինութիւն : Արդ բարեբաաստիկ է Վիրգիլնէ : Ո՛հ, էքե յօթարանէ անտի գուարբնոցն մարք ինչ էր նմա զրոյց ի մէջ առնույ ընդ քեզ, ասեր նա անշուշտ ցքեզ, որպէս և ի բանս անդ հրածելտին . « Ո՛ Պօղ, փորձութիւն է կեանք մարդոյ : Ես հաւատարիմ գտայ օրինաց բնութեան, և սիրոյ և առաքինութեան : Զծովս հատի անցի հնազանդեալ ծնողաց իմոց . ի բաց մերժեցի զճոխութիւն զի հաւատարիմ կացից ի խոստման իմում . յա համարեցայ յարեւէ անկանել քան քե զամօք նախատանաց յանձին ունել : Զընքացս իմ կատարեալ բուեցայ ևս Երկնից : Զերծայ միանգամ յաղբատութենէ, ի բանսարկութեանց, ի մրրկաց, ի տեսարանաց աղետից այլոց, և ոչ ևս խիբամ ի նոցանէ : Եւ ոչ մի ինչ ի ջարեաց որ անափետ առնեն զմարդիկ՝ ոչ լիցին լիս զամագիտ .

Ե. դու ողբան գիս : Վճիտ եմ ես ե. անայայյակ իբրեւ գմասն
ինչ լուսոյ, ե. դու այդքեն կոչես գիս ի գիշեր կենաց :



« Ո՛վ Պողոս բարեկամդ իմ. յուշքեզ առարքն բարեբաստութեան,
յորս այգուն այգուն գմայացեալք ընդ երկնիցն հեշտականու-
րիւնս, ե. վաղայարոյցք ընդ արեգական լինեաք ի կատարս
ժայռիցց ալոցիկ, ե. ընդ ուղիվածեմ ճառագայրս նորին
ծառայեալ մտանեաք ի խորս մերոցդ մայրեաց : Յայնժամ սխա-
ցեալ բերկրեաք յանձինս մեր, ե. գպատճառսն անգիտանայաք :
Յիդճսն մեր անմեղականս տենջայաք ամենեւին իսկ աջս լինել
առ. ի վայելումն երփնագարդ երանգոց արշալըջոցն. ամենեւին
իսկ հոտոտելիք՝ յըմբոշխնել զբոյրս անուշից տնկոցն մերոց.
բնաւին լսելիք՝ ի լուր գեղօնից բռջնեկացն մերոց . ե. համօրեն
ամենեւին սիրտ՝ առ. ի լիով զջափ առնույ բարութեանցդ
ալոցիկ : Եւ ահա յաղբիւր այսր ժամանեալ գեղեցկութեան
յորմէ գետանետեալ հոսս ամենայն որ ինչ հաճոյական գտա-
նիցի լերկրի, հոգիս իմ տեսանէ, ճաշակէ, լսէ, ե. շօշափէ
անընդմեջ հպառորութեամբ գայն ամենայն գոր ցայնժամ ապի-
կար գործարանօք եւեք զգայր :


« Բնքէ, սրլեգու. բառական իցէ նկարագրել գափուսն գայտսսիկ
մշտապայծառ. արեւելից յորում բնակեմս յարագութեամբ բեր-
կրանօք : Զոր ինչ միանգամ ամենակալն զօրութիւն ե. անհուն

բարութիւն հաստել կամեցան ի սփոփանս մարդոյ տառապելոյ, զոր ինչ միանգամ բարեկամութիւն անքիւ արարածոց երանակցաց զիտէ նրճուանս ազգի ազգիս ճարտարել, զայն ամենայն անխառն է. անապակ խնդութեամբ ունիմք անա ի վայելս : Հապա ժուծեա փորձանաց որով փորձիտղ, որպէս զի յաճախեսցես զբոյոյս Վիրգիլեայ զբարեբաստութիւն անպարոյր տարվանօր, է. հիմենեա. որոյ յաւերժ անշեջ կացցեն է. մնացեն շահք լուսապայծառք : Աստ զցաւս քո ամոքեցից էս . աստեն զարտասուտղ շնշեցից : Ո՛վ բարեկամղ իմ, ճ մատաշատունկ իմ փեսայ . ամբարձ զոգի քո առ. անվախճանն էրանութիւն, է. տոկ կայցիս վաղանցուկ վշտացղ քոց : »

Իմ իսկ գորովեայ է. փղձկեայ յարտասուս՝ զբաւ բանիցս արարի : Իսկ Պօղ պշուցեայ ընդ իս անքքիթ՝ գոջեաց. « Ո՛ջ էսս



է նա, նա ոջ էս էի. » է. զոյգ ընդ ցաւազին բանիցն անկաւ. նուաղեայ : Ապա գուշով եկեայ ասէ. « է. զի բարի ինչ է ման, է. զի երջանիկ է Վիրգիլե, էս էս կամիմ մեռանել՝ զի միացայց ընդ Վիրգիլեայ : » Այսպէս անա ոջ էքէ սփոփեցաւ. նա



H. Carbutt del.

Engraved at Woodcut in

լիմոցս բանից, այլ մանաւանդ յանյուստօրինն հատաւ ի սպառ :
Իբրեւ գայր որ զգետամոյցն իւր բարեկամ կամիցի ճողոպրէյ
յընկէմեոյ, եւ նա լողայ ջկամիցի, այնպէս իմն գտայ եւ ես :
Խորասոյց էր նա յանդունդս ցաւոց : Բնքէ, մանկականի տիոցն
աղետք հանդերձեն կազմեն գմարդ մուտ ի կեանս գործէյ .
Պօղայ ոչ էր բնաւ առեալ զվորձ այնպիսեաց :

Առեալ ածի զնա վերստին յիւրն բնակարան, եւ անդէն գտի
զմայր նորա եւ զվարուր տիկին ծնգեայս եւ ծիւրեայս ջար քան
գառաջինն, եւ առասել քան զամենեսեան վշտահար էր Մար-
գարիտ : Բարք եռանդունք ընդ որս սանեալ անցանէն վիշտք
բերեաք, չաղակէն մեծամեծացն ժուծկալէյ քախձանաց :

Ասէ ցիս Մարգարիտ . « Ո՛վ դրացիդ իմ պատուական . բուրք
իմն տեսանէյ ի տեսեան գիշերի գ՛վ. իրգիկն սպիտակագգեստ զի



ձեմ առեալ շրջեր ի պուրակս եւ ի բուրաստանս գուարձալիս .
եւ ասէ ցիս . « Ես յերանաւետ վայելեմ արդ հանգստեան » : Եւ
ապա մատուցեալ առ Պօղ զեղածիձաղ դիմօք՝ յափշտակեաց
տարաւ զնա ընդ իւր : Եւ մինչդեռ վակժոյժ գորդեկասս լեալ
կորգէյ զնա նկրտէի, այնպէս իմն զգացի՞ յանձին եւ ես, զի

մեկնեալ յերկրէ՝ զհետ որդույս զիմէի անպատում բերկրանօք : Յայնժամ տենչացայողոյն հրաժեշտի առ սիրուհին իմ տալ . եւ անա տեսի զի եւ նա ընդ Մարիամու եւ ընդ Դոմինիկեայ գայր զմեր կնի : Բայց զարմանք մեծաբանչ այն են , զի եւ Լաբուրի տիկնոջ նմանօրինակ երագեալ է երագ ի զիշերիս : »

Պատասխանի ետու . եւ ասեմ ցնա . « Հաւատամ ես , ն բարեկամ , զի ոչ ինչ ոչ գործի յաշխարհի առանց բոյստութեան կամացն Աստուծոյ . եւ է երբէք զի երագք ճշմարտութեան են գուշակ : »

Պատմեաց ինձ եւ Լաբուր տիկին հանգունատիպ ինչ երագ գոր ի նմին յերագեալ էր զիշերի : Իմ ոչ էր երբէք տեսեալ ի տիկնայսն յայնօտիկ նշմարանս ինչ նանբահասատ կրօնից . նորին աղագաւ . եւ յապուշ հարայ ընդ երագոց նոցին համաձայնութիւն , եւ միանգամայն ոչ եւս երկմտեցի ընդ մօտալուտ կատարումն նոցա : Առ համօրէն ամենայն ազինս երկրի գտանին այս կարծիք՝ եթէ է երբէք զի տեսեամբ զիշերոյ յանդիման լինի մեզ ճշմարտութիւն : Առագագոյնք յօրերոյ վաղընջուցն ժամանակաց այսմ հաւատացին , յորոց սակի են Աղեքսանդր , Կեսար , Սկիպիոնեանքն եւ Կատոնեանք երկօրին եւ Բրուտոս , որք ոչ ինչ տկարամիտք : Աստուածաշունչ տառք հնոցն եւ նորոց կտակարանաց բազմապատիկ ընծայեն մեզ օրինակս երագոց , որք կատարելով կատարեցան : Ես իսկ յանձին վորձոյ ուսեալ զիտեմ զի կանխագեկոյց ազդեցութիւնք են երագքն , որովք ազդ մեզ առնէ զլինելոցսն եակ ինչ խնամակալ անձանց մերոց : Եւ չիք հնար զիմադարձ կամ պաշտպան կալ պատճառաբանութեամբք իբաց որ զմարդկայնովս ի բաց վազիցեն բանիս :

Սակայն եթէ բանն մարդկային պատկեր է բանին Աստուծոյ , աւանիկ ձեռնհաս է մարդ գաղտնածածուկ հնարիւք հասուցանել զխորհուրդս կամաց իւրոց մինչեւ ի ծագս աշխարհի . եւ հիմ ապա իմաստութիւնն այն որ զտիեզերս վարէ՝ ոչ նոյնպիսիս ինչ ի գործ արկանիցէ հնարս : Բարեկամ զբարեկամ մխիթարէ նամակաւ . որ ընդ յօգնարիւ պետութիւնս անցանէ , շրջան առնու ընդ մեջ ոխերիմ ազգաց եւ ժողովրդոց , եւ ասե-

տաբէր է. յուսադիր գտանի առն միտւմ միայնոյ . ընդէր ապա ամենիշխան խնամողն անմեղութեան ոջ գօրիցէ գաղտնաշաւիղ հնարիւք ի բիկունս օգնականութեան հասանել առաքինւոյն, որ զիւրն ի նա խարսխեալ իցէ գլոյս : Միքէ կարօտիցլն նա արտաբնովք ինչ նշանօք ի կատարումն իւրոցն կամաց, նա որ ներքնով իմն ազդմամբ ներգործէ անդույ յամենայն արարածս իւր :

Եւ առ ինչ իցէ յերկուանայ ընդ էրագոց ստուգութիւն : Ի՞նչ իւրք ընդհատ յերագոյ իցէ կեանք մարդոյ որ պատարունն է վաղանցուկ է. սնուտի խորհրդովք :

Կալցի գայս որպէս է. ախորժե որ, սակայն փոյք ընդ փոյք կատարումն էառ. էրագիմոցն բարեկամաց : Յետ էրկուց ամսոց



գարմանուհւոյն ի վերայ անցանելոյ մահունն Վիրգիլեայ, գրաւեցաւ էւ Պօղ ի կենաց՝ մշտամտունչ զանուն նորին յօղելով : Յետ ուրից ասուրց զկնի որդեկին, էւ Մարգարիտ զիւրն օրհաս ժամանեալ էտես, այնու խնդութեամբ՝ գորոյ առաքի-

նութեան միայնոյ է առնույ զջափ : Գորովայիր է. խանդակար
էս նա ողջոյնս հրաժեշտի առ Լարուր տիկին, է. առհ. « Մեկ-
նիմ գնամ էս ի քէն յուսով անուշակ է. յաւերժական միութեան :
Քան զամենայն պարգէս քարեաց մեծագոյն է ման, է. յոյժ
ցանկայի : Երէ պատիժ պատուհասի իցեն մարդկայինս կեանք,
հարկ է կատարածին փառիարէյ. է. էրէ փորձութիւն, հարկ
է կարճատելոյն իղձ լինել : »

Պետութիւնն խնամ կայա. Դոմինիկէայ է. Մարիամու որ ոչ
էս ձեռնհասք էին ի սպասանարկութիւն, որք է. ոչ յոյժ յեր-
կարակեաց քան զտիրունիսն իւրեանց եղէն : Իսկ է. եղկէյի
Հաստարիմն հաշեայ է. մաշեայ՝ տեսն իւրում զոգցես եղէ.
մանակից :

ԶԼարուր տիկին առեայ ի տուն իմ ածի, է. անկարծեյեա.



իմն վսեմախոն ոգով ժուծկայեայ համբերէր նա այսբանեաց
դառնադէտ վտանգաց. որ է. ցշունչ վախճանին Պօղայ է. Մար-
գարտի մխիթարեայ էր գնոսա որպէս էրէ գնոցա աղէտիցն
էւէր մնայր նմա կրէյ գերաշխեպս : Ե. իբրէ. ոչ էես այլ տե-

սաներ զնոսին, իբրև գսիրակցորդ դրացեաց խօսեր ընդ իս զնոցանէ : Սակայն է. նա զհետ սիրելեացն գամիս մի էւեր էտես գարեւ : Իսկ վասն մօրաբեռն, փոխանակ գայնբանեաց աղետիցն վնաս զնովաս. արկանելոյ՝ աղերսեր գԱստուած բողոքիւն շնորհել նմա, է. խաղաղել զանհնարին յոյզս մտացն ամբոխման յոր անկեալ դներ, որպէս պատմեցաւ մեզ, յօրէ յորմէ յետս ի բաց առաքեաց զՎիրգիւնէ այնպիսեաւ. անողորմ զնացիւք :

Եւ ոչ յամեաց մօրաբոյրն այն անձոռնի զլստասարտութեանն իւրոյ լուծանել զվրեժ : Քանզի ի նաւուց բազմաց հասելոց հետ զհետէ լուեալ գիտացի զի խուճապք անդոհականք զկեանս է. զման գուգապէս դժոխքմբէր գործէին նմա : Էր զի զաննն իւր մեղապարտ ճանաչէր վաղամեռիկ վախճանի նագբեւոյ բոռին քեռ իւրոյ, է. մահու մօր նորա՝ որ արագ արագ ի նոյն սակս պատահեաց. է. էր զի ծափ զծափի հարեալ անձնագով լինէր՝ զի յետս ի բաց մերժեաց յինքենէ գերկոսին զջուռառականսն, որ աղարտեցին ասեր գփառս տան իմոյ նուաստախոհն իւրեանց յօժարութեամբք : Մերք էս ի գայրոյք սրտմտութեան բորբոքեալ ի տեսիլ յոգնախումբ եղկելեաց որովք լին է Փարիզ քաղաք, գաղաղակ բարձեալ գոչէր. « Եւ ընդէր ջառաքիցին դատարկապորտորդ այդոքիկ զնալ կորնչել յաշխարհս գաղբականացն մերոց : » Եւ զնովիմբ ածեալ ասեր՝ Էրէ իմաստք մարդասիրութեան, առաքինութեան է. կրօնից դասանեալք յամենայն ազգաց է. յազանց՝ զիւտք իմն են հնարից իշխանացն իւրեանց քաղաքագիտութեան : Եւ ապա յանկարծուստ ի ներհականն խարդաւանեալ մոլորութիւն, ի սնոտիապատիր գարհուրանս անձնատուր լինէր, է. անհնարին արհաւորօր լցեալ տազնապէր :

Ողորմութիւնս գուարքառատս առեալ տաներ առ մեծափարբամ միանձուսն՝ որ խրատիջք նորա էին, է. հայցեր ի նոցանէ ցածուցանել զբարկութիւնն Աստուծոյ ընչիցն իւրոց պատարագօք, իբրու այն քէ ինչքն զլացեալք առ ի նմանէ տառապելոց՝ մարբիցին հաճոյ լինել հօրն հասարակաց : Բագում այն էր զի ի ցնորս անդ մտացն նկատեալ տեսանէր գառա-

ջեաւ դաշուս հրաբորբորս, Եւ լերինս հրացայտս, յորս ճիւղադ խոժոռադէմք բաւի առեալ շրջէին՝ յանուանէ զնա կարդալով մեծաձայն : Խոնարհէր անկանէր առ ոտս խրատչացն իւրոց, Եւ ինքնին իւրում անձին տանջանս Եւ կտտանս խոշտանգանաց հնարէր ճարտարէր . քանզի երկինք, արդարադատն երկինք, կրօնս իմն զարհուրականս առաքեն առ անագորոյնս ի մարդկանէ :

Այսպէս անցոյց նա զամս յոյժս՝ մերք անաստուած Եւ մերք սնապաշտ զնացիւք՝ միօրինակ տագնապեալ յերեսաց մահու Եւ կենաց : Այլ որ վախճան արար չարադէտ կենդանութեանն այն իսկ եղէ, յոյր սակս առ ոտն հարեալ էր նորա զագդմունս բնութեան : Նոյնս բաղձագին զի մեծագանձն այն ճոխութիւն անցանելոց էր զհետ իւր առ ազգակիցս զոր ատեայր անձն իւր վասն որոյ Եւ զուն զորձեաց զյաւագոյնն օտարացուցանել ի նոցանէ մասն . այլ նոցա զմտաց նորին զցնորս ի ճահ առեալ՝ արկին զնա յարգելանս իբրեւ զխեղաշուքն ոք, Եւ զինչսն եղին յակատանի : Այսպէս անա ինչքն իսկ իւր ի կորուստ զնա յուղարկեցին . Եւ զոր օրինակ խստացուցեալ էր նոցա զսիրտ ստացչին իւրեանց, նոյնպէս այլանդակեցին Եւ զվափաբողաց նոցին զսիրտ : Վճարեցաւ ուր ուրեմն Եւ նա ի կենաց . Եւ որ չար քան զամենայն ադէտս է, ի շունչ վախճանին փոքր մի անձին զգաստ յեալ կարող եղէ խելամուտ լինել երբ մերկ կողոպուտ Եւ արհամարհ է յաջս նոցին իսկ արանց որոց կարծեօքն համարէր զընթացս վարուց իւրոց տնօրինել :

Առ երբ Վիրգինեալ առ ոտս նոցին եղեգանց գետեղեցին Եւ զբարեկամն նորա զՊօղ, Եւ շուրջ զնոքօք զորդեգորով մարս նոցին, Եւ զսպասաւորսն հաւատարիմս : Չկանգնեցան մահարձանք կճեայք զխոնարհ դամբարանօք նոցա, Եւ ոչ դրոշմեցան արձանագիրքք առաքինութեանց նոցա, այլ յիշատակ նոցին անշինջ կանդաղեցաւ ի սիրտս բարերարելոցն ի նոցանէ : Ստուերքք նոցա ոչ կարօտանան շրոյ փառաց՝ յորմէ խոյս էտուն ի կենդանութեան իւրեանց . Եւ երբ տակաւին օրէն իցէ նոցա կենցաղականացս հաղորդ լինել իբաց, անշուշտ ցանկալի է նոցա ընդ աղքատին յարկաւ դեգերել նիւղի՝ ուր վաս-

տակասերն բնակիցէ առաքիւնութիւն, սփոփանս աղբատու-
րեան մատուցանել, որ զիւրմէ բաղդէն տրտնջիցէ, տածել
ի դեռաբուսիկ տարփաւորս զբոց մշտաբարբոբ, զբնատուրն
բարեաց ախորժս, զսէր վաստակոց, և. գերկիւն յերեսաց մե-
ծափարքամն ճոխութեան :

Ձայն բարբառոյ ժողովրդեան որ լուռ էւեր կայ գշիրմօք
կանգնելովք ի շուք փառաց արքայից, վայրաց վայրաց կղզոյս
էտ յորջորջանս անուանց որք անմահացուսցեն զՎիրգիւնէ :
Առ. Ամպարի կղզեկաւն ի միջի անդ խարակաց է տեսանել
տեղի որ ԱՆՅԲ ՍԷՆ-ՃԷՐՍՆԻ կոչեցեալ է յանուն նաւուն որ
բարձեալ բերէր զնա ի կողմանցն Եւրոպայ, և. որ ծովակոծ
կորեաւ. անդանօր : Սպառուած էրկայնամիգ կոհակիդ գոր



Երիւք ի բացեալ նշմարես աստի փարսախօք, և. կիսով ջափ
ծածկեալ կայ ի շուրցն մկանանց, և. գորով անմարք էղէ. Սեն-
ժէրանի պատել անցանել յառաջ քան զլառնել մրրկին, և.
ի նաւահանգիստ անդր մտանել անկանել, յորջորջեալ ճայնի
ՏԱՐՍԱՐՍԱՆԻ ԶՐՈՒՍՆԻՍՆ. և. անա հանդեպ մեր ի ծայր հով-
տիդ այդորիկ ՅՈՅ ՇԻՐՄԻՆ, յորում աւագալիբր գտաւ Վիրգիւնէ.
Իբրու այն բէ ծովդ ինքնին բերեալ մատուցաներ առ. ազգա-
տունն զմարմին նորա, զի ամօթագեղ զգաստութեան նորին

գլետինն հարցեն սպաս ինոյն սփունս՝ զոր պատուեայ էր իւրովն անմեղութամբ :

Ո՛վ պատանեակք սիրայօղբ, նվ մարք չարաբաստիկք, ն ազգատոհմ սիրասուն. այդ մայրիք որ հովանի գծեօք առնեին, այդ աղբիւրք որք վասն մեր բոխեայ ընթանային, այդ բլուրք յորս ոգի առեայ հանգչելիք, անա ողբան տակաւին գծերդ կորուստ : Զիք ուրուք զնետ մեր համարձակեայ արօրէյ զամայացեայս զայս էրկիր, կամ կանգնել վերստին զխոնարհ նիւղս մեր խարարեայս : Այժիք մեր վայրենացեայք, ծառատունկք մեր ոստաբանց քշտեայք, քոջունք մեր փախուցեայք, էս բազէից էտէք լսելի սօխչք էս կօխնչք, որք ոլորտացեայ սաւառնին զբարձամբք սպասածիցս հովտամէկց : Իսկ էս, յորմէ հետէ ոչ էս տեսանեմ զմեզ, էղեայ էմ աւասիկ իբրէս զբարեկամ որոյ ոչ էս այլ գուցեն բարեկամք, իբրէս զհայր որդեկորոյս, իբրէս զնոյնոր բափառական յերկրի յորում էս մնացի միայնիկ :

Նս. զայս ասելով ի բաց գնաց առ յինէն ձերունին այն պատուական՝ ուղիս իշուցանելով արտասուաց. էս իմս արտասուք բազում անգամ հոսեցին ի յուր յոգնարշուատ, պատմութեանս այսորիկ :



1. Կիտրոնի, ծառ, որոյ կիտրոն պտուղ քաջածանօր է արեւելեայց, սոճ. *աղած դալունու աղածը*. գղ. citronnier : — Ազգ կիտրոնեաց է եւ անուանեալն ի Քաղղիացոց pamplemousse, որոյ վասն եւ գաս ի բարգժանութեան աստ կիտրոնի կոչեցաք :

2. Լատանեհի, ազգ արմաւենու, բնիկ ի Մատակասքարայ եւ ի կղզեաց Սոնտի : Զրուան ունի զլանածեւ, ուղղարերձ եւ բարձրադիտակ, եւ սաղարքս իբր քան ի կատարն պսակածեւ հովանաւորեալ : Ի տերեւեաց սորա կողովս կազմեն Հնդիկք եւ գլխարկս : Գղ. latanier.

3. Ղետով, դուստր Թեստիկոսի, կին Տինդարայ արքային Սպարտացոց : Արամազդայ ի կարապ կերպարանեալ հափափեաց զնա, եւ յետ ինն ամսոց ան Ղետով ձուս երկուս, յորոց ի միոյն ել Պողիկեստիս եւ Հեղինե, եւ ի միսմեն Կաստոր եւ Կլիտեմնեստրա : Առաջինքն երկուքին համարեցան որդիք Արամազդայ, եւ այլքն Տինդարայ որդիք : Սոցա նմանեցուցանէ Պեռնարտեն զՊոլ եւ զՎիրգինե :

4. Նիորե, դուստր Տանտադոսի եւ քոյր Պեդոպայ : Մմուսնացեալ ընդ Ամփիոնի Թերացոց արքայի, ծնաւ որդիս չորեքտասան. եւ Լատոնայ անարգեալ ի նմանե, նետահար զծնունդս Նիորայ սպան ընդ ձեռն որդւոյ իւրոյ Ապոդոնի : Յուովք ի նախնի ճարտարաց զանդրիս նոցին դրօշեցին ի կիճ, եւ զայն ակնարկէ Պեռնարտեն :

5. Պատամենին ծառ է բրգածեւ, բարձրարուն, զեղատեսիլ, ոստքն տերեւախիտք, ծաղիկքն հասկածեւք, ոչ յովժ զեղեցիկք, բայց պտուղն քաղցրաճաշակ, եւ նուշք կորզոցն որ զկաղնոյ ունին զհամ՝ ի փոճեկս ամփոփեալ են ձուածեւս : Գղ. badamier.

— Մանկենին ծառ հնդիկ, սփռեալ տարածեալ է տակաւ ընդ հասարակածի : Ընդ բազմաստղարք կատարովն ոստս ունի խոշորս եւ ծամածուս. տերեւքն զառաջինն ծիրանեզոյն զոյով՝ ապա դալարագեղ կանաչանան : Ծաղիկքն սպիտակարոյրք են եւ նիզակածեւք զեղանիք : Պտուղն մանկ կամ մանդ քաղցրահամ է եւ դիւրահալ : Գղ. manguiier, mangue.

— Ակնակատի ծառ է զեղատեսիլ, կոնածեւ, սաղարքս ունի բանձունս եւ նսեմս, եւ կատար լայն տերեւախիտ : Աղկուցածեւ են ծաղկունքն եւ կանաչագոյնք. պտուղն *ակնակատ* տանձակերպ է, ողորկամարմին, կանաչ կամ մանիշակագոյն, եւ ունի զհամ կաղնախառն կոզւոյ, ոչ ախորժական որոց շիցենն սովոր :

Անեփ ուտի ակնակատ՝ հատեալ ի շերտս շերտս, եւ համեմեալ պղպեղի, կոճապղպեղի, ձեքի եւ քացախով, եւ առ զաղբականս պաշտի ի սեղան ընդ պախ մսոյ : Մարբի հանդերձել զայն շաքարս եւ լեմոնի :

Մեծ է կորիզն, եւ ընդ մեջ հատեալ՝ արձակէ հոյզ մանիշակագոյն որ անանց արատէ զկտաւիս : Գղ. avocatier կամ agnecat.

— Կուսանեհին ծառ նման է տանձենու, վասն որոյ կոչի եւ *տանձենի*

Հնդկաց, եւ բերե պտուղ երկայն եւ ձուածեւ կուտ ձայնեալ : Գղ . goyavier, goyave.

— Հացածառ կամ ձագենի, ծառ գեղատեսիլ եւ բաւոտ, ամբառնայ քառասուն ոտն ի բարձրութիւն, եւ բերե պտուղ մեծ քան գսելս : Գղ . jacqs, jacquier.

— Վարդաճամբի, բնիկ ի Հնդկաց, մշտափրփր եւ մշտապտուղ, գեղազարդէ զպարտեզս Կոզոյն Գաղղիոյ : Ընդ կանաչագեղ սաղարքիւքն փրքին ծաղկունք յայնք եւ ձիւնարոյք : Զուածեւ է պտուղն եւ վարդահամ, ոյր վասն եւ ծառն կոչի վարդաճամբի. զովարար ունի բնութիւն, եւ ուտի անեփ իբրեւ գսելս կամ եփեալ շաքարաւ : Գղ . jam-rose, jambosier.

6. Գրախտածաղիկ կամ Սիրամարգածաղիկ այսպէս անուանեալ սակս յոյժ գեղեցկութեանն, տասնոտնեան ունի բարձրութիւն, եւ փրքէ ծաղիկ ծիրանեփայլ :

7. Տատամաքի, ծառ գեղեցիկ բարձրարուն, բերե գնմանութիւն կաղամախի . զարդ մեծ է ծովափանց գեղադէշ դիտական եւ կանաչագեղ սաղարքիւք . ողկուգածեւս ունի գծաղկունսն եւ քաղցրարոյրս . պտուղքն մանունք, բոլորչիք, լրբագոյնք, բայց անպիտանք ի կերակուր :

Փայտն տատամաքեաց կարծրակուռ է, ծանրակիր եւ անփուռ, եւ վարի ի կայմս նաւաց : Գղ . tatamaque.

8. Կուսածաղիկն փրքէ յաճախ ծաղիկ գեղակապոյտ . մեք այսպէս անուանեցաք գըpervence բառ գաղղիացի, զի յոլով ուրեք նշանակ կուսութեան է ծաղիկը : Սովոր էին երբեմն Բեղզիացիք (Պելճիացիք) կուսածաղիկս սփռել զոտիւք նորանարսանց, եւ յետրութիւ (Թուքանս) նոքիմք պսակին զզլուխս կուսանաց մեռելոց : Պարկեշտատուն իբրեւ զկուսան լեռնաբնակ, տիպար է տնասեր կնոջ որ զամենայն զտեր իւր եւ զլոյս յամուսինն հաստատեալ՝ նովիմք սփռիլի, եւ որզեկացն կրբութեամբ բերկրի :

9. Բենգալ կամ պենկալ, ազգ բուսոյ մանունց բնդակերից, ի Բենգալա կամ Պենկալա նահանգէ աշխարհին Հնդկաց ի մեր կողմանս եկեալ : Գղ . bengali.

10. Ծիրանաւոր, ազգ բուսոյ որ բերե ծաղկունս՝ է զի կապոյտ եւ է զի կարմիր : Գղ . cardinale.

11. Մանգ . Տ. Ծանօթ . 3 :

12. Բախնբակ, ազգ ձկան . տճ . քէֆալ . գղ . cabot, gobie, muge.

13. Ծովախառնիճ, ազգ փոքրիկ խեցեմորքի . տճ . թէթէ . գղ . langouste.

14. Բոքենի, ազգ արմատենայ, վերանայ ցվարսուն ոտնաչափ ի բարձրութիւն եւ բուսանի զարեաղարձիւք . փայտ ունի կարծր յոյժ, եւ յատաղձս վարի :

15. Մանկենի . Տ. Ծանօթ . 5 .

16. Փառնայք, դիք շինականք, ի դաշտս եւ ի մայրիս բնակեալք :

17. Բենկալ . Տ. Ծանօթ . 9 :

ՎՐԻՊԱԿԻ ՏՊԱԳՐԻՆ

| Էջք | ՎՐԻՊԱԿԻ | ՈՒՂԻՂԻ |
|-----|--------------|--------------|
| 17 | կարմրալառք | կարմրալարք |
| 24 | ցգեալ | ձգեալ |
| 50 | ցգեաց | ձգեաց |
| 38 | մարմանդի | մարմանդի |
| « | աղամաղզենեօք | աղամարզենեօք |
| 55 | տրձագանգք | արձագանգք |
| 62 | ձոնձեալ | ճոնջեալ |
| 96 | ղիւրին | ղիւրեն |
| 117 | նշաւակ | նշաւակ |



TABLE OF CONTENTS

PART I. — GENERAL PRINCIPLES

| | |
|--|-----|
| Introduction | 1 |
| Chapter I. — The Nature of the Law | 15 |
| Chapter II. — The Sources of the Law | 35 |
| Chapter III. — The Interpretation of the Law | 55 |
| Chapter IV. — The Application of the Law | 75 |
| Chapter V. — The Enforcement of the Law | 95 |
| Chapter VI. — The Remedies of the Law | 115 |
| Chapter VII. — The Principles of the Law | 135 |
| Chapter VIII. — The History of the Law | 155 |
| Chapter IX. — The Future of the Law | 175 |
| Chapter X. — The Conclusion | 195 |

2

yacht

03 MAY 2013

15

Smith

